

Վ. Լ. Կատվալյան
V.L. Katvalyan



ՀԱՅՈՑ ԼԵՉԿԻ ԲԱՐԲԱՌԱԳԻՏԱԿԱՆ ԱՏԼԱՍ

**ԴՐԱԿ Ա
ՓԵՂԱՐԵՈՒՆԻԻՔԻ ՄԱՐԶ**

**DIALECTOLOGICAL ATLAS OF THE
ARMENIAN LANGUAGE
PART A
GEGHARKUNIK REGION**

ԵՐԵՎԱՆ 2025
YEREVAN 2025

Վ.Լ.ԿԱՏՎԱԼՅԱՆ

V.L.KATVALYAN

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ
ԲԱՐԲԱՌԱԳԻՏԱԿԱՆ ԱՏԼԱՍ

DIALECTOLOGICAL ATLAS OF THE
ARMENIAN LANGUAGE

ՊՐԱԿ Ա.
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ
PART A.
GEGHARKUNIK REGION

ԵՐԵՎԱՆ
ՀՀ ԳԱՍ ԼԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
2025

YEREVAN
PUBLISHING HOUSE OF IL, NAS RA
2025

ՀՏԴ 811.19՝28
ԳՄԴ 81.51-025.7
Կ 280

Հրապարակվում է ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ:
Published by the decision of the Scientific Council of the H. Acharyan Institute of Language of the NAS of the
Republic of Armenia.

Պատասխանատու խմբագիր՝
բան. գիտ. թեկնածու Ն.Գ.Հովհաննիսյան
Responsible editor:
PhD in Philology N.G. Hovhannisyan

Կ 280 **Կատվայան Վ. Լ.**
Հայոց լեզվի բարբառագիտական ատլաս. Պրակ Ա.: Գեղարքունիքի մարզ.– Եր.: Լեզվի
ինստիտուտի հրատարակչություն, 2025. – 325 էջ:

Katvalyan V. L.
Dialectological Atlas of the Armenian Language. Volume A. Gegharkunik Region. – E., Language
Institute Publishing House, 2025, 325 p.

Ատլասը պարունակում է 2 ընդհանուր և 65 զուգաբանական քարտեզներ, որոնք ընդգրկում են շուրջ ինը տասնյակ բնակավայր: Ընդհանուր քարտեզներում սահմանագատվում են տարբեր շրջանների բնակավայրերը, առանձնացվում են մարզում գործածվող բարբառային միավորների տարածման գոտիները: Զուգաբանական քարտեզներում սովորաբար ներկայացվում է մեկ հատկանիշ, մի շարք դեպքերում՝ միմյանց առնչվող մեկից ավելի հատկանիշներ: Քարտեզներն ունեն անհրաժեշտ մեկնաբանություններ: Ատլասը կարևոր նյութ է մատուցում հայ բարբառները հետազոտողներին, լեզվաբաններին, ընդհանրապես հայագետներին, կարող է նպաստել հայ բարբառագիտության, հայոց լեզվի պատմության շատ հարցերի պարզաբանմանը: Այն օգտակար կլինի նաև ազգագրության, ժողովրդագրության հարցերով հետաքրքրվող մասնագետներին: Առկա նյութը կարող է օգտագործվել հանրագիտարանային բնույթի աշխատանքներում, ուսումնական դասընթացներում:

The atlas contains 2 general and 65 isogloss maps, covering about nine dozen settlements. General maps delineate settlements in different regions and display the distribution area of dialect elements, covering territories. Isogloss maps usually show a single feature, but in some cases, more than one related feature. The maps have the necessary annotations. The atlas provides important material to researchers of Armenian dialects, linguists, and Armenologists in general, and can contribute to the clarification of many issues in Armenian dialectology and the history of the Armenian language. It will also be useful to specialists dealing with ethnography and demography. The available material can be used in encyclopedic works and educational courses.

ՀՏԴ 811.19՝28
ԳՄԴ 81.51-025.7

ISBN 978-9939-970-15-8

© Վ. Կատվայան, 2025

Լեզվաբանական աշխարհագրությունը և այդ ուղղությամբ կատարված աշխատանքները հայ իրականության մեջ: Բարբառային խոսքը որևէ լեզվի գոյության կարևորագույն և հիմնական եղանակներից է, որի ամբողջական հետազոտության և նկարագրության համար անհրաժեշտ է ոչ միայն բարբառային միավորների առանձնացում, քննություն և դասդասում, այլ նաև բարբառներում դրսևորվող հնչյունական, քերականական ու բառապաշարային հատկանիշների վերհանում, մեկնաբանում, դրանց տարածական բաշխման օրինաչափությունների և զարգացման ընթացքի բացահայտում: Եթե բարբառային միավորների հետազոտությունը սովորաբար կատարվում է նկարագրական, պատմական ու համեմատական եղանակներով, ապա բարբառային հատկանիշների ուսումնասիրության համար կիրառվում է լեզվաբանական աշխարհագրության մեթոդը, որի էությունը բարբառագիտական ատլասների ձևավորումն է և դրանցում ընդգրկված քարտեզներում իրենց բաշխման ու դրսևորումների յուրահատկություններով ներկայացված հատկանիշների նկարագրությունն ու մեկնաբանումը:

19-րդ դարի վերջերին սկիզբ առնելով գերմանական ու ֆրանսիական բարբառագիտական ատլասների կազմման աշխատանքներով՝ լեզվաբանական աշխարհագրությունը մեծ տարածում ու զարգացում է ունեցել 20-րդ դարում, և ներկայում փաստ է աշխարհի ավելի քան 300 լեզուների ատլասների առկայությունը¹: Հայ իրականության մեջ բարբառագիտական առաջին քարտեզը կազմել է Հ.Աճառյանը՝ նախ այն հրապարակելով 1909 թ. լույս տեսած «Classification des dialectes armeniens» աշխատության մեջ, ապա 1911 թ. լույս տեսած «Հայ բարբառագիտություն. ուրվագիծ և դասավորություն հայ բարբառների (բարբառագիտական քարտեզով)» աշխատությունում²: Վերջինում լեզվաբանը նշում է, որ վաղուց է նպատակ ունեցել կազմելու հայ բարբառների լիակատար քարտեզը, որը պիտի թույլ տար որոշելու մինչև անգամ յուրաքանչյուր գյուղի տեղը «բարբառական խմբին մեջ»³: Բարձր գնահատելով ֆրանսիական լեզվաբանական ատլասի հրապարակումը և նման մի ձեռնարկում հայերենի համար համարելով անիրականանալի՝ Աճառյանը բավարարվում է լեզվաբանական «պարզ քարտեզ» կազմելով, որի մասին գրում է. «Գրուածքիս կցուած է հայ լեզուաբանական քարտէս մը. հոս նշանակուած են մի՛ միայն այն քաղաքները կամ գիւղերը՝ ուր հայեր կան, և առանձին գոյներով ու սահմանագծերով որոշուած է անոնց խօսած լեզուն ու բարբառը: Կը խոստովանինք թէ շատ պակասներ կան լրացնելու, շատ անորոշ կետեր կան ճշտելու և շատ սխալներ կան ուղղելու: Մեր գիրքը ամենէն առաջ պիտի ցուցնէ թէ ո՛ր մասերը կարօտ են ուսումնասիրութեան և թէ ո՛ր պէտք է ուղղել բանահաւաքներու ուշադրութիւնը»⁴: Ինչպես նկատվել է, քարտեզում ներկայացված են 337 հայաբնակ

¹ Մարգարյան Ա., Հայոց լեզվի բարբառային ատլաս, Պրակ Ա, Ե., 2008, էջ 13:

² Աճառեան Հ., Հայ բարբառագիտութիւն . - Ուրուագիծ եւ դասաւորութիւն հայ բարբառների, Էմինեան ազգագրական ժողովածու, հ. Ը, Մոսկուա – Նոր-Նախիջեւան, հրատ. Լազարեան ճեմարանի արեւելեան լեզուաց, 1911, 307 էջ:

³ Նշվ. աշխ., էջ 14:

⁴ Նույն տեղում:

վայրեր, առանձին պայմանական նշաններով ցույց են տրված բնակավայրերի խոսվածքների ճյուղային պատկանելությունը, շրջակա լեզուների և հայերենի տարածման սահմանները⁵: Նման քարտեզներ իրենց աշխատություններում ունեն նաև Ա. Ղարիբյանը⁶ և Գ. Ջահուկյանը⁷:

Հայ բարբառների տեղային քարտեզ կազմելու առաջին փորձը, որքան մեզ հայտնի է, Ռ. Բաղրամյանի «Դերսիմի բարբառային քարտեզը» աշխատությունն է, որը ներկայացնում է Դերսիմի շրջանում գործածված բարբառային միավորների (Խարբերդ-Երզնկայի, Չմշկածաղի, Չարսանձաղի, Քղիի, միրաքների) ընդհանուր (առանձին դեպքերում՝ նաև համեմատական) բնութագրերը, բարբառային նմուշներ և բարբառային բառերի բառարան: Գրքում զետեղված երեք քարտեզները վերաբերում են պայթական բաղաձայնների համակարգին, բայի սահմանական ներկայի և անկատարի կազմությանը, շարունակական ներկայի կազմությանը: Քարտեզներն ունեն համառոտ մեկնաբանություններ⁸:

Ուշագրավ է Կ. Դավթյանի «Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը» աշխատությունը (1966թ.), որում հեղինակը կատարել է Լեռնային Ղարաբաղի տարածքում գործածվող խոսվածքների հնչյունաբանական ու ձևաբանական իրողությունների մանրամասն քարտեզագրական ուսումնասիրություն համաժամանակյա դիտանկյունով: Բարբառագետը կազմել է լեզվական առանձին հատկանիշների տարածական պատկերը ներկայացնող 53 քարտեզներ, որոնցից գրքում ներկայացված են 8-ը⁹: Չնայած արժեքավոր այս աշխատանքը համարվել է «միայն որպես առանձին տեղային խոսվածքների նկարագրության մի փորձ»¹⁰, սակայն նման ձեռնարկի շարունակականության դեպքում, կարծում ենք, այն կարող էր հայերենի բարբառագիտական ատլասի մի բաժինը դառնալ: Ինչպես նկատել է Ա. Խաչատրյանը, «Այս աշխատությունը, որ մի շարք նորություններ է բերում հայ բարբառագիտության մեջ, լավագույնս ցույց է տալիս լեզվաաշխարհագրական մեթոդի առավելությունները: Պետք է նշել սակայն, որ այդ կարգի աշխատանքներ հետագայում լույս չտեսան, և լեզվաաշխարհագրական մեթոդը տարածում չգտավ»¹¹: Ինչնէ, հայ իրականության մեջ լեզվաբանական աշխարհագրությանն ու քարտեզագրությանն առնչվող կարևորագույն աշխատանքները ծավալվեցին

⁵ Խաչատրյան Ա. Ե., Աճառյանը և հայ բարբառագիտությունը, Հայերենի բարբառագիտական ատլաս, Ե., ՀՄՄՀ ԳԱ հրատ., 1982, էջ 35:

⁶ Ղարիբյան Ա., Հայ բարբառագիտություն, ՀՄՄՌ պետ. հեռ. մանկ. ինստ. հրատ., 1953, «Հայ բարբառների դասավորության սխեմա» (մինչև 1915 թվականը) վերնագրով:

⁷ Ջահուկյան Գ., Հայ բարբառագիտության ներածություն, ՀՄՄՀ ԳԱ հրատ., 1972, «Հայ բարբառների տարածման քարտեզ» վերնագրով:

⁸ Բաղրամյան Ռ., Դերսիմի բարբառային քարտեզը, Ե., ՀՄՄՌ ԳԱ հրատ., 1960, էջ 105-107:

⁹ Դավթյան Կ., Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը, Ե., ՀՄՄՌ ԳԱ հրատ., 1966, էջ 296, 504:

¹⁰ Մուրադյան Հ., Լեզվաբանական աշխարհագրությունը և նրա խնդիրները, Հայերենի բարբառագիտական ատլաս, Ե., ՀՄՄՀ ԳԱ հրատ., 1982, էջ 18:

¹¹ Ա. Ե. Խաչատրյան, Հայերենի բարբառագիտական ատլասի ծրագիրը, Հայերենի բարբառագիտական ատլաս, 2, Ե., ՀՄՄՀ ԳԱ հրատ., 1985, էջ 7:

1970-ական թվականներին, երբ Գ. Զահուկյանն առաջ քաշեց և կիրառեց հայ բարբառների դասակարգման բազմահատկանիշ - վիճակագրական մեթոդը¹² : Այն հանգամանքը, որ հեղինակի ուշադրության կենտրոնում բարբառային հատկանիշներն են և դրանց տարածական դրսևորումներն ու բաշխումը, հետազոտության մեթոդը էականորեն առնչակցում է լեզվաբանական աշխարհագրությանը, սակայն վիճակագրական բարբառագիտության բուն նպատակը բարբառային միավորների առանձնացումը, խմբավորումն ու դասակարգումն էր վիճակագրական հաշվումներով՝ աղյուսակների և բարբառային ընդհանրությունների ու տարբերությունների թվային նշանակման միջոցով¹³ : Այդ հանգամանքը հաշվի առնելով՝ Հ. Մուրադյանը ևս նկատել է, որ «...այնուամենայնիվ, սա լեզվաբանական աշխարհագրություն չէ»¹⁴ : Իր առաջարկած մեթոդի առավելությունները նշելով հանդերձ՝ Գ. Զահուկյանը նկատել է, որ «Աղյուսակները զիջում են քարտեզներին նրանով, որ զուգաբանական զծերը գնում են տարբեր ուղղություններով՝ ընդօրինակելով բարբառային երևույթների աշխարհագրական տարածման իրական պատկերը, մինչդեռ աղյուսակներում բարբառային երևույթների նշանակումը հնարավոր է մեկ ուղղությամբ»¹⁵ : Նոր մեթոդի առաջընթացումով ոչ թե անտեսվում, այլ կարևորվում է նաև լեզվաբանական աշխարհագրությունը, և հայ իրականության մեջ առաջին անգամ նախապատրաստական նպատակային քայլեր են ձեռնարկվում՝ բարբառագիտական ասուլաս ձևավորելու համար։ Հընթացս աշխատանքներ են կատարվում լեզվաբանական աշխարհագրության մեթոդի գործնական կիրառման ուղղությամբ։ Մասնավորապես՝ Ռ.Բաղրամյանի՝ 1972 թ. հրապարակած «Հայերեն բարբառներ. Սևանա լճի ավազանի խոսվածքները» աշխատությունը ներառում է ոչ միայն ավազանի բնակավայրերում գործածվող բարբառային միավորների ընդհանուր նկարագրերը, բարբառային նմուշներ, բառացանկեր, այլ նաև 4 քարտեզներ, որոնցում առանձին ներկայացված են ավազանի խոսվածքների, ապա՝ որոշ զուգաբանությունների (սահմանական ներկայի, բառասկզբի ձայնեղ պայթականների արտահայտություն, *h-h//h* համապատասխանություն) տարածական պատկերները¹⁶ : 1974 թ. Հ. Մուրադյանը «Հայ բարբառագիտության անցած ուղին և զարգացման հեռանկարները» հոդվածում ներկայացնում է հայ բարբառների լեզվաբանական ասուլասի ստեղծման նախադրյալներն ու սկզբունքները¹⁷ : Փաստելով, որ անհետաձգելի ու կարևոր նշանակություն ունի հայ բարբառների լեզվաբանական ասուլասի ստեղծման հարցը՝ լեզվաբանը ամենաառաջնահերթ խնդիր է համարում բարբառների վերաբերյալ գիտելիքների պակասը լրացնելը քարտեզագրական նպատակներով կատարվող ուսումնասիրություններով¹⁸ : Ընդ որում՝ «Հետազոտվել կարող են տերիտորիալ

¹² Տե՛ս Զահուկյան Գ., նշվ. աշխ., 1972:

¹³ Նույն տեղում, էջ 14:

¹⁴ Մուրադյան Հ., նշվ. աշխ., էջ 19:

¹⁵ Զահուկյան Գ., նշվ. աշխ., էջ 14-15:

¹⁶ Բաղրամյան Ռ., Հայերեն բարբառներ. Սևանա լճի ավազանի խոսվածքները, Ե., 1972:

¹⁷ Մուրադյան Հ., Հայ բարբառագիտության անցած ուղին և զարգացման հեռանկարները, Լրաբեր հասարակական գիտությունների, 1974, 4, էջ 14-25:

¹⁸ Նշվ. աշխ., էջ 20-21:

առանձին հատվածներ, անկախ բարբառային բաժանվածությունից ու բաշխվածությունից: Կկազմվեն, այսպես կոչված, ռեգիոնալ քարտեզներ, որոնք պատկերացում կտան տվյալ տերիտորիայում խոսվող բարբառների ու խոսվածքների ընդհանրությունների ու տարբերությունների մասին»¹⁹: Ատլաս կազմելիս շատ կարևոր է քարտեզների վրա նշվելիք բնակավայրերի ընտրության հարցը: Քարտեզագրման մեջ սովորաբար կիրառվում է բնակավայրերի համաչափ ընտրությամբ կազմված ցանց, որտեղ նշված կետերը իրարից գտնվում են հավասար հեռավորության վրա: Նման մոտեցումը հայ բարբառների համար, սակայն, ընդունելի չէ, որովհետև հայ բնակչության պարբերական գաղթերն ու տեղաշարժերը խախտել են բարբառային զուգաբանությունների անընդհատականությունը: Լեզվաբանը եզրակացնում է, որ հայ բարբառների ատլասի բնակավայրերի ընտրության համար անհրաժեշտ է կիրառել այլ սկզբունք. «Թերևս հարցի ամենառացիոնալ լուծումը կլինի այն, որ անկախ այն բանից, թե ո՞ր բնակավայրերը կմտնեն քարտեզների մեջ, նյութեր հավաքվեն անխտիր բոլոր հայախոս բնակավայրերից»²⁰: Ատլասի կազմության սկզբունքների քննարկումներին հաջորդում է բարբառագիտական ատլասի համար անհրաժեշտ տվյալների հավաքման ծրագրի կազմումը, և 1977 թ. հրապարակվում է «Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագիրը»²¹, որով և ԳԱ լեզվի ինստիտուտի աշխատակիցները սկսում են նյութեր հավաքելու աշխատանքները. դրանք շարունակվում են մինչև 21-րդ դարի առաջին տասնամյակ: Ծրագիրն ընդգրկում է 778 զուգաբանություն, որից 559-ը վերաբերում է բառապաշարին, 121-ը՝ քերականական, իսկ 118-ը՝ հնչյունական իրողություններին: Ծրագրով հավաքվել են շուրջ 500 բնակավայրի վերաբերող նյութեր, որոնք պահվում են ՀՀ ԳԱԱ Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտում: Դրանցում շատ են և հատկապես կարևորվում են Արևմտյան Հայաստանի տարբեր վայրերի՝ եղեռնից մազապուրծ բարբառախոսների օգնությամբ հավաքված նյութերը, որոնք արդեն կորուսյալ բարբառների ու խոսվածքների հատկանիշների թերևս վերջին արձանագրումներն են: Ցավոք, նյութերի հավաքման աշխատանքները աստիճանաբար մարել են, ատլասի կազմման նախապատրաստական այլ աշխատանքներ չեն իրականացվել, քարտեզներ չեն կազմվել: Այնուամենայնիվ, հավաքված նյութերի օգտագործումով կատարվել են բարբառագիտական հետազոտություններ, հրապարակվել են «Հայերենի բարբառագիտական ատլաս» վերտառությամբ 4 հատորներ, որոնք պարունակում են արժեքավոր ուսումնասիրություններ և նյութեր: Կատարվել են բարբառային իրողությունների քարտեզագրման մասնակի աշխատանքներ: Այսպես, «Նախիջևանի բարբառային քարտեզը» հոդվածում²² Ա.Վարդանյանը երեք քարտեզներով ներկայացնում է Նախիջևանի տարածքում հայ բարբառների տարածական

¹⁹ Նշվ. աշխ., էջ 21:

²⁰ Նշվ. աշխ., էջ 21-22:

²¹ Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագիր, Ե., ՀՄՄՀ ԳԱ հրատ., 1977, 140 էջ:

²² Վարդանյան Ա., Նախիջևանի բարբառային քարտեզը, Հանդես ամսօրյա, 2000, Վիեննա, էջ 457-470:

պատկերը 1918, 1924 և 1988 թվականների դրությամբ: Նա տարածամանակյա հայեցակետով ի ցույց է դնում տարածաշրջանում հայ բարբառների անհետացման գործընթացը, որ պայմանավորված էր տեղի հայ բնակչության վտարումով: 2008 թ. հրապարակվում է Ա. Սարգսյանի «Հայոց լեզվի բարբառային ատլաս. Պրակ Ա» գիրքը²³ իբրև դասընթաց ուսանողների և ասպիրանտների համար: Հեղինակը նախ քննում է լեզվաբանական աշխարհագրության մի շարք հարցեր, ներկայացնում լեզվաբանական ատլասների կազմությանն առնչվող գործընթացներն ու մեթոդները, անդրադառնում միջազգային փորձին: Դիտարկվում են հնչյունական և բառային, ապա և քերականական զուգաբանությունների առանձնացմանն ու գնահատմանն առնչվող հարցեր: Գրքում զետեղված են Գ. Ջահուկյանի բազմահատկանիշ դասակարգման 75 հատկանիշները (հնչյունական և անվանական-ձևաբանական) ընդգրկող 18 քարտեզներ, որոնցից յուրաքանչյուրում ներկայացվում են երկուսից հինգ հատկանիշներ: Հեղինակի հավաստմամբ՝ հրապարակված ատլասը զուտ փորձնական նպատակ է հետապնդում՝ քարտեզների միջոցով ներկայացնելու բարբառային զուգաբանությունների բաշխման պատկերը և «տեղից շարժելու» հայ բարբառների լիակատար ատլասի կազմության գործը²⁴: Բարբառային հայերենում ազգակցական հարաբերություններ արտահայտող բառային զուգաբանությունների տարածական պատկերը 18 քարտեզներով ներկայացրել է Հ. Խաչատրյանը «Ազգակցական հարաբերություններ արտահայտող բառերը հայերենի բարբառներում» աշխատանքում²⁵: «Հայերենի բարբառների բայական եղանակաժամանակային համակարգերի զուգադրական քննություն» դոկտորական ատենախոսության մեջ Գ. Գևորգյանը ներկայացրել է բարբառների բայական հատկանիշների տեղաբաշխումը արտահայտող 26 քարտեզ՝ 1914 թ. դրությամբ Հայաստանի արևելյան և արևմտյան տարածքների շուրջ 200 բնակավայրերի ընդգրկմամբ²⁶:

«Հայոց լեզվի բարբառագիտական ատլասի» ստեղծման նախապատրաստական աշխատանքները և նախադրյալները: «Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագրով» գրանցված մեծ ծավալի նյութը, ատլասի ստեղծման ուղղությամբ կատարված նախապատրաստական որոշակի աշխատանքներն ու մշակված սկզբունքները բավարար հիմքեր են՝ անհրաժեշտ ռեսուրսների և հնարավորությունների դեպքում սկսելու համահայկական ատլասի կազմման աշխատանքները: Իբրև գործընթացի սկիզբ՝ նպատակահարմար ենք գտել նախ ձևավորել Հայաստանի Հանրապետության տարածաշրջանների բարբառագիտական առանձին ատլասներ՝ շարունակաբար նորանոր տեղեկություններով համալրելու, ընդարձակելու

²³ Սարգսյան Ա., Հայոց լեզվի բարբառային ատլաս. Պրակ Ա, Ե., 2008 թ.:

²⁴ Տե՛ս նշվ. աշխ., էջ 33:

²⁵ Խաչատրյան Հ., Ազգակցական հարաբերություններ արտահայտող բառերը հայերենի բարբառներում, Ե., Լուսաբաց, 2009, 316 էջ:

²⁶ Գևորգյան Գ., Հայերենի բարբառների բայական եղանակաժամանակային համակարգերի զուգադրական քննություն (դոկտորական ատենախոսություն, անտիպ), 2013, Հավելված, էջ 4-5, 87-187:

հնարավորություններով, հընթացս համահայկական ատլասի կազմման աշխատանքներ ծավալելով: 2013 թվականից նախապատրաստական աշխատանքների շրջանակում նախաձեռնել ենք «Հայաստանի Հանրապետության բարբառային համապատկեր» ծրագիրը, որի նպատակն է Հայաստանում բարբառային միավորների և հատկանիշների տարածման արդի պատկերի ճշգրտումը, երկրի բարբառային քարտեզի կազմումը և ամբողջացումը: ՀՀ գիտության կոմիտեի դրամաշնորհային ծրագրերի շրջանակում երկամյա փուլերով դաշտային աշխատանքներ ենք կատարել ՀՀ Գեղարքունիքի, Կոտայքի, Արագածոտնի, Շիրակի մարզերում, ներկայումս հետազոտում ենք Լոռու մարզի բնակավայրերի խոսվածքները: Յուրաքանչյուր դեպքում բարբառագետների խմբով նյութեր ենք հավաքել մարզի գրեթե բոլոր բնակավայրերում, հետազոտել դրանցում գործածվող խոսվածքները՝ նկատի ունենալով այն հանգամանքը, որ Հայաստանի Հանրապետության տարածքում՝ բնիկ բարբառների շրջապատում կամ դրանցից մեկուսի, կողք կողքի գործածվում են հայրենակորույս տարբեր բարբառներ ներկայացնող խոսվածքներ, և ժամանակի ընթացքում ձևավորվել է բարբառային միավորների տարածման յուրօրինակ խճանկար՝ խոսվածքների՝ նախնական վիճակներին տարբեր աստիճանի հարազատությամբ, փոխազդեցություններով, բարբառային նկարագրի պահպանմամբ կամ կորստով և այլն: Առաջնորդվել ենք Հ. Աճառյանի այն դիտարկմամբ, թե՝ «Լեզուն ներկայացնում է անթիվ անհամար զանազանությունների մի շարք, որոնք մի կետից սկսելով քանի հեռանում, աստիճանաբար ու ավելի են շեշտվում: Ամեն մի վայրում կան մի խումբ երևույթներ, որոնք նույն կամ նման են այս հարևանի հետ, ուրիշ երևույթներ, որոնք նույն կամ նման են այն հարևանի հետ. այսպես շարունակաբար: Բայց չկա մի վայր, որի լեզուն ամբողջությամբ նույնը լիներ մի ուրիշ վայրի կամ ուրիշ վայրերի լեզվի հետ....»²⁷: Նկատի ենք ունեցել նաև Ա. Ղարիբյանի այն պնդումը, որ «Ամեն մի բարբառին պատկանող տեղական խոսվածքները նույնպես խոշոր տարբերություններ ունեն միմյանցից, այնպես որ կարելի է ասել՝ որքան գյուղ, այնքան խոսվածք»²⁸:

2013-2015 թթ. ԳԱԱ լեզվի ինստիտուտի բարբառագիտության բաժնի աշխատակիցները (Վ. Կատվալյան, Հ. Խաչատրյան, Ժ. Միքայելյան, Գ. Մկրտչյան) ՀՀ ԿԳՆ գիտության պետական կոմիտեի ֆինանսական աջակցությամբ № SCS 13-6B382 գիտական թեմայի շրջանակում հետազոտություններ են ծավալել Գեղարքունիքի մարզում, դաշտային աշխատանքների ընթացքում տարածաշրջանի բնակավայրերում բարբառախոսների տեսաձայնագրմամբ և հարցումներով գրանցել բարբառային նյութեր, որոնց մշակմամբ ստացված արդյունքներն ամփոփված են «Հայաստանի Հանրապետության բարբառային համապատկեր. Գիրք 1. Գեղարքունիքի մարզ» աշխատությունում²⁹: Գրքում առանձին-առանձին ներկայացված են Գեղարքունիքի մարզի բնակավայրերի լեզվական (իմա՝ բարբառային) բնութագրերը՝ համալրված բառացանկերով և

²⁷ Աճառյան Հ., Հայոց լեզվի պատմություն, 2-րդ մաս, Ե., Հայպետհրատ, 1951, էջ 324-325:

²⁸ Ղարիբյան Ա., նշվ. աշխ., էջ 86:

²⁹ Կատվալյան Վ., Հայաստանի Հանրապետության բարբառային համապատկեր. Գիրք 1. Գեղարքունիքի մարզ, Ե., «Ասողիկ» հրատ., 2018, 402 էջ:

բարբառային նմուշներով, ժողովրդագրական տեղեկություններով. ձևավորվել է գործածվող բարբառային հատկանիշների և բարբառային միավորների տարածման ամբողջական պատկերը: Հետազոտության համար անհրաժեշտ բարբառային հատկանիշների (գուգաբանությունների) ցանկը կազմելիս հիմք են եղել ինչպես ՀԲԱ³⁰ ծրագրում ընդգրկված, այնպես էլ բազմահատկանիշ դասակարգման ժամանակ գործածված այն հատկանիշները, որոնք առնչվում են Գեղարքունիքի մարզի բարբառային միավորներին: Հընթացս ցանկում ներառվել են մարզի խոսվածքներում դիտված, բայց հիշյալ շտեմարաններում չարտահայտված որոշ հատկանիշներ: Վերոբերյալ աշխատությունում ներկայացվել են մարզի խոսվածքներում դրսևորվող հնչյունական ու քերականական 93 բարբառային հատկանիշներ³¹, որոնց տարածման պատկերը ներկայացված է 3 աղյուսակներում՝ հիմնականում կազմված Գ.Ջահուկյանի բազմահատկանիշ դասակարգման աղյուսակների սկզբունքներով³²: Աղյուսակներում ընդգրկված չեն Ճամբարակի և Վարդենիսի՝ դարաբաղյան իրադարձությունների հետևանքով Ադրբեջանից բռնագաղթած հայերով բնակեցված գյուղերը, որոնց բնակիչները Ղարաբաղի բարբառը կամ հարևան բարբառային այլ միավորների տարբեր խոսվածքներ կրողներ են, և համարվել է, որ դեռևս վաղ է խոսել նման բնակավայրերում միասնական խոսվածքի առկայության մասին, մանավանդ որ բնակչության տեղաշարժերը դեռևս շարունակվում էին: Սակավաթիվ բնակավայրեր էլ (Սևան, Գագարին, Տորֆավան, գ. Մարտունի) աղյուսակներից դուրս են մնացել, որովհետև դրանցում հաղորդակցման միջոցը խոսակցական հայերենն է՝ ծագմամբ խառը բնակչություն ունենալու և բարբառային խոսքի գործածության համար բավարար պայմաններ չլինելու պատճառով: Նույն եղանակով 2016-2018 թթ. լեզվի ինստիտուտի բարբառագետների խումբը (Վ. Կատվալյան, Հ. Խաչատրյան, Ժ. Միքայելյան, Գ. Մկրտչյան) հետազոտություններ է ծավալել Կոտայքի մարզում, և գրանցված բարբառային նյութերի մշակմամբ ստացված արդյունքները նույն սկզբունքներով ամփոփված են «Հայաստանի Հանրապետության բարբառային համապատկեր. Գիրք 2. Կոտայքի մարզ» աշխատությունում³³: 2018-2020 թթ. աշխատանքները շարունակվել են «Արագածոտնի մարզի բարբառային համապատկեր» թեմատիկ ծրագրով (Վ. Կատվալյան, Ժ. Միքայելյան, Ա. Աբրահամյան, Հ. Խաչատրյան, Ս. Միքայելյան), 2021-2023 թթ.՝ «Շիրակի մարզի բարբառային համապատկեր» թեմատիկ ծրագրով (Վ. Կատվալյան, Հ. Խաչատրյան, Ջ. Բառնասյան, Ս. Եղիազարյան): 2025 թվականից աշխատանքներ են ընթանում «Լոռու մարզի բարբառային համապատկեր» թեմատիկ ծրագրի շրջանակում (Վ. Կատվալյան, Հ. Խաչատրյան, Ջ. Բառնասյան, Լ. Բադալյան, Տ. Հակոբյան): «Հայաստանի Հանրապետության բարբառային համապատկեր» ծրագրի բարեհաջող ընթացքը, բարբառային հատկանիշների՝ յուրաքանչյուր մարզի համար կազմված

³⁰ Հայերենի բարբառագիտական ատլասի նյութերի հավաքման ծրագիր:

³¹ Տե՛ս Կատվալյան Վ., նշվ. աշխ., էջ 254-258:

³² Նույն տեղում, էջ 261-272:

³³ Կատվալյան Վ., Հայաստանի Հանրապետության բարբառային համապատկեր. Գիրք 2. Կոտայքի մարզ, Ե., «Աստղիկ» հրատ., 2020, 492 էջ:

առանձին ցանկերով հավաքված բավականաչափ նյութը թույլ են տալիս սկսելու հայերենի բարբառների տարածաշրջանային ատլասների կազմումը, որոնց ամբողջացումով և ամփոփումով կունենանք Հայաստանի Հանրապետության բարբառային ընդհանուր ատլասը: Ճիշտ է, առայժմ ատլասում չեն ներկայացվում բառային զուգաբանություններ, սակայն դրանք կլրացվեն հընթացս (սովորաբար բառային զուգաբանությունների կազմումը երկար ժամանակ է պահանջում, բայց նորագույն տեխնոլոգիաները, հնարավոր է, որոշակիորեն արագացնեն գործընթացը):

«Հայոց լեզվի բարբառագիտական ատլասի» ձևավորման սկզբունքները:

Ատլասի Ա պրակը նվիրված է Գեղարքունիքի մարզին: Օգտագործվել են հիմնականում 2013-2015 թթ. «Գեղարքունիքի մարզի բարբառային համապատկեր» ծրագրով հավաքված նյութերն ու տվյալները: ՀԲԱ ծրագրով Գեղարքունիքի մարզում տարբեր տարիներ կատարվել են մոտ մեկ տասնյակ բնակավայրերի խոսվածքների հատկանիշների գրանցումներ, որոնց տվյալները դիտարկել ենք ըստ անհրաժեշտության: Ատլասի այս պրակում զուգաբանությունները ձևակերպվել են՝ հիմնականում նկատի ունենալով բարբառային այն հատկանիշները, որոնք ներկայացված են «Հայաստանի Հանրապետության բարբառային համապատկեր. Գիրք 1. Գեղարքունիքի մարզ» աշխատությունում³⁴: Ի հավելումն՝ ընդգրկվել են նաև զուգաբանություններ, որոնք ընդհանուր տարածում ունեին Արցախի և հարևան տարածքների բարբառային հայերենում և այս կամ այն կերպ բնորոշ են Ճամբարակի և Վարդենիսի տարածաշրջանների՝ բռնագաղթածներով բնակեցված գյուղերի բարբառային խոսքին: Ատլասը պարունակում է 2 ընդհանուր և 65 զուգաբանական քարտեզներ, որոնք ընդգրկում են շուրջ ինը տասնյակ բնակավայր: Ընդհանուր քարտեզներից առաջինում տարագույն կետերով սահմանազատվում են տարբեր շրջանների բնակավայրերը, որը տվյալ պարագայում կարևորվում է բարբառային միավորների տարածաշրջանային ընդգրկումը գնահատելու առումով: Երկրորդ ընդհանուր քարտեզում դարձյալ տարագույն կետերով ներկայացվում են մարզում գործածվող բարբառային միավորների տարածման գոտիները, որը կարևոր է հատկապես այն պարագայում, երբ տարածաշրջանի և բարբառի տարածքային ընդգրկման սահմանները չեն համընկնում, և որևէ տարածաշրջանում գործածական են մեկից ավելի բարբառային միավորներ:

Քարտեզներում սովորաբար ներկայացվում է մեկ զուգաբանություն, որը կարող է ունենալ կամ չունենալ տարբերակային դրսևորումներ: Տարբերակների առկայության դեպքում յուրաքանչյուրի համար սահմանվում է կետերի առանձին գունավորում, որով նշվում են տվյալ հատկանիշն ունեցող բնակավայրերը: Տարբերակների բացակայության դեպքում հատկանիշն ունեցող բնակավայրերը նշվում են միագույն կետերով: Հատկանիշի լիարժեք առկայությունը նշվում է ամբողջական կետով, մասնակի դրսևորումը՝ կիսված կետով: Մի շարք դեպքերում միևնույն քարտեզում ներկայացվել են

³⁴ Կատվալյան Վ., Հայաստանի Հանրապետության բարբառային համապատկեր. Գիրք 1. Գեղարքունիքի մարզ, էջ 254-258:

համանման և զուգահեռ զուգաբանություններ (օրինակ՝ *է, ռ* միավորներին վերաբերող զուգաբանությունները, հնչյունական տարբեր իրողությունների՝ *յ*-ի վերածվելուն առնչվող զուգաբանությունները), ավելի ընդհանուր իրողության տարաբնույթ դրսևորումներ ներկայացնող զուգաբանություններ (օրինակ՝ բառասկզբում ձայնեղների արտահայտությանը վերաբերող զուգաբանություններ, ցուցական դերանունների արտահայտության իրողություններ), որևէ զուգաբանություն և դրան առնչվող հարակից հատկանիշ (օրինակ՝ *յօ* մասնիկով շարունակական ներկա և այդ մասնիկի կիրառություն հաստատական իմաստով՝ առանց շարունակականության գաղափարի), որևէ զուգաբանություն և իբրև դրա առկայության հետևանք դրսևորվող հատկանիշ (օրինակ՝ հետնալեզվային պայթականների քմային արտասանություն և դրա հետևանքով պայթականների վերածում հպաշփականների) և այլն: Չուգաբանություններն այսպես համատեղ ներկայացնելը կարող է նպաստել իրողությունների համակողմանի ու ամբողջական ընկալմանը: Չուգաբանությունների ցանկը կազմելիս պարտադիր պայման չենք համարել իրողությունների մեծ տարածում ունենալը կամ համընդգրկուն լինելը: Շատ դեպքերում տարբերակիչ նշանակություն ունեն և գիտական հետաքրքրություն են ներկայացնում նաև մասնավոր իրողություններ (օրինակ՝ *ոք* շաղկապի արտահայտությունը *օք* տարբերակով, *էլ* դերանվան՝ *լէ* տարբերակով գործածությունը, *զնալ*, *մնալ* բայերի՝ անցյալի *գաց*, *մաց* հիմքերի դրսևորումը) և այլն: Նպատակ չենք ունեցել նաև ապահովելու հնչյունական ու քերականական հատկանիշների քանակական համամասնություն (քարտեզներից 27-ը վերաբերում են հնչյունական իրողություններին, 38-ը՝ քերականական իրողություններին), ինչպես նաև ձայնավորական/բաղաձայնական, անվանական/բայական հատկանիշների համամասնություն: Այլ կերպ ասած՝ մենք ըստ հնարավորին արձանագրել ենք մարզի խոսվածքներում դրսևորվող բարբառային հիմնական հատկանիշները՝ անկախ լեզվական այս կամ այն մակարդակի վերաբերության:

Ատլասի՝ զուգաբանություններ ներկայացնող բոլոր քարտեզները ունեն մեկնաբանություններ: Դրանցում սովորաբար նախ արտացոլվում է զուգաբանության էությունը կրճատ, երբեմն գրեթե բանաձևային եղանակով, այնուհետև բերվում են զուգաբանությանը վերաբերող օրինակներ մարզի խոսվածքներից, ընդ որում՝ եթե կան տարբերակային իրողություններ, բերվում են տարբերակված օրինակներ: Հաջորդաբար ներկայացվում է իրողության դրսևորումների ընդհանուր պատկերը բարբառային հայերենում, ապա և՛ արտահայտությունը Գեղարքունիքի մարզում ըստ տարածաշրջանների և բնակավայրերի: Ըստ անհրաժեշտության տրվում են երևույթին վերաբերող բացատրություններ: Վերջում ներկայացվում են զուգաբանության կամ դրա տարբերակային դրսևորումների առնչությունները մարզի բարբառային միավորներին:

Ատլասը համալրված է նաև ժողովրդագրական տեղեկություններով, մարզի բնակավայրերից յուրաքանչյուրի բնակչության թվաքանակն արտացոլող աղյուսակով, բարբառային միավորների տարածական ընդգրկումը ներկայացնող տեղեկանքով: Առանձին աղյուսակում զուգաբանությունների և դրանց տարբերակային դրսևորումների համարակալումով ներկայացվում է բնակավայրերից յուրաքանչյուրին

բնորոշ հատկանիշների խումբը, որը տվյալ խոսվածքի պատկերը ամբողջացնելուց բացի՝ կարող է հեշտացնել խոսվածքների համեմատական դիտարկումը: Ատլասը եզրափակվում է մարզում գործածվող բարբառային միավորների ընդհանուր բնութագրերի և դրսևորումների ներկայացումով, զուգաբանությունների և քարտեզների ցանկով:

PREFACE

Linguistic geography and the body of research produced within this field in the Armenian reality

Dialectal speech constitutes one of the essential modes of existence of any language. A comprehensive investigation of a language presupposes not only the identification, analysis, and classification of its dialectal units, but also the elicitation and interpretation of phonological, grammatical, and lexical features attested in dialects, alongside an examination of the regularities governing their spatial distribution and historical development. Whereas the study of dialectal units is typically conducted through descriptive, historical, and comparative methodologies, the analysis of dialectal features relies on the methods of linguistic geography. The central objective of this discipline is the compilation of dialectological atlases and the interpretation of the features represented on their maps according to the forms and patterns of their geographical dispersion.

Emerging in the late nineteenth century through the compilation of German and French dialect atlases, linguistic geography developed extensively throughout the twentieth century. Today, dialect atlases have been compiled for more than 300 languages worldwide.³⁵ Within the Armenian linguistic context, the first dialect map was produced by H. Acharyan and published in his 1909 *Classification des dialectes arméniens*, and subsequently in his 1911 monograph *Armenian Dialectology: Outline and Classification of Armenian Dialects (with a Dialect Map)*.³⁶ In the latter work, Acharyan notes that he had long intended to compile a comprehensive map of Armenian dialects that would permit the classification of even individual villages “within a dialect group.”³⁷ Recognizing the exemplary significance of the French linguistic atlas yet deeming a project of comparable scale for Armenian unattainable at the time, he settled for producing a “simple linguistic map,” remarking: “Attached to this work is a linguistic map of Armenian. It marks only those towns and villages inhabited by Armenians, and their spoken language and dialect are designated through distinct colours and boundary lines. We acknowledge that numerous gaps remain to be filled, uncertainties to be clarified, and errors to be corrected. Our book is intended first and foremost to indicate which regions require investigation and to direct the attention of field researchers accordingly.”³⁸ As noted, this map includes 337 Armenian-inhabited settlements, presenting—through conventional symbols—the dialectal affiliation of their speech, as well as the boundaries of

³⁵ Sargsyan A., *Dialect Atlas of the Armenian Language*, Volume A, Yerevan, 2008, page 13.

³⁶ Acharyan H., *Armenian Dialectology. - Outline and Classification of Armenian Dialects*, Eminian Ethnographic Collection, vol. 8, Moscow - Nor-Nakhichevan, published by Lazaryan Seminary of Eastern Languages, 1911, 307 pages.

³⁷ Cited work, page 14.

³⁸ In the same place.

Armenian and surrounding languages.³⁹ Comparable cartographic materials appear in the works of A. Gharibyan⁴⁰ and G. Jahukyan.⁴¹

To the best of current knowledge, the first attempt to produce a local dialect map of Armenian was undertaken by R. Baghramyan in *The Dialect Map of Dersim*. This work presents general—and, in certain cases, comparative—descriptions of the dialectal units used in the Dersim region (Kharberd–Erzinga, Chmshkatsag, Charsanjak, Kghi, Mirak), supplemented with dialect samples, a vocabulary of dialectal words, and three maps depicting the system of plosive consonants, the formation of the indicative present and imperfect, and the formation of the present continuous. Each map is accompanied by concise explanatory notes.⁴²

Particularly noteworthy is K. Davtyan's *Dialect Map of Nagorno-Karabakh* (1966), which offers a detailed synchronic cartographic analysis of the phonological and morphological features attested in the region's dialects. Davtyan compiled fifty-three maps representing the spatial distribution of individual linguistic features, eight of which were included in the published volume.⁴³ Although this valuable work was characterized merely as “an attempt at describing several local dialects,”⁴⁴ it could, in our estimation, have constituted a component of a comprehensive Armenian dialect atlas had the initiative been continued. As A. Khachatryan observes, “This study, introducing several innovations into Armenian dialectology, clearly demonstrates the advantages of the linguistic-geographical method. It must be noted, however, that no further works of this type appeared, and the linguistic-geographical method did not gain broader application.”⁴⁵

Substantial advancements in Armenian linguistic geography and dialect cartography emerged in the 1970s, when G. Jahukyan introduced and implemented a multifeature statistical method for the classification of Armenian dialects.⁴⁶ Because this approach focuses on dialectal features and their spatial manifestations, it bears significant relevance to linguistic geography; nevertheless, the principal aim of statistical dialectology is the identification, grouping, and classification of dialectal units through statistical calculations—tables and the numerical marking of dialectal correspondences and divergences.⁴⁷ Taking this into account, H.

³⁹ Khachatryan A. E., Acharyan and Armenian Dialectology, *Dialectological Atlas of the Armenian Language*, Yerevan, Publishing House of the Academy of Sciences of the Armenian SSR, 1982, p. 35.

⁴⁰ Gharibyan A., *Armenian Dialectology*, 1953, entitled “Arrangement Scheme of Armenian Dialects” (until 1915).

⁴¹ Jahukyan G., *Introduction to Armenian Dialectology*, Publishing House of the Academy of Sciences of the Armenian SSR, 1972, entitled “Map of the Distribution of Armenian Dialects.”

⁴² Baghramyan R., *The Dialect Map of Dersim*, Yerevan, Academy of Sciences of the Armenian SSR, 1960, pp. 105-107.

⁴³ Davtyan K., *Dialectal Map of Nagorno-Karabakh*, Yerevan, Publishing House of the Academy of Sciences of the Armenian SSR, 1966, pp. 296, 504.

⁴⁴ Muradyan H., *Linguistic Geography and Its Problems*, *Dialectological Atlas of the Armenian Language*, Yerevan, Publishing House of the Academy of Sciences of the Armenian SSR, 1982, p. 18.

⁴⁵ A.E. Khachatryan, *The program of the Armenian dialectal atlas*, *Armenian dialectal atlas*, 2, Yerevan., Publishing House of the Academy of Sciences of the Armenian SSR, 1985, page 7.

⁴⁶ See Jahukyan G., cited work, 1972.

⁴⁷ *Ibid.*, page 14.

Muradyan observed that “nevertheless, this does not constitute linguistic geography.”⁴⁸ Jahukyan himself, while emphasizing the advantages of his method, conceded: “Tables are inferior to maps in that isoglosses extend in multiple directions, replicating the true geographical distribution of dialectal phenomena, whereas in tables the representation of dialectal features is unidirectional.”⁴⁹ The introduction of this method did not diminish but rather reaffirmed the importance of linguistic geography, and for the first time concrete preparatory steps were taken toward the creation of an Armenian dialect atlas. Concurrently, practical efforts toward the application of linguistic-geographical methodology were initiated. R. Baghramyan’s 1972 publication *Armenian Dialects: The Dialects of the Sevan Basin* includes not only descriptive analyses of the basin’s dialects, samples, and lexical lists, but also four maps illustrating the geographical distribution of local dialects and selected isoglosses (the indicative present, initial voiced plosives, the h–h//x correspondence).⁵⁰ In 1974, H. Muradyan, in his article *The Past Development and Future Prospects of Armenian Dialectology*, outlined the prerequisites and principles for the creation of a linguistic atlas of Armenian dialects.⁵¹ Stressing the urgent and essential character of such a project, he identified the expansion of dialectological knowledge—especially through geographically targeted investigations—as the primary task.⁵² He noted that “individual territorial segments may be studied irrespective of dialectal divisions and distributions. These will constitute regional maps reflecting the convergences and divergences among the dialects and speeches used in the respective territory.”⁵³

The selection of settlements for inclusion in an atlas represents a methodological challenge. While dialect atlases typically employ a grid of evenly spaced localities, this approach is unsuitable for Armenian owing to the disruptions of isoglossal continuity caused by recurrent migrations and population displacements. Muradyan therefore concluded that the most rational solution would be to collect data from all Armenian-speaking settlements, irrespective of which would ultimately appear in the maps.⁵⁴ The articulation of methodological principles was followed by the development of a data-collection program, and in 1977 the *Data Collection Program for the Dialectological Atlas of Armenian* was published.⁵⁵ Based on this program, researchers at the Institute of Linguistics of the National Academy of Sciences of Armenia began collecting material, a process that continued into the early decade of the twenty-first century. The program encompassed 778 isoglosses, of which 559 were lexical, 121

⁴⁸ Muradyan H., cited work, page 19.

⁴⁹ Jahukyan G., cited work, pp. 14-15.

⁵⁰ Baghramyan R., *Armenian Dialects: The Dialects of the Lake Sevan Basin*, Yerevan, 1972.

⁵¹ Muradyan H., *The history and development prospects of Armenian dialectology*, *Journal of Social Sciences*, 1974, 4, pp. 14-25.

⁵² Mentioned work, pp. 20-21.

⁵³ Mentioned work, page 21.

⁵⁴ Mentioned work, pp. 21-22.

⁵⁵ Program for collecting materials for the Armenian dialect atlas, Yerevan., Publishing House of the Academy of Sciences of the Armenian SSR, 1977, 140 pages.

grammatical, and 118 phonological. Data were recorded from approximately 500 settlements and are presently preserved at the H. Acharyan Institute of Language. Particularly valuable among them are materials collected from survivors originating from regions of Western Armenia; these constitute what may be the final documentation of numerous now-extinct dialects.

Regrettably, data collection gradually subsided, and no further preparatory steps toward the compilation of the atlas were undertaken; no maps were produced. Nevertheless, the accumulated material has served as the basis for numerous dialectological studies, and four volumes entitled *Dialectological Atlas of Armenian* have been published, containing significant analyses and materials. Partial cartographic work has been conducted as well. For instance, in the article *The Dialect Map of Nakhichevan*,⁵⁶ A. Vardanyan presents three maps illustrating the spatial distribution of Armenian dialects in the region in 1918, 1924, and 1988, revealing the process of dialectal disappearance resulting from the expulsion of the Armenian population. In 2008, A. Sargsyan published *Dialect Atlas of the Armenian Language: Volume A*,⁵⁷ conceived as a coursebook for students and postgraduate researchers. The volume first examines issues pertaining to linguistic geography, outlines the processes and methods of atlas compilation, and discusses international practices. It then addresses questions related to the identification and evaluation of phonological, lexical, and grammatical isoglosses. Included are eighteen maps based on seventy-five features drawn from Jahukyan's multifeature classification, with each map representing two to five features. The author notes that the atlas is intended as a preliminary attempt to visualize the distribution of dialectal correspondences and to "set in motion" the work required for a comprehensive atlas.⁵⁸ H. Khachatryan, in turn, produced eighteen maps illustrating the spatial distribution of lexical isoglosses relating to kinship terminology in Armenian dialects.⁵⁹ In his doctoral dissertation *A Comparative Study of the Tense–Mood Systems of Armenian Dialects*, G. Gevorgyan presented twenty-six maps depicting the geographical distribution of verbal features across approximately two hundred settlements in Eastern and Western Armenia as of 1914.⁶⁰

Preparatory Work and Preconditions for the Development of the *Dialect Atlas of the Armenian Language*

The substantial corpus of materials recorded under the "Program for the Collection of Data for an Armenian Dialect Atlas," together with the preparatory work and methodological principles already elaborated, provide a robust foundation for initiating the compilation of a comprehensive dialect atlas of the Armenian language, contingent upon the availability of

⁵⁶ Vardanyan A., *Dialect Map of Nakhichevan*, Monthly Journal, 2000, Vienna, pp. 457–470.

⁵⁷ Sargsyan A., *Dialect Atlas of the Armenian Language. Volume A*, Yerevan, 2008.

⁵⁸ See the aforementioned work, page 33.

⁵⁹ Khachatryan H., *Words expressing kinship relations in Armenian dialects*, Y., Lusabat, 2009, 316 pages.

⁶⁰ Gevorgyan G., *Comparative examination of verb tense systems of Armenian dialects* (doctoral dissertation, unpublished), 2013, Appendix, pp. 4–5, 87–187.

requisite resources and institutional support. As an initial stage, we deem it advisable to compile regional dialect atlases for the provinces of the Republic of Armenia, with the possibility of ongoing expansion and supplementation. These regional atlases will in turn constitute the basis for the future pan-Armenian dialect atlas.

Since 2013, within the broader framework of preparatory activities, we have undertaken the program “Dialectal overview of the Republic of Armenia,” whose objective is to document and refine the contemporary distribution of dialectal units and features in Armenia and to compile an updated and comprehensive dialectal map of the country. Supported by grant funding from the RA Science Committee, systematic fieldwork has been conducted, in two-year cycles, in the provinces of Gegharkunik, Kotayk, Aragatsotn, and Shirak, with ongoing research currently being carried out in Lori Province. In each case, teams of dialectologists have carried out linguistic surveys in almost all settlements of the respective province, documenting the locally used speech varieties. This methodology is necessitated by the complex linguistic situation in the Republic of Armenia, where speech varieties representing various displaced dialects coexist either in close proximity to—or in isolation among—indigenous dialects. These historical and sociolinguistic circumstances have produced a distinctive dialectal mosaic, characterized by speech forms that reflect varying degrees of preservation of their original structures, diverse patterns of contact-induced change, and differing trajectories of feature maintenance or loss.

Our work has been guided by H. Acharyan’s well-known observation that *“Language consists of innumerable varieties which, starting from one point, increase in divergence the farther they extend. Each locality displays one group of features shared with one neighboring area and another group shared with another; this continues endlessly. Yet no locality’s speech is entirely identical to that of any other.”*⁶¹ We have likewise taken into account A. Gharibyan’s assertion that *“Even the local varieties belonging to one and the same dialect display major differences from one another; in a sense one may say that each village possesses its own speech.”*⁶²

Between 2013 and 2015, researchers of the Dialectology Department of the Institute of Language, National Academy of Sciences of Armenia (V. Katvalyan, H. Khachatryan, Zh. Mikaelyan, G. Mkrtchyan), with financial support from the RA MES State Committee of Science (project No. SCS 13-6B382), conducted extensive research in Gegharkunik Province. Through audiovisual recordings and structured interviews, the team documented the dialectal material of the region’s settlements. The processed results are presented in the volume *Dialectal Overview of the Republic of Armenia: Book 1 – Gegharkunik Province*,⁶³ which provides detailed linguistic profiles of the settlements, accompanied by glossaries, dialect

⁶¹ Acharyan H., *History of the Armenian Language*, Part 2, Y., Haypethrat, 1951, pp. 324-325.

⁶² Gharibyan A., cited work, page 86.

⁶³ Katvalyan V., *Dialectal Overview of the Republic of Armenia. Book 1. Gegharkunik Region*, Yerevan, “Asoghik” Publishing House, 2018, 402 pages.

samples, and demographic information. Together, these components yield a comprehensive representation of the distribution of dialectal features and units across the province.

In compiling the list of dialectal features (isoglosses) required for the study, we drew upon the features included in the Armenian Dialect Atlas program⁶⁴ as well as those used in multi-feature classifications, especially those relevant to the dialectal units active in Gegharkunik. Features attested in the region's speech varieties but absent from earlier records were added during the course of the research. The volume presents 93 phonological and grammatical features,⁶⁵ whose distribution is displayed across three tables, constructed largely according to the principles of G. Jahukyan's multi-feature classification.⁶⁶ Some settlements—particularly villages in the Chambarak and Vardenis areas populated by Armenians displaced from Azerbaijan as a result of the Nagorno-Karabakh conflict—were excluded from these tables, as their inhabitants speak varieties of the Karabakh dialect or closely related dialectal units, and the emergence of a unified local speech variety in these communities cannot yet be assumed, particularly in light of ongoing demographic changes. A small number of other settlements (Sevan, Gagarin, Torfavan, and the village of Martuni) were likewise excluded, as colloquial Standard Armenian functions as the principal means of communication there due to mixed population origins and insufficient conditions for the retention of dialectal speech.

Using the same methodology, between 2016–2018, researchers (V. Katvalyan, H. Khachatryan, Zh. Mikaelyan, G. Mkrtchyan) conducted a corresponding investigation in Kotayk Province, the results of which are published in *Dialectal Overview of the Republic of Armenia: Book 2 – Kotayk Province*.⁶⁷ Subsequent fieldwork was conducted in Aragatsotn Province (2018–2020; V. Katvalyan, Zh. Mikaelyan, A. Abrahamyan, H. Khachatryan, S. Mikaelyan) and in Shirak Province (2021–2023; V. Katvalyan, H. Khachatryan, J. Barnasyan, S. Yeghiazaryan). Since 2025, work has begun under the project *Dialectal Overview of Lori Province* (V. Katvalyan, H. Khachatryan, J. Barnasyan, L. Badalyan, T. Hakobyan).

The successful progress of the “Dialectal Overview of the Republic of Armenia” program, and the substantial body of materials collected for each province through province-specific records of dialectal features, now make it feasible to initiate the compilation of regional dialect atlases of Armenian. The integration and synthesis of these regional atlases will ultimately yield a comprehensive dialect atlas of the Republic of Armenia. Lexical isoglosses have not yet been incorporated, but they will be added in subsequent phases (as lexical isogloss compilation is rather time-consuming, though modern digital tools may significantly accelerate the process).

⁶⁴ A program for collecting materials for the Armenian dialect atlas.

⁶⁵ See Katvalyan V., cited work, pp. 254–258.

⁶⁶ Ibid., pp. 261–272.

⁶⁷ Katvalyan V., *Dialectal Overview of the Republic of Armenia. Book 2. Kotayk Region*, Yerevan, "Asoghik" Publishing House, 2020, 492 pages.

Principles of the Formation of the *Dialect Atlas of the Armenian Language*

Volume A of the atlas is devoted to Gegharkunik Province and draws primarily upon data collected during the 2013–2015 “Dialectal Overview of Gegharkunik Province” project. Additional data collected in various years under the broader Dialect Atlas program were consulted as necessary. The isoglosses in this volume are formulated chiefly on the basis of features presented in *Dialectal Overview of the Republic of Armenia: Book 1 – Gegharkunik Province*.⁶⁸ We also formulated additional isoglosses representing features broadly attested in the dialects of Artsakh and neighboring regions, which are likewise characteristic of the speech of villages in Chambarak and Vardenis inhabited by displaced communities.

The atlas comprises two general maps and sixty-five isogloss maps, covering approximately ninety settlements. The first general map distinguishes the settlements of different subregions by color, a feature essential for evaluating the regional distribution of dialectal units. The second map delineates the spatial extent of the dialectal units represented in the province, a matter of particular importance in cases where administrative boundaries do not align with dialect boundaries and where multiple dialectal units coexist within a single region.

Each isogloss map typically represents a single feature, with or without variant realizations. Where variants exist, each is rendered in a separate color to mark the settlements exhibiting the corresponding variant. In cases where no variants are attested, the settlements are marked in a uniform color. The full presence of a trait is indicated by a full dot, and partial manifestation is indicated by a half dot. In several instances, thematically related isoglosses are presented on a single map—for example, the isoglosses with *e* and *o*; the developments involving the semi-vowel *y*; the realization of word-initial voiced consonants; and the forms of demonstrative pronouns. Other maps pair an isogloss with a related phenomenon (e.g., the continuous present formed with the particle *ko* and its use as an affirmative particle independent of aspect), or with a secondary development resulting from the principal feature (e.g., the palatal articulation of post-velar plosives leading to their affrication).

In selecting isoglosses for inclusion, extensive geographic distribution or high frequency of occurrence was not treated as a prerequisite. In many cases, partial facts also have a distinctive meaning and are of scientific interest (for example, the use of the *or* “that” variant instead of the *vor* conjunction, the use of the *l̥e* variant instead of the pronoun *ēl*), etc. No attempt was made to maintain numerical balance between phonological and grammatical features (27 maps address phonological phenomena and 38 address grammatical ones), nor between features pertaining to vowels vs. consonants or to nominal vs. verbal morphology. The aim was instead to document, as comprehensively as possible, the principal dialectal features attested in the province’s speech varieties, irrespective of their linguistic subsystem.

All isogloss maps are accompanied by analytical commentaries. These typically open with a concise, sometimes formulaic, description of the feature, followed by illustrative examples

⁶⁸ Katvalyan V., *Dialectal Overview of the Republic of Armenia. Book 1. Gegharkunik Region*, pp. 254–258.

drawn from the speech varieties of the province, including variant-specific examples where applicable. The commentaries next provide an overview of the feature's distribution across Armenian dialects, followed by a detailed account of its attestation within Gegharkunik, organized by subregion and settlement. Explanatory notes are supplied where necessary. Each commentary concludes with an assessment of the relationship between the isogloss (or its variants) and the dialectal units present in the province.

The atlas is further supplemented by demographic information, a table presenting the population of each settlement, and an overview of the spatial distribution of dialectal units. A separate table lists, by numerical index, the set of features characteristic of each settlement, thereby providing not only a comprehensive profile of each speech variety but also facilitating comparative and typological analysis. The atlas concludes with a general description of the dialectal units attested in the province, followed by a complete list of isoglosses and maps.

ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Գեղարքունիքի մարզը գտնվում է Հայաստանի Հանրապետության արևելյան մասում և ներառում է Սևանա լիճը: Այն հյուսիսից սահմանակից է Լոռու և Տավուշի մարզերին, արևելքից՝ Ադրբեջանին, հարավ-արևմուտքից՝ Կոտայքի և Արարատի, իսկ հարավից՝ Վայոց ձորի մարզերին: Գեղարքունիքի մարզը տարածքով ամենամեծն է ՀՀ-ում (5 351 քառ. կմ): Այն ունի 5 քաղաք (մարզկենտրոն Գավառ, Ճամբարակ, Մարտունի, Սևան, Վարդենիս) և 93 գյուղ: Բնակավայրերը ընդգրկված են հինգ համայնքներում հետևյալ կերպ. Գավառի համայնք՝ 1 քաղաք և 11 գյուղ, Ճամբարակի համայնք՝ 1 քաղաք և 18 գյուղ, Մարտունու համայնք՝ 1 քաղաք և 18 գյուղ, Սևանի համայնք՝ 1 քաղաք և 11 գյուղ, Վարդենիսի համայնք՝ 1 քաղաք և 35 գյուղ: Մարզի բնակչության թվաքանակը 2024 թ. կազմել է 213,2 հազ. մարդ, որից 145,6 հազարը գյուղական բնակչությունն է, իսկ 67,6 հազարը՝ քաղաքային: Գյուղական խոշոր համայնքներ ունեն Մարտունու և Գավառի տարածաշրջանները, մինչդեռ Ճամբարակի և Վարդենիսի գյուղերը բազմամարդ չեն:

Մարզի շրջանները տարբերվում են ըստ բնակիչների ծագման: Վաղնջական ժամանակներից լինելով հայության բնօրրան՝ Գեղարքունյաց աշխարհը ևս զգալիորեն հայազրկվեց 1604 թ., երբ պարսից Շահ-Աբասը կազմակերպեց Արևելյան Հայաստանից հայության հոծ զանգվածների բռնագաղթ դեպի Պարսկաստան: 1829-1830 թվականներին կազմակերպված ներգաղթի ժամանակ տարածաշրջանի հայության կազմը համալրվեց Արևմտյան Հայաստանի տարբեր տարածքներից ու Պարսկաստանից գաղթած զանգվածներով: Մասնավորապես, Գավառի տարածաշրջանի ներկայիս բնակչության մեծ մասի նախնիները եկել են Արևմտյան Հայաստանի Բայազետ քաղաքից և շրջակա գյուղերից, այսօրվա Մարտունու տարածաշրջանի բնակավայրերում, նաև Վարդենիսի տարածաշրջանի գյուղերի մի մասում հաստատվել են Մուշի և Ալաշկերտի գաղթականները: Վարդենիս քաղաքի ներկայիս բնակիչների մեծ մասի նախնիները Դիաղիից են, Սևանի տարածաշրջանի բնակիչների նախնիները՝ Պարսկաստանի Մակու քաղաքից և շրջակա բնակավայրերից, Բայազետի Արծափ գավառակից: Ճամբարակի տարածաշրջանի համանուն քաղաքի, Գետիկ, Թթուջուր, Վահան գյուղերի ներկայիս բնակիչների մի մասի նախնիները դեռևս Ղարաբաղի մելիքությունների ժամանակներից (16-18-րդ դարեր) Գեղարքունիք են տեղափոխվել Արցախից: Այս տարածաշրջանի Մարտունի գյուղի բնակիչների նախնիները եկել են Կարսից, Վանից, Արդահանից, Մուշից և Բասենից: Վերջին շրջանում Վարդենիսի և Ճամբարակի բազմաթիվ բնակավայրեր բնակեցվել են ղարաբաղյան իրադարձությունների հետևանքով Արցախից ու հարակից շրջաններից, Ադրբեջանից բռնագաղթած հայերով:

DEMOGRAPHIC INFORMATION

Gegharkunik Province is located in the eastern part of the Republic of Armenia and its territory includes Lake Sevan. The province borders Lori and Tavush provinces to the north, Azerbaijan to the east, Kotayk and Ararat provinces to the southwest, and Vayots Dzor Province to the south. Gegharkunik is the largest province in Armenia by area, covering 5,351 square kilometers. The province comprises five towns (the provincial center Gavar, as well as Chambarak, Martuni, Sevan, and Vardenis) and 93 villages. These settlements are organized into five administrative communities as follows: Gavar Community includes one town and 11 villages; Chambarak Community includes one town and 18 villages; Martuni Community includes one town and 18 villages; Sevan Community includes one town and 11 villages; and Vardenis Community includes one town and 35 villages.

As of 2024, the population of the province is 213,200, of which 145,600 reside in rural areas and 67,600 in urban centers. The Martuni and Gavar regions are characterized by large rural communities, whereas the villages in Chambarak and Vardenis are relatively sparsely populated.

The districts of the province differ in terms of the historical origin of their inhabitants. Historically an Armenian homeland since ancient times, Gegharkunik experienced significant depopulation in 1604, when Shah Abbas of Persia orchestrated the forced relocation of large Armenian populations from Eastern Armenia to Persia. During the organized repatriation of 1829–1830, the Armenian population of the region was replenished by migrants from various areas of Western Armenia and Persia. Specifically, the ancestors of the current inhabitants of the Gavar region arrived from the town of Bayazet and surrounding villages in Western Armenia; refugees from Mush and Alashkert settled in present-day Martuni and in some villages of the Vardenis region. The majority of the current residents of Vardenis town trace their ancestry to Diyadin, while the inhabitants of the Sevan region originate primarily from the city of Maku in Persia and nearby settlements, as well as from the Artzap district of Bayazet.

Some current residents of the eponymous town of Chambarak, as well as of the villages of Getik, Ttujur, and Vahan, are descendants of Armenians who migrated from Artsakh to Gegharkunik during the Melikdom period (16th–18th centuries). Residents of Martuni village in this district trace their origins to Kars, Van, Ardahan, Mush, and Basen. More recently, many settlements in Vardenis and Chambarak have been repopulated by Armenians displaced from Artsakh, adjacent regions, and Azerbaijan as a consequence of the Nagorno-Karabakh conflict.

**ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԸ ԸՍՏ
ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ԹՎԱՔԱՆԱԿԻ⁶⁹**

**SETTLEMENTS OF GEGHARKUNIK REGION BY REGIONS AND
POPULATION**

Աղյուսակ 1 Table 1

	Անվանումը	Name	Մշտական բնակչության թվաքանակը 2024 թ. հունվարի 1-ի տվյալներով. մարդ Number of permanent population as of January 1, 2024: person
Գավառի տարածաշրջան Gavar region			
1.	Գավառ քաղաք (նաև Արծվաքար և Հացառատ գյուղեր)	Gavar city (also Artsvakar and Hatsarat villages)	18 582
2.	Բերդկունք	Berdkunk	294
3.	Գանձակ	Gandzak	4 377
4.	Գեղարքունիք	Gegharkunik	1 821
5.	Լանջաղբյուր	Lanjaghbyur	2 424
6.	Լճափ	Lchap	1 191
7.	Ծաղկաշեն	Tsaghkashen	516
8.	Ծովազարդ	Tsovazard	2 182
9.	Կարմիրգյուղ	Karmirgyugh	5 952
10.	Հայրավանք	Hayravank	788
11.	Նորատուս	Noratus	6 276
12.	Սարուխան	Sarukhan	7 458
Ճամբարակի տարածաշրջան Chambarak region			
1.	Ճամբարակ (քաղաք)	Chambarak (city)	5 558
2.	Աղբերք	Aghberk	262
3.	Այգուտ	Aygut	806
4.	Անտառամեջ	Antaramej	156
5.	Արտանիշ	Artanish	607
6.	Գետիկ	Getik	422
7.	Դպրաբակ	Dprabak	533
8.	Դրախտիկ	Drakhtik	917
9.	Թթուջուր	Ttujur	1 015

⁶⁹ Տեղեկությունները վերցվել են «ՀՀ մարզերի և Երևան քաղաքի սոցիալ-տնտեսական բնութագրերը» էլեկտրոնային հրապարակումից: The information was taken from the electronic publication "Socio-economic characteristics of the regions of the Republic of Armenia and the city of Yerevan"

(https://armstat.am/file/Map/MARZ_05.pdf):

Ցանկերում ընդգրկված են այն բնակավայրերի անվանումները, որոնց խոսվածքները ներկայացվում են:
The lists include the names of the settlements whose speeches are presented.

	Անվանումը	Name	Մշտական բնակչության թվաքանակը 2024 թ. հունվարի 1-ի տվյալներով. մարդ Number of permanent population as of January 1, 2024: person
10.	Կալավան	Kalavan	127
11.	Ձորավանք	Dzoravank	143
12.	Շորժա (Շողակաթ)	Shorzha (Shoghakat)	518
13.	Ջիլ	Jil	678
14.	Վահան	Vahan	981
Մարտունու տարածաշրջան Martuni region			
1.	Մարտունի (քաղաք)	Martuni (city)	11 896
2.	Աստղաձոր	Astghadzor	4 386
3.	Արծվանիստ	Artsvanist	3 142
4.	Գեղհովիտ	Geghhovit	6 008
5.	Երանոս	Yeranos	5 401
6.	Զոլաքար	Zolakar	6 646
7.	Լիճք	Lichk	5 369
8.	Ծակքար	Tsakqar	2 860
9.	Ծովասար	Tsovasar	2 917
10.	Ծովինար	Tsovinar	4 572
11.	Ձորագյուղ	Dzoragyugh	4 767
12.	Մադինա	Madina	1 138
13.	Ներքին Գետաշեն	Nerkin Getashen	9 381
14.	Վաղաշեն	Vaghashen	4 048
15.	Վարդաձոր	Vardadzor	2 798
16.	Վարդենիկ	Vardenik	8 256
17.	Վերին Գետաշեն	Verin Getashen	4 490
Մևանի տարածաշրջան Sevan region			
1.	Գեղամավան	Geghamavan	1 791
2.	Դդմաշեն	Ddmashen	2 648
3.	Զովաբեր	Zovaber	1 506
4.	Լճաշեն	Lchashen	4 266
5.	Ծաղկունք	Tsaghkunk	1 062
6.	Ծովագյուղ	Tsovagyugh	4 301
7.	Նորաշեն	Norashen	494
8.	Չկալովկա	Ch'kalovka	580
9.	Վարսեր	Varser	1 437

	Անվանումը	Name	Մշտական բնակչության թվաքանակը 2024 թ. հունվարի 1-ի տվյալներով. մարդ Number of permanent population as of January 1, 2024: person
Վարդենիսի տարածաշրջան Vardenis region			
1.	Վարդենիս (քաղաք)	Vardenis (city)	12 575
2.	Ազատ	Azat	73
3.	Ախպրաձոր	Akhpradzor	216
4.	Ակունք	Akunk	3 850
5.	Այրք	Ayrk	217
6.	Ավազան	Avazan	189
7.	Արեգունի	Areguni	230
8.	Արփունք	Arpunk	440
9.	Գեղամաբակ	Geghamabak	104
10.	Գեղամասար	Geghamasar	938
11.	Գեղաքար	Geghakar	134
12.	Դարանակ	Daranak	130
13.	Լճավան	Lchavan	510
14.	Լուսակունք	Lusakunk	1 194
15.	Խաչաղբյուր	Khach'aghbyur	1 153
16.	Ծովակ	Tsovak	2 455
17.	Կախակն	Kakhakn	302
18.	Կարճաղբյուր	Karchaghbyur	2 017
19.	Կութ	Kut	153
20.	Կուտական	Kutakan	226
21.	Մաքենիս	Makenis	438
22.	Մեծ Մասրիկ	Mets Masrik	2 595
23.	Նորաբակ	Norabak	241
24.	Նորակերտ	Norakert	795
25.	Շատջրեք	Shatjrek	415
26.	Շատվան	Shatvan	426
27.	Ջաղացաձոր	Jaghats'adzor	130
28.	Սոթք	Sotk	1 070
29.	Վանեվան	Vanevan	371
30.	Տրետուք	Tretuk	187
31.	Փամբակ	Pambak	327
32.	Փոքր Մասրիկ	Pokr Masrik	698

ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ՏԱՐԱԾԱԿԱՆ ԸՆԴԳԴՈՒՄԸ ՀՀ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ

Գեղարքունիքի մարզում գործածվում են հայերենի բարբառային հետևյալ միավորները.

ՄՇՈ ԲԱՐԲԱՌ. Գործածվում է Մարտունու տարածաշրջանի բոլոր բնակավայրերում, նաև Վարդենիսի տարածաշրջանի Ախպրաձոր, Լճավան, Լուսակունք, Խաչաղբյուր, Ծովակ, Կարճաղբյուր, Մաքենիս, Մեծ Մասրիկ, Նորակերտ գյուղերում: Ընդ որում՝ Մարտունու տարածաշրջանի Երանոս, Լիճք, Ձորագյուղ, Մաղինա, Ներքին Գետաշեն, Վերին Գետաշեն, Վարդաձոր բնակավայրերում խոսում են Մշո բարբառի Ալաշկերտի խոսվածքով, իսկ Վարդենիսի տարածաշրջանի հիշյալ բնակավայրերում և Մարտունու տարածաշրջանի մյուս բնակավայրերում (Աստղաձոր, Արծվանիստ, Գեղհովիտ, Ջուլաքար, Մարտունի, Վաղաշեն, Վարդենիկ, Ծակքար, Ծովասար, Ծովինար) գործածվում են Մշո բարբառի տարբեր դրսևորումներ: 2024 թ. տվյալներով՝ Գեղարքունիքի մարզում Մշո բարբառով հաղորդակցվում է շուրջ 100 000 մարդ:

ԲԱՅԱԶԵՏԻ ԲԱՐԲԱՌ. Խոսվում է Գավառի տարածաշրջանում՝ Գավառ քաղաքում (որի կազմում են նաև Արծվաքար և Հացառատ բնակավայրերը) և Ծովազարդ, Լճափ, Նորատուս, Գանձակ, Ծաղկաշեն, Բերդկունք, Հայրավանք, Կարմիրգյուղ, Սարուխան, Լանջաղբյուր, Գեղարքունիք գյուղերում: Ըստ վերոհիշյալ տվյալների՝ Գեղարքունիքի մարզում Բայազետի բարբառով հաղորդակցվում է շուրջ 52 000 մարդ:

ԴԻՍԴԻՆԻ ԲԱՐԲԱՌ. Գործածվում է Վարդենիս քաղաքում: Մարզում բարբառով հաղորդակցվում է մոտ 12 500 մարդ:

ԳԱՆՁԱԿԻ ՄԻՋԲԱՐԲԱՌ. Խոսվում է Ճամբարակ քաղաքում, Վահան, Գետիկ, Թթուջուր գյուղերում: Մարզում Գանձակի միջբարբառով հաղորդակցվում է շուրջ 8 000 մարդ:

ՄԱԿՈՒԻ ԽՈՍՎԱԾՔ. գործածվում է Սևանի տարածաշրջանում՝ Դդմաշեն, Ջովաբեր, Ծաղկունք, Գեղամավան, Վարսեր, Լճաշեն, Չկալովկա բնակավայրերում: Գեղարքունիքի մարզում Մակուի խոսվածքով հաղորդակցվում է մոտ 13 700 մարդ:

ԱՐԾԱՓԻ ԽՈՍՎԱԾՔ. գործածվում է Սևանի տարածաշրջանի Ծովագյուղ բնակավայրում: Արծափի խոսվածքով մարզում հաղորդակցվում է մոտ 4300 մարդ:

ՂԱՐԱԲԱՂԻ ԲԱՐԲԱՌ. Խոսվում է Վարդենիսի տարածաշրջանի Ազատ, Այրք, Ավազան, Արեգունի, Արփունք, Գեղամաբակ, Գեղամասար, Գեղաքար, Դարանակ, Ծափաթաղ, Կախակն, Կուր, Կուտական, Նորաբակ, Շատջրեք, Շատվան, Ջաղացաձոր, Սոթք, Վանեվան, Տրետուք, Փամբակ, Փոքր Մասրիկ գյուղերում և Ճամբարակի

տարածաշրջանի Աղբերք, Այգուտ, Անտառամեջ, Արտանիշ, Դպրաբակ, Դրախտիկ, Կալավան, Ձորավանք, Շորժա, Ջիլ բնակավայրերում: Բարբառով Գեղարքունիքի մարզում հաղորդակցվում է հավանաբար մոտ 11 700 մարդ:

Մարզի որոշ բնակավայրերում՝ Սևան, Գագարին քաղաքներում, Մարտունի, Ակունք, Տորֆավան գյուղերում, խոսում են խառը տիպի խոսվածքներով, երբեմն էլ՝ խոսակցական հայերենին մոտ լեզվատարբերակներով:

DISTRIBUTION OF DIALECTAL UNITS IN GEGHARKUNIK PROVINCE, REPUBLIC OF ARMENIA

In Gegharkunik Province, the following Armenian dialectal units are in active use:

Mush Dialect. This dialect is spoken throughout all settlements in the Martuni region and in several villages of the Vardenis region, including Akhpradzor, Lchavan, Lusakunq, Khachaghbyur, Tsovak, Karchaghbyur, Makenis, Mets Masrik, and Norakert. Within the Martuni region, the villages of Yeranos, Lichq, Dzoragyugh, Madina, Nerk'in Getashen, and Verin Getashen use the Alashkert variant of the Mush dialect, whereas other settlements in the Martuni region (Astghadzor, Artsvanist, Geghhovit, Zolakar, Martuni, Vaghashen, Vardenik, Tsakkar, Tsovasar, Tsovinar) and the aforementioned Vardenis villages exhibit different local varieties of the Mush dialect. According to 2024 data, approximately 100,000 individuals in Gegharkunik communicate in the Mush dialect.

Bayazet Dialect. Spoken in the Gavar region, including Gavar town (with its blocks of Artsvakar and Hatsarat) and the villages of Tsovazard, Lchap, Noratus, Gandzak, Tsaghkashen, Berdkunk, Hayravank, Karmirgyugh, Sarukhan, Lanjaghbyur, and Gegharkunik. Approximately 52,000 people in Gegharkunik communicate using the Bayazet dialect.

Diyadin Dialect. This dialect is primarily used in Vardenis town, with about 12,500 speakers in the province.

Gandzak Interdialect. Spoken in Chambarak town and the villages of Vahan, Getik, and Ttujur, with an estimated 8,000 speakers in the province.

Maku Speech. Found in the Sevan region, particularly in the villages of Ddmashen, Zovaber, Tsaghkunk, Geghamavan, Varser, Lchashen, and Chkalovka. Approximately 13,700 residents of Gegharkunik communicate in the Maku speech variety.


Artsap Speech. Spoken in Tsovaghyugh village within the Sevan region, with around 4,300 speakers in the province.

Karabakh Dialect. This dialect is spoken in numerous villages of the Vardenis region, including Azat, Ayrk, Avazan, Areguni, Arpunk, Geghamabak, Geghamasar, Geghakar, Daranak, Tsapatagh, Kakhakn, Kut, Kutakan, Norabak, Shatjrek, Shatvan, Jaghatsdzor, Sotk, Vanevan, Tretuk, Pambak, and Pokr Masrik, as well as in Chambarak region villages such as Aghberk, Aygut, Antaramich, Artanish, Dprabak, Drakhtik, Kalavan, Dzoravank, Shorja, and Jil. The Karabakh dialect is spoken by approximately 11,700 residents of Gegharkunik.

In some settlements, including Sevan, Gagharin, and the villages of Martuni, Akunk, and Torfavan, speakers use mixed types of speeches or language varieties that closely approximate colloquial Armenian.

ԳԵՂԱՐՔՈՒՆԻԻ ՄԱՐԶԻ
ՏԱՐԱԾԱՆԵՐԶՆԵՐԸ
REGIONS OF GEGHARKUNIK
PROVINCE





ԶՈՒԳԱԲԱՆԱԿԱՆ ՔԱՐՏԵԶՆԵՐ ԵՎ
ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ
ISOGLOSS MAPS AND COMMENTARY

ՀԱՉՅՈՒՆԱԿԱՆ ԶՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. ՔՄԱՅՆԱՑԱԾ **ա, օ, ու** ԶԱՅՆԱՎՈՐՆԵՐԻ ԱՌԿԱՅՈՒԹՅՈՒՆ

ա>ւ օ>օ ու> ու

Նյութեր և մեկնաբանություններ

ա **պամբակ** (բամբակ), **կանգան** (գանգատ), **տան** (դաս), **ծախ** (ծախ), **ճարթիլ** (ջարդել).
պօխ (բող), **կօմ** (ոմ), **տօղ** (դող), **ծօր** (ծոր). **պուրթ** (բուրդ), **տուր** (դուր) **ծուկ** (ծուկ),
ճուր (ջուր).

բ **բան** (բահ), **գանգ** (գագան), **դանակ** (դանակ), **ծախ** (ծախ), **ջարթել** (ջառթել)

գ **անաթ** (ադաթ), **քանի** (քեռի), **նախ** (նավթ), **խայլի** (հայելի), **ջաննամ** (ջրհանդամ),
քոֆտ (քոֆթա), **քալամ** (կաղամբ), **հանաթ** (բակ)

Քմայնացած **ա, օ, ու** ձայնավորները (որոնք արտաբերելիս լեզուն ոչ թե կծկվում է բերանի հետին մասում, այլ ամբողջ զանգվածով առաջ է մղվում, իսկ լեզվի մեջքը բարձրանում է դեպի քիմքը) բարբառային հայերենում լայն տարածում ունեն, բայց առավել բնորոշ են եզրային բարբառներին (հատկապես՝ Վասպուրականի, Սյունիքի և Արցախի տարածքի բարբառներին), կենտրոնական բարբառներում այդ հնչյունները առկա են հիմնականում փոխառյալ բառերում:

Գեղարքունիքի մարզում քմայնացած **ա, օ, ու** ձայնավորներ դրսևորվում են Ճամբարակի տարածաշրջանի Ճամբարակ, Վահան, Գետիկ, Թթուջուր (Գանձակի միջբարբառ) բնակավայրերի խոսվածքներում, ինչպես նաև Ճամբարակի և Վարդենիսի տարածաշրջանների՝ արցախցիներով բնակեցված գյուղերի խոսվածքներում: Սրանցում քմայնացած ձայնավորները օրինաչափորեն հանդես են գալիս բառակզրի խլացած ձայնեղներին հաջորդող դիրքերում, առկա են նաև այլ դիրքերում: Այդ հնչյունները մասնակիորեն արտահայտվում են նաև Վարդենիս քաղաքի խոսվածքում (Դիադինի բարբառ):

Քմայնացած ձայնավորների շարքում առավել տարածված է **ւ**-ն: Այդպես է նաև Գեղարքունիքի մարզի խոսվածքներում: Քմայնացած **ւ**-ն օրինաչափորեն հանդես է գալիս Վարդենիսի խոսվածքում (Դիադինի բարբառ)՝ բառակզրի շնչեղ ձայնեղներից հետո, նաև այլ դիրքերում: Հաճախ նույն կերպ **ւ** է առկա նաև Վարդենիսի տարածաշրջանի Ակունքի (խառը տիպի խոսվածք) և Լուսակունքի (Մշո բարբառ) խոսվածքներում: Սևանի (Մակուի և Արծափի խոսվածքներ), Գավառի (Բայազետի բարբառ), Մարտունու (Մշո բարբառ) տարածաշրջանների բնակավայրերի, Վարդենիսի տարածաշրջանի Ախպրաձոր, Լճավան, Խաչաղբյուր, Ծովակ, Կարճաղբյուր,

Մաքենիս, Մեծ Մասրիկ, Նորակերտ գյուղերի (Մշո բարբառ) խոսվածքներում դիտարկվող հնչյունը հանդիպում է հիմնականում փոխառյալ բառերում:

Զուգաբանությունը, այսպիսով, Գեղարքունիքի մարզի բարբառային միավորներում արտահայտվում է երեք տարբերակով.

ա) քմայնացած *յ*, *ö*, *ü* ձայնավորների օրինաչափ դրսևորում բառասկզբի խլացած ձայնեղներից հետո. Ղարաբաղի բարբառի, Գանձակի միջբարբառի խոսվածքներ.

բ) *յ*-ի օրինաչափ դրսևորում բառասկզբի շնչեղ ձայնեղներից հետո. Դիադինի բարբառ, մասամբ՝ Մշո բարբառի Լուսակունքի խոսվածք, Ակունքի խառը տիպի խոսվածք.

գ) *յ*-ի առկայություն հիմնականում փոխառյալ բառերում՝ առանց որևէ օրինաչափության. Մշո, Բայազետի բարբառների խոսվածքներ, Մակուի, Արծափի խոսվածքների տարբերակներ:

PHONETIC ISOGLOSSES

1. PRESENCE OF PALATALIZED VOWELS Ä, Ü, Ö

a > ä o > ü u > ö

Materials and commentary:

a) **pämbäk** > bambak “cotton”, **kʷängʷät** > gangat “complaint”, **täs** > das “class”, **tsäkh** > dzakh “left”, **chärt'il** > jardel “to break”, **pökhk** > boghk “radish”, **kʷöm** > gom “barn”, **tögh** > dogh “shiver”, **tsör** > dzor “gorge”, **pürt'** > burd “wool”, **türə** > dur “door”, **tsük** > dzuk “fish”, **chür** > jur “water”.

b) **b'äkh** > bah “shovel”, **gʷäzän** > gazan “beast”, **d'anäk** > danak “knife”, **dz'äkh** > dzakh “left”, **j'ärt'el** > jardel “to break”,

c) **ädät'** > adat' “custom”, **k'äri** > k'eri “maternal uncle”, **näft** > naft' “oil”, **khäyli** > hayeli “mirror”, **jäynäm** > jahnam “damn it”, **k'uftä** > k'uft'a “traditional meatball”, **k'äläm** > kaghamb “cabbage”, **hâyät'** > bac “yard”

Palatalized vowels ä, ü, ö (which are produced not by contracting the tongue at the back of the mouth, but by advancing the entire tongue mass forward and raising the back of the tongue toward the palate) are widespread in dialectal Armenian, but are more characteristic of peripheral dialects (especially the dialects of Vaspurakan, Syunik, and Artsakh). In central dialects, these sounds are present mainly in borrowed words.

In the Gegharkunik province, the palatalized vowels ä, ü, ö occur in the speeches of the Chambarak, Vahan, Getik, and Ttujur settlements of the Chambarak region (Gandzak inter-dialect), as well as in the speeches of villages in the Chambarak and Vardenis regions settled by Artsakh Armenians. In these speechess, palatalized vowels regularly appear in positions following the word-initial voiced consonants that have become voiceless; they are also present in other positions. These sounds are also partially expressed in the speech of Vardenis city (Diadin dialect).

Among the palatalized vowels, ä is the most widespread. This is also the case in the speeches of Gegharkunik province. The palatalized ä appears regularly in speech of Vardenis (Diadin dialect) after word-initial aspirated voiced consonants, as well as in other positions. The same ä is often present in the speeches of Akunk (mixed-type speech) and Lusakunk (Mush dialect) in the Vardenis region. In the settlements of the Sevan (Maku and Artsap subdialects), Gavar (Bayazet dialect), and Martuni (Mush dialect) regions, and the villages of Akhpradzor, Lchavan, Khachaghbyur, Tsovak, Karchaghbyur, Maqenis, Mets Masrik, and Norakert in the Vardenis region (Mush dialect), the observed sound appears mainly in borrowed words.

Thus, this isogloss is expressed in three variants within the dialectal units of the Gegharkunik province:

- a) The regular occurrence of palatalized ä, ü, ö vowels after word-initial voiced consonants that have become voiceless: in the speeches of the Gharabagh dialect and the Gandzak inter-dialect.
- b) The regular occurrence of ä after word-initial aspirated voiced consonants: in the Diadin dialect, and partially in the Lusakunk speech of the Mush dialect and the mixed-type speech of Akunk.
- c) The presence of ä mainly in borrowed words without any regularity: in the speeches of the Mush and Bayazet dialects, and variants of the Maku and Artsap subdialects.



ՀԱՉՅՈՒՆԱԿԱՆ ԶՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

2. ՇՐԹՆԱՅՆԱՑԱԾ ԱՍ ԶԱՅՆԱՎՈՐԻ ԱՌԿԱՅՈՒԹՅՈՒՆ

ա ~ ա՛

Նյութեր և մեկնաբանություններ

ա՛տամ, ա՛ստըդ, պա՛նիր, տա՛նկ, կա՛տու, ծա՛րավ, ճա՛գար, ֆա՛յտոն, սա՛ր, շա՛տ, մա՛քուր, նա՛մակ

Շրթնայնացած ա՛ ձայնավորը (որն արտասանելիս շրթունքները լարվում և առաջ են ձգվում, և այդպիսով արտաբերվում է *ա*-ին կամ *օ*-ին բնորոշ շրթնային սկիզբ ունեցող *ա* հնչյուն) դիտարկվել է Բայազետի բարբառում, ինչպես և ՀՀ Մարտունու տարածաշրջանի որոշ գյուղերի խոսվածքներում: Առկա է Բայազետի բարբառում շրթնայնացած ա՛-ի բաշխման օրինաչափություն, ըստ որի՝ այդ հնչյունը հանդես է գալիս՝ ա) բացարձակ բառակազմում, բ) բառակազմի խուլ բաղաձայններից (բացառությամբ *խ, հ* շփականների) և *ւ, ն* հպական ձայնորդներից հետո:

Գեղարքունիքի մարզում ա՛ հնչյունն արձանագրվել է Գավառի տարածաշրջանի բոլոր բնակավայրերի խոսվածքներում (Բայազետի բարբառ): Ծովագարդի՝ մշեցիների սերունդներով բնակեցված հատվածում ա՛ հնչյունը գործածական չէ, բայց առկա է սարուխանցիների սերունդ հանդիսացող բարբառախոսների խոսքում: Լճափում, որի բնակիչների մեծ մասի նախնիները մշեցիներ են, դիտարկվող հնչյունը քիչ գործածական է: Գավառի տարածաշրջանում *ա* - ի շրթնայնացումը բոլոր խոսվածքներում նույն կերպ չի արտահայտվում. այն ավելի թույլ է Գավառի խոսվածքում և ավելի ցայտուն՝ Սարուխանի խոսվածքում: *Ա* - ի շրթնայնացումը մասնակիորեն է առկա Մակուի խոսվածքը կրողներով բնակեցված Դումաշեն, Զովաբեր, Լճաշեն, Չկալովկա գյուղերում, Մշո բարբառի խոսվածքներով հաղորդակցվող Գեղհովիտ, Զուլաքար, Վաղաշեն գյուղերում:

Զուգաբանությունը, այսպիսով, Գեղարքունիքի մարզի բարբառային միավորներում արտահայտվում է երկու տարբերակով.

ա) շրթնայնացած ա՛-ի օրինաչափ և կայուն դրսևորում՝ շրթնայնացման աստիճանի որոշ տարբերություններով. Բայազետի բարբառի խոսվածքներ.

բ) շրթնայնացած ա՛-ի մասնակի արտահայտումներ. Մշո բարբառի առանձին խոսվածքներ, Մակուի խոսվածքի որոշ տարբերակներ:

PHONETIC ISOGLOSSES

2. PRESENCE OF LABIALIZED VOWEL Å

a ~ å

Materials and commentary:

âtam “tooth”, **âstəgh** “star”, **pânir** “cheese”, **tâk** “under”, **kâtu** “cat”, **tsârav** “thirsty”, **châgar** “rabbit”, **fâyton** “carriage”, **sâr** “mountain”, **shât** “many”, **mâk’ur** “clean”, **nâmak** “letter”

The labialized vowel å (which, when pronounced, the lips are tense and stretched forward, and thus it is pronounced with a labial onset characteristic of *u* or *o*) has been observed in the Bayazet dialect, as well as in the speech of some villages in the Martuni region of Armenia. There is a regular distribution of labialized å in the Bayazet dialect, according to which this sound appears in: a) absolute word-initial position, and b) after word-initial voiceless consonants (with the exception of the fricatives *kh*, *h*) and the nasal sonants *m* and *n*.

In Gegharkunik province, the å sound has been recorded in the speeches of all settlements in the Gavar region (Bayazet dialect). In the part of Tsovazard where the Mush people live, the å sound is not used, but it is present in the speech of dialect speakers from Sarukhan. In Lchap, where the majority of residents are descendants of Mush Armenians, the observed sound is used less often. In the Gavar region, the labialization of *a* does not occur in the same way in all speeches. It is weaker in the Gavar speech and more pronounced in the Sarukhan speech. There are partial cases of the labialization of *a* in the villages of Ddmashen, Zovaber, Lchashen and Chkalovka, which are inhabited by speakers of the Maku subdialect, and in the villages of Geghhovit, Zolakar and Vaghashen, where the Mush dialect is spoken.

Thus, this isogloss is expressed in two variants within the dialectal units of the Gegharkunik province:

- a) A regular and stable use of labialized å, with some differences in the degree of labialization: in the speeches of the Bayazet dialect.
- b) Partial uses of labialized å: in certain speeches of the Mush dialect and some variants of the Maku subdialect.

ՀԱՅՈՅ ԼԵԶՎԻ
ԲԱՐԲԱՌԱԳԻՏԱԿԱՆ ԱՏԼԱՍ
ԳԵՂԱՐՔՈՒՆՆԵՐԻ ՄԱՐԶ

2. ԵՐԹՆԱՅՆԱՅԱԾ և ՉԱՅՆԱՎՈՐԻ
ԱՌԿԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESENCE OF LABIALIZED VOWEL Å



ՀԱՉՅՈՒՆԱԿԱՆ ԶՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

3. ԽԱՌԸ ՏԻՊԻ ԶԱՅՆԱՎՈՐՆԵՐԻ ԱՌԿԱՅՈՒԹՅՈՒՆ

ի>ը^հ է>ը^է

Նյութեր և մեկնաբանություններ

կընը^հկ (կնիկ), **ծը^հտ** (ծիտ), **մը^հս** (միս), **ցը^հց** (ցեց), **սը^հր** (սեր), **ասը^հդ** (ասեղ), **կարպը^հտ** (կարպետ)

Բարբառային հայերենում պարզ ձայնավորներից և երկբարբառներից բացի՝ գործածվում են նաև խառը տիպի ձայնավորներ: Երկու ձայնավորների միջին աստիճան ներկայացնող ը^հ (ը և ի ձայնավորների միջին աստիճան) հնչյունն արձանագրվել է Ղարաբաղի և Հաղրութի բարբառներում, ը^է (է և ը ձայնավորների միջին աստիճան) հնչյունը՝ Մեղրու, Կարճևանի, Սյունիք-Արցախի տարածքի բարբառներում, միջնալեզվային ստորին բարձրացման կամ կոշտ ը ձայնավորը՝ Շամախիի, Կոզենի, Զեյթունի, Ղարաբաղի և այլ բարբառներում:

Գեղարքունիքի մարզում այս կարգի ձայնավորները հատուկ են Ճամբարակի տարածաշրջանի բոլոր բնակավայրերի (բացի Մարտունի գյուղը) խոսվածքներին (Ղարաբաղի բարբառ, Գանձակի միջբարբառ) և Վարդենիսի տարածաշրջանի՝ արցախցիներով բնակեցված Ազատ, Այրք, Ավազան, Արեգունի, Արփունք, Գեղամաբակ, Գեղամասար, Գեղաքար, Դարանակ, Կախակն, Կուրթ, Կուտական, Նորաբակ, Շատջրեք, Շատվան, Զաղացաձոր, Սոթք, Վանեվան, Տրետուք, Փամբակ, Փոքր Մասրիկ գյուղերի խոսվածքներին (Ղարաբաղի բարբառ):

Հատկանիշը, այսպիսով, Գեղարքունիքի մարզում դրսևորվում է Ղարաբաղի բարբառի և Գանձակի միջբարբառի խոսվածքներում:

PHONETIC ISOGLOSSES

3. PRESENCE OF MIXED-TYPE VOWELS

i > **əⁱ** **e** > **ə^e**

Materials and commentary:

kəṇəⁱk > kənik > “woman”, **tsəⁱt** > tsit “bird”, **məⁱs** > mis “meat”, **tsə^ets** > tsets “moth”, **səⁱr** > ser “love”, **asə^egh** > asegh “needle”, **karpəⁱt** > karpet “carpet”

In dialectal Armenian, in addition to simple vowels and diphthongs, mixed-type vowels are also used. The sound **əⁱ** (an intermediate stage between the vowels **ə** and **i**) has been recorded in the Karabakh and Hadrut dialects. The sound **ə^e** (an intermediate stage between the vowels **ə** and **ē**) has been recorded in the dialects of Meghri, Karchevan, and in the speeches of Syunik-Artsakh region. The “hard” **ə** vowel has been recorded in the dialects of Shamakhi, Krzen, Zeytun, Karabakh, and others.

In the Gegharkunik province, this class of vowels is characteristic of the speeches of all settlements in the Chambarak region (except for the village of Martuni) (Karabakh dialect, Gandzak inter-dialect) and the speeches of the villages in the Vardenis region inhabited by Artsakh Armenians: Azat, Ayrk, Avazan, Areguni, Arpunk, Geghamabak, Geghamasar, Geghakar, Daranak, Kakhakn, Kut, Kutakan, Norabak, Shatjreq, Shatvan, Jaghatsadzor, Sotk, Vanevan, Tretuk, Pambak, and Poqr Masrik (Karabakh dialect).

Thus, this feature appears in the Gegharkunik province in the speeches of the Karabakh dialect and the Gandzak inter-dialect.

3. ԽԱՌԸ ՏԻՊԻ ՉԱՅՆԱՎՈՐՆԵՐԻ ԱՌԿԱՅՈՒԹՅՈՒՆ PRESENCE OF MIXED-TYPE VOWELS



Զուգաբանությունը, այսպիսով, Գեղարքունիքի մարզի բարբառային միավորներում դրսևորվում է հինգ տարբերակով.

ա) նախնական n -ի փոխարեն՝ $ւn$. Բայազետի, Դիադինի բարբառների խոսվածքներ, Մշո բարբառի որոշ խոսվածքներ, Արծափի և Մակուի խոսվածքների տարբերակներ, Ակունքի խառը տիպի խոսվածք.

բ) նախնական n -ի փոխարեն՝ $ւn$. Մշո բարբառի խոսվածքներ.

գ) նախնական n -ի փոխարեն՝ $ւէ//ւը$. Ղարաբաղի բարբառի, Գանձակի միջբարբառի խոսվածքներ.

դ) նախնական n -ի փոխարեն՝ $ւօ$. Մշո բարբառի խոսվածք.

ե) նախնական n -ի փոխարեն՝ $օ$. Մշո բարբառի խոսվածք:

PHONETIC ISOGLOSSES

4. ADDITION OF A LABIAL ELEMENT BEFORE WORD-INITIAL O IN MONOSYLLABIC WORDS

o > vo, v $\bar{o}$, wo, v $\bar{o}$ ^ē, $\bar{o}$

Materials and commentary:

vot//v $\bar{o}$ t//wot < ot “foot”, **voṛts’//woṛts’//v $\bar{o}$ ṛts’** < ordz “male”, **vort//v $\bar{o}$ rt** < ord “worm”, **v $\bar{o}$ ch** < och’ “no”, **v $\bar{o}$ r** < or “which”, **$\bar{o}$ t** < ot “foot”

The tendency for a narrower pronunciation of the Old Armenian *o* has gradually led, in many places, to the appearance of a weak *u* vowel tinge at the beginning of the articulation of this sound, which in a stressed syllable has resulted in a *uo* diphthongal pronunciation. This pronunciation occurs differently across various dialects. This phenomenon is more clearly expressed in the dialects of Van, Khoy, Maragha, Shatakh, Diadin, and other nearby areas. The development of a diphthongal pronunciation of *o* at the beginning of monosyllabic words has led to the addition of a labial element, which has resulted in the formation of the variants *wo*, *vo*, *v $\bar{o}$* , and *ve/v $\bar{o}$ ^ē* in different places. This process has not occurred in a number of dialectal units (e.g., Nicomedia, Partizak, Izmir, Malatya, Zeytun, Sasun, Meghri, Karchevan, Agulis, etc.).

All variants of the change to initial *o* in monosyllabic words have been recorded in the speeches of Gegharkunik province. The most widespread is the *vo* variant, which has been recorded in the speeches of the Sevan region villages (Maku and Artsap subdialects), all settlements of the Gavar region (Bayazet dialect), the villages of Madina, Astghadzor, and Artsvanist in the Martuni region (Mush dialect), the villages of Karchaghbyur, Lchavan, Maqenis, Lusakunk, Khachaghbyur, and Mets Masrik in the Vardenis region (Mush dialect), the village of Akunk (mixed-type speech), and the speech of Vardenis city (Diadin dialect).

The *wo* variant has been recorded in the speeches of most settlements in the Martuni region (Yerranos, Vardadzor, Dzoragyugh, Tsakqar, Lichk, Tsovasar, Nerkin Getashen, Verin Getashen, Martuni, Geghhovit, Vaghashen, Zolaqar, Vardenik), and in the speech of the village of Tsovak in the Vardenis region (Mush dialect). The *ve/v $\bar{o}$ ^ē* variant has been recorded in all settlements of the Chambarak region (Karabagh dialect and Gandzak inter-dialect) and in the villages of the Vardenis region inhabited by Artsakh Armenians (Karabagh dialect). Only in the speech of the village of Akhpradzor in the Vardenis region (Mush dialect) *v $\bar{o}$* was observed, and in the speech of the village of Norakert, the *$\bar{o}$* variant was observed (Mush dialect).


Thus, this isogloss is expressed by five variants in the dialectal units of the Gegharkunik province:

- a) *vo* instead of initial *o*: in the speeches of the Bayazet and Diadin dialects, some Mush speeches, variants of the Artsap and Maku subdialects, and the mixed-type Akunk speech;
- b) *wo* instead of initial *o*: in the speeches of the Mush dialect;
- c) *ve/v $\bar{o}$ ^ē* instead of initial *o*: in the speeches of the Karabagh dialect and the Gandzak inter-dialect;
- d) *v $\bar{o}$* instead of initial *o*: in a speech of the Mush dialect;
- e) *$\bar{o}$* instead of initial *o*: in a speech of the Mush dialect.

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ
ԲԱՐԲԱՌԱԳԻՏԱԿԱՆ ԱՏԼԱՍ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ

4. ՄԻԱՎԱՆԿ ԲԱՌԵՐԻ ՄԿԶԲՈՒՄ *n* - ԻՑ ԱՌԱՋ
ՇՐԹՆԱՅԻՆ ՏԱՐՐԻ ՀԱՎԵԼՈՒՄ

ADDITION OF A LABIAL ELEMENT BEFORE WORD-INITIAL *O* IN MONOSYLLABIC WORDS



ՀԱՉՅՈՒՆԱԿԱՆ ԶՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

5. ՄԻԱԿԱՆԿ ԲԱՌԵՐԻ ՄԿԶԲՈՒՄ Ե - ԻՑ ԱՌԱՋ ՄԻՋՆԱԼԵԶՎԱՅԻՆ ՁԱՅՆՈՐԴԻ ՀԱՎԵԼՈՒՄ

ե > յե // յե // յե

Նյութեր և մեկնաբանություններ

յեա//յեա//յեա < եա, յեփ//յեփ < երբ, յերք//յերք < երգ, յեզ//յեզը < եզ, յեռ < եռ

Հինհայերենյան *ե*-ի ավելի սուղ արտասանության միտումը ժամանակի ընթացքում հանգեցրել է շեշտակիր վանկում երկբարբառային *յե* արտասանության: Միավանկ բառերի սկզբում երկբարբառացումը ավելի ընդգծված բնույթ է կրել, որի հետևանքով մի դեպքում *ե*-ից առաջ ի հայտ է եկել *յ* կիսաձայնի որոշակի երանգ, այլ վայրերում *յե*-ն վերածվել է *յ* երկհնչյունի: Միավանկ բառերի սկզբում *ե*-ից առաջ միջնալեզվային ձայնորդի հավելման հատկանիշը, սակավ բացառություններով (Պոլիս, Նիկոմեդիա, Ակն, Մալաթիա, Զեյթուն, Մարաշ, Քեսաբ, Գելիեգուզան, Մեղրի, Ագուլիս, Հավարիկ և այլն), ընդգրկում է գրեթե ողջ բարբառային հայերենը:

Գեղարքունիքի մարզում հատկանիշն ունի տարբերակային մի շարք դրսևորումներ:

Սևանի (Մակուի և Արծափի խոսվածքներ) և Գավառի (Բայազետի բարբառ) տարածաշրջաններում ամբողջությամբ, Մարտունու (Մշո բարբառ) գրեթե ողջ տարածաշրջանում (բացառությամբ Ներքին Գետաշեն և Վաղաշեն գյուղերը), Վարդենիսի տարածաշրջանի Կարճաղբյուր, Լճավան, Մաքենիս, Ախպրաձոր, Ծովակ, Լուսակունք, Խաչաղբյուր, Մեծ Մասրիկ գյուղերում (Մշո բարբառ), Վարդենիս քաղաքում (Դիադինի բարբառ) և Ակունք գյուղում (խառը տիպի խոսվածք) բարբառային խոսքում միավանկ բառերի սկզբի *ե*-ի փոխարեն առկա է *յե*:

Մարտունու տարածաշրջանի Ներքին Գետաշենի և Վաղաշենի խոսվածքներում (Մշո բարբառ) *ե*-ի փոխարեն առկա է *յ*-ի թույլ դրսևորմամբ տարբերակ՝ *յե*:

Ճամբարակի տարածաշրջանի բոլոր բնակավայրերի խոսվածքներում (Ղարաբաղի բարբառ, Գանձակի միջբարբառ) և Վարդենիսի տարածաշրջանի՝ արցախցիներով բնակեցված գյուղերի խոսվածքներում (Ղարաբաղի բարբառ) միավանկ բառերի սկզբի հինհայերենյան *ե*-ի փոխարեն առկա է *յե*//*յե*^է տարբերակը, Վարդենիսի տարածաշրջանի Նորակերտ գյուղի խոսվածքում (Մշո բարբառ)՝ *յե* տարբերակը:

Զուգաբանությունը, այսպիսով, Գեղարքունիքի մարզի բարբառային միավորներում դրսևորվում է երեք տարբերակով.

ա) միավանկ բառերի սկզբում նախնական *է*-ի փոխարեն՝ *յէ*։ Բայազետի, Դիադինի բարբառների բոլոր խոսվածքներ, Մշո բարբառի գրեթե բոլոր խոսվածքներ, Արծափի և Մակուի խոսվածքների տարբերակներ, Ակունքի խառը տիպի խոսվածք։

բ) միավանկ բառերի սկզբում նախնական *է*-ի փոխարեն՝ *յէ*։ Մշո բարբառի առանձին խոսվածքներ։

գ) միավանկ բառերի սկզբում նախնական *է*-ի փոխարեն՝ *յէ/յը*։ Ղարաբաղի բարբառի, Գանձակի միջբարբառի խոսվածքներ, Մշո բարբառի խոսվածք (*յէ*)։

PHONETIC ISOGLOSSES

5. ADDITION OF A DORSAL SONANT BEFORE WORD-INITIAL *E* IN MONOSYLLABIC WORDS

e > **ye** // **yē** // **ʏe**

Materials and commentary:

yes//**yēs**//**ʏes** < es “I”, **yep**//**yēp** < erb “when”, **yerq**//**yērq** < erg “song”, **ʏez**//**yēzə** < ezn “ox”, **yeŕ** < eŕ “boiling”

The tendency toward a narrower pronunciation of Old Armenian *e* over time led to a diphthongal *ie* pronunciation in stressed syllables. In word-initial position in monosyllabic words, this diphthongization was more pronounced. In some cases, this resulted in the appearance of a certain shade of the semivowel *y* before the *e*, while in other places, *ie* turned into the diphthong *ye*. The feature of adding a dorsal sonant before word-initial *e* in monosyllabic words encompasses nearly the entire dialectal Armenian landscape, with few exceptions (e.g., Polis, Nicomedia, Akn, Malatya, Zeytun, Marash, Kesab, Gelieguzan, Meghri, Agulis, Havarik, etc.).

In the Gegharkunik province, this feature has several variants.

In the Sevan (Maku and Artsap subdialects) and Gavar (Bayazet dialect) regions entirely, in almost the entire Martuni region (Mush dialect) (with the exception of the villages of Nerkin Getashen and Vaghashen), in the villages of Karchaghbyur, Lchavan, Maqenis, Akhpradzor, Tsovak, Lusakunk, Khachaghbyur, and Mets Masrik in the Vardenis region (Mush dialect), in the city of Vardenis (Diadin dialect), and in the village of Akunk (mixed-type speech), the dialectal speech uses *ye* instead of word-initial *e* in monosyllabic words.

In the speeches of Nerkin Getashen and Vaghashen in the Martuni region (Mush dialect), a variant with a weak manifestation of *y* is present: *ʏe*.

In the speeches of all settlements in the Chambarak region (Karabagh dialect, Gandzak inter-dialect) and the villages in the Vardenis region inhabited by Artsakh Armenians (Karabagh dialect), the variant *yē*//*yə̌* is present instead of Old Armenian word-initial *e* in monosyllabic words. In the speech of the village of Norakert in the Vardenis region (Mush dialect), the *yē* variant is present.

Thus, this isogloss is expressed by three variants in the dialectal units of the Gegharkunik province:

a) *ye* instead of initial *e* in monosyllabic words: in all speeches of the Bayazet and Diadin dialects, almost all speeches of the Mush dialect, variants of the Artsap and Maku subdialects, and the mixed-type Akunk speech;

b) *ʏe* instead of initial *e* in monosyllabic words: in some speeches of the Mush dialect;

c) *yē*//*yə̌* instead of initial *e* in monosyllabic words: in the speeches of the Karabagh dialect, the Gandzak inter-dialect, and a speech of the Mush dialect (*yē*).

ՀԱՉՅՈՒՆԱԿԱՆ ԶՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

6. ՈՐ ՇԱՂԿԱՊԻ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆ ՕՐ ՀԱՉԱՏԱՐԲԵՐԱԿՈՎ

$n > 0$

Նյութեր և մեկնաբանություններ

$np > op$

Միավանկ բառերի սկզբում n -ից առաջ շրթնային տարրի հավելման հատկանիշը ընդգրկում է գրեթե ողջ բարբառային հայերենը՝ սակավ բացառություններով (Նիկոմեդիա, Մալաթիա, Զեյթուն, Մարաշ, Գելիեգուզան, Շատախ, Մեդրի, Ագուլիս և այլն): Մշո և Կարնո բարբառներում, թեև այդ հատկանիշը առկա է, բայց չի վերաբերում np շաղկապին, որն ունի op արտասանություն:

Գեղարքունիքի մարզում np շաղկապը op արտասանություն ունի Մարտունու տարածաշրջանի բոլոր գյուղերի և Վարդենիսի տարածաշրջանի Կարճաղբյուր, Լճավան, Մաքենիս, Ախպրաձոր, Ծովակ, Լուսակունք, Խաչաղբյուր, Մեծ Մասրիկ, Նորակերտ գյուղերի (երկու տարածաշրջաններում էլ՝ Մշո բարբառ) խոսվածքներում:

Հատկանիշը, այսպիսով, Գեղարքունիքի մարզում դրսևորվում է Մշո բարբառի խոսվածքներում:

PHONETIC ISOGLOSSES

6. EXPRESSION OF THE CONJUNCTION OR “THAT” BY THE SOUND VARIANT $\bar{O}R$

$o > \bar{o}$

Materials and commentary:

or > $\bar{o}r$

The feature of adding a labial element before a word-initial *o* in monosyllabic words encompasses almost all of dialectal Armenian, with a few exceptions (e.g., Nicomedia, Malatia, Zeytun, Marash, Gelieguzan, Shatakh, Meghri, Agulis, etc.). In the Mush and Karin dialects, although this feature is present, it does not apply to the conjunction *or*, which is pronounced as $\bar{o}r$.

In the Gegharkunik province, the conjunction *or* has the pronunciation $\bar{o}r$ in the speeches of all villages in the Martuni region and the villages of Karchaghbyur, Lchavan, Maqenis, Akhpradzor, Tsovak, Lusakunk, Khachaghbyur, Mets Masrik, and Norakert in the Vardenis region (in both regions, this is the Mush dialect).

Thus, this feature appears in the Gegharkunik province in the speeches of the Mush dialect.

6. ՈՐ ՀԱՂԿԱԿԻ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆ ՕՐ
ՀՆՉԱՍԱՐԲԵՐԱԿՈՎ
EXPRESSION OF THE CONJUNCTION
OR "THAT" WITH THE SOUND
VARIANT *OR*



ՀԱՉՅՈՒՆԱԿԱՆ ԶՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

7. ԲԱԶՄԱՎԱՆԿ ԲԱՌԵՐԻ ՍԿԶԲՈՒՄ n - ԻՆ ԵՎ t - ԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՂ

O ԵՎ E

$n \sim o$ $t \sim t$

Նյութեր և մեկնաբանություններ

ա) **օխճար** (ոչխար), **օսկոռ** (ոսկոր), **երինջ** (երինջ), **երազ** (երազ)
բ) **օռնալ** (ոռնալ), **հօռսալ** (որսալ), **հօջիլ** (ոջիլ), **երկու** (երկու), **եփիլ** (եփել), **հերինջ** (երինջ), **վէխճար/վէչխար** (ոչխար), **վեռթի** (որդի)

Հայոց լեզվի մի շարք տարբերակներում միավանկ բառերի սկզբում $t > j$ և $n > q$ տիպի անցումները ժամանակի ընթացքում տարածվել են նաև բազմավանկ բառերի բառասկզբի դիրքի վրա: Սակայն շատ բարբառային միավորներում բազմավանկ բառերի սկզբում նման անցումներ տեղի չեն ունեցել, որովհետև միավանկ բառերի սկզբում ձայնավորների երկբարբառացումն ու երկհնչյունի վերածումը պայմանավորված են եղել շեշտ կրելու հանգամանքով: Քանի որ բազմավանկ բառերի սկզբում n , t հնչյունները եղել են անշեշտ դիրքում, ուրեմն և երկբարբառի, ապա և երկհնչյունի չեն վերածվել: Այդ է պատճառը, որ հայերենի շատ բարբառներում (Երզնկա, Տիգրանակերտ, Մուշ, Վան, Պոլիս, Բայազետ և այլն) բազմավանկ բառերի սկզբում առկա են $t \sim t$ և $n \sim o$ համապատասխանություններ:

Գեղարքունիքի մարզում բազմավանկ բառերի սկզբում նախնական n -ին համապատասխանող o և նախնական t -ին համապատասխանող t ունեն Սևանի (Արծափի և Մակուի խոսվածքներ), Գավառի (Բայազետի բարբառ) և Մարտունու (Մշո բարբառ) տարածաշրջանների բոլոր բնակավայրերի, Վարդենիսի տարածաշրջանի Կարճաղբյուր, Լճավան, Մաքենիս, Ախպրաձոր, Ծովակ, Լուսակունք, Խաչաղբյուր, Մեծ Մասրիկ, Նորակերտ (Մշո բարբառ), Վարդենիս (Դիադինի բարբառ) բնակավայրերի և Ակունք գյուղի (խառը տիպի) խոսվածքները: Դիտարկվող իրողությունները հնչյունական զանազանություններով, երբեմն էլ մասնակիորեն են դրսևորվում Ճամբարակի տարածաշրջանի բնակավայրերի (Ղարաբաղի բարբառ և Գանձակի միջբարբառ) և Վարդենիսի տարածաշրջանի՝ արցախցիներով բնակեցված գյուղերի խոսվածքներում (Ղարաբաղի բարբառ):

Զուգաբանությունը, այսպիսով, Գեղարքունիքի մարզի բարբառային միավորներում դրսևորվում է երկու տարբերակով.

ա) բազմավանկ բառերի սկզբում նախնական $է$ -ին համապատասխանող $է$, նախնական $ռ$ -ին համապատասխանող $օ$. Բայազետի, Դիադինի, Մշո բարբառների խոսվածքներ, Արծափի և Մակուի խոսվածքների տարբերակներ, Ակունքի խառը տիպի խոսվածք.

բ) բազմավանկ բառերի սկզբում նախնական $է$ -ին համապատասխանող $է$ կամ այլ իրողություն, $ռ$ -ին համապատասխանող $օ$ կամ այլ իրողություն՝ Ղարաբաղի բարբառի, Գանձակի միջբարբառի խոսվածքներ:

PHONETIC ISOGLOSSES

7. CORRESPONDING OF $\bar{o}$ AND $\bar{e}$ SOUNDS TO *o* AND *e* AT THE BEGINNING OF MULTI-SYLLABIC WORDS

$o \sim \bar{o}$ $e \sim \bar{e}$

Materials and commentary:

- a) **ōkhchar** (ochkhar) “sheep”, **ōskoṛ** (oskor) “bone”, **ērinj** (erinj) “heifer”, **ēraz** (eraz) “dream”
b) **ōṛnal** (oṛnal) “howl”, **hōṛsal** (orsal) “hunt”, **hōch'il** (ojil) “lice”, **ērku** (erku) “two”, **ēp'il** (ep'el) “cook”, **hērinj** (erinj) “heifer”, **vekhchar//vechkhar** (ochkhar) “sheep”, **vērt'i** (oṛt'i) “son”

In some varieties of Armenian, the transitions of $e > ye$ and $o > vo$ at the beginning of monosyllabic words have, over time, spread to the initial position of multi-syllabic words as well. However, in many dialectal units, such transitions have not occurred at the beginning of multi-syllabic words because the diphthongization of vowels and their transformation into diphthongs at the beginning of monosyllabic words was conditioned by the presence of a stress. Since the sounds *o* and *e* at the beginning of multi-syllabic words were in an unstressed position, they did not transform into diphthongs. This is why in many Armenian dialects (e.g., Erzinkan, Tigranakert, Mush, Van, Polis, Bayazet, and others), the correspondences $e \sim \bar{e}$ and $o \sim \bar{o}$ appear at the beginning of multi-syllabic words.


In the Gegharkunik province, the pronunciation of $\bar{o}$ corresponding to initial *o* and $\bar{e}$ corresponding to initial *e* in multi-syllabic words is found in the speeches of all settlements of the Sevan (Artsap and Maku subdialects), Gavar (Bayazet dialect), and Martuni (Mush dialect) regions, as well as the settlements of Karchaghbyur, Lchavan, Maqenis, Akhpradzor, Tsovak, Lusakunk, Khachaghbyur, Mets Masrik, and Norakert (Mush dialect) and Vardenis (Diadin dialect) in the Vardenis region, and the village of Akunk (mixed-type speech). The realities observed here also appear, sometimes with phonetic variations or partially, in the speeches of the settlements of the Chambarak region (Karabagh dialect and Gandzak inter-dialect) and the villages in the Vardenis region inhabited by Artsakh Armenians (Karabagh dialect).

Thus, this isogloss appears with two variants in the dialectal units of the Gegharkunik province:

- a) $\bar{e}$ corresponding to initial *e* and $\bar{o}$ corresponding to initial *o* in multi-syllabic words: in the speeches of the Bayazet, Diadin, and Mush dialects, variants of the Artsap and Maku sub-dialects, and the mixed-type Akunk speech;
b) $\bar{e}$ or another form corresponding to initial *e*, and $\bar{o}$ or another form corresponding to initial *o* in multi-syllabic words: in the speeches of the Karabagh dialect and the Gandzak inter-dialect.

7. ԲԱԶՄԱՎԱՆԿ ԲԱՌԵՐԻ ՄԿԶՐՈՒՄ
Ո - ԻՆ ԵՎ Է - ԻՆ
ՀԱՄԱՊԱՏԱՄԱՆՈՂ Օ ԵՎ Է

CORRESPONDING OF $\bar{O}$ AND $\bar{E}$
SOUNDS TO O AND E AT THE
BEGINNING OF MULTI-SYLLABIC
WORDS



ՀԱՉՅՈՒՆԱԿԱՆ ԶՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

8. ՈՅ, ԻԻ ԵՐԿԲԱՐԲԱՌՆԵՐԻ ՓՈԽԱՐԵՆ Ի ԶԱՅՆԱՎՈՐ

ոյ (ույ) > ի իւ (յու) > ի

Նյութեր և մեկնաբանություններ

զըրից < զրույց, թիլ < թույլ, լիս < լույս, պըտիտ < պտույտ, քիր < քույր, ալիր < ալյուր, արին < արյուն, հարիր < հարյուր, սին < սյուն, ախպերութին < եղբայրություն

Հինհայերենյան ոյ (>ույ) երկբարբառի փոխարեն բարբառներն ունեն ու կամ ի պարզ ձայնավոր: Առավել տարածված է ոյ<ու անցումը, որի պարագայում մենաբարբառացումը տեղի է ունեցել երկբարբառի երկրորդ տարրի սղմամբ: Ոյ>ի անցումը, երբ մենաբարբառացումը ընթացել է առաջին բաղադրիչի սղմամբ, հատուկ է Արարատյան բարբառի և Վայոց ձորի, Ուտիքի, Լոռու տարածքների խոսվածքներին, Զեյթունին, Մարաշին, Բեյլանին: Նկատվել է, որ ոյ>ի փոփոխությունն ունեն որոշակի բառեր՝ բոյթ>բիթ, զրոյց>զըրից, թոյլ>թիլ, լոյս>լիս, կապոյտ>կապիտ, պատրույզ>պաղրիք, պատրոյս>պաղրիս, պտոյտ>պըտիտ, քոյր>քիր: Հինհայերենյան իւ երկբարբառի փոխարեն ևս բարբառներն ունեն ու կամ ի ձայնավորներ: Դարձյալ ավելի տարածված է երկբարբառի փոխարեն ու ձայնավորի առկայությունը: Իւ>ի անցում ունեն հիմնականում Արարատյան բարբառի, Ուտիքի տարածքի խոսվածքները, նաև արևմտյան մի շարք բարբառներ (Մալաթիա, Խարբերդ, Տիգրանակերտ և այլ): Ընդ որում՝ եթե արևելյան տարածքում այս անցումը ընդգրկում է միավանկ և երկվանկ բառերը, ապա արևմտյան բարբառներում՝ հիմնականում երկվանկ բառերը:

Գեղարքունիքի մարզում ոյ>ի, իւ>ի անցումներ ունեն Ճամբարակի, Վահանի, Գետիկի և Թթուջուրի խոսվածքները (Գանձակի միջբարբառ):

Այսպիսով, հնչյունափոխական տվյալ հատկանիշը (ոյ>ի, իւ>ի) Գեղարքունիքի մարզում դրսևորվում է Գանձակի միջբարբառի խոսվածքներում:

PHONETIC ISOGLOSSES

8. VOWEL *i* IN PLACE OF DIPHTHONGS *oy*, *iw*

oy (uy) > i iw (yu) > i

Materials and commentary:

zərits' < zruyts' "conversation", **t'il** < t'uyl "weak", **lis** < luys "light", **pətit** < ptuyt "turn", **k'ir** < k'uyr "sister", **alir** < alyur "flour", **arin** < aryun "blood", **harir** < haryur "hundred", **sin** < syun "column", **akhperut'in** < eghbayrut'yun "brotherhood"

In dialectal Armenian, the Old Armenian diphthong *uy* (*oy*) is replaced by the simple vowels *u* or *i*. The transition *uy* > *u* is more common, where the monophthongization occurred by the loss of the second element of the diphthong. The transition *uy* > *i*, where monophthongization occurred by the loss of the first component, is characteristic of the Araratian dialect and the dialects of the Vayots Dzor, Utik, and Lori regions, as well as Zeytun, Marash, and Beylan. It has been noted that the change *uy* > *i* occurred in certain words: *buyt'* > *bit'* "thumb", *zruyts'* > *zərits'* "conversation", *t'uyl* > *t'il* "weak", *luys* > *lis* "light", *kapuyt* > *kapit* "blue", *patruyg* > *padrik* "wick", *ptuyt* > *pətit* "turn", *k'uyr* > *k'ir* "sister".

Similarly, in place of the Old Armenian diphthong *yu* (*iw*), dialects have the vowels *u* or *i*. Again, the presence of the vowel *u* instead of the diphthong is more common. The transition *yu* > *i* is found mainly in the Ararat dialect and the dialects of the Utik region, as well as in a number of Western dialects (Malatia, Kharberd, Tigranakert, etc.). Furthermore, while this transition in the Eastern area covers monosyllabic and two-syllable words, in Western dialects it applies mainly to two-syllable words.

In the Gegharkunik province, the transitions *uy* > *i* and *yu* > *i* are found in the speeches of Chambarak, Vahan, Getik, and Ttujur (Gandzak inter-dialect).

Thus, in the Gegharkunik province, this specific phonological feature (*uy* > *i*, *yu* > *i*) appears in the speeches of the Gandzak inter-dialect.



ՀԱՉՅՈՒՆԱԿԱՆ ԶՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

9. ՇԵՇՏԱՆԱԽՈՐԴ ՎԱՆԿԻ ԶԱՅՆԱՎՈՐԻ ՄՂՈՒՄ

հավքե՛լ < հավաքել

պըռա՛վիլ < պառավել

Նյութեր և մեկնաբանություններ

ա) ք՛աժնել < բաժանել, ք՛ալնիկ < բանալի, սօվրել < սովորել, ուրխընալ < ուրախանալ, քառսուն < քառասուն

բ) ըղօղիլ < ողողել, սըվերիլ < սովորել, լըղանալ < լողանալ, դանձիլ < աղանձել, դանչաք < աղաչանք, ըղօթիլ < աղոթել, ըրեքնակ < արեգակ, ըռավէտ < առավոտ

Հայերենի բարբառներում պատմականորեն տեղի է ունեցել շեշտանախորդ վանկի ձայնավորի սղում: Եթե արևմտյան բարբառներում, որոնցում շեշտակիր է վերջին վանկը, ձայնավորի սղում տեղի է ունեցել նախավերջին վանկում (ուրախանալ > ուրխընալ), ապա արևելյան բարբառներում, որոնցում շեշտը կրում է վերջընթեր վանկը, ձայնավորի սղում տեղի է ունեցել վերջընթեր վանկին նախորդող վանկում, որոշ դեպքերում՝ նաև վերջընթեր վանկին նախորդող բոլոր վանկերում (բաժանել > բըժանիլ, աղքատանալ > ըխկըտա՛նիլ): Շեշտանախորդ վանկերում ձայնավորների անկման երևույթը բնորոշ է Արցախ-Սյունիքի խոսվածքներին: Արարատյան բարբառի շատ խոսվածքներում (Աշտարակ, Փարպի, Էջմիածին և այլն), չնայած վերջընթեր շեշտին, նախաշեշտ վանկի ձայնավորների սղում սովորաբար տեղի չի ունենում:

Գեղարքունիքի մարզում նախավերջին վանկի ձայնավորի սղում արձանագրվել է Սևանի (Մակուի և Արծափի խոսվածքներ), Գավառի (Բայազետի բարբառ), Մարտունու (Մշո բարբառ) տարածաշրջանների բոլոր բնակավայրերի, Վարդենիսի տարածաշրջանի Վարդենիս քաղաքի (Դիաղիների բարբառ), Կարճաղբյուր, Լճավան, Մաքենիս, Ախպրաձոր, Ծովակ, Լուսաղբյուր, Խաչաղբյուր, Մեծ Մասրիկ, Նորակերտ (Մշո բարբառ), Ակունք (խառը տիպի խոսվածք) գյուղերի խոսվածքներում:

Ճամբարակի տարածաշրջանի բոլոր բնակավայրերի (Ղարաբաղի բարբառ, Գանձակի միջբարբառ), Վարդենիսի տարածաշրջանի Ագատ, Այրք, Ավազան, Արեգունի, Արփունք, Գեղամաբակ, Գեղամասար, Գեղաքար, Դարանակ, Կախակն, Կուրթ, Կուտական, Նորաբակ, Շատջրեք, Շատվան, Ջաղացաձոր, Սոթք, Վանեվան, Տրետուք, Փամբակ, Փոքր Մասրիկ գյուղերի (Ղարաբաղի բարբառ) խոսվածքներում ձայնավորի սղում առկա է վերջընթեր վանկին նախորդող վանկում:

Զուգաբանությունը, այսպիսով, Գեղարքունիքի մարզի բարբառային միավորներում դրսևորվում է երկու տարբերակով.

ա) նախավերջին վանկի ձայնավորի սղում. Բայազետի, Դիադինի, Մշո բարբառների խոսվածքներ, Արծափի և Մակուի խոսվածքների տարբերակներ, Ակունքի խառը տիպի խոսվածք.

բ) վերջընթեր վանկին նախորդող վանկի ձայնավորի սղում. Ղարաբաղի բարբառի, Գանձակի միջբարբառի խոսվածքներ:

PHONETIC ISOGLOSSES

9. VOWEL ELISION IN THE PRE-STRESS SYLLABLE

havqe'l < havaqel “to gather”

pəra'vil < paɾavel “to get old”

Materials and commentary:

a) **b'azhnel** < bazhanel “to divide”, **b'alnik** < banali “key”, **sovrel** < sovorel “to learn”, **urkhnal** < urakhanal (to be happy), **qarsun** < qarasun (forty)

b) **əghoghil** < oghoghel “to rinse”, **səveril** < sovorel “to learn”, **ləghanil** < loghanal “to swim”, **ghandzil** < aghandzel “to roast grain”, **ghanch'aq** < aghach'anq “request”, **əghot'il** < aghot'el “to pray”, **ərek'nak** < aregak “sun”, **əravet** < aravot “morning”

In Armenian dialects, vowel elision in the pre-stress syllable has historically occurred. In Western dialects, where the stress falls on the last syllable, vowel elision has occurred in the penultimate syllable (e.g., *bazhanel* > *bazhnel*, *urakhanal* > *urkhnal*). In Eastern dialects, where the stress falls on the antepenultimate syllable, vowel elision has occurred in the syllable preceding the antepenultimate syllable, and in some cases, in all syllables preceding the antepenultimate syllable (e.g., *bazhanel* > *bəzhanil*, *aghqatanal* > *əkhkətanil*). The phenomenon of vowel elision in pre-stress syllables is very characteristic of the Artsakh-Syunik dialects. In many dialects of the Ararat dialect (Ashtarak, Parpi, Echmiadzin, etc.), despite the antepenultimate stress, an elision of vowels in pre-stress syllables does not occur.


In the Gegharkunik province, vowel elision in the penultimate syllable has been recorded in all settlements of the Sevan (Maku and Artsap subdialects), Gavar (Bayazet dialect), and Martuni (Mush dialect) regions, as well as in the city of Vardenis (Diadin dialect) and the villages of Karchaghbyur, Lchavan, Maqenis, Akhpradzor, Tsovak, Lusaghbyur, Khachaghbyur, Mets Masrik, and Norakert (Mush dialect), and Akunk (mixed-type speech) in the Vardenis region. In all settlements of the Chambarak region (Karabagh dialect, Gandzak inter-dialect) and the villages in the Vardenis region inhabited by Artsakh Armenians (Karabagh dialect), vowel elision exists in the syllable preceding the antepenultimate syllable.

Thus, this isogloss exists with two variants in the dialectal units of the Gegharkunik province:

a) vowel elision in the penultimate syllable: in the speeches of the Bayazet, Diadin, and Mush dialects, variants of the Artsap and Maku subdialects, and the mixed-type Akunk speech;

b) vowel elision in the syllable preceding the antepenultimate syllable: in the speeches of the Karabagh dialect and the Gandzak inter-dialect.

VOWEL ELISION IN THE PRE-
STRESS SYLLABLE



ՀԱՉՅՈՒՆԱԿԱՆ ԶՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

10. ԵՐԿԲԱՐԲԱՌՆԵՐԻ ԱՌԿԱՅՈՒԹՅՈՒՆ

է (իէ) n (n)

Նյութեր և մեկնաբանություններ

ցօրեն, ձ'ել, նեռս, դէկտեմբեր

խընձոր, փոր, թաքավոր, խոռո

Երկբարբառներ կան հիմնականում հայերենի կենտրոնական, հարավարևմտյան, հարավարևելյան բարբառախմբերի խոսվածքներում: Ավելի տարածված են *է* և *ռ* երկբարբառները (Մուշի, Վանի, Դիաղինի, Բայազետի, Մեքաստիայի, Հաջընի, Զեյթունի, Խոյ-Մարաղայի բարբառներ և այլն), որոնք, իբրև կանոն, հանդես են գալիս շեշտակիր վանկերում:

Գեղարքունիքի մարզում *է* և *ռ* երկբարբառներ արձանագրվել են Սևանի (Մակուի, Արծափի խոսվածքներ), Գավառի (Բայազետի բարբառ), Մարտունու (Մշո բարբառ) տարածաշրջանների բոլոր բնակավայրերի խոսվածքներում: Բացառությամբ Ախպրաձորի խոսվածքի, որն ունի միայն *է* երկբարբառ, Վարդենիսի տարածաշրջանի՝ Մշո բարբառով հաղորդակցվող գյուղերի խոսվածքներում և Վարդենիս քաղաքի (Դիաղինի բարբառ), Ակունք գյուղի (խառը տիպի) խոսվածքներում ևս երկու երկբարբառներն էլ արձանագրվել են :

Հատկանիշը, այսպիսով, Գեղարքունիքի մարզում դրսևորվում է Բայազետի, Մշո, Դիաղինի բարբառների խոսվածքներում, Արծափի և Մակուի խոսվածքների տարբերակներում, Ակունքի խառը տիպի խոսվածքում:

PHONETIC ISOGLOSSES

10. PRESENCE OF DIPHTHONGS

e (‘e) and o (‘o)

Materials and commentary:

ts’ōren “wheat”, **dz’ev** “form”, **neŕs** “inside”, **dēktember** “December”, **khndzor** “apple”, **p’or** “belly”, **t’ak’avor** “king”, **khōŕt’** “alien”

Diphthongs are found mainly in the dialects of the Central, Southwestern, and Southeastern dialect groups of Armenian. The diphthongs *e* (‘e) and *o* (‘o) are more common (in Mush, Van, Diadin, Bayazet, Sebastia, Hadjin, Zeytun, Khoy-Maragha dialects, etc.), and they typically appear in stressed syllables.

In the Gegharkunik province, the diphthongs *e* and *o* have been recorded in the speeches of all settlements in the Sevan (Maku, Artsap subdialects), Gavar (Bayazet dialect), and Martuni (Mush dialect) regions. With the exception of the Akhpradzor dialect, which has only the *e* diphthong, both diphthongs have also been recorded in the speeches of the villages in the Vardenis region that speak the Mush dialect, as well as in the city of Vardenis (Diadin dialect) and the village of Akunk (mixed-type speech).

Thus, this feature is manifested in the Gegharkunik province in the speeches of the Bayazet, Mush, and Diadin dialects, variants of the Artsap and Maku subdialects, and the mixed-type Akunk speech.



ՀԱՉՅՈՒՆԱԿԱՆ ԶՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

11. ԵՍ ԵՐԿԱՐԲԱՌԻ ՄԵՆԱԲԱՐԲԱՌԱՑՈՒՄ

եա (յա) > ե, է, լե

Նյութեր և մեկնաբանություններ

Հանգուպեն < Հակոբյան, Պեղրուեն < Պետրոսյան, ծընընդեն < ծննդյան, ցանկուտեմբ < ցանկությամբ, Համայեզ < Հմայակ, տեղեզ < տեղյակ), կանեզ < կոնյակ, օկնուտեմբ < օգնությամբ, կենեկ < կյանք, նընջեցեկ < ննջեցյալ

Հինհայերենյան *եա* երկբարբառը հանդես էր գալիս շեշտակիր վանկում և շեշտից զրկվելով՝ դառնում էր *է*: Այդ հանգամանքը հաշվի առնելով՝ կարծիք է հայտնվել, որ գրաբարյան *եա* գրության մեջ *է*-ն առավելապես համապատասխանել է իր գրային արժեքին: Արդի գրական հայերենում *եա* գրությունը փոխարինվել է *յա*-ով և ունի համապատասխան արտասանություն, ինչպես *պատանյակ* (>պատանեակ) բառում:

Գրական հայերենի շեշտակիր վանկի *եա/յա* արտասանությանը Գեղարքունիքի մարզի Մարտունու տարածաշրջանի որոշ խոսվածքներում (Մշո բարբառ) համապատասխանում են *ե, է, լե* արտասանություններ, ինչպես՝ Վերին Գետաշեն. *Հանգուպեն* (Հակոբյան), *ծընընդեն* (ծննդյան), *Համայեզ* (Հմայակ), *կանեզ* (կոնյակ), *տեղեզ* (տեղյակ), *ցանկուտեմբ* (ցանկությամբ), Վաղաշեն. *Պեղրուեն* (Պետրոսյան), Վարդաձոր. *կենեկ* (կյանք), *տեղեկ* (տեղյակ), *նընջեցեկ* (ննջեցյալ), *օկնուտեմբ* (օգնությամբ):

Հատկանիշը, այսպիսով, Գեղարքունիքի մարզում դրսևորվում է Մշո բարբառի առանձին խոսվածքներում:

PHONETIC ISOGLOSSES

11. MONOPHTHONGIZATION OF THE DIPHTHONG *ea*

ea* /*ya*/ > *e*, *ē*, *ʸe

Materials and commentary:

Hagopen > Hakobyan, Pedrosen > Petrosyan, tsnnden > tsnndyan “of birth”, ts’ankutemb > tsankutyamb “with desire”, Hamayēg > Hmayak, teghēg > teghyak “knowledgeable”, kanyeg > konyak “cognac”, oknutʸemb > ognut’yamb “with help”, kʸenq > kyanq “life”, nnjētsʸel > nnjets’yal “deceased”

The Old Armenian diphthong *ea* appeared in stressed syllables and, when unstressed, became *e*. Considering this, it has been suggested that in Grabar orthography, *e* mostly corresponded to its written value. In modern literary Armenian, the spelling *ea* has been replaced by *ya*, and it is pronounced accordingly, as in *patanyak* “boy”.

In the Gegharkunik province, in certain speeches of the Martuni region (Mush dialect), the stressed syllable pronunciation of *ea* // *ya* corresponds to the pronunciations *e*, *ē*, and *ʸe*, as in: Verin Getashen: *Hagopen* (Hakobyan), *tsnnden* (of birth), *Hamayēg* (Hmayak), *kanʸeg* (cognac), *teghēg* (knowledgeable), *tsankutemb* (with desire); Vaghashen: *Pedrosen* (Petrosyan); Vardadzor: *kʸenq* (life), *teghʸek* (knowledgeable), *nnjētsʸel* (deceased), *oknutʸemb* (with help).

Thus, this feature exists in the Gegharkunik province in certain speeches of the Mush dialect.

DIPHTHONG *EA*

- Manifestation of e , $\bar{e}$, ye instead of the diphthong ea



ՀԱՅՅՈՒՆԱԿԱՆ ԶՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

12. ՁԱՅՆԱՎՈՐՆԵՐԻ ՆԵՐԴԱՇՆԱԿՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՈՒՄ

$n_1..i > n_1...n_1$ $n_1...n_1 > n_1...n_1$

Նյութեր և մեկնաբանություններ

$\text{լո՛ւգո՛ւ} > \text{լեգո՛ւ}$, $\text{սո՛ւրո՛ւն} > \text{սիրո՛ւն}$, $\text{ո՛ւրո՛ւք} > \text{իրար}$, $\text{ո՛ւրո՛ւք} > \text{ուրիշ}$

Բարբառային հայերենում քիչ է տարածված այն երևույթը, երբ բառի մեջ ձայնավորների բնույթը պայմանավորվում է արմատի ձայնավորի տեսակով, այսինքն՝ երբ բառի մեջ ձայնավորներից մեկը ազդում է մյուսի կամ մյուսների վրա և նույնացնում կամ նմանեցնում իրեն։ Իրողությունը հիմնականում բնորոշ է Սյունիք-Արցախի, Կիլիկիայի խոսվածքներին, Քեսաբին և այլն։

Գեղարքունիքի մարզում ձայնավորների ներդաշնակությունը դրսևորվում է Ճամբարակի և Վարդենիսի տարածաշրջանների՝ արցախցիներով բնակեցված բնակավայրերի խոսվածքներում (Ղարաբաղի բարբառ), մասնակիորեն է դրսևորվում Ճամբարակի տարածաշրջանի Գետիկ, Թթուջուր, Ճամբարակ, Վահան բնակավայրերի խոսվածքներում (Գանձակի միջբարբառ)։

Հատկանիշը, այսպիսով, Գեղարքունիքի մարզում դրսևորվում է Ղարաբաղի բարբառի, մասամբ նաև՝ Գանձակի միջբարբառի խոսվածքներում։

PHONETIC ISOGLOSSES

12. MANIFESTATION OF VOWEL HARMONY

u...i > u...u

e...u > u...u

Materials and commentary:

lüzü < lezu “language”, **sürün** < sirun “beautiful”, **ürür** < urar “each other”, **ürüş** < urish “another”

In dialectal Armenian, the phenomenon where the nature of vowels in a word is determined by the type of vowel in the root - that is, when one vowel in a word influences the other(s) and makes them identical or similar - is not very common. This phenomenon is primarily characteristic of the dialects of Syunik-Artsakh, Cilicia, Kessab, etc.

In the Gegharkunik province, vowel harmony appears in the speeches of settlements in the Chambarak and Vardenis regions that are inhabited by Artsakh Armenians (Karabagh dialect). It partially occurs in the dialects of the settlements of Getik, Ttujur, Chambarak, and Vahan in the Chambarak region (Gandzak inter-dialect).

Thus, this feature exists in the Gegharkunik province in the speeches of the Karabagh dialect and, partially, the Gandzak inter-dialect.

12. ՀԱՅՆԱՎՈՐՆԵՐԻ ՆԵՐԴԱՇՆԱԿՈՒԹՅԱՆ
ԴԻՄԵՎՈՐՈՒՄ
MANIFESTATION OF VOWEL HARMONY



ՀԱՉՅՈՒՆԱԿԱՆ ԶՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

13. ՆԱԽԱՎԵՐՋԻՆ ՎԱՆԿԻ ՇԵՇՏԱԿՐՈՒԹՅՈՒՆ

հըվա՛նիլ < հավանել

Նյութեր և մեկնաբանություններ

հըվա՛նիլ < հավանել, բըմբա՛սանք < բամբասանք, սըվէ՛րիլ < սովորել, լըղա՛նալ < լողանալ, դա՛նձիլ < աղանձել, դա՛նչաք < աղաչանք, ըրէ՛քնակ < արեգակ

Եթե հայերենի արևմտյան բարբառներում հիմնականում շեշտակիր է բառի վերջին վանկը, ապա արևելյան բարբառներում՝ հիմնականում բառի վերջընթեր վանկը:

Գեղարքունիքի մարզում նախավերջին վանկի շեշտակրությունը հատուկ է Ճամբարակի տարածաշրջանի բոլոր բնակավայրերի (Ղարաբաղի բարբառ, Գանձակի միջբարբառ) և Վարդենիսի տարածաշրջանի՝ արցախցիներով բնակեցված բնակավայրերի խոսվածքներին (Ղարաբաղի բարբառ):

Հատկանիշը, այսպիսով, Գեղարքունիքի մարզում դրսևորվում է Ղարաբաղի բարբառի և Գանձակի միջբարբառի խոսվածքներում:

PHONETIC ISOGLOSSES

13. STRESS ON THE PENULTIMATE SYLLABLE

həváníl < havanel

Materials and commentary:

həváníl < havanel “to like/agree”, **bəmba’sanq** < bambasanq “gossip”, **səvéril** < sovorel “to learn”, **ləghánal** < loghanal “to swim”, **ghándzil** < aghandzel “to roast grain”, **ghánchaq** < aghach’anq “request”, **əréqnak** < aregak “sun”

In Western Armenian dialects, the stress generally falls on the final syllable of a word, while in Eastern Armenian dialects, it generally falls on the penultimate syllable.

In the Gegharkunik province, stress on the penultimate syllable is characteristic of the speeches of all settlements in the Chambarak region (Karabagh dialect, Gandzak inter-dialect) and the settlements in the Vardenis region inhabited by Artsakh Armenians (Karabagh dialect).

Thus, this feature exists in the Gegharkunik province in the speeches of the Karabagh dialect and the Gandzak inter-dialect.



ՀԱՅՈՒՆԱԿԱՆ ԶՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

14. ՁԱՅՆԵՂ ՊԱՅԹԱԿԱՆՆԵՐԻ ՈՒ ՀՊԱՇՓԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲԱՌԱՄԿԶՐՈՒՄ

բ>բ' գ>գ' դ>դ' ձ>ձ' ջ>ջ'
բ>պ գ>կ դ>տ ձ>ծ ջ>ճ

Նյութեր և մեկնաբանություններ

ա) բ' անագ < բանակ, գ' ըլօխ < գլուխ, դ' ըմագ < դմակ, ջ' աղաչ < ջրաղաց, ձ' ի < ձի
բ) պնրց < բարձ, կննան < գագան, տնրտանկ < դատարկ, ծնք < ձագ, ճնրթիլ < ջարդել

Հին հայերենի բառակազմի ձայնեղ պայթականների և հպաշփականների փոխարեն արդի բարբառներն առավելաբար ունեն շնչեղ ձայնեղ, խուլ կամ շնչեղ խուլ պայթականներ ու հպաշփականներ: Շնչեղ ձայնեղ բաղաձայնները, որ այդպես են անվանվում լրացուցիչ շնչով արտասանվելու համար, հատուկ են հիմնականում Հայաստանի կենտրոնական տարածքների բարբառներին (Արարատյան, Բայազետի, Կարնո, Մշո, Ջուղայի), նաև որոշ այլ բարբառների (Շապին-Գարահիսար, Սեբաստիա, Արաբկիր, Ակն և այլն): Ձայնեղ պայթականների ու հպաշփականների փոխարեն խուլեր առկա են Վանի, Մասունի, Ղարաբաղի, Խոյ-Մարաղայի և այլ բարբառային միավորներում: Ձայնեղների փոխարեն շնչեղ խուլեր ունեն Ռոդոսթոյի, Ասլանբեկի, Օրդուի, Մալաթիայի, Տիգրանակերտի և այլ բարբառային միավորներ:

Գեղարքունիքի մարզում շնչեղ ձայնեղ բաղաձայններ հատուկ են Սևանի (Մակուի և Արծափի խոսվածքներ), Գավառի (Բայազետի բարբառ) և Մարտունու (Մշո բարբառ) տարածաշրջանների խոսվածքներին, Վարդենիսի տարածաշրջանի Ախպրաձոր, Լճավան, Լուսակունք, Խաչաղբյուր, Ծովակ, Կարճաղբյուր, Մաքենիս, Մեծ Մասրիկ, Նորակերտ գյուղերի (Մշո բարբառ), Վարդենիս քաղաքի (Դիադինի բարբառ) խոսվածքներին, Ակունքի խոսվածքին:

Ձայնեղ պայթականների ու հպաշփականների փոխարեն բառակազմում խուլեր ունեն Ճամբարակի տարածաշրջանի բոլոր բնակավայրերի (Ղարաբաղի բարբառ, Գանձակի միջբարբառ) և Վարդենիսի տարածաշրջանի՝ արցախցիներով բնակեցված բնակավայրերի (Ղարաբաղի բարբառ) խոսվածքները:

Զուգաբանությունը, այսպիսով, Գեղարքունիքի մարզի բարբառային միավորներում ունի հետևյալ դրսևորումները.

ա) հին հայերենի բառակազմի ձայնեղ պայթականների և հպաշփականների փոխարեն շնչեղ ձայնեղներ. Բայազետի, Մշո, Դիադինի բարբառների խոսվածքներ, Մակուի և Արծափի խոսվածքների տարբերակներ, Ակունքի խառը տիպի խոսվածք.

բ) հին հայերենի բառասկզբի ձայնեղ պայթականների և հպաշփականների փոխարեն խուլեր. Ղարաբաղի բարբառի, Գանձակի միջբարբառի խոսվածքներ:

PHONETIC ISOGLOSSES

14. SYSTEMIC CHANGES OF VOICED PLOSIVE CONSONANTS AND AFFRICATES AT THE BEGINNING OF WORDS

b > b' **g > g'** **d > d'** **dz > dz'** **j > j'**
b > p **g > k** **d > t** **dz > ts** **j > ch**

Materials and commentary:

- a) **b'anak** < banak “army”, **g'əlokh** < glukh “head”, **d'əmak** < dmak “lump”, **j'aghach'** < jraghac' “water mill”, **dz'i** < dzi “horse”
b) **pärts'** < bardz “pillow”, **kyäzän** < gazan “beast”, **tärtäk** < datark “empty”, **tsäq** < dzag “chick”, **chärt'il** < jardel “to break”

In modern dialects, the Old Armenian word-initial voiced plosives and affricates are mostly replaced by aspirated voiced, voiceless, or aspirated voiceless plosives and affricates. Aspirated voiced consonants, which are so named for being pronounced with an additional puff of breath, are primarily characteristic of the dialects of the central regions of Armenia (Ararat, Bayazet, Karin, Mush, Jugha), as well as some other dialects (Shabin-Karahisar, Sebastia, Arabkir, Akn, etc.). Use of voiceless consonants instead of voiced plosives and affricates is present in the dialects of Van, Sasun, Karabagh, Khoy-Maragha, and other dialectal units. Aspirated voiceless consonants instead of voiced ones are found in the dialects of Rodosto, Aslanbek, Ordu, Malatia, Tigranakert, etc.

In the Gegharkunik province, aspirated voiced consonants are characteristic of the speeches of the Sevan (Maku and Artsap subdialects), Gavar (Bayazet dialect), and Martuni (Mush dialect) regions, as well as the speeches of the villages of Akhpradzor, Lchavan, Lusakunk, Khachaghbyur, Tsovak, Karchaghbyur, Maqenis, Mets Masrik, and Norakert (Mush dialect) in the Vardenis region, the speech of Vardenis city (Diadin dialect), and the mixed-type Akunk speech.

Word-initial voiceless consonants instead of voiced plosives and affricates are found in the speeches of all settlements in the Chambarak region (Karabagh dialect, Gandzak inter-dialect) and the settlements in the Vardenis region inhabited by Artsakh Armenians (Karabagh dialect).

Thus, this isogloss has the following manifestations in the dialectal units of the Gegharkunik province:

- a) aspirated voiced consonants instead of Old Armenian word-initial voiced plosives and affricates: in the speeches of the Bayazet, Mush, and Diadin dialects, variants of the Maku and Artsap subdialects, and the mixed-type Akunk speech;
b) voiceless consonants instead of Old Armenian word-initial voiced plosives and affricates: in the speeches of the Karabagh dialect and the Gandzak inter-dialect.

SYSTEMIC CHANGES OF VOICED PLOSIVE
CONSONANTS AND AFFRICATES AT THE
BEGINNING OF WORDS



ՀԱՅՅՈՒՆԱԿԱՆ ԶՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

15. ՁԱՅՆԵՂ ՊԱՅԹԱԿԱՆՆԵՐԻ ՈՒ ՀՊԱՇՓԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲԱՌԱՄԻՋՈՒՄ ՈՒ ԲԱՌԱՎԵՐՋՈՒՄ

բ>փ գ>ք դ>թ ձ>ց ջ>ջ
բ,փ>պ գ,ք>կ դ,թ>տ ձ,ց>ծ ջ,ջ>ճ

Նյութեր և մեկնաբանություններ

ա) շմփաթ < շաբաթ, սուրփ < սուրբ, կմրաք < կարագ, մքայ < ագահ, հ'առչի < առաջին, վեռչ < վերջ, բ'առցել < բարձել, օց < օձ
բ) սուրպ < սուրբ, թօպալ < թոփալ, դ'ըտում < դդում, գ'ատա < գաթա, էտալ < երթալ, մատտ < մարդ, լիկ < լիք/, յերկել < երգել, հերկվընծի < երևանցի, ձ'ըծում < ձծում, ջ'ոճ < ջոջ, ինճ < ինչ

Բառամիջում և բառավերջում հին հայերենի ձայնեղ պայթականների ու հպաշփականների փոխարեն բարբառներում որպես կանոն հանդիպում են շնչեղ խուլեր, երբեմն էլ՝ խուլեր: Շնչեղ խլացման իրողության խոր հնությանը է բացատրվել դրա լայն տարածվածությունը տարբեր բաղաձայնական համակարգեր ունեցող բարբառներում: Կարելի է ասել՝ երևույթը համընդհանուր է, և միայն առանձին բարբառային միավորներ են զերծ մնացել գործընթացից (Մեղրի, Կարճևան, Ագուլիս, Սասուն, Ալաշկերտ, Քեսաբ և այլն):

Բառամիջում ու բառավերջում պայթական ու հպաշփական ձայնեղների փոխարեն խուլեր են արձանագրվել համեմատաբար սահմանափակ տարածքներում (Շիրակ, Ալաշկերտ և այլն): Նույն տարածքներում խուլեր են առկա նաև շնչեղ խուլերի փոխարեն:

Գեղարքունիքի մարզում ոչ բառասկզբի դիրքերում ձայնեղների փոխարեն շնչեղ խուլեր արձանագրվել են Սևանի (Մակուի խոսվածք), Գավառի (Բայազետի բարբառ) տարածաշրջանների, Մարտունու (Մշո բարբառ) տարածաշրջանի մի մասի (բացառությամբ ձայնեղների փոխարեն խուլեր ունեցող խոսվածքների), Վարդենիսի (Մշո, Դիադինի, Ղարաբաղի բարբառներ), Ճամբարակի (Ղարաբաղի բարբառ, Գանձակի միջբարբառ) տարածաշրջանների խոսվածքներում:

Ձայնեղների ու շնչեղ խուլերի փոխարեն խուլեր են արձանագրվել Սևանի տարածաշրջանի Ծովագյուղ բնակավայրի (Արծափի խոսվածք), Մարտունու տարածաշրջանի Երանոս, Վարդաձոր, Չորագյուղ, Ծակքար, Լիճք, Ծովասար, Վերին Գետաշեն, Ներքին Գետաշեն, Մադինա, Ծովինար գյուղերի, մասամբ՝ Վարդենիսի տարածաշրջանի Լճական գյուղի խոսվածքներում (հիմնականում՝ Մշո բարբառի Ալաշկերտի խոսվածք): Սևանի տարածաշրջանի Գեղամավան գյուղի խոսվածքում

(Մակուի խոսվածք) բառամիջում ու բառավերջում պայթական ու հպաշփական ձայնեղների փոխարեն առկա են շնչեղ խուլեր (հօքի, վեռչ, ք'առց), իսկ նախնական շնչեղ խուլերի փոխարեն՝ խուլեր (մակուր, խանուտ, ք'ած):

Զուգաբանությունը, այսպիսով, Գեղարքունիքի մարզի բարբառային միավորներում դրսևորվում է հիմնականում երկու տարբերակով.

ա) բառամիջում և բառավերջում ձայնեղ պայթականների ու հպաշփականների փոխարեն շնչեղ խուլեր. Բայազետի, Մշո, Դիադինի, Ղարաբաղի բարբառների, Գանձակի միջբարբառի խոսվածքներ, Մակուի խոսվածքի տարբերակներ, Ակունքի խառը տիպի խոսվածք.

բ) նույն դիրքերում ձայնեղների փոխարեն խուլեր. Մշո բարբառի Ալաշկերտի խոսվածք, Արծափի խոսվածք:

PHONETIC ISOGLOSSSES

15. SYSTEMIC CHANGES OF VOICED PLOSIVES AND AFFRICATES IN WORD-MEDIAL AND WORD-FINAL POSITIONS

b > **p'** **g** > **k'** **d** > **t'** **dz** > **ts'** **j** > **ch'**
b, p' > **p** **g, k'** > **k** **d, t'** > **t** **dz, ts'** > **ts** **j, ch'** > **ch**

Materials and commentary:

- a) **shâp'at'** < shabat' "Saturday", **surp'** < surb "holy", **kârak'** < karag "butter", **âk'ay** < agah "greedy", **h'arçh'i** < arajin "first", **verçh'** < verj "end", **b'arçts'el** < bardzel "to lift", **ôts'** < ôdz "snake"
- b) **surp** < surb "holy", **t'opal** < t'op'al "lame", **d'ætum** < ddum "pumpkin", **g'ata** < gat'a "gata, a pastry", **etal** < yert'al "to go", **mart** < mard "man", **lik** < lik' "full", **yerkel** < yergel "to sing", **dz'ætsum** < dzdzum "sucking", **j'och** < joj "big", **inch** < inch' "what"

In word-medial and word-final positions, Old Armenian voiced plosives and affricates are generally replaced by aspirated voiceless consonants in dialects, and sometimes by voiceless consonants. The widespread nature of the aspirated voiceless pronunciation is explained by its deep historical roots across dialects with different consonant systems. It can be said that this phenomenon is universal, and only a few dialectal units are exempt from the process (Meghri, Karchavan, Agulis, Sasun, Alashkert, Kessab, etc.).

Voiceless consonants instead of voiced plosives and affricates in word-medial and word-final positions have been recorded in relatively limited areas (Shirak, Alashkert, etc.). In these same areas, voiceless consonants also appear instead of aspirated voiceless ones.

In the Gegharkunik province, aspirated voiceless consonants instead of voiced ones in non-initial positions have been recorded in the speeches of the Sevan (Maku sub-dialect), Gavar (Bayazet dialect), and parts of the Martuni (Mush dialect) regions (with the exception of speeches that have voiceless instead of voiced consonants), and the Vardenis (Mush, Diadin, Karabagh dialects) and Chambarak (Karabagh dialect, Gandzak inter-dialect) regions.

Voiceless consonants instead of voiced and aspirated voiceless ones have been recorded in the speech of the Tsovaryugh settlement in the Sevan region (Artsap subdialect) and in the speeches of the villages of Yerranos, Vardadzor, Dzoragyugh, Tsakqar, Lichk, Tsovasar, Verin Getashen, Nerkin Getashen, Madina, and Tsovinar in the Martuni region, and partially in the speech of the village of Lchavan in the Vardenis region (primarily the Alashkert subdialect of the Mush dialect). In the speech of the village of Geghamavan in the Sevan region (Maku sub-dialect), aspirated voiceless consonants are present in place of voiced plosives and affricates in word-medial and word-final positions (**hok'i** > **hogi**, **verçh'** > **verj**, **barts'** > **bardz**), while voiceless consonants are present in place of the original aspirated voiceless consonants (**makur** < **mak'ur**, **khanut** < **khanut'**, **b'ats** < **bats'**).

Thus, this isogloss appears in the dialectal units of the Gegharkunik province in two main variants:

- a) aspirated voiceless consonants instead of voiced plosives and affricates in word-medial and word-final positions: in the speeches of the Bayazet, Mush, Diadin, and Karabagh dialects, the Gandzak inter-dialect, variants of the Maku subdialect, and the mixed-type Akunk speech;
- b) voiceless consonants instead of voiced ones in the same positions: in the Alashkert sub-dialect of the Mush dialect and the Artsap subdialect.

15. ՀԱՅՆԵՂ ՊԱՅԹԱԿԱՆՆԵՐԻ ՈՒ
ՀՊԱՇՓԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ
ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԲԱՌԱՄԻՋՈՒՄ
ՈՒ ԲԱՌԱՎԵՐՋՈՒՄ

SYSTEMIC CHANGES OF VOICED
PLOSIVES AND AFFRICATES IN
WORD-MEDIAL AND WORD-FINAL
POSITIONS



ՀԱՉՅՈՒՆԱԿԱՆ ԶՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

16. ՊԱՅԹԱԿԱՆ ՈՒ ՀՊԱՇՓԱԿԱՆ ԽՈՒԼԵՐԻ ՓՈԽԱՐԵՆ ՁԱՅՆԵՂՆԵՐ ԲԱՌԱՍԻՋՈՒՄ ՈՒ ԲԱՌԱՎԵՐՋՈՒՄ

պ>բ կ>գ տ>դ ծ>ձ ճ>ջ

Նյութեր և մեկնաբանություններ

կօբիդ < կոպիտ, ախճիզ < աղջիկ, պաղերազմ < պատերազմ, ուղել < ուտել, մաձուն < մաձուն, նըստաձ < նստած, պըրձընել < պրծնել, մեձ < մեծ, կըջուջ < կճուճ, Օնիզ < Օնիկ, հ'երզեն < երկայն, շնօրազալ < շնորհակալ

Հատկանիշը լայն տարածում ունի արևմտյան խմբակցության բարբառախմբերում: Արևելյան տարածքներում մասնակիորեն դրսևորվում է Արարատյան, Սյունիք-Արցախի և որոշ այլ բարբառներում:

Գեղարքունիքի մարզում այս հատկանիշն արձանագրվել է Սևանի տարածաշրջանի Ծովագյուղ (Արծափի խոսվածք), Գեղամավան (Մակուի խոսվածք), Մարտունու տարածաշրջանի Երանոս, Վարդաձոր, Ձորագյուղ, Ծակքար, Լիճք, Ծովասար, Վերին Գետաշեն, Ներքին Գետաշեն, Մաղինա, Ծովինար (Մշո բարբառ, հիմնականում՝ Ալաշկերտի խոսվածք), Վարդենիսի տարածաշրջանի Լճավան, Նորակերտ (Մշո բարբառ) գյուղերի խոսվածքներում: Հատկանիշը մասամբ է դրսևորվում Սևանի տարածաշրջանի Դմաշեն, Զովաբեր, Ծաղկունք, Վարսեր, Լճաշեն, Չկալովկա, Նորաշեն գյուղերի խոսվածքներում (Մակուի խոսվածք), Գավառի տարածաշրջանի բոլոր բնակավայրերի խոսվածքներում (Բայազետի բարբառ), Մարտունու տարածաշրջանի համանուն քաղաքի խոսվածքում և Վաղաշեն, Գեղիովիտ, Աստղաձոր, Զոլաքար, Վարդենիկ, Արծվանիստ գյուղերի խոսվածքներում (Մշո բարբառ), Վարդենիսի տարածաշրջանի համանուն քաղաքի (Դիաղինի բարբառ) և Կարճաղբյուր, Մաքենիս, Ծովակ, Լուսակունք, Խաչաղբյուր գյուղերի խոսվածքներում (Մշո բարբառ), ինչպես նաև Ակունք գյուղի խառը տիպի խոսվածքում:

Հատկանիշը, այսպիսով, Գեղարքունիքի մարզում ամբողջական կամ մասնակիորեն դրսևորվում է Մշո, Բայազետի, Դիաղինի բարբառների խոսվածքներում, Մակուի և Արծափի խոսվածքների տարբերակներում, Ակունքի խառը տիպի խոսվածքում:

PHONETIC ISOGLOSSES

16. VOICED CONSONANTS IN PLACE OF VOICELESS PLOSIVES AND AFFRICATES IN WORD-MEDIAL AND WORD-FINAL POSITIONS

p > b k > g t > d ts > dz ch > j

Materials and commentary:

kobid < kopit “rough”, **akhjig** < aghjik “girl”, **paderazm** < paterazm “war”, **udel** < utel “to eat”, **madzun** < matsun “matsoni”, **nstadz** < nstats “seated”, **prdzənel** < prtsnel “to escape”, **medz** < mets “big”, **kəjuj** < kchuch “jug”, **Onig** < Onik, **hergen** < erkayn “long”, **shnoragal** < shnorhacal “grateful”

This feature is widespread in the Western group of dialects. In Eastern regions, it partially exists in the Ararat, Syunik-Artsakh, and some other dialects.

In the Gegharkunik province, this feature has been recorded in the speeches of Tsovaghyugh (Artsap subdialect) and Geghamavan (Maku subdialect) in the Sevan region; Yeranos, Vardadzor, Dzoragyugh, Tsakqar, Lichk, Tsovasar, Verin Getashen, Nerkin Getashen, Madina, and Tsovinar (Mush dialect, primarily the Alashkert subdialect) in the Martuni region; and Lchavan and Norakert (Mush dialect) in the Vardenis region.

The feature partially appears in the speeches of the villages of Ddmashen, Zovaber, Tsaghkunk, Varser, Lchashen, Chkalovka, and Norashen (Maku subdialect) in the Sevan region; all settlements of the Gavar region (Bayazet dialect); the speeches of the city of Martuni and the villages of Vaghashen, Geghhovit, Astghadzor, Zolaqar, Vardenik, and Artsvanist (Mush dialect) in the Martuni region; the city of Vardenis (Diadin dialect) and the villages of Karchaghbyur, Maqenis, Tsovak, Lusakunk, and Khachaghbyur (Mush dialect) in the Vardenis region; and the mixed-type speech of the village of Akunk.

Thus, this feature exists completely or partially in the Gegharkunik province in the speeches of the Mush, Bayazet, and Diadin dialects, variants of the Maku and Artsap subdialects, and the mixed-type Akunk speech.

16. ՊԱՅԹԱԿԱՆ ՈՒ ՀՊԱՇՓԱԿԱՆ
ԽՈՒԼԵՐԻ ՓՈԽԱՐԵՆ ՀԱՅՆԵՂՆԵՐ
ԲԱՌԱՄԻՋՈՒՄ ՈՒ ԲԱՌԱՎԵՐՋՈՒՄ

VOICED CONSONANTS IN PLACE OF
VOICELESS PLOSIVES AND AFFRICATES IN
WORD-MEDIAL AND WORD-FINAL
POSITIONS



ՀԱՉՅՈՒՆԱԿԱՆ ԶՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

17. ՀԵՏՆԱԼԵԶՎԱՅԻՆ ՊԱՅԹԱԿԱՆՆԵՐԻ ՔՄԱՅԻՆ ԱՐՏԱՍՍԱՆՈՒԹՅՈՒՆ

զ>զ' կ>կ' ք>ք'
զ>ջ կ>ճ ք>չ

Նյութեր և մեկնաբանություններ

ա) կ'ետ < գետ, կ'երան < գերան, կ'ինի < գինի, կ'ըրեզման < գերեզման, ք'ծմակ < քոմակ, կ'ծրտ < գորտ, ք'ըշիլ < քշել

բ) ջ'ետին < գ'ետին, ջ'եղացի < գ'եղացի, ջ'ինի < գ'ինի, ճիրսճի < կիրսկի, չսվսն < քսվսն, չսլսմ < քսլսմ, չեռի < քեռի

Քմային *զ,կ,ք* հետնալեզվայինները, որոնց արտաբերության գոտին բերանային հնչարանի հետին մասից տեղափոխված է միջին մաս, խիստ տարածված են Վասպուրականի և Սյունիք-Արցախի տարածքի ու հարակից բարբառներում: Հաճախ հետնալեզվայինների քմայնացումը պայմանավորված է հաջորդող ձայնավորի որակով, այլ դեպքերում քմայնացումը որևէ դիրքային գործոնով պայմանավորված չէ: Առաջնային շարքի ձայնավորներից առաջ տեղի ունեցող քմայնացման հետևանքով որոշ վայրերում առկա է *զ,կ,ք > ջ,ճ,չ* անցում: Երևույթը դիտվել է Աշտարակի (Արարատյան բարբառ) և Նորատուսի (Բայազետի բարբառ) խոսվածքներում:

Գեղարքունիքի մարզում քմայնացած հետնալեզվայիններ արձանագրվել են Ճամբարակի տարածաշրջանի բնակավայրերի խոսվածքներում (Գանձակի միջբարբառ, Ղարաբաղի բարբառ), Վարդենիսի տարածաշրջանի համանուն քաղաքի (Դիադինի բարբառ), Ակունք գյուղի (խառը տիպի), արցախցիներով բնակեցված գյուղերի խոսվածքներում (Ղարաբաղի բարբառ), Գավառի տարածաշրջանի Նորատուս, Բերդկունք, Հայրավանք, մասամբ նաև՝ Գանձակ, Հացառատ, Ծաղկաշեն բնակավայրերի (Բայազետի բարբառ), Սևանի տարածաշրջանի Զովաբեր, Լճաշեն գյուղերի խոսվածքներում (Մակուի խոսվածք): Հետնալեզվային պայթականների վերածում հպաշփականների արձանագրվել է Գավառի տարածաշրջանի Նորատուս, Հայրավանք, Բերդկունք, մասամբ՝ Գանձակ գյուղերի խոսվածքներում (Բայազետի բարբառ): Վերջին իրողությունը մասնակիորեն դիտվել է նաև Սևանի տարածաշրջանի Դդմաշեն, Գեղամավան գյուղերի խոսվածքներում (Մակուի խոսվածք):

Զուգաբանությունը, այսպիսով, Գեղարքունիքի մարզի բարբառային միավորներում ունի հետևյալ դրսևորումները.

ա) քմային *q, q, p* հետնալեզվայինների առկայություն. Ղարաբաղի, Դիադինի բարբառների, Գանձակի միջբարբառի խոսվածքներ, Ակունքի խառը տիպի խոսվածք, Բայազետի բարբառի որոշ խոսվածքներ, Մակուի խոսվածքի տարբերակներ.

բ) քմայնացմամբ պայմանավորված՝ հետնալեզվային պայթականների վերածում հպաշփականների. Բայազետի բարբառի որոշ խոսվածքներ, Մակուի խոսվածքի առանձին դրսևորումներ (մասնակիորեն):

PHONETIC ISOGLOSSES

17. PALATAL ARTICULATION OF VELAR STOPS

$g > g^y$ $k > k^y$ $q > q^y$
 $g > j$ $k > ch$ $q > ch'$

Materials and commentary:

- a) **k^yet** < get “river”, **k^yeran** < geran “beam”, **k^yini** < gini “wine”, **k^yərezman** < gerezman “grave”, **k^yömak** < qomak “assistant”, **k^yört** < gort “frog”, **k^yəshil** < qəshel “to chase”
b) **jetin** < getin “ground”, **jeghatsi** < geghatsi “villager”, **jini** < gini “wine”, **chirächi** < kiraki “Sunday”, **ch'ävär** < qävär “Gavar”, **ch'äläm** < qäläm < kaghamb “cabbage”, **ch'eri** < qeri “maternal uncle”

The palatal velar sounds *g*, *k*, *q*, whose place of articulation has shifted from the back to the middle of the mouth cavity, are very widespread in the dialects of Vaspurakan, Syunik-Artsakh, and surrounding areas. Often, the palatalization of velar consonants is conditioned by the quality of the following vowel; in other cases, palatalization is not conditioned by any positional factor. As a result of palatalization that occurs before front vowels, the transitions *g, k, q > j, ch, ch'* are present in some places. This phenomenon has been observed in the speeches of Ashtarak (Araratian dialect) and Noratus (Bayazet dialect).

In the Gegharkunik province, palatalized velar consonants have been recorded in the speeches of settlements in the Chambarak region (Gandzak inter-dialect, Karabagh dialect), the city of Vardenis (Diadin dialect), the village of Akunk (mixed-type dialect), and the villages inhabited by Artsakh Armenians (Karabagh dialect). It is also present in the speeches of Noratus, Berdkunk, Hayravank, and partially in Gandzak, Hatsarrat, and Tsaghkashen in the Gavar region (Bayazet dialect), as well as in the speeches of the villages of Zovaber and Lchashen in the Sevan region (Maku subdialect). The transformation of velar plosives into affricates has been recorded in the speeches of Noratus, Hayravank, Berdkunk, and partially in Gandzak in the Gavar region (Bayazet dialect). This last phenomenon has also been partially observed in the speeches of the villages of Ddmashen and Geghamavan in the Sevan region (Maku sub-dialect).

Thus, this isogloss has the following manifestations in the dialectal units of the Gegharkunik province:

- a) Presence of palatal *g*, *k*, *q* velar consonants: in the speeches of the Karabagh, Diadin dialects, the Gandzak inter-dialect, the mixed-type Akunk speech, some speeches of the Bayazet dialect, and variants of the Maku sub-dialect;
b) Transformation of velar plosives into affricates due to palatalization: in some speeches of the Bayazet dialect and in some cases of the Maku subdialect (partially).



ՀԱՉՅՈՒՆԱԿԱՆ ԶՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

18. ՀՊԱՇՓԱԿԱՆԻ ՎԵՐԱԾՈՒՄ ՇՓԱԿԱՆԻ ՆԱԽԱԲԱՂԱՋԱՅՆԱԿԱՆ ԴԻՐՔՈՒՄ

$ջ > ժ$ $չ, ճ > շ$ $ձ > գ$ $ց, ծ > ս$

Նյութեր և մեկնաբանություններ

հ' անշկ < աչք, **կօշկել** < կռճկել, **միշնակ** < միջնեկ, **հ' անգրժներ** < ականջներ, **ծմսկել** < ծածկել, **վառսկ** < վարձք, **անգնական** < անձնական

Խոսքի շղթայում հալաշփականները որևէ հպական բաղաձայնից առաջ հաճախ վերածվում են շփականի՝ կորցնելով իրենց արտաբերության բաղադրիչներից մեկը՝ հպումը: Հատկանիշը արձանագրվել է հայերեն բարբառների մեծ մասում, չի դիտվել Մշո, Վանի, Թիֆլիսի բարբառների, Գանձակի միջբարբառի խոսվածքներում, մի շարք այլ բարբառային միավորներում:

Գեղարքունիքի մարզում հատկանիշը դրսևորվում է Բայազետի տարածաշրջանի բոլոր բնակավայրերի (Բայազետի բարբառ), Սևանի տարածաշրջանի Գեղամական, Լճաշեն, Չկալովկա, Նորաշեն գյուղերի (Մակուի խոսվածք), Մարտունու տարածաշրջանի Երանոս գյուղի (Մշո բարբառ) խոսվածքներում, Ճամբարակի և Վարդենիսի տարածաշրջանների՝ Ղարաբաղի բարբառով կամ Գանձակի միջբարբառով հաղորդակցվող բնակավայրերի մի մասում: Հատկանիշը մասնակի արտահայտություն ունի Սևանի տարածաշրջանի Ծովագյուղ (Արծափի խոսվածք), Զովաբեր, Ծաղկունք, Վարսեր (Մակուի խոսվածք), Մարտունու տարածաշրջանի Վարդաձոր, Ծակքար (Մշո բարբառ), Վարդենիսի տարածաշրջանի Մաքենիս, Ախպրաձոր, Ծովակ, Խաչաղբյուր (Մշո բարբառ), Վարդենիս (Դիադինի բարբառ), Ակունք (խառը տիպի խոսվածք), Ճամբարակի տարածաշրջանի Ճամբարակ, Գետիկ, Թթուջուր (Գանձակի միջբարբառ) բնակավայրերի խոսվածքներում:

Հատկանիշը, այսպիսով, Գեղարքունիքի մարզում բնորոշ է Բայազետի բարբառին, այս կամ այն չափով դրսևորվում է նաև Ղարաբաղի, Դիադինի բարբառների, Գանձակի միջբարբառի խոսվածքներում, Մակուի և Արծափի խոսվածքների տարբերակներում, Ակունքի խառը տիպի խոսվածքում: Համեմատաբար սակավ է հանդիպում Մշո բարբառի խոսվածքներում:

PHONETIC ISOGLOSSES

18. TRANSFORMATION OF AN AFFRICATE INTO A FRICATIVE IN A PRE-CONSONANTAL POSITION

j > **zh** **ch, ch'** > **sh** **dz** > **z** **ts', ts** > **s**

Materials and commentary:

h'äshk < ach'q “eye”, **koshkel** < kochkel “to button”, **mishnäk** < mijnek “middle one”, **h'angzhner** < akanjner “ears”, **tsäskel** < tsatskel “to cover”, **vařsk** < vardzq “rent”, **äznakan** < andznakan “personal”

In speech, affricates often transform into fricatives when they precede any stop consonant, losing one of their articulation components: the stop. This feature has been recorded in most Armenian dialects. It has not been observed in the Mush, Van, Tiflis dialects, in the Gandzak inter-dialect, and some other dialectal units.

In the Gegharkunik province, this feature exists in the speeches of all settlements in the Bayazet region (Bayazet dialect), the villages of Geghamavan, Lchashen, Chkalovka, and Norashen in the Sevan region (Maku dialect), the village of Yeranos in the Martuni region (Mush dialect), and in some of the settlements in the Chambarak and Vardenis regions that speak the Karabagh dialect or Gandzak inter-dialect. The feature is partially expressed in the speeches of Tsovagyugh (Artsap subdialect) and Zovaber, Tsaghkunk, and Varser (Maku subdialect) in the Sevan region; Vardadzor and Tsakqar (Mush dialect) in the Martuni region; Maqenis, Akhpradzor, Tsovak, and Khachaghbyur (Mush dialect) in the Vardenis region; Vardenis (Diadin dialect); Akunk (mixed-type speech); and Chambarak, Getik, and Ttujur (Gandzak inter-dialect) in the Chambarak region.

Thus, this feature in the Gegharkunik province is characteristic of the Bayazet dialect and, to varying degrees, is also expressed in the speeches of the Karabagh and Diadin dialects, the Gandzak inter-dialect, variants of the Maku and Artsap subdialects, and the mixed-type Akunk speech. It is relatively rare in the speeches of the Mush dialect.

18. ՀՊԱՇՓԱԿԱՆԻ ՎԵՐԱԾՈՒՄ ՇՓԱԿԱՆԻ
ՆԱԽԱԲԱՂԱԶԱՅՆԱԿԱՆ ԴԻՐՔՈՒՄ
TRANSFORMATION OF AN AFFRICATE CONSONANT
INTO A FRICATIVE CONSONANT IN PRE-
CONSONANT POSITION



ՀԱՉՅՈՒՆԱԿԱՆ ԶՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

19. ՀԻՆՀԱՅԵՐԵՆՅԱՆ Հ - ԻՆ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՂ ԲԱՐԲԱՌԱՅԻՆ *և*

հ ~ իս

Նյութեր և մեկնաբանություններ

խաքուստ ~ հագուստ, խաստ ~ հաստ/, պմխել ~ պահել, սմխմընել ~ սահմանել, բ'ախ ~ բահ, մմխ ~ մահ, իին ~ հին, իետ ~ հետ, իինգ ~ հինգ, խառս ~ հարս, խարիր ~ հարյուր, իեր ~ հայր, իիվանդ ~ հիվանդ, իայ ~ հայ

Հ~իս համապատասխանությունը, որ բարբառային հայերենում հնագույն արմատներ ունի և գալիս է լեզվի զարգացման վաղ փուլերից, հատուկ է Վանի, Խոյ-Մարաղայի, Բայազետի, Դիադինի բարբառներին, մասամբ՝ Մշո և Զուղայի բարբառներին, դրսևորվում է բառի բոլոր դիրքերում:

Գեղարքունիքի մարզում հինհայերենյան *հ*-ին համապատասխանող *խ* ունեն Սևանի տարածաշրջանի Զովաբեր, Դդմաշեն, Վարսեր, Լճաշեն, Չկալովկա, Նորաշեն գյուղերի խոսվածքները (Մակուի խոսվածք), մասամբ նաև՝ Ծովագյուղի խոսվածքը (Արծափի խոսվածք): Հատկանիշը լիովին դրսևորվում է Գավառի տարածաշրջանում (Բայազետի բարբառ), արձանագրվել է Մարտունու տարածաշրջանի Ծովասար, Ծակքար, Մարտունի, Գեղհովիտ, Վաղաշեն, Աստղաձոր, Զուլաքար, Վարդենիկ, Ծովինար, Արծվանիստ (Մշո բարբառ), Վարդենիսի տարածաշրջանի Կարճաղբյուր, Մաքենիս, Ծովակ, Լուսակունք (Մշո բարբառ), Վարդենիս (Դիադինի բարբառ), Ակունք (խառը տիպի խոսվածք) բնակավայրերի խոսվածքներում:

Հատկանիշը, այսպիսով, Գեղարքունիքի մարզում դրսևորվում է Բայազետի, Դիադինի բարբառների խոսվածքներում, Մշո բարբառի խոսվածքների մի մասում, Ակունքի խառը տիպի խոսվածքում, Մակուի խոսվածքի որոշ տարբերակներում, մասամբ նաև՝ Արծափի խոսվածքում:

PHONETIC ISOGLOSSES

19. DIALECTAL *kh* CORRESPONDING TO *h* OF OLD ARMENIAN

h ~ kh

Materials and commentary:

khak'ust ~ hagust “clothes”, **khast** ~ hast “thick”, **pākhel** ~ pahel “to keep”, **sakhmānel** ~ sahmanel “to define”, **b'akh** ~ bah “shovel”, **makh** ~ mah “death”, **khin** ~ hin “old”, **khet** ~ het “with”, **khing** ~ hing “five”, **khars** ~ hars “bride”, **kharir** ~ haryur “hundred”, **khēr** ~ hayr “father”, **khivand** ~ hivand “sick”, **khay** ~ hay “Armenian”

The correspondence *h ~ kh* in dialectal Armenian has ancient roots, tracing back to the early stages of the language's development. This feature is specific to the dialects of Van, Khoy-Maragha, Bayazet, and Diadin, and is also present in some speeches of Mush and Julfa. It occurs in all positions within a word.

In the Gegharkunik province, the pronunciation of *kh* in place of the Old Armenian *h* is found in the speeches of the villages of Zovaber, Ddmashen, Varser, Lchashen, Chkalovka, and Norashen in the Sevan region (Maku subdialect), and partially in the speech of Tsovaghyugh (Artsap subdialect). The feature is fully manifested in the Gavar region (Bayazet dialect). It has also been recorded in the speeches of the settlements of Tsovasar, Tsakqar, Martuni, Geghhovit, Vaghashen, Astghadzor, Zolaqar, Vardenik, Tsovinar, and Artsvanist in the Martuni region (Mush dialect), as well as in the villages of Karchaghbyur, Maqenis, Tsovak, and Lusakunk in the Vardenis region (Mush dialect), the city of Vardenis (Diadin dialect), and the village of Akunk (mixed-type speech).

Thus, in the Gegharkunik province, this feature exists in the speeches of the Bayazet and Diadin dialects, in a portion of the Mush speeches, the mixed-type Akunk speech, in some variants of the Maku subdialect, and partially in the Artsap subdialect.

19. ՀԻՆՀԱՅԵՐԵՆՅԱՆ Հ - ԻՆ
ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՂ ԲԱՐԲԱՌԱՅԻՆ *kh*
DIALECTAL *kh* CORRESPONDING TO *h*
OF OLD ARMENIAN



ՀԱՉՅՈՒՆԱԿԱՆ ԶՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

20. 7 ՀԱՉՅՈՒՆԻ ՓՈԽԱՐԵՆ ԱՅԼ ԲԱՂԱՁԱՅՆ ՓՈԽԱՌՅԱԼ ԲԱՌԵՐԻ ՄԿՁԲՈՒՄ

դ ~ իս, $\hat{կ}/\hat{ղ}$, կ, գ/գ՝

Նյութեր և մեկնաբանություններ

ա) խարիբ ~ դարիբ, խօնախ ~ դոնախ, խալմախալ ~ դալմադալ, խըստու ~ դըստու, Խազարու ~ Ղազարու, խըսա ~ դըսա

բ) $\hat{կ}$ արիբ ~ դարիբ, $\hat{կ}$ օնախ ~ դոնախ, $\hat{կ}$ ալմա $\hat{կ}$ ալ ~ դալմադալ, $\hat{կ}$ ստու ~ դաստու, $\hat{կ}$ սզմ ~ Ղազար, $\hat{կ}$ ըսա ~ դըսա

գ) կարիբ ~ դարիբ, կօնախ ~ դոնախ, կալմակալ ~ դալմադալ, կստու ~ դաստու, Կազար ~ Ղազար, կըսս ~ դըսս

դ) գարիբ ~ դարիբ, գօնախ ~ դոնախ, գազան ~ դազան, գուշ ~ դուշ, գ՝օնդախ ~ դոնդախ, գ՝ըժալ ~ դժալ

Հայերենը չունի *դ*-ով սկսվող բնիկ (հնդեվրոպական ծագման) բառեր, հայոց լեզվում *դ*-ով սկսվող բոլոր բառերը փոխառություններ են: Բարբառային հայերենի մի շարք տարբերակներում *դ*-ի գործածությունը բառասկզբում բացառվում է նաև փոխառյալ բառերում: Այսպես, Պոլսի, Նոր Նախիջևանի, Խարբերդի, Մշո բարբառներում, արևմտյան որոշ այլ բարբառային միավորներում բառասկզբի *դ*-ի փոխարեն առկա է *խ*: Բառասկզբի *դ*-ի փոխարեն հպաշփականին բնորոշ արտաբերությամբ հետնալեզվվային $\hat{կ}$ կամ $\hat{ղ}$ ունեն Բեյլանի, Քեսաբի, Եդեսիայի, Խոյ-Մարադայի բարբառները, որոշ այլ բարբառային միավորներ: Վանի, Բայազետի, Դիադինի բարբառները, որոշ այլ բարբառային միավորներ բառասկզբի *դ*-ի փոխարեն ունեն *կ*:

Գեղարքունիքի մարզում բառասկզբի *դ*-ի փոխարեն *խ* է արձանագրվել Մարտունու տարածաշրջանի Վարդաձոր, Ձորագյուղ, Լիճք, Վերին Գետաշեն, Ներքին Գետաշեն, Մադինա գյուղերի խոսվածքներում (Մշո բարբառի Ալաշկերտի խոսվածք), մասամբ՝ Վարդենիսի տարածաշրջանի Լճական գյուղի խոսվածքում (Մշո բարբառ):

Հպաշփականին նմանվող արտաբերությամբ հետնալեզվային $\hat{կ}$ դրսևորվում է Վարդենիսի տարածաշրջանի Ակունք գյուղի խառը տիպի խոսվածքում, մասնակիորեն արձանագրվել է Վարդենիս քաղաքի (Դիադինի բարբառ), Սևանի տարածաշրջանի Նորաշեն (Մակուի խոսվածք) և Գավառի տարածաշրջանի Ծովազարդ, Գանձակ, Սարուխան, Գեղարքունիք (Բայազետի բարբառ), Մարտունու տարածաշրջանի Երանոս, Ծովինար (Մշո բարբառ) գյուղերի խոսվածքներում:

Փոխառյալ բառերի սկզբում η -ի փոխարեն ζ է առկա Գավառի տարածաշրջանի բոլոր (Ծովագարդում՝ մասնակիորեն) բնակավայրերում (Բայազետի բարբառ), Սևանի տարածաշրջանի Ծովագյուղ (Արծափի խոսվածք), Ջովաբերդ, Դոմաշեն, Գեղամավան, Վարսեր, Լճաշեն, Չկալովկա գյուղերի, մասամբ նաև՝ Նորաշենի խոսվածքներում (Մակուի խոսվածք): Մարտունու տարածաշրջանում բառասկզբի η -ի փոխարեն ζ է դրսևորվում Երանոս (մասամբ), Ծակքար, Ծովասար, Մարտունի, Գեղհովիտ, Վաղաշեն, Աստղաձոր, Ջուլաքար, Վարդենիկ, Ծովինար, Արծվանիստ գյուղերի խոսվածքներում (Մշո բարբառ), Վարդենիսի տարածաշրջանի Կարճաղբյուր, Լճավան (մասամբ), Մաքենիս, Ծովակ, Լուսակունք, Նորակերտ գյուղերի խոսվածքներում (Մշո բարբառ), մասամբ՝ Վարդենիս քաղաքի խոսվածքում (Դիաղինի բարբառ):

Վարդենիս քաղաքի խոսվածքում բառասկզբի η -ի փոխարեն մասնակիորեն արձանագրվել են նաև q և q' :

Ձուգաբանությունը, այսպիսով, Գեղարքունիքի մարզի բարբառային միավորներում դրսևորվում է հիմնականում չորս տարբերակով.

ա) փոխառյալ բառերի սկզբում η -ի փոխարեն μ . Մշո բարբառի որոշ խոսվածքներ (հիմնականում՝ Ալաշկերտի խոսվածք).

բ) փոխառյալ բառերի սկզբում η -ի փոխարեն ζ . Ակունքի խառը տիպի խոսվածք, մասամբ՝ Դիաղինի, Բայազետի, Մշո բարբառների որոշ խոսվածքներ, Մակուի խոսվածքի տարբերակ.

գ) փոխառյալ բառերի սկզբում η -ի փոխարեն ζ . Բայազետի բարբառ, Արծափի խոսվածք, Մշո բարբառի խոսվածքների մեծ մաս, Մակուի խոսվածքի տարբերակների մեծ մաս, մասամբ՝ Դիաղինի բարբառ.

դ) փոխառյալ բառերի սկզբում η -ի փոխարեն q/q' . Դիաղինի բարբառի խոսվածք (մասամբ):

PHONETIC ISOGLOSSES

20. OTHER CONSONANTS IN PLACE OF THE SOUND *GH* AT THE BEGINNING OF LOANWORDS

gh ~ *kh*, *k*^ˆ// *ġh*, *k*, *g*//*g*'

Materials and commentary:

- a) **kharib** ~ gharib “foreigner”, **khonakh** ~ ghonakh “guest”, **khalmakhal** ~ ghalmaghal “commotion”, **khəstu** ~ ghastu “intentionally”, **Khazaros** ~ Ghazaros, **khəsa** ~ ghəsa “conversation”
- b) **k^ˆarib** ~ gharib “foreigner”, **k^ˆonakh** ~ ghonakh “guest”, **k^ˆalmak^ˆal** ~ ghalmaghal “commotion”, **k^ˆəstu** ~ ghastu “intentionally”, **k^ˆāzār** ~ Ghazar, **k^ˆəsa** ~ ghəsa “conversation”
- c) **karib** ~ gharib “foreigner”, **konakh** ~ ghonakh “guest”, **kalmakal** ~ ghalmaghal “commotion”, **kəstu** ~ ghastu “intentionally”, **Kazar** (Ghazar), **kəsa** ~ ghəsa “conversation”
- d) **garib** ~ gharib “foreigner”, **gonakh** ~ ghonakh “guest”, **gazan** ~ ghazan “caldron”, **gush** ~ ghush “bird”, **g'ondakh** ~ ghondakh “diaper”, **g'əzhal** ~ ghəzhal “to scream”

Armenian has no native (Indo-European) words beginning with *gh*; all words in the Armenian language that begin with *gh* are loanwords. In a number of dialectal Armenian variants, the use of initial *gh* is also excluded in loanwords. For example, in the dialects of Polis, New Nakhijevan, Kharberd, and Mush, and some other Western dialectal units, initial *gh* is replaced by *kh*. The dialects of Beylan, Kessab, Edessa, Khoy-Maragha, and some other dialectal units have a velar *k*^ˆ or *ġh* with an affricate-like articulation instead of initial *gh*. The dialects of Van, Bayazet, and Diadin, and some other dialectal units have *k* instead of initial *gh*.

In the Gegharkunik province, *kh* instead of initial *gh* has been recorded in the speeches of the villages of Vardadzor, Dzoragyugh, Lichk, Verin Getashen, Nerkin Getashen, and Madina in the Martuni region (Alashkert subdialect of the Mush dialect), and partially in the speech of the village of Lchavan in the Vardenis region (Mush dialect).

The velar *k*^ˆ with a similar affricate articulation is manifested in the mixed-type speech of the village of Akunk in the Vardenis region, and has been partially recorded in the speeches of Vardenis city (Diadin dialect), the village of Norashen in the Sevan region (Maku subdialect), and the villages of Tsovazard, Gandzak, Sarukhan, and Gegharkunik in the Gavar region (Bayazet dialect), and Yeranos and Tsovinar in the Martuni region (Mush dialect).

K instead of initial *gh* in loanwords occurs in all settlements of the Gavar region (partially in Tsovazard) (Bayazet dialect); the villages of Tsovagyugh (Artsap subdialect), Zovaberd, Ddmashen, Geghamavan, Varser, Lchashen, and Chkalovka, and partially Norashen (Maku subdialect) in the Sevan region. In the Martuni region, *k* instead of initial *gh* is manifested in the

speeches of the villages of Yeranos (partially), Tsakqar, Tsovasar, Martuni, Geghhovit, Vaghashen, Astghadzor, Zolaqar, Vardenik, Tsovinar, and Artsvanist (Mush dialect), as well as in the speeches of the villages of Karchaghbyur, Lchavan (partially), Maqenis, Tsovak, Lusakunk, and Norakert (Mush dialect) in the Vardenis region, and partially in the speech of Vardenis city (Diadin dialect).


In the speech of Vardenis city, *g* and *g'* have also been partially recorded instead of initial *gh*.

Thus, this isogloss is manifested in the dialectal units of the Gegharkunik province in four main variants:

- a) *kh* instead of initial *gh* in loanwords: in some speeches of the Mush dialect (primarily the Alashkert subdialect);
- b) *k* instead of initial *gh* in loanwords: in the mixed-type speech of Akunk, and partially in some speeches of the Diadin, Bayazet, and Mush dialects, and a variant of the Maku subdialect;
- c) *k* instead of initial *gh* in loanwords: in the Bayazet dialect, the Artsap subdialect, most of the Mush dialect's speeches, most variants of the Maku subdialect, and partially the Diadin dialect;
- d) *g/g'* instead of initial *gh* in loanwords: in the Diadin dialect (partially).

20. Ղ ՀՆՉՅՈՒՆԻ ՓՈԽԱՐԵՆ ԱՅԼ ԲԱՂԱԶԱՅՆ
ՓՈԽԱՌՅԱԼ ԲԱՌԵՐԻ ՄԿԶԲՈՒՄ

OTHER CONSONANTS IN PLACE OF THE
SOUND GH AT THE BEGINNING OF
LOANWORDS



ՀԱՉՅՈՒՆԱԿԱՆ ԶՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

21. *h*- Ի ՓՈԽԱՐԵՆ ՏԱՐՆՄԱՆՈՒԹՅԱՄԲ ԱՌԱՋԱՑԱԾ Հ ԲԱՌԱՄԿԶԲՈՒՄ

$h > h$

Նյութեր և մեկնաբանություններ

հաղ < խաղ, հաղօղ < խաղող, հաղաղ < խաղաղ

Հայերենի բարբառային որոշ միավորներում մի շարք բառերի սկզբում *h*-ն հաջորդող *ղ*-ի տարնմանական ազդեցությամբ դարձել է *h*: Նման հնչյունափոխություն արձանագրվել է Նոր Նախիջևանի, Տրապիզոնի, Արարատյան և այլ բարբառներում, Գանձակի միջբարբառում:

Գեղարքունիքի մարզում բառասկզբի *h*-ի փոխարեն *h* արձանագրվել է Ճամբարակի տարածաշրջանի Գետիկ, Թթուջուր, Ճամբարակ և Վահան բնակավայրերում (Գանձակի միջբարբառ), մասամբ նաև՝ մյուս բնակավայրերում, Վարդենիսի տարածաշրջանի՝ արցախցիներով բնակեցված բնակավայրերում:

Հատկանիշը, այսպիսով, Գեղարքունիքի մարզում դրսևորվում է Գանձակի միջբարբառի, մասամբ նաև՝ Ղարաբաղի բարբառի խոսվածքներում:

PHONETIC ISOGLOSSES

21. DISSIMILATORY *h* IN PLACE OF *kh* AT THE BEGINNING OF WORDS

kh > h

Materials and commentary:

hagh < khagh “play”, **haghogh** < khaghogh “grape”, **haghagh** < khaghagh “peaceful”

In some dialectal units of Armenian, the initial *kh* in several words has become *h* due to the dissimilatory influence of a following *gh*. Such a phonetic change has been recorded in the dialects of New Nakhijevan, Trabzon, Ararat, and others, as well as in the Gandzak inter-dialect.

In the Gegharkunik province, *h* instead of initial *kh* has been recorded in the settlements of Getik, Ttujur, Chambarak, and Vahan in the Chambarak region, and partially in the other settlements of the region, as well as in the settlements in the Vardenis region inhabited by Artsakh Armenians.

Thus, this feature exists in the Gegharkunik province in the speeches of the Gandzak inter-dialect, and partly also in the speeches of the Karabakh dialect.



ՀԱՉՅՈՒՆԱԿԱՆ ԶՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

22. ԲԱՌԱՍԿԶԲԻ Հ-Ի ՓՈԽԱՐԵՆ ՇՐԹՆԱՏԱՄՆԱՅԻՆ Ֆ ԿԱՍ Վ ՇՓԱԿԱՆ

h > ֆ//վ

Նյութեր և մեկնաբանություններ

ա) ֆօրթ < հորթ, ֆօղ < հող, ֆօղ < հոտ, ֆօր < հոր, ֆօն < հոն, ֆօքի < հոգի

բ) վըրթ < հորթ, վըղ < հող, վըտ < հոտ, վեր < հոր

Բարբառային հայերենի որոշ տարբերակներում բառասկզբի *հո* հնչյունակապակցության *հ*-ի փոխարեն միավանկ *հորթ*, *հող*, *հոտ*, *հոր*, *հոն* և երկվանկ *հոգի* բառերում հանդես է գալիս *ֆ*, որոշ տարածքներում էլ՝ *վ*: Այդ իրողությունը բացատրվում է *ռ*-ի երկբարբառային արտասանությամբ (ուօ, ուէ), երբ երկբարբառի սկզբի *ռ* տարրը, միավանկ բառերի սկզբի *ռ*-ի պես թանձրանալով, վերածվել է շրթնատանային շփական բաղաձայնի: Ընդ որում՝ դեպքերի մի մասում այդ շփականը նախընթաց շնչի՝ *հ*-ի ազդեցությամբ խուլ է, այսինքն՝ *ֆ*, իսկ այլ դեպքերում բառասկզբի շունչը, հավանաբար ավելի թույլ լինելով, ընկել է, և ձևավորվել է ձայնեղ *վ* շփական: Երկրորդ դեպքում կարևոր հանգամանք է նաև այն, որ տվյալ բարբառային միավորները հնչյունական համակարգում *ֆ* չունեն: Վերոհիշյալ բառերի սկզբում *հ*-ի փոխարեն *ֆ* ունեն Արարատյան, Կարնո, Հաջընի, Սեփաստիայի, Ակնի, Նոր Նախիջևանի և որոշ այլ բարբառներ, իսկ *հ*-ի փոխարեն *վ* ունեն Ղարաբաղի բարբառի խոսվածքները:

Գեղարքունիքի մարզում *հ*-ի փոխարեն *ֆ* արձանագրվել է Սևանի տարածաշրջանի Ծովագյուղ (Արծափի խոսվածք) և Ծաղկունք (Մակուի խոսվածք) բնակավայրերի խոսվածքներում: Հ-ի փոխարեն *վ* հանդես է գալիս Ճամբարակի և Վարդենիսի տարածաշրջանների՝ Արցախից բռնագաղթածներով բնակեցված գյուղերի խոսվածքներում:

Զուգաբանությունը, այսպիսով, Գեղարքունիքի մարզի բարբառային միավորներում ունի հետևյալ դրսևորումները.

ա) բառասկզբի *հո* հնչյունակապակցության *հ*-ի փոխարեն *ֆ*. Արծափի խոսվածք, Մակուի խոսվածքի տարբերակ.

բ) բառասկզբի *հո* հնչյունակապակցության *հ*-ի փոխարեն *վ*. Ղարաբաղի բարբառի խոսվածքներ:

PHONETIC ISOGLOSSES

22. LABIODENTAL FRICATIVE *F* OR *V* IN PLACE OF WORD-INITIAL *H*

h > f // v

Materials and commentary:

a) **fort'** < hort' "calf", **fogh** < hogh "soil", **fot** < hot "smell", **for** < hor "pit", **fon** < hon "cornel", **fok'i** < hok'i "soul"

b) **vərt'** < hort' "calf", **vəgh** < hogh "soil", **vət** < hot "smell", **ver** < hor "pit"

In some dialectal variants of Armenian, the *h* in the word-initial *ho* sound combination is replaced by *f* in the monosyllabic words *hort* "calf", *hogh* "soil", *hot* "smell", *hor* "pit", *hon* "cornel", and the disyllabic word *hogi* "soul". In some areas, it is replaced by *v*. This phenomenon is explained by the diphthongal pronunciation of *o* (*uo*, *ue*), where the initial *u* element of the diphthong, like the word-initial *o* in monosyllabic words, became dense and transformed into a labiodental fricative. In some cases, this fricative is voiceless (*f*) due to the influence of the preceding aspiration (*h*), while in other cases, the initial aspiration, being weaker, is likely lost, and the voiced fricative *v* is formed. In the second case, it is also important that the given dialectal units do not have *f* in their phonological system. The words mentioned above have *f* instead of *h* in the Ararat, Karin, Hadjin, Sebastia, Akn, Nor Nakhijevan, and some other dialects, while the speeches of the Karabagh dialect have *v* instead of *h*.

In the Gegharkunik province, *f* instead of *h* has been recorded in the speeches of the settlements of Tsovaryugh (Artsap subdialect) and Tsaghkunk (Maku subdialect) in the Sevan region. *V* instead of *h* appears in the speeches of the villages in the Chambarak and Vardenis regions that are inhabited by those forcibly displaced from Artsakh.


Thus, this isogloss exists in the dialectal units of the Gegharkunik province in the following ways:

a) *f* instead of *h* in the word-initial *ho* sound combination: in the Artsap subdialect and a variant of the Maku subdialect;

b) *v* instead of *h* in the word-initial *ho* sound combination: in the speeches of the Karabagh dialect.

22. ԲԱՌԱՍԿԶԲԻ Հ - Ի ՓՈԽԱՐԵՆ
ՇՐԹԱՏԱՄԱՆԱՅԻՆ ԺԿԱՍ Վ ՇՓԱԿԱՆ

LABIODENTAL FRICATIVE F OR V IN
PLACE OF WORD-INITIAL H



ՀԱՉՅՈՒՆԱԿԱՆ ԶՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

23. ՁԱՅՆՈՐԴ ՅՀԱՉՅՈՒՆ՝ ՀԵՏՆԱԼԵԶՎԱՅԻՆ ՊԱՅԹԱԿԱՆԻ, ՇՓԱԿԱՆ Հ-Ի, ՆՔ, ՆԳ, ՆԿ ՀԱՉՅՈՒՆԱԽՄԲԵՐԻ ՓՈԽԱՐԵՆ

$j < կ, ք, նք, նգ, հ$

Նյութեր և մեկնաբանություններ

ա) պայսեւ < պակսեւ < պակասեւ, ճայտի < ճակտի < ճակատի, անյոր < աքյոր, տայնալ < տաքնալ < տաքանալ

բ) իշվայներ < իշվանքներ, յեղլյներ < եղունգներ, էթայ տուն < երթանք տուն

գ) սայման < սահման, մայ < մահ, պայել < պահել, աքայ < ագահ, դ'այլիճ < դահլիճ, սրայ < սրահ, զոյվել < զոհվել

Բարբառային հայերենի որոշ տարբերակներում, հնչյունական դիրքով պայմանավորված, առկա է առանձին հնչյունների կամ հնչյունախմբերի վերածում j -ի: Բաղաձայնանախորդ դիրքում հետնալեզվային պայթական բաղաձայնի փոխարեն j է դրսևորվում Քեսաբի, Վանի, Դիադինի, Խոյ-Մարադայի և այլ բարբառներում: Հ-ի փոխարեն j է արձանագրվել Շապին-Գարահիսարի, Արաբկիրի, Կարինի, Երզնկայի և այլ բարբառներում: Նք, նգ կամ նկ հնչյունախմբերի փոխարեն j է հանդիպում Քեսաբի, Խոյ-Մարադայի, Վանի, Դիադինի և այլ բարբառներում:

Գեղարքունիքի մարզում բաղաձայնանախորդ դիրքում հետնալեզվային պայթականի և $ն + հետնալեզվային պայթական$ հնչյունախմբի փոխարեն j ունեն Վարդենիսի տարածշրջանի Վարդենիս քաղաքի (Դիադինի բարբառ) և Ակունք գյուղի (խառը տիպի) խոսվածքները: Բառամիջում և բառավերջում $հ$ -ի փոխարեն j արձանագրվել է Սևանի տարածաշրջանի Ծովագյուղ բնակավայրում (Արծափի խոսվածք), մասամբ՝ Մարտունու տարածաշրջանի Ներքին Գետաշեն, Վարդաձոր գյուղերում (Մշո բարբառ), Գավառի տարածաշրջանի Սարուխան գյուղում (Բայազետի բարբառ):

Զուգաբանությունը, այսպիսով, Գեղարքունիքի մարզի բարբառային միավորներում ունի հետևյալ դրսևորումները.

ա) բաղաձայնանախորդ դիրքում հետնալեզվային պայթականի և $ն + հետնալեզվային պայթական$ հնչյունախմբի փոխարեն j . Դիադինի բարբառ, Ակունքի խառը տիպի խոսվածք.

բ) բառամիջում և բառավերջում $հ$ -ի փոխարեն j . Արծափի խոսվածք, մասամբ՝ Մշո և Բայազետի բարբառների առանձին խոսվածքներ:

PHONETIC ISOGLOSSES

23. Y SONANT IN PLACE OF A VELAR PLOSIVE, FRICATIVE *h*, AND SOUND COMBINATIONS *nq*, *ng*, *nk*

y < k, q, nq, ng, h

Materials and commentary:

a) **paysel** < paksel < pakasel “to decrease”, **chayti** < chakti < chakati “of the forehead”, **aylor** < ak’lor “rooster”, **taynal** < tak’nal < tak’anal “to get warm”

b) **ishvayner** < ishvank’ner “donkeys”, **yeghuynner** < yeghungner “nails”, **et’ay tun** < et’ank’ tun “let’s go home”

c) **sayman** < sahman “border”, **may** < mah “death”, **payel** < pahel “to keep”, **aqay** < agah “greedy”, **daylich** < dahlich “hall”, **sray** < srah “hall”, **zoyvel** < zohvel “to be sacrificed”

In some dialectal variants of Armenian, due to phonetic position, there is a transformation of some sounds or sound combinations into y. In a pre-consonantal position, y appears in place of a velar plosive consonant in the dialects of Kessab, Van, Diadin, Khoy-Maragha, and others. Y instead of h has been recorded in the dialects of Shabin-Karahisar, Arabkir, Karin, Erzincan, and others. Y in place of the sound combinations *nq*, *ng*, or *nk* is found in the dialects of Kessab, Khoy-Maragha, Van, Diadin, and others.

In the Gegharkunik province, y in place of a velar consonant in a pre-consonantal position and in place of the sound combination *n + velar plosive* is found in the speeches of the city of Vardenis (Diadin dialect) and the village of Akunk (mixed-type speech).

Y instead of h in word-medial and word-final positions has been recorded in the settlement of Tsovaghyugh in the Sevan region (Artsap subdialect), and partially in the villages of Nerkin Getashen and Vardadzor in the Martuni region (Mush dialect) and the village of Sarukhan in the Gavar region (Bayazet dialect).

Thus, this isogloss appears in the dialectal units of the Gegharkunik province in the following ways:

a) y in place of a velar plosive in a pre-consonantal position and in place of the *n + velar plosive* sound combination: in the Diadin dialect and the mixed-type Akunk speech;

b) y in place of h in word-medial and word-final positions: in the Artsap speech, and partially in some speeches of the Mush and Bayazet dialects.

23. ՀԱՅՈՐԴԻ Յ ՀՆՅՈՒՆ՝
ՀԵՏԱԼԵԶՎԱՅԻՆ ՊԱՅԹԱԿԱՆԻ,
ՇՓԱԿԱՆ ՀԻ, ՆԲ, ՆԳ, ՆԿ
ՀՆՅՈՒՆԱՄԲԵՐԻ ՓՈԽԱՐԵՆ

Y SONANT IN PLACE OF A VELAR
PLOSIVE, FRICATIVE H, AND SOUND
COMBINATIONS NQ, NG, NK

- Հետևելով պայթյանի փոխարեն / ձայնորդի
դրսերում բաղաձայնից առաջ
- Բաղաձայնակիզ բառից առաջ և բառամիջում *hp>j*, *hq>j*
փոփոխություն
- Բառամիջում և բառակերպում *h - j* փոխարեն՝ *j*
- The appearance of the sonant *y* before a consonant instead of a
postlingual plosive
- Before a word beginning with a consonant and in the middle of a
word, the change *nk > y*, *ng > y*
- The presence of *y* instead of *h* in the middle and at the end of
words



ՀԱՉՅՈՒՆԱԿԱՆ ԶՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

24. Ֆ-Ի ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅՈՒՆ

ֆ ~ փ

Նյութեր և մեկնաբանություններ

փայլ ~ ֆահլ, փանդ ~ ֆանդ, փաստ ~ ֆաստ, փայտոն ~ ֆայտոն, փրլան ~ ֆլան

Հին հայերենը շրթնատամնային *ֆ* շփական հնչյուն չունի: Ժամանակի ընթացքում որոշակի դիրքերում ձայնեղ *ւ* - ի խլացած տարբերակը սկսել է գիտակցվել իբրև առանձին հնչույթ: Փաստորեն, լեզվի հնչյունական համակարգի ներքին զարգացմամբ լրացվել է բաց վանդակը, համակարգը ամբողջացել է *ւ* - *ֆ* (ձայնեղ-խուլ) հակադրությամբ: Գործընթացին թերևս որոշակիորեն նպաստած լինեն նաև հարևան լեզուներում *ֆ*-ի առկայությունը, այդ հնչյունն ունեցող փոխառյալ բառերի ներհոսքը: Սակայն գործընթացը չի ընդգրկել հայերենի բոլոր տարբերակները, և որոշ բարբառներում *ֆ* - ն բացակայում է: Բարբառային նման միավորներից են Թբիլիսիի, Մեղրիի, Կարձևանի, Ղարաբաղի բարբառները, Գանձակի միջբարբառը, Խոյ-Մարաղայի բարբառի որոշ խոսվածքներ:

Գեղարքունիքի մարզում *ֆ* շփական չունեն Ճամբարակի տարածաշրջանի բոլոր բնակավայրերի (Ղարաբաղի բարբառ, Գանձակի միջբարբառ) և Վարդենիսի տարածաշրջանի՝ արցախցիներով բնակեցված գյուղերի խոսվածքները:

Հատկանիշը, այսպիսով, Գեղարքունիքի մարզում բնորոշ է Ղարաբաղի բարբառի և Գանձակի միջբարբառի խոսվածքներին:

PHONETIC ISOGLOSSES

24. ABSENCE OF *F*

f ~ p'

Materials and commentary:

p'aym ~ fahm “understanding”, **p'änd** ~ fand “cunning”, **p'ason** ~ fason “figure”, **p'ayton** ~ fayton “carriage”, **p'əlan** ~ flan “someone”

Old Armenian did not have the labiodental fricative *f*. Over time, in certain positions, the voiceless variant of the voiced *v* began to be recognized as an independent phoneme. In essence, due to the internal development of the language's phonological system, the "empty slot" was filled, and the system was completed with the *v-f* (voiced-voiceless) opposition. This process may have been influenced by the presence of *f* in neighboring languages and the influx of loanwords containing this sound. However, the process did not encompass all variants of Armenian, and in some dialects, *f* is absent. Such dialectal units include the dialects of Tbilisi, Meghri, Karchevan, and Karabagh, the Gandzak inter-dialect, and some speeches of the Khoy-Maragha dialect.

In the Gegharkunik province, the fricative *f* is absent in the speeches of all settlements in the Chambarak region (Karabagh dialect, Gandzak inter-dialect) and the villages in the Vardenis region inhabited by Artsakh Armenians.

Thus, this feature in the Gegharkunik province is characteristic of the speeches of the Karabagh dialect and the Gandzak inter-dialect.



ՀԱՉՅՈՒՆԱԿԱՆ ԶՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

25. ԲԱՌԱՎԵՐՋԻ Ն-Ի ՓՈԽԱՐԵՆ ՆԸ ԿԱՄ Ը

ն > նը//ը

Նյութեր և մեկնաբանություններ

ա) կիառնը < գառն, յը՛գնը < եգն, թօռնը < թոռն, ծոկնը < ձուկն, մօկնը < մուկն

բ) տանխածը < դաղձն, տանռը < դառն, սառը < սառն, յեզը < եզն, պեռը < բեռն, ծեռը < ձեռն

Լեզվի պատմական զարգացման ընթացքում հինհայերենյան մի շարք բառերի վերջում բաղաձայնահաջորդ ն հնչյունի անկման իրողությունը չի ընդգրկել Սյունիք-Արցախ տարածքի բարբառային միավորները: Դրանցում բառավերջի ն-ն պահպանվել է, սակայն նրան նախորդող ը-ն տեղափոխվել է բառավերջ, և ստացվել է բառերը եզրափակող նը հնչյունախումբ: Բարբառային այլ միավորներում (Լոռու խոսվածք, Գանձակի միջբարբառ) բառավերջի ն-ն ընկել է, սակայն պահպանվել է նրան նախորդող ը-ն, և բառերն ավարտվում են բաղաձայնահաջորդ ը-ով:

Գեղարքունիքի մարզում մի շարք բառերում բառավերջի հինհայերենյան ն-ի պահպանում և ը-ի տեղափոխմամբ բառը եզրափակող նը հնչյունախումբ ունեն Ճամբարակի և Վարդենիսի տարածաշրջանների՝ ներգաղթյալ արցախցիներով բնակեցված գյուղերի խոսվածքները (Ղարաբաղի բարբառ): Նույն այդ ն-ի փոխարեն ը ունեն Ճամբարակի տարածաշրջանի Ճամբարակ քաղաքի, Գետիկ, Թթուջուր գյուղերի, մասամբ նաև Վահան գյուղի խոսվածքները (Գանձակի միջբարբառ):

Զուգաբանությունը, այսպիսով, Գեղարքունիքի մարզի բարբառային միավորներում դրսևորվում է երկու տարբերակով.

ա) հին հայերենի բառավերջի ն-ի փոխարեն՝ նը հնչյունախումբ. Ղարաբաղի բարբառի խոսվածքներ.

բ) հին հայերենի բառավերջի ն-ի փոխարեն՝ ը. Գանձակի միջբարբառի խոսվածքներ:

PHONETIC ISOGLOSSES

25. *NƏ* OR *Ə* IN PLACE OF WORD-FINAL *N*

n > **nə** // **ə**

Materials and commentary:

- a) **kʰaɾnə** < gaɾn “lamb”, **yezənə** < ezn “ox”, **tʰoɾnə** < tʰoɾn “grandson”, **tsükənə** < dzukn “fish”, **mokənə** < mukn “mouse”
b) **täkhtsə** < daghdzn “mint”, **täɾə** < daɾn “bitter”, **sarə** < saɾn “cold”, **yezə** < ezn “ox”, **peɾə** < beɾn “load”, **tseɾə** < dzeɾn “hand”

During the historical development of the language, the loss of the consonant-following *n* sound at the end of many Old Armenian words bypassed the dialectal units of the Syunik-Artsakh region. In these dialects, the word-final *n* was preserved, but the preceding *ə* moved to the end of the word, resulting in the word-final *nə* sound combination. In other dialectal units (Lori speech, Gandzak inter-dialect), the word-final *n* was lost, but the preceding *ə* was preserved, and the words end with a consonant-following *ə*.

In the Gegharkunik province, the preservation of the word-final Old Armenian *n* and the resulting *nə* sound combination are found in the speeches of the villages in the Chambarak and Vardenis regions inhabited by resettled Artsakh Armenians (Karabagh dialect). In place of this same *n*, the sound *ə* is found in the speeches of the city of Chambarak, the villages of Getik and Ttujur, and partially in the village of Vahan in the Chambarak region (Gandzak inter-dialect).

Thus, this isogloss exists in the dialectal units of the Gegharkunik province in two variants:

- a) the *nə* sound combination in place of the Old Armenian word-final *n*: in the speeches of the Karabagh dialect;
b) *ə* in place of the Old Armenian word-final *n*: in the speeches of the Gandzak inter-dialect.

25. ԲԱՌԱՎԵՐՁԻ Ն - Ի
ՓՈԽԱՐԵՆ ԼԸ ԿԱՄ Ը
ԱԾ OR Ə IN PLACE OF WORD-
FINAL N



- Բառավերջի *ն* - ի փոխարեն՝ *բ*
- Բառավերջի *ն* - ի պահպանում *և* *բ* - ի հավելում
- The vowel *ա* instead of the *ն* at the end of a word
- Retention of the final *ն* and addition of *ա*

ՀԱՅՈՒՆԱԿԱՆ ԶՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

26. ՀԱՎԵԼԱԿԱՆ ՇՆՉԻ ԱՌԿԱՅՈՒԹՅՈՒՆ ԲԱՌԱՄԿՁԲԻ ՁԱՅՆԱՎՈՐԻՑ ԱՌԱՋ

ձայնավոր > հ+ձայնավոր // հ´+ձայնավոր

Նյութեր և մեկնաբանություններ

ա) **հաքի** < ագի, **հըլիվեր** < ալկոր, **հընգեր** < ընկեր, **հընդրիլ** < ընտրել, **հըլօրիլ** < ոլորել, **հօչիլ** < ոջիլ, **հոլլունք** < ուլունք

բ) **հ´երես** < երես, **հ´ընգեր** < ընկեր, **հ´ընգնել** < ընկնել, **Հ´երեվան** < Երևան, **հ´ավելի** < ավելի, **հ´ախպուր** < աղբյուր

Բարբառային հայերենի տարբեր միավորների՝ ձայնավորով սկսվող բառերի առանձին խմբերում արձանագրվել է բառասկզբում հավելական շնչի առկայություն, որը որոշ դեպքերում սովորական խուլ *հ* է, այլ դեպքերում՝ ձայնեղ *հ* (*հ´*): Խուլ *հ*-ի հավելումը հատուկ է արևելյան, հատկապես՝ Սյունիք-Արցախի բարբառներին, իսկ ձայնեղ *հ´*-ի հավելումը բնորոշ է Արարատյան, Կարնո, Մշո, Բայազետի, Դիաղինի բարբառներին, հարակից այլ բարբառային միավորների:

Գեղարքունիքի մարզի բոլոր խոսվածքներում արձանագրվել է բառասկզբում հավելական շնչի առկայություն: Սևանի (Մակուի և Արծափի խոսվածքներ), Գավառի (Բայազետի բարբառ), Մարտունու (Մշո բարբառ) տարածաշրջանների բոլոր բնակավայրերի խոսվածքներում առկա է ձայնեղ *հ´*-ի հավելում: Այդպես է նաև Վարդենիսի տարածաշրջանի համանուն քաղաքի (Դիաղինի բարբառ), Կարճաղբյուր, Լճավան, Մաքենիս, Ախպրաձոր, Ծովակ, Լուսակունք, Խաչաղբյուր, Նորակերտ, Մեծ Մասրիկ (Մշո բարբառ) և Ակունք (խառը տիպի խոսվածք) գյուղերի խոսվածքներում: Վարդենիսի տարածաշրջանի մյուս գյուղերի (Ղարաբաղի բարբառ), Ճամբարակի տարածաշրջանի բոլոր գյուղերի (Ղարաբաղի բարբառ և Գանձակի միջբարբառ) խոսվածքներում առկա է խուլ *հ*-ի հավելում:

Զուգաբանությունը, այսպիսով, Գեղարքունիքի մարզի բարբառային միավորներում դրսևորվում է երկու տարբերակով.

ա) ձայնավորից առաջ ձայնեղ *հ´*-ի հավելում բառասկզբում. Բայազետի, Մշո, Դիաղինի բարբառների խոսվածքներ, Մակուի, Արծափի խոսվածքների տարբերակներ, Ակունքի խառը տիպի խոսվածք.

բ) ձայնավորից առաջ խուլ *հ*-ի հավելում բառասկզբում. Ղարաբաղի բարբառի, Գանձակի միջբարբառի խոսվածքներ:

PHONETIC ISOGLASSES

26. ADDED ASPIRATION BEFORE A WORD-INITIAL VOWEL

vowel > h+vowel // h'+vowel

Materials and commentary:

- a) **haki** < agi “tail”, **həliver** < alivor “old”, **həngʷer** < ənker “friend”, **həndril** < əntrel “choose”, **həlöril** < oloril “contort”, **hoch'il** < ojil “louse”, **hülünq** < ulunq “bead”
b) **h'eres** < eres “face”, **h'ənger** < ənker “friend”, **h'əngnel** < ənknel “to fall”, **H'erevan** < “Yerevan”, **h'aveli** < aveli “more”, **h'akhpur** < aghbyur “source”

In various dialectal units of Armenian, the presence of added aspiration at the beginning of certain groups of words that start with a vowel has been recorded. In some cases, this is a normal voiceless *h*, while in other cases, it is a voiced *h'*. The addition of a voiceless *h* is characteristic of Eastern dialects, especially those of Syunik-Artsakh, while the addition of a voiced *h'* is characteristic of the Ararat, Karin, Mush, Bayazet, and Diadin dialects, as well as other related dialectal units.

The presence of added aspiration at the beginning of words has been recorded in all speeches of the Gegharkunik province. The addition of a voiced *h'* is present in the speeches of all settlements in the Sevan (Maku and Artsap subdialects), Gavar (Bayazet dialect), and Martuni (Mush dialect) regions. This is also the case in the speeches of the city of Vardenis (Diadin dialect), and the villages of Karchaghbyur, Lchavan, Maqenis, Akhpradzor, Tsovak, Lusakunk, Khachaghbyur, Norakert, Mets Masrik (Mush dialect), and Akunk (mixed-type speech) in the Vardenis region. In the other villages of the Vardenis region (Karabagh dialect) and all the villages of the Chambarak region (Karabagh dialect and Gandzak inter-dialect), the addition of a voiceless *h* is present.

Thus, this isogloss is recorded in the dialectal units of the Gegharkunik province in two variants:

- a) the addition of a voiced *h'* at the beginning of a word before a vowel: in the speeches of the Bayazet, Mush, and Diadin dialects, variants of the Maku and Artsap subdialects, and the mixed-type Akunk speech;
b) the addition of a voiceless *h* at the beginning of a word before a vowel: in the speeches of the Karabagh dialect and the Gandzak inter-dialect.

26. ՀԱՎԵԼԱԿԱՆ ՇԼՉԻ
ԱՌԿԱՅՈՒԹՅՈՒՆ ԲԱՌԱՍԿՁԲԻ
ՀԱՅՆԱԿՈՐԻՅ ԱՌԱՋ
ADDED ASPIRATION BEFORE A WORD-
INITIAL VOWEL



ՀԱՉՅՈՒՆԱԿԱՆ ԶՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

27. ԲԱՂՅՈՒՍԱԿԱՆ ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՈՒ ՇԱՂԿԱՊԻ ՓՈԽԱՐԵՆ՝ Ը

- ու - > - ք -

Նյութեր և մեկնաբանություններ

մսկըտմկ < ազգուտակ, տունըտեղ < տունուտեղ, մմոթը կընիկ < մարդ ու կնիկ, իմը քո < իմ ու քո, բ'ուքը ձ'ուն < բուք ու ձյուն, մոռտուր < առուտուր

Բարբառային հայերենում բավականին տարածված են այնպիսի բարդությունները, որոնց բաղադրիչները կապակցվում են ու շաղկապով: Նման բարդություններում ու շաղկապի փոխարեն ք է արձանագրվել Խոյ-Մարադայի բարբառում, Բայազետի բարբառի որոշ խոսվածքներում:

Գեղարքունիքի մարզում այս հատկանիշն ունեն Գավառի տարածաշրջանի Գավառ, Հացառատ, Գանձակ, Ծաղկաշեն, Կարմիրգյուղ բնակավայրերի խոսվածքները (Բայազետի բարբառ), Սևանի տարածաշրջանի Զովաբեր և մասամբ Գեղամավան բնակավայրերի խոսվածքները (Մակուի խոսվածք):

Հատկանիշը, այսպիսով, Գեղարքունիքի մարզում դրսևորվում է Բայազետի բարբառի որոշ խոսվածքներում, Մակուի խոսվածքի առանձին տարբերակներում:

PHONETIC ISOGLOSSES

27. ə IN PLACE OF u IN COMPOUND WORDS

- u - > - ə -

Materials and commentary:

âsk/ə/tâk < âsk/u/tâk “relatives”, **tun/ə/tegh** < tun/u/tegh “property”, **mârt' /ə/ knik** < mârt' /u/ knik “husband and wife”, **im /ə/ qo** < im /u/ qo “mine and yours”, **b'uk' /ə/ dz'un** < b'uk' /u/ dz'un “snowstorm”, **âr/ə/tur** < âr/u/tur “trade”

In dialectal Armenian, complex words with components connected by the conjunction u “and” are quite common. In such complexes, instead of the conjunction u , ə is recorded in the Khoy-Maragha dialect and in some speeches of the Bayazet dialect.

In the Gegharkunik province, this feature is found in the speeches of the settlements of Gavar, Hatsarat, Gandzak, Tsaghkashen, and Karmirgyugh in the Gavar region (Bayazet dialect), and in the speeches of the settlements of Zovaber and partially Geghamavan in the Sevan region (Maku subdialect).

Thus, this feature is found in the Gegharkunik province in some speeches of the Bayazet dialect and in some variants of the Maku subdialect.

27. ԲԱՂՅՈՒՍԱԿԱՆ
ԲԱՐԴՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ ՈՒ ՇԱՂԿԱՊԻ
ՓՈՒՍԱՐԵՆ՝ Ը
Թ IN PLACE OF Մ IN COMPOUND WORDS



ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԶՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

28. ՆԻ// ՆԷ ՀՈԳՆԱԿԵՐՏ ՄԱՍՆԻԿՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆ

ներ ~ նի/նէ

Նյութեր և մեկնաբանություններ

ա) **կոմեշնի** (գոմեշներ), **կյազաննի** (գազաններ), **ամաննի** (ամաններ), **գըշերնի** (գիշերներ),
բ) **ծըմըկնէ** (ծմակներ), **տըմըկնէ** (դմակներ), **տըխտըկնէ** (տախտակներ), **ըրուրուցնէ** (օրորոցներ)

Նի մասնիկը միջինհայերենյան չորս հիմնական հոգնակերտներից էր (*ք, էր, ներ, նի*), որով կազմվում էր երկվանկ բառերի հոգնակին: Արդի հայ բարբառներում այս հոգնակերտով բազմավանկ բառերի հոգնակին կազմվում է Ղարաբաղի, Մեղրու, Հաղրուրի (երեքում էլ՝ *նէ* տարբերակով), Սասունի (*նի*) բարբառներում, Գանձակի միջբարբառում և այլն: Հետաքրքրական է, որ Ղարաբաղի բարբառում *նէ* (երբեմն՝ *նի*) հոգնակերտին թեք հոլովներում փոխարինում է *նէր* հոգնակերտը՝ ուղղ. *կըրըսնէն* – բաց. *կըրըսներան* – գործ. *կըրըսներալ*:

Գեղարքունիքի մարզում *նի* հոգնակերտ ունեն Ճամբարակի տարածաշրջանի Գետիկ, Թթուջուր, Ճամբարակ և Վահան բնակավայրերի խոսվածքները (Գանձակի միջբարբառ): Ճամբարակի տարածաշրջանի մյուս գյուղերի և Վարդենիսի տարածաշրջանի Ագատ, Այրք, Ավազան, Արեգունի, Արփունք, Գեղամարակ, Գեղամասար, Գեղաքար, Դարանակ, Ծափաթաղ, Կախակն, Կուրթ, Կուտական, Նորաբակ, Շատջրեք, Շատվան, Ջաղացաձոր, Սոթք, Վանեվան, Տրետուք, Փամբակ, Փոքր Մասրիկ գյուղերի խոսվածքներում (Ղարաբաղի բարբառ) առավելաբար գործածական է *նէ* տարբերակը:

Զուգաբանությունը, այսպիսով, Գեղարքունիքի մարզի բարբառային միավորներում դրսևորվում է երկու տարբերակով.

- ա) *նի* հոգնակերտի գործածություն. Գանձակի միջբարբառի խոսվածքներ.
- բ) *նէ* հոգնակերտի գործածություն. Ղարաբաղի բարբառի խոսվածքներ:

GRAMMATICAL ISOGLOSSES

28. USE OF THE PLURAL FORMING PARTICLES *NI* // *NE*

ner ~ *ni* // *nē*

Materials and commentary:

- a) **kümēshni** “buffaloes”, **kyāzānni** “wild animals”, **amanni** “vessels”, **g’əshērni** “nights”;
- b) **tsəməkne** (“shady places”), **təməkne** “fat tails”, **təkhəkne** (“boards”), **əruruts’nē** (“cradles”).

The plural suffix **-ni** was one of the four main plural markers in Middle Armenian (-k, -er, -ner, -ni), used to form the plural of disyllabic nouns. In modern Armenian dialects, plural formation with this marker is attested in the dialects of **Karabakh**, **Meghri**, and **Hadrut** (all employing the variant **-nē**), as well as in the **Sasun** dialect (using the variant **-nin**), and in the **Gandzak** interdialect.

Interestingly, in the Karabakh dialect, the plural marker **-nē** (occasionally **-ni**) is replaced in oblique cases by **-nēr**, e.g. *kəṛəsnēn* “large clay jugs” (nom.) – *kəṛəsnēran* (dat.) – *kəṛəsnērav* (instr.).

In **Gegharkunik Province**, the plural marker **-ni** occurs in the speech of the villages **Getik**, **Ttujur**, **Chambarak**, and **Vahan** of the Chambarak region (Gandzak interdialect). In contrast, in the neighboring villages of the Chambarak region and in the Vardenis area—specifically in **Azat**, **Ayrk**, **Avazan**, **Areguni**, **Arpunk**, **Geghamabak**, **Geghamasar**, **Geghakar**, **Daranak**, **Tsapatagh**, **Kakhakn**, **Kuth**, **Kutakan**, **Norabak**, **Shatjrek**, **Shatvan**, **Jaghatsadzor**, **Sotk**, **Vanevan**, **Tretuk**, **Pambak**, and **Pokr Masrik**—the **-nē** form (typical of the Karabakh dialect) is predominantly used.

Thus, the correspondence of plural markers within the dialectal varieties of Gegharkunik Province manifests in two main forms:

- a) the use of **-ni**: in the speeches of the Gandzak interdialect;
- b) the use of **-nē**: in the speeches of the Karabakh dialect.

28. ՆԻ//ՆԷ ՀՈԳՆԱԿԵՐՏ
ՄԱՆՆԻԿՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆ
USE OF THE PLURAL FORMING
PARTICLES *NI*// *NE*



ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՁՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

29. ՄԵԿԻՑ ԱՎԵԼԻ ՀՈԳՆԱԿԵՐՏ ՄԱՍՆԻԿՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆ ՆՈՒՅՆ ԲԱՌՈՒՄ

**ք//կ+ներ, իկ+ներ, բանք+ներ տիք//դիք//վդիք+ներ, վանք+ներ, անք+ներ
ք+եր, իկ+եր, եր+նի**

Նյութեր և մեկնաբանություններ

ա) **տըղէկներ** (տղաներ), **ճամփէքներ** (ճամփաներ), **մակիկներ** (մաքիներ),
գ'եղացիքներ (գյուղացիներ), **գ'եղրանկներ** (գյուղեր), **դ'իզրանքներ** (դեզեր),
ախալըդիկներ (եղբայրներ), **գ'իլվանկներ** (գայլեր), **ձ'իանկներ** (ձիեր)
բ) **փետըքեր** (փեսաներ), **մըռթկէք** (մարդիկ), **տըռներնի** (դռներ)

Հայերենի բարբառային բոլոր միավորներն էլ ունեն բաղադրյալ հոգնակերտներ, ընդ որում՝ այդպիսիք դրսևորվում են տարբեր զուգորդումներով ու հնչյունական ձևավորումներով: Ձևավորված բաղադրյալ հոգնակերտներից տարբեր են կրկնակի հոգնակերտները, երբ հոգնակի ձևի վրա ավելանում է մեկ այլ հոգնակերտ: Նման իրողություններ շատ են արձանագրվել, օրինակ, Մշո և Հաղբուրթի բարբառներում:

Գեղարքունիքի մարզում կրկնակի հոգնակերտների գործածություն արձանագրվել է Մարտունու տարածաշրջանի Երանոս, Վարդաձոր, Ձորագյուղ, Ծակքար, Լիճք, Ծովասար, Ներքին Գետաշեն, Վերին Գետաշեն, Մադինա, Մարտունի, Գեղ-հովիտ, Վաղաշեն, Աստղաձոր, Վարդենիկ, Արծվանիստ բնակավայրերի խոսվածքներում (Մշո բարբառ), Վարդենիսի տարածաշրջանի Կարճաղբյուր, Մաքենիս, Ախալքաձոր, Ծովակ, Լուսակունք, Խաչաղբյուր, Լճավան գյուղերի խոսվածքներում (Մշո բարբառ): Սրանցում որևէ հոգնակերտ (ք, իկ, բանք//բան, տիկ//դիկ//վըդիկ, անկ//վանկ) ունեցող բառ ստանում է նաև *ներ* հոգնակերտ: Ճամբարակի, Վահանի, Գետիկի, Թթուջուրի խոսվածքներում ևս (Գանձակի միջբարբառ) արձանագրվել են կրկնակի հոգնակիության դեպքեր, երբ ք հոգնակերտին ավելանում է *եր* (ճըմփըքեր), *իկ*-ին՝ *էք* (մըռթկէք), իսկ *եր*-ին՝ *նի* (տըռներնի):

Զուգաբանությունը, այսպիսով, Գեղարքունիքի մարզի բարբառային միավորներում դրսևորվում է երկու տարբերակով.

ա) որևէ հոգնակերտ (*ք, իկ, բանք//բան, տիկ//դիկ//վըդիկ, անկ//վանկ*) + ներ. Մշո բարբառի խոսվածքներ.

բ) ք հոգնակերտ + *եր*. *իկ* հոգնակերտ + *էք*. *եր* հոգնակերտ + *նի*. Գանձակի միջբարբառի խոսվածքներ:

GRAMMATICAL ISOGLOSSES

29. USE OF MORE THAN ONE PLURAL FORMING PARTICLES IN THE SAME WORD

k'// k + ner, ik + ner, rank + ner, tik/dik/vdik + ner, vank + ner, ank + ner

k' + er, ik + ek', er + ni

Materials and commentary:

a) **təghe/k/ner/** “boys”, **champhe/k'/ner/** “roads”, **mak'i/k'/ner/** “sheep”, **geghats'i/k'/ner/** “villagers”, **g'egh/rank'/ner/** “villages”, **d'iz/rank'/ner/** “heaps”, **kəngə/tik/ner/** “women”, **akhpər/dik/ner/** “brothers”, **gil/vank/ner/** “wolves”, **dz'i/ank/ner/** “horses”

b) **p'esə/k'/er/** “son-in-laws”, **mərt'/k/ek/** “men”, **təɾ/ner/ni/** “doors”

All dialectal units of Armenian have plural compound particles, which are found in various combinations and phonetic forms. Double plural forms, where another plural marker is added to a plural form, are distinct from these complex forms. Such occurrences have been recorded frequently, for example, in the Mush and Hadrut dialects.

In the Gegharkunik province, the use of double plural markers has been recorded in the speeches of the settlements of Yeranos, Vardadzor, Dzoragyugh, Tsakqar, Lichk, Tsovasar, Nerkin Getashen, Verin Getashen, Madina, Martuni, Geghgovit, Vaghashen, Astghadzor, Vardenik, and Artsvanist in the Martuni region (Mush dialect), and in the speeches of the villages of Karchaghbyur, Maqenis, Akhpradzor, Tsovak, Lusakunk, Khachaghbyur, and Lchavan in the Vardenis region (Mush dialect). In all these speeches, a word with a plural marker (k'//k, ik, rank//ran, tik//dik//vdik, ank//vank) also receives the *ner* plural marker.

In the speeches of the settlements of Chambarak, Vahan, Getik, and Ttujur in the Chambarak region (Gandzak inter-dialect), cases of double pluralization have also been recorded, where *er* is added to the *k'* plural marker (chəmp'ə/k'/er/), *ek* to *ik* (mərt'/k/ek'/), and *ni* to *er* (təɾn/er/ni).

Thus, this isogloss is found in the dialectal units of the Gegharkunik province in two variants:

a) any plural marker (k, ik, rank//ran, tik//dik//vdik, ank//vank) + *ner*: in the speeches of the Mush dialect;

b) *k'* plural marker + *er*; *ik* plural marker + *ek'*; *er* plural marker + *ni*: in the speeches of the Gandzak inter-dialect.

29. ՄԵԿԻՑ ԱՎԵԼԻ ՀՈԳՆԱԿԵՐՏ
ՄԱՍՆԻԿՆԵՐԻ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆ
ՆՈՒՅՆ ԲԱՌՈՒՄ

USE OF MORE THAN ONE PLURAL
FORMING PARTICLES IN THE SAME
WORD

- Մեկից ավելի հոգնակերա մասնիկների
գործածություն
- Use of more than one plural forming
particles



ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԶՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

30. ՈՒ ՀՈԼՈՎՈՒՄ ՀՈԳՆԱԿԻ ԹՎՈՒՄ

-երու -ներու

Նյութեր և մեկնաբանություններ

օտերու ~ հորթերի, ծընօղներու ~ ծնողների, խավերու ~ հավերի, ախջիկներու ~ աղջիկների, ճըժերու ~ ճըժերի, թըվերու ~ թվերի, թօռներու ~ թռռների

Բառերը հոգնակի թվում *Ու* հոլովման են ենթարկվում հայերենի արևմտյան բարբառներում (բացառությամբ Վանի բարբառի, որում հոգնակի սեռականն ունի *աց* կազմիչ) և արևելյան խմբակցության Թիֆլիսի ու Կարճևանի բարբառներում:

Գեղարքունիքի մարզում բառերը հոգնակի թվում *Ու* հոլովման են ենթարկվում Մարտունու տարածաշրջանի բոլոր գյուղերի խոսվածքներում (Մշո բարբառ), Վարդենիսի տարածաշրջանի Վարդենիս քաղաքի (Դիաղինի բարբառ), Կարճաղբյուր, Լճավան, Մաքենիս, Ախպրաձոր, Ծովակ, Լուսակունք, Նորակերտ գյուղերի խոսվածքներում (Մշո բարբառ): Հոգնակի *Ու* հոլովումը մասամբ դրսևորվում է Սևանի տարածաշրջանի Ծաղկունք գյուղի խոսվածքում:

Հատկանիշը, այսպիսով, Գեղարքունիքի մարզում դրսևորվում է Մշո բարբառի խոսվածքներում (բացառությամբ Վարդենիսի տարածաշրջանի մեկ-երկու խոսվածքի), Դիաղինի բարբառի խոսվածքում, մասամբ նաև Մակուի խոսվածքի մի տարբերակում:

GRAMMATICAL ISOGLOSSES

30. *U* INFLECTION IN THE PLURAL

-eru **-neru**

Materials and commentary:

ort'er/u/ “of calves”, **tsnoghner/u/** “of parents”, **khaver/u/** “of chickens”, **akhchikner/u/** “of girls”, **chəjer/u/** “of children”, **t'ver/u/** “of numbers”, **t'orner/u/** “of grandchildren”

In the plural, words undergo *U* inflection in Western Armenian dialects (with the exception of the Van dialect, where the plural genitive has the *ats* component) and in the Tiflis and Karchevan dialects of the Eastern group.

In the Gegharkunik province, words undergo *U* inflection in the plural in the speeches of all villages in the Martuni region (Mush dialect), the city of Vardenis (Diadin dialect), and the villages of Karchaghbyur, Lchavan, Maqenis, Akhpradzor, Tsovak, Lusakunk, and Norakert in the Vardenis region (Mush dialect). Plural *U* inflection is partially found in the speech of the village of Tsaghkunk in the Sevan region.

Thus, this feature exists in the Gegharkunik province in the speeches of the Mush dialect (with the exception of one or two speeches in the Vardenis region), the Diadin dialect, and partially in a variant of the Maku subdialect.



ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԶՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

31. ՈՋ ՀՈԼՈՎՄԱՆ ԱՌԿԱՅՈՒԹՅՈՒՆ

տէր > տիրոջ

Նյութեր և մեկնաբանություններ

աներոջ, կիսրոճ, հ' ընգերոճ, քուրոճ, խօրքըրոջ, տիրոջ, տէքրոջ, քավորոճ

Ոջ հոլովման ենթարկվում են սակավաթիվ բառեր, որոնք հիմնականում ազգակցություն են ցույց տալիս: Այս հոլովումը որպես կանոն բնորոշ է արևմտյան բարբառային միավորներին (Վան, Շատախ, Դիադին, Մուշ, Քեսաբ, Երզնկա, Նոր Նախիջևան, Համշեն, Սվեդիա, Սեբաստիա, Ջեյթուն, Կարին և այլն): Արևելյաններից արձանագրվել է Խոյ-Մարադայի բարբառում, մինչդեռ Արարատյան, Բայազետի, Ագուլիսի, Ղարաբաղի, Հադրութի, Մեղրիի, Կաքավաբերդի և այլ բարբառների խոսվածքներում այս հոլովման կա՛մ ոչ մի բառ չի ենթարկվում, կա՛մ էլ ենթարկվում է միայն տէր բառը:

Գեղարքունիքի մարզում Ոջ հոլովումը դրսևորվում է Մարտունու տարածաշրջանի բոլոր բնակավայրերի խոսվածքներում (Մշո բարբառ), արձանագրվել է նաև Վարդենիսի տարածաշրջանի Վարդենիս քաղաքի (Դիադինի բարբառ), Կարճաղբյուր, Մաքենիս, Ախպրաձոր, Լուսակունք, Խաչաղբյուր, Նորակերտ (Մշո բարբառ) և Ակունք (խառը տիպի խոսվածք) գյուղերի խոսվածքներում: Գավառի տարածաշրջանի բոլոր բնակավայրերի (Բայազետի բարբառ), Ճամբարակի տարածաշրջանի Ճամբարակ, Գետիկ, Թթուջուր, Վահան բնակավայրերի (Գանձակի միջբարբառ) խոսվածքներում, Սևանի տարածաշրջանի գյուղերի խոսվածքներում (Մակուի և Արծափի խոսվածքներ) Ոջ հոլովման ենթարկվում է միայն տէր բառը:

Զուգաբանությունը, այսպիսով, Գեղարքունիքի մարզի բարբառային միավորներում դրսևորվում է հետևյալ կերպ.

ա) Ոջ հոլովման առկայություն. Մշո, Դիադինի բարբառների խոսվածքներ, Ակունքի խառը տիպի խոսվածք.

բ) միայն տէր բառի հոլովում Ոջ հոլովիչով. Բայազետի բարբառի և Գանձակի միջբարբառի խոսվածքներ, Արծափի և Մակուի խոսվածքների տարբերակներ:

GRAMMATICAL ISOGLOSSES

31. PRESENCE OF *OJ* INFLECTION

ter > **tiroj** (owner > owner's)

Materials and commentary:

aneroch ‘of father-in-law’, **k’isroch** ‘of mother-in-law’, **h’əngeroch** ‘friend’s’, **k’uroch** ‘sister’s’, **khorqəroch** ‘aunt’s’, **tiroch** ‘owner’s’, **tek’roch** ‘of brother-in-law’, **k’avoroch** ‘godfather’s’

A small number of words, mainly kinship terms, undergo *Oj* inflection. This declension is typically characteristic of Western dialectal units (Van, Shatakh, Diadin, Mush, Kessab, Erzinkan, New Nakhijevan, Hamshen, Svedia, Sebastia, Zeytun, Karin, etc.). Among Eastern dialects, it has been recorded in the Khoy-Maragha dialect, whereas in the dialects of Ararat, Bayazet, Agulis, Karabagh, Hadrut, Meghri, Kakavaberd, and others, either no words undergo this inflection, or only the word *ter* ‘owner’ does.

In the Gegharkunik province, *OJ* inflection appears in the speeches of all settlements in the Martuni region (Mush dialect). It has also been recorded in the speeches of the city of Vardenis (Diadin dialect), and the villages of Karchaghbyur, Maqenis, Akhpradzor, Lusakunk, Khachaghbyur, Norakert (Mush dialect), and Akunk (mixed-type speech) in the Vardenis region. In the speeches of all settlements in the Gavar region (Bayazet dialect), the settlements of Chambarak, Getik, Ttujur, and Vahan in the Chambarak region (Gandzak inter-dialect), and the villages in the Sevan region (Maku and Artsap subdialects), only the word *ter* ‘owner’ undergoes *OJ* inflection.

Thus, this isogloss exists in the dialectal units of the Gegharkunik province as follows:

- a) presence of *OJ* inflection: in the speeches of the Mush and Diadin dialects and the mixed-type Akunk speech;
- b) declension of only the word *ter* with the *OJ* case ending: in the speeches of the Bayazet dialect and Gandzak inter-dialect and variants of the Artsap and Maku subdialects.

31. ՈՋ ՀՈՒՈՎՄԱՆ
ԱՌԿԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESENCE OF *Oj* INFLECTION



ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԶՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

32. ՈՆԵՐՔԻՆ ՀՈԼՈՎՄԱՆ ԸՆԴԳՐԿՄԱՆ ԸՆԴԼԱՅՆՈՒՄ

աներ > անոր

Նյութեր և մեկնաբանություններ

հանօր (աներոջ), **հրնգօր** (ընկերոջ), **կէսօր** // **ըսկէսօր** (սկեսրոջ), **քրվօր** (քրոջ), **հօրաքրվօր** // **հըրաքօր** (հորաքրոջ), **մըրաքօր** (մորաքրոջ), **տէքօր** (տեգրոջ)

Արևմտյան բարբառային միավորներում **ՈՆ** հոլովման ենթարկվում են հիմնականում այն բառերը (հայր, մայր, եղբայր), որոնք այդպես էին հոլովվում նաև հին հայերենում: Արևելյան մի շարք բարբառախոս տարածքներում (Երևան, Ագուլիս, Ղարաբաղ, Գանձակ) այդ հոլովման են ենթարկվում նաև այլ բարբառներում Ոջ հոլովման ենթարկվող բառեր (աներ, ընկեր, կեսուր, քույր, տեգր):

Գեղարքունիքի մարզում Ո ներքին հոլովման ընդգրկման ընդլայնում առկա է Ճամբարակի տարածաշրջանի բոլոր բնակավայրերի խոսվածքներում (Ղարաբաղի բարբառ, Գանձակի միջբարբառ), Վարդենիսի տարածաշրջանի՝ արցախցիներով բնակեցված գյուղերի խոսվածքներում (Ղարաբաղի բարբառ):

Հատկանիշը, այսպիսով, Գեղարքունիքի մարզում բնորոշ է Ղարաբաղի բարբառի և Գանձակի միջբարբառի խոսվածքներին:

GRAMMATICAL ISOGLOSSES

32. EXTENSION OF THE *O* INTERNAL INFLECTION

aner > anor

Materials and commentary:

hanor “of a father-in-law”, **həngʻor** “of a friend”, **kesor** // **əskesor** “of a mother-in-law”, **k'əvor** “of a sister”, **həraqəvor** // **həraqor** “of a paternal aunt”, **məraqor** “of a maternal aunt”, **tekor** “of a brother-in-law”

In Western dialectal units, *O* inflection is mainly applied to words like *hayr* “father”, *mayr* “mother”, and *yeghbayr* “brother”, which were inflected this way in Old Armenian as well. In several Eastern dialectal areas (Yerevan, Agulis, Karabagh, Gandzak), this inflection is also applied to words that undergo *OJ* inflection in other dialects, such as *aner* “father-in-law”, *ənker* “friend”, *kesur* “mother-in-law”, *quyr* “sister”, and *tegr* “brother-in-law”.

In the Gegharkunik province, the extension of *O* internal inflection is present in the speeches of all settlements in the Chambarak region (Karabagh dialect, Gandzak inter-dialect) and in the speeches of the villages in the Vardenis region inhabited by Artsakh Armenians (Karabagh dialect).

Thus, this feature is characteristic of the speeches of the Karabagh dialect and the Gandzak inter-dialect in the Gegharkunik province.



ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԶՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

33. ՁԱՅՆԱՎՈՐԱՀԱՆԳ ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՈՐՈՇ ԱՅԼ ԲԱՌԵՐԻ ՍԵՌԱԿԱՆ ՀՈԼՈՎ Յ ՄԱՍՆԻԿՈՎ

Կարօ > Կարօյ

Նյութեր և մեկնաբանություններ

Աննայ, Մօսկրվայ, պապայ, Մըլքէյ, ադէյ, Տիկօյ, դ'ասատույ

Մշո, Բայազետի, Դիադինի և Սասունի բարբառներում արձանագրվել է ձայնավորահանգ անձնանունների, հատուկ ու հասարակ որոշ այլ անունների սեռական հոլովի կազմություն / մասնիկով: Մշո բարբառի որոշ տարբերակներում (Ալաշկերտի, Բուլանուխի, Մկրագոմի խոսվածքներ) նման բառերի սեռականի իմաստն արտահայտվում է նաև առանց որևէ վերջավորության (Համօ աֆտօ՝ Համոյի մեքենա):

Գեղարքունիքի մարզում այս հատկանիշն ունեն Սևանի տարածաշրջանի Ծովագյուղ (Արծափի խոսվածք), Դդմաշեն, Ծաղկունք, Չկալովկա, Նորաշեն բնակավայրերը (Մակուի խոսվածք), Գավառ քաղաքից բացի՝ համանուն տարածաշրջանի բոլոր բնակավայրերը (Բայազետի բարբառ), Մարտունու տարածաշրջանի բոլոր բնակավայրերը (Մշո բարբառ), Վարդենիսի տարածաշրջանի Կարճաղբյուր, Լճավան, Մաքենիս, Ախպրաձոր, Ծովակ, Լուսակունք, Խաչաղբյուր (Մշո բարբառ), Վարդենիս (Դիադինի բարբառ) և Ակունք (խառը տիպի խոսվածք) բնակավայրերը:

Հատկանիշը, այսպիսով, որոշ բացառություններով դրսևորվում է Բայազետի, Մշո, Դիադինի բարբառների խոսվածքներում, Արծափի և Մակուի խոսվածքների տարբերակներում, Ակունքի խառը տիպի խոսվածքում:

GRAMMATICAL ISOGLOSSES

33. GENITIVE CASE OF VOWEL-ENDING PROPER NAMES AND SOME OTHER WORDS WITH THE Y PARTICLE

Karo > Karoy

Materials and commentary:

Annay “Anna's”, **Moskvay** “of Moscow”, **papay** “father's”, **Məlk'ey** “Mlke's”, **adey** “grandmother's”, **T'ikoy** “Tiko's”, **d'asatuy** “teacher's”

In the Mush, Bayazet, Diadin, and Sasun dialects, the genitive case of vowel-ending proper names and some common nouns is formed with the *y* particle. In some variants of the Mush dialect (Alashkert, Bulanukh, Mkr'agom subdialects), the genitive meaning of such words is also expressed without any ending (*Hamo afto* “Hamo's car”).

In the Gegharkunik province, this feature is present in the speeches of the settlements of Tsovaghyugh (Artsap subdialect), Ddmashen, Tsaghkunk, Chkalovka, and Norashen (Maku subdialect) in the Sevan region; all settlements in the Gavar region except the city of Gavar (Bayazet dialect); all settlements in the Martuni region (Mush dialect); and the settlements of Karchaghbyur, Lchavan, Maqenis, Akhpradzor, Tsovak, Lusakunk, Khachaghbyur (Mush dialect), Vardenis (Diadin dialect), and Akunk (mixed-type speech) in the Vardenis region.

Thus, this feature, with some exceptions, appears in the speeches of the Bayazet, Mush, and Diadin dialects, in variants of the Artsap and Maku subdialects, and in the mixed-type Akunk speech.



ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԶՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

34. ՀԱՏՈՒԿ ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ Ա ՀՈԼՈՎՈՒՄ

Երևան > Հ'երեվան > Հ'երեվանա

Նյութեր և մեկնաբանություններ

Հերեվան, Ալաշկերդա, Մառտունա, Քնվանա, Սելանա, Մուխանա, Հերանոսա, Ծակքարա

Հին հայերենի արտաքին Ա հոլովման արձագանքները պահպանվել են արդի բարբառային շատ միավորներում: Կան բարբառներ, որոնցում Ա վերջադրական հոլովման ենթարկվում են հատուկ անձնանունները (Կարճևան, Մեղրի): Հատուկ տեղանունների Ա արտաքին հոլովման դրսևորումներ արձանագրվել են Արարատյան, Ղարաբաղի, Հաղրուրի, Գանձակի, Բայազետի, Վանի, Դիադինի, Մշո, Մասունի, Տիգրանակերտի, Երզնկայի և այլ բարբառային միավորներում:

Գեղարքունիքի մարզում այս հատկանիշը բավականին տարածված է, արձանագրվել է Սևանի տարածաշրջանի Դումաշեն, Գեղամավան, Չկալովկա, Նորաշեն գյուղերի (Մակուի խոսվածք), Գավառի տարածաշրջանի բոլոր բնակավայրերի (Բայազետի բարբառ), Մարտունու տարածաշրջանի Երանոս, Վարդաձոր, Ձորագյուղ, Ծակքար, Լիճք, Ծովասար, Վերին Գետաշեն, Ներքին Գետաշեն, Մադինա, Մարտունի, Աստղաձոր, Վարդենիկ, Ծովինար բնակավայրերի խոսվածքներում (Մշո բարբառ), Ճամբարակի և Վարդենիսի տարածաշրջանների՝ արցախցիներով բնակեցված գյուղերի խոսվածքներում (Ղարաբաղի բարբառ), Ճամբարակի տարածաշրջանի Վահան գյուղի (Գանձակի միջբարբառ) և Վարդենիսի տարածաշրջանի համանուն քաղաքի (Դիադինի բարբառ) խոսվածքներում:

Հատկանիշը, այսպիսով, Գեղարքունիքի մարզում դրսևորվում է Բայազետի, Դիադինի, Ղարաբաղի բարբառների խոսվածքներում, Մշո բարբառի խոսվածքների մեծ մասում, Գանձակի միջբարբառի, Մակուի խոսվածքի որոշ տարբերակներում:

GRAMMATICAL ISOGLOSSES

34. *A* INFLECTION OF PROPER NOUNS

Yerevan > **H'erevan** > **H'erevana** (from Yerevan)

Materials and commentary:

H'erevna “from Yerevan“, **Alashkerta** “from Alashkert“, **Martuna** “from Martuni“, **Sevana** “from Sevan“, **Heranosa** “from Heranos“, **Tsakqara** “from Tsakqar“

Remnants of the Old Armenian *A* external inflection have been preserved in many modern dialectal units. There are dialects in which proper names undergo *A* final inflection (Karchvan, Meghri). Manifestations of the *A* external inflection for proper place names have been recorded in the Araratian, Karabagh, Hadrut, Gandzak, Bayazet, Van, Diadin, Mush, Sasun, Tigranakert, Erzinkan, and other dialectal units.

In the Gegharkunik province, this feature is quite widespread. It has been recorded in the speeches of the villages of Ddmashen, Geghamavan, Chkalovka, and Norashen in the Sevan region (Maku subdialect); all settlements in the Gavar region (Bayazet dialect); the settlements of Yeranos, Vardadzor, Dzoragyugh, Tsakqar, Lichk, Tsovasar, Verin Getashen, Nerkin Getashen, Madina, Martuni, Astghadzor, Vardenik, and Tsovinar in the Martuni region (Mush dialect); the speeches of the villages in the Chambarak and Vardenis regions inhabited by Artsakh Armenians (Karabagh dialect); the village of Vahan in the Chambarak region (Gandzak inter-dialect); and the city of Vardenis in the Vardenis region (Diadin dialect).

Thus, this feature exists in the Gegharkunik province in the speeches of the Bayazet, Diadin, and Karabagh dialects, in most of the speeches of the Mush dialect, and in the Gandzak inter-dialect, and in some variants of the Maku subdialect.



ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԶՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

35. ՆԵՐԳՈՅԱԿԱՆ ՀՈԼՈՎԻ ԻՄԱՍՏԻ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆ

Կոտորմը // գ'եղի նե // գ'եղին // գ'եղըն // գ'եղի մեչը (գյուղում)

Նյութեր և մեկնաբանություններ

ա) **ըշխարքումը** (աշխարհում), **դութումը** (սնդուկում), **հողմը** (հողում), **տաշտմը** (տաշտում)

բ) **գ'եղի նե** (գյուղում), **փեջի նե** (վառարանում), **ափտոյ նե** (մեքենայում), **դ'իզի նե** (դեզի մեջ)

գ) **ջ'ըրին** (ջրի մեջ), **հ'առդին** (արտում), **կոլխօզին** (կոլտնտեսությունում), **քաղակին** (քաղաքում), **կըջուջներին** (կճուճների մեջ), **դըբոցին** (դպրոցում)

դ) **դ'ուսըն** (դրսում), **քաղաքը** (քաղաքում), **գ'եղըն** (գյուղում)

ե) **գ'ըրկի մեճ** (գրկի մեջ), **պոյեզի մեչը** (գնացքի մեջ), **մարքի մեչ** (մարագում)

Բարբառային հայերենում ներգոյականի իմաստն արտահայտվում է տարբեր եղանակներով: Արևելյան բարբառները, բացառությամբ Խոյ-Մարաղայի և Բայազետի բարբառների, ներգոյականի իմաստն արտահայտում են *ոււմ* վերջավորությամբ (կամ դրա հնչյունական տարբերակներով) կազմված ներգոյական հոլովով: Արևմտյան, ինչպես նաև Խոյ-Մարաղայի և Բայազետի բարբառային միավորներում ներգոյականի իմաստն արտահայտվում է *սեռական հոլով + մեջ կապ* կառույցով կամ հայցական հոլովով: Որոշ դեպքերում ներգոյականի իմաստն արտահայտվում է այլ միջոցներով՝ տրական հոլովով (Եդեսիա, Համշեն, Մակու, Արծափ), *Ի* նախդրով և հայցականով (Քեսաբ, Սվեդիա), սեռական հոլովով և *նե* մասնիկով (Մուշ, Վան, Դիադին) և այլն:

Գեղարքունիքի մարզում ներգոյական հոլով գործածվում է ճամբարակի տարածաշրջանի բոլոր բնակավայրերում (Ղարաբաղի բարբառ, Գանձակի միջբարբառ), Վարդենիսի տարածաշրջանի՝ արցախցիներով բնակեցված գյուղերում (Ղարաբաղի բարբառ): Ներգոյականի իմաստը հայցականով կամ *սեռական հոլով + մեջ կապ* կառույցով է դրսևորվում Սևանի տարածաշրջանի Դդմաշեն, Զովաբեր, Վարսեր, Լճաշեն, Զկալովկա, Նորաշեն գյուղերի խոսվածքների (Մակուի խոսվածք), Գավառի (Բայազետի բարբառ), Մարտունու (Մշո բարբառ) տարածաշրջանների բոլոր բնակավայրերի խոսվածքներում, Վարդենիսի տարածաշրջանի Ախպրաձոր, Լճավան, Լուսակունք, Խաչաղբյուր, Ծովակ, Կարճաղբյուր, Մաքենիս, Մեծ Մասրիկ, Նորակերտ (Մշո բարբառ), Վարդենիս (Դիադինի բարբառ) և Ակունք (խառը տիպի խոսվածք) բնակավայրերի խոսվածքներում: Մարտունու տարածաշրջանի Մարտունի, Վաղաշեն, Աստղաձոր, Զուլաքար, Վարդենիկ և Վարդենիսի տարածաշրջանի Կարճաղբյուր, Ծովակ, Լուսակունք գյուղերում (Մշո բարբառ) ինչպես նաև Վարդենիս քաղաքում (Դիադինի բարբառ) ներգոյականի իմաստն արտահայտվում է նաև *սեռական հոլով + նե մասնիկ*

կառույցով: Ներգոյական հոլովի իմաստը տրական հոլովով է արտահայտվում Սևանի տարածաշրջանի Ծովագյուղ (Արծափի խոսվածք), Ծաղկունք, Գեղամական գյուղերում (Մակուի խոսվածք):

Զուգաբանությունը, այսպիսով, Գեղարքունիքի մարզի բարբառային միավորներում դրսևորվում է չորս տարբերակով.

ա) ներգոյական հոլովի իմաստի արտահայտում համապատասխան հոլովաձևով. Ղարաբաղի բարբառի, Գանձակի միջբարբառի խոսվածքներ.

բ) ներգոյականի հոլովի իմաստի արտահայտում հայցականով կամ *սեռական հոլով* + մեջ *կապ* կառույցով. Մշո, Բայազետի, Դիադինի բարբառների խոսվածքներ, Մակուի խոսվածքի տարբերակների մեծ մաս, Ակունքի խառը տիպի խոսվածք.

գ) ներգոյական հոլովի իմաստի արտահայտում *սեռական հոլով* + նե *մասնիկ* կառույցով. Մշո բարբառի որոշ խոսվածքներ, Դիադինի բարբառի խոսվածք.

դ) ներգոյական հոլովի իմաստի արտահայտում տրական հոլովով. Արծափի խոսվածք, Մակուի խոսվածքի առանձին տարբերակներ:

GRAMMATICAL ISOGLOSSES

35. EXPRESSION OF THE MEANING OF LOCATIVE CASE

k'yughəmə // g'eghi ne // g'eghin // g'eghən // g'eghi mechə “in the village”

Materials and commentary:

- a) **əshkharqumə** “in the world”, **ghut'umə** “in the box”, **hoghəmə** “in the soil”, **tashtəmə** “in the basin”
- b) **g'eghi ne** “in the village”, **p'əji ne** “in the stove”, **aftoy ne** “in the car”, **d'izi ne** “in the stack”
- c) **jərin** “in the water”, **h'ərđin** “in the field”, **kolkhozin** “in the kolkhoz”, **qaghak'in** “in the city”, **kəjujnerin** “in the jugs”, **dəbrötsin** “in the school”
- d) **d'usən** “outside”, **qaghaqə** “in the city”, **g'eghən** “in the village”,
- e) **g'ərki mēch** “in the book”, **poyezi mēch'ə** “on the train”, **marqi mēch'** “in the barn”

In dialectal Armenian, the meaning of the locative case is expressed in various ways. Eastern dialects, with the exception of the Khoy-Maragha and Bayazet dialects, express the locative meaning with the locative case formed with the *um* ending (or its phonetic variants). In Western dialects, as well as the Khoy-Maragha and Bayazet dialects, the locative meaning is expressed by the structure "genitive case + the postposition *mej*" or by the accusative case. In some cases, the locative meaning is expressed by other means: by the dative case (Edessa, Hamshen, Maku, Artsap), by the preposition *i* and the accusative case (Kessab, Svedia), by the genitive case and the particle *ne* (Mush, Van, Diadin), etc.

In the Gegharkunik province, the locative case is used in the speeches of all settlements of the Chambarak region (Karabagh dialect, Gandzak inter-dialect) and villages in the Vardenis region inhabited by Artsakh Armenians (Karabagh dialect).

The locative meaning occurs with the accusative case or the "genitive case + *mej* postposition" structure in the speeches of the villages of Ddmashen, Zovaber, Varser, Lchashen, Chkalovka, and Norashen in the Sevan region (Maku subdialect); all settlements in the Gavar region (Bayazet dialect); all settlements in the Martuni region (Mush dialect); and the settlements of Akhpradzor, Lchavan, Lusakunk, Khachaghbyur, Tsovak, Karchaghbyur, Maqenis, Mets Masrik, Norakert (Mush dialect), Vardenis (Diadin dialect), and Akunk (mixed-type speech) in the Vardenis region.

In the settlements of Martuni, Vaghashen, Astghadzor, Zolakar, and Vardenik in the Martuni region (Mush dialect), as well as Karchaghbyur, Tsovak, and Lusakunk in the Vardenis region (Mush dialect), and the city of Vardenis (Diadin dialect), the locative meaning is also expressed by the "genitive case + *ne* particle" structure.

The meaning of the locative case is expressed by the dative case in the villages of Tsovaghyugh in the Sevan region (Artsap subdialect) and Tsaghkunk and Geghamavan (Maku dialect).

Thus, this isogloss is expressed in the dialectal units of the Gegharkunik province in four variants:

- a) expression of the locative case meaning by the corresponding inflectional form: in the speeches of the Karabagh dialect and the Gandzak inter-dialect;
- b) expression of the locative case meaning by the accusative case or the "genitive case + *mej* postposition" structure: in the speeches of the Mush, Bayazet, and Diadin dialects, most variants of the Maku subdialect, and the mixed-type Akunk speech;
- c) expression of the locative case meaning by the "genitive case + *ne* particle" structure: in some speeches of the Mush dialect and the Diadin dialect;
- d) expression of the locative case meaning by the dative case: in the Artsap subdialect and some variants of the Maku subdialect.

EXPRESSION OF THE MEANING OF
LOCATIVE CASE



ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԶՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

36. ՈՐՈՇԻՉ ՀՈԴԻ ԿԻՐԱՌՈՒԹՅԱՆ ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Նյութեր և մեկնաբանություններ

ա) **Մառթըն գ' ընաց** (ամուսինը գնաց). **Իմ խեր բ' էրե, տըվե իմ մօր** (իմ հայրը բերել, տվել է իմ մորը)

բ) **սաջին յըրա** (սաջի վրա), **մեծեն խօսկը** (մեծի խոսքը)

գ) **Ըրշակիցը** (Արշակից), **քըվօրիցը** (քրոջից), **հօղմը** (հողում), **հօղերմը** (հողերում), **հօրօվը** (հորով), **ախպօրօվը** (եղբորով)

Բարբառային հայերենում որոշիչ հոդի կիրառական յուրահատկությունները երկու կարգի են՝ ա) ըստ արտահայտության, բ) ըստ հոլովների հոդառության: Առաջին կարգի յուրահատկություն է ը հոդի բացակայությունը, որ հատուկ է Վանի բարբառին (այս բարբառում որոշիչ հոդ ստանում են միայն ձայնավորահանգ բառերը), ինչպես նաև հոդի գործածության սահմանափակումը որոշակի բառախմբերում կամ կառույցներում. օրինակ, Ագուլիսի, Համշենի, Մեղրու բարբառներում հատուկ անձնանուններն ու տեղանունները որոշիչ հոդ չեն ստանում, Մշո բարբառում առանց հոդի գործածվում են նախադասության տարբեր անդամներ և այլն: Որոշիչ հոդի կիրառության երկրորդ կարգի յուրահատկությունները դրսևորվում են հոլովական համակարգում: Այս դեպքում էական են երկու կարգի իրողություններ՝ ա) սեռական հոլովի՝ որոշիչ հոդ ստանալը, որ առավելաբար հատուկ է արևմտյան բարբառներին (բացառությամբ Մշո, Սասունի, Վանի, Դիաղինի, Տիգրանակերտի բարբառների) և արևելյաններից՝ Արդվինի, Ղարաբաղի, Հաղբուրթի, Ագուլիսի, Մեղրու բարբառներին, բ) բացառական, գործիական, ներգոյական հոլովների՝ որոշիչ հոդ ստանալը, որ հատուկ է Արարատյան, Նոր Զուղայի, Գանձակի բարբառների խոսվածքներին, մասամբ նաև՝ Ղարաբաղի բարբառին:

Գեղարքունիքի մարզում ը որոշիչ հոդ չունեն և չեն էլ սահմանափակումներով են կիրառում Մարտունու տարածաշրջանի բոլոր գյուղերի և Վարդենիսի տարածաշրջանի Կարճաղբյուր, Լճավան, Մաքենիս, Ախպրաձոր, Ծովակ, Լուսակունք, Խաչաղբյուր, Մեծ Մասրիկ, Նորակերտ գյուղերի խոսվածքները (Մշո բարբառ), Վարդենիս քաղաքի (Դիաղինի բարբառ) և Ակունք գյուղի (խառը տիպի) խոսվածքները:

Սեռական հոլովում որոշիչ հոդի գործածություն ունեն Ճամբարակի և Վարդենիսի տարածաշրջանների՝ արցախցիներով բնակեցված գյուղերի խոսվածքները: Ճամբարակի տարածաշրջանի Ճամբարակ, Գետիկ, Թթուջուր, Վահան բնակավայրերի խոսվածքները (Գանձակի միջբարբառ) բացառական, գործիական և ներգոյական հոլովներում ևս կարող են ստանալ որոշիչ հոդ, իսկ Ճամբարակի և Վարդենիսի

տարածաշրջանների՝ արցախցիներով բնակեցված գյուղերի խոսվածքներում որոշիչ հոդ կարող են ստանալ գործիական և ներգոյական հոլովները:

Զուգաբանությունը, այսպիսով, Գեղարքունիքի մարզի բարբառային միավորներում ունի հետևյալ դրսևորումները.

ա) ը որոշիչ հոդի բացակայություն, չ-ի գործածություն սահմանափակումներով. Մշո և Դիադինի բարբառների խոսվածքներ, Ակունքի խառը տիպի խոսվածք.

բ) սեռական հոլովում որոշիչ հոդի գործածություն. Ղարաբաղի բարբառի խոսվածքներ.

գ) բացառական, գործիական, ներգոյական հոլովներում որոշիչ հոդի գործածություն. Գանձակի միջբարբառի խոսվածքներ. գործիական, ներգոյական հոլովներում որոշիչ հոդի գործածություն. Ղարաբաղի բարբառի խոսվածքներ:

GRAMMATICAL ISOGLOSSES

36. PECULIARITIES OF DEFINITE ARTICLE USAGE

Materials and commentary:

- a) **Mart'əṇ g'ənat**s “the husband went”. **Im kher b'ere, t'əve im mor** “my father brought and gave to my mother”
- b) **sajin yəra** “on the saj”, **mets'en khosk'a** “the elder's word”
- c) **Ərshakits'ə** “from Arshak”, **k'əvorits'ə** “from the sister”, **hoghəmə** “in the soil”, **hogherəmə** “in the soils”, **horovə** “with the father”, **akhporovə** “with the brother”

In dialectal Armenian, the peculiarities of definite article usage are of two types: a) by expression and b) by article use in cases. A peculiarity of the first type is the absence of the *ə* article, which is characteristic of the Van dialect (in this dialect, only vowel-ending words receive the definite article), as well as the restriction of article usage to specific word groups or structures. For example, in the dialects of Agulis, Hamshen, and Meghri, proper names of people and places do not receive a definite article; in the Mush dialect, various parts of a sentence are used without an article, and so on.

The peculiarities of the second type of definite article usage appear in the case system. In this case, two types of phenomena are significant: a) the genitive case receiving a definite article, which is more characteristic of Western dialects (with the exception of the Mush, Sasun, Van, Diadin, and Tigranakert dialects) and, among Eastern dialects, the Ardivin, Karabagh, Hadrut, Agulis, and Meghri dialects, and b) the ablative, instrumental, and locative cases receiving a definite article, which is characteristic of the dialects of the Araratian, New Julfa, and Gandzak dialects, and partially the Karabagh dialect.

In the Gegharkunik province, the speeches of all villages in the Martuni region and the villages of Karchaghbyur, Lchavan, Maqenis, Akhpradzor, Tsovak, Lusakunk, Khachaghbyur, Mets Masrik, and Norakert in the Vardenis region (Mush dialect), as well as the city of Vardenis (Diadin dialect) and the village of Akunk (mixed-type speech), do not have the *ə* definite article and use *n* with restrictions.

The use of a definite article in the genitive case is present in the speeches of the villages in the Chambarak and Vardenis regions inhabited by Artsakh Armenians. The speeches of the settlements of Chambarak, Getik, Ttujur, and Vahan in the Chambarak region (Gandzak inter-dialect) can also receive a definite article in the ablative, instrumental, and locative cases, while in the dialects of the villages in the Chambarak and Vardenis regions inhabited by Artsakh Armenians, the instrumental and locative cases can receive a definite article.

Thus, this isogloss occurs in the dialectal units of the Gegharkunik province in the following ways:

- a) absence of the *ə* definite article, with restricted use of *n*: in the speeches of the Mush and Diadin dialects and the mixed-type Akunk speech;
- b) use of a definite article in the genitive case: in the speeches of the Karabagh dialect;

- c) use of a definite article in the ablative, instrumental, and locative cases: in the speeches of the Gandzak inter-dialect;
- d) use of a definite article in the instrumental and locative cases: in the speeches of the Karabagh dialect.

PECULIARITIES OF DEFINITE ARTICLE
USAGE



ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԶՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

37. ԱՆՈՐՈՇ ՀՈՂԻ ՀԵՏԱԴԱՍ ԿԻՐԱՌՈՒԹՅՈՒՆ

մի մարդ ~ մարդ մի

Նյութեր և մեկնաբանություններ

տունը (մի տուն), **կըղօր մե** (մի կտոր), **տախտագ մե** (մի տախտակ), **օր մի** (մի օր), **րօպե մե** (մի բոպե), **բ' աժագ մի** (մի բաժակ), **ճանգ մի** (մի բուռ)

Բարբառային հայերենում անորոշ հոդի հետադաս կիրառությունը բնորոշ է արևմտյան բոլոր բարբառներին՝ բացառությամբ Դիաղինի բարբառի: Արևելյան որևէ բարբառում անորոշ հոդը հետադաս կիրառություն չունի:

Գեղարքունիքի մարզում անորոշ հոդի հետադաս կիրառություն արձանագրվել է Մարտունու տարածաշրջանի Լիճք, Ծովասար, Վերին Գետաշեն, Ներքին Գետաշեն, Մաղինա, Վարդենիկ, մասամբ նաև՝ Ծակքար, Մարտունի, Վաղաշեն, Աստղաձոր, Ծովինար, Արծվանիստ բնակավայրերի խոսվածքներում (Մշո բարբառ): Վարդենիսի տարածաշրջանում անորոշ հոդի հետադաս կիրառություն դիտվել է միայն Նորակերտ գյուղի խոսվածքում (Մշո բարբառ):

Հատկանիշը, այսպիսով, Գեղարքունիքի մարզում դրսևորվում է Մշո բարբառի խոսվածքների մի մասում:

GRAMMATICAL ISOGLOSSES

37. POSTPOSED USE OF THE INDEFINITE ARTICLE

mi mard “a person” ~ **mard mi** “a person”

Materials and commentary:

tunəm “a house”, **kədor me** “a piece”, **takhtag me** “a board”, or **mi** “a day”, **rope me** “a minute”, **b'azhag mi** “a glass”, **chang mi** “a handful”

In dialectal Armenian, the postposed use of the indefinite article is characteristic of all Western dialects, with the exception of the Diadin dialect. In Eastern dialects, the indefinite article is never used postposed.

In the Gegharkunik province, the postposed use of the indefinite article has been recorded in the speeches of the settlements of Martuni region Lichk, Tsovasar, Verin Getashen, Nerkin Getashen, Madina, and Vardenik, and partially in the speeches of Tsakqar, Martuni, Vaghashen, Astghadzor, Tsovin'ar, and Artsvanist (Mush dialect). In the Vardenis region, the postposed use of the indefinite article has only been observed in the speech of the village of Norakert (Mush dialect).

Thus, this feature is expressed in the Gegharkunik province in a part of the speeches of the Mush dialect.

37. ԱՆՈՐՈՇ ՀՈԴԻ ՀԵՏԱԴԱՍ
ԿՐԻԱՌՈՒԹՅՈՒՆ
POSTPOSED USE OF THE INDEFINITE
ARTICLE



ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԶՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

38. ՍՏԱՑԱԿԱՆ ՀՈԴԻՑ ՀԵՏՈ Ի ՄԱՍՆԻԿԻ ԴՐՄԵՎՈՐՈՒՄ

ս>սի դ>դի//տի

Նյութեր և մեկնաբանություններ

մէրսի (մայրս), **մազերսի** (մազերս), **ձ'եռդի** (ձեռքդ), **ցավդի** (ցավդ), **հ'երէստի** (երեսդ), **գ'ըլօխտի** (զլուխդ)

Բարբառային հայերենում ստացական հոդից հետո *ի* ձայնավորական հենարան հանդես է գալիս Տիգրանակերտի և Մշո բարբառներում:

Գեղարքունիքի մարզում այս հատկանիշն արձանագրվել է Մարտունու տարածաշրջանի Երանոս, Վարդաձոր, Ձորագյուղ, Ծակքար, Լիճք, Ծովասար, Ներքին Գետաշեն, Վերին Գետաշեն, Մաղինա գյուղերի խոսվածքներում (Մշո բարբառ):

Հատկանիշը, այսպիսով, Գեղարքունիքի մարզում դրսևորվում է Մշո բարբառի խոսվածքների մի մասում:

GRAMMATICAL ISOGLOSSES

38. MANIFESTATION OF THE *i* PARTICLE AFTER THE POSSESSIVE ARTICLE

s > si d > di // ti

Materials and commentary:

mersi “my mother”, **mazersi** “my hairs”, **dz'erdi** “your hand”, **ts'avdi** “your pain”, **h'eresti** “your face”, **g'əlokhti** “your head”

In dialectal Armenian, the vocalic support *i* appears after the possessive article in the dialects of Tigranakert and Mush.

In the Gegharkunik province, this feature has been recorded in the speeches of the villages of Yeros, Vardadzor, Dzoragyugh, Tsakqar, Lichk, Tsovasar, Nerkin Getashen, Verin Getashen, and Madina in the Martuni region (Mush dialect).

Thus, this feature appears in the Gegharkunik province in a number of the speeches of the Mush dialect.

38. ՍՏԱՅԱԿԱՆ ՀՈԴԻՑ ՀԵՏՈ Ի
ՄԱՍՆԻԿԻ ԴՄԵՎՈՐՈՒՄ
MANIFESTATION OF THE I PARTICLE
AFTER THE POSSESSIVE ARTICLE



ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԶՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

39. ՍՏԱՑԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆ ՀԵՏԱԴԱՍ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐՈՎ

Նյութեր և մեկնաբանություններ

ա) **տղ մըզի** (մեր ոտքերը), **գ՛ըլօխ մըզի** (մեր գլուխները), **փեշ մըզի** (մեր փեշերը), **օղներ մըզի** (մեր ոտքերը), **թևը մե** (մեր թևերը), **թևը մեիին** (մեր թևերին), **ձ՛եռ մե** (մեր ձեռքերը), **ձ՛եռներ մե** (մեր ձեռքերը), **գ՛ըլօխ մե** (մեր գլուխները), **վըրնը մե** (մեզ վրա), **կըշտը մե** (մեզ մոտ), **դօշեր ձ՛ե** (ձեր կրծքերը)

բ) **գ՛ըլօխ ուրանծ** (իրենց գլուխները), **ձ՛եռ ուրանծ** (իրենց ձեռքերը), **թեվերն ուրանծ** (իրենց թևերը), **վըրեն ուրանց** (իրենց բոլորի վրա)

գ) **օղերու մեր** (մեր ոտքերի), **թեվ իւրըն** (իր թևերը)

Անձնական դերանվան տրական (երբեմն նաև՝ սեռական) հոլովաձևի հետադաս կիրառությամբ ստացականության արտահայտությունը բնորոշ է Մշո բարբառին և որևէ այլ բարբառում չի դիտվել:

Գեղարքունիքի մարզում այս հատկանիշն արձանագրվել է Գավառի տարածաշրջանի Նորատուս, Հայրավանք, Բերդկունք, Մարտունու տարածաշրջանի Վարդաձոր, Ձորագյուղ, Ծակքար, Լիճք, Ծովասար, Վերին Գետաշեն, Վաղաշեն, Վարդենիկ, Ծովինար և Վարդենիսի տարածաշրջանի Լճավան, Լուսակունք, Մաքենիս գյուղերի խոսվածքներում (Մշո բարբառ): Ծովինար գյուղի խոսվածքում (Մշո բարբառ) արձանագրվել է հոգնակի ստացականության արտահայտություն նաև հետադաս գոյականի տրականով՝ *գ՛ըլօխ օխճըրին* (ոչխարների գլուխները):

Հատկանիշը, այսպիսով, Գեղարքունիքի մարզում դրսևորվում է Մշո բարբառի խոսվածքների մի մասում:

GRAMMATICAL ISOGLOSSES

39. EXPRESSION OF POSSESSION WITH POSTPOSED PRONOUNS

mer votnerə > vod məzi “our feet”

Materials and commentary:

a) **wod məzi** “our feet”, **odner məzi** “our feet”, **g'əlokh məzi** “our heads”, **p'esh məzi** “our tails”, **t'evə me** “our wings”, **t'evə meyin** “to our wings”, **dz'er' me** “our hands”, **dz'er'ner me** “our hands”, **g'əlokh me** “our heads”, **vərnə me** “on us”, **kəstə me** “near us”, **doshər dz'e** “your chests”

b) **g'əlokh urants** “their heads”, **dz'er' urants** “their hands”, **t'evern urants** “their wings”, **vər'en urants** “on all of them”

c) **oderu mer** “of our feet”, **t'ev yurən** “his/her wings”

The expression of possession by using the dative /sometimes also genitive/ case form of a personal pronoun in a postposed position is characteristic of the Mush dialect and has not been observed in any other dialect.

In the Gegharkunik province, this feature has been recorded in the speeches of the villages of Noratus, Hayravank, Berdkunq in the Gavar region (Bayazet dialect), Vardadzor, Dzoragyugh, Tsakqar, Lichk, Tsovasar, Verin Getashen, Vaghashen, Vardenik, and Tsovinar in the Martuni region, and Lchavan, Lusakunk, and Maqenis in the Vardenis region (Mush dialect). In the speech of the village of Tsovinar (Mush dialect), the expression of plural possession has also been recorded with a postposed noun in the dative case: *g'əlokh okhchərin* “the heads of the sheep”.

Thus, this feature occurs in the Gegharkunik province in a number of the speeches of the Mush dialect.

39. ՄՍԱՑԱԿԱՆՈՒԹՅԱՆ
ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆ ՀԵՏԱԴԱՍ
ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐՈՎ
EXPRESSION OF POSSESSION WITH
POSTPOSED PRONOUNS



ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԶՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

40. ԱՆՁՆԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ ՏՐԱԿԱՆ ՀՈԼՈՎՈՒՄ Ի // ԻԿ ՄԱՍՆԻԿԻ ԱՌԿԱՅՈՒԹՅՈՒՆ

+ ի/իկ

Նյութեր և մեկնաբանություններ

ա) ընձի, քեզի, մեզի, ձ'եզի

բ) ընձիկ, քեզիկ, մեզիկ, ձ'եզիկ // ընձիգ, քրզիգ, մըզիգ, ձ'ըզիգ

Առաջին և երկրորդ դեմքերի անձնական դերանունների տրական հոլովում */ի* (*/իկ*) մասնիկի առկայությունը բնորոշ է արևմտյան շատ բարբառների (Մուշ, Մասուն, Կարին, Վան, Համշեն, Եդեսիա, Եվդոկիա, Երզնկա, Արաբկիր, Խարբերդ, Սեֆաստիա, Դիադին ևլն): Արևելյան բարբառներից այս հատկանիշն ունեն Բայազետի, Խոյի, Շամախիի, Արծափի, Մակուի բարբառային միավորները:

Գեղարքունիքի մարզում հատկանիշը այս կամ այն կերպ դրսևորվում է Սևանի (Մակուի և Արծափի խոսվածքներ), Գավառի (Բայազետի բարբառ), Մարտունու (Մշո բարբառ) տարածաշրջանների բոլոր բնակավայրերի խոսվածքներում, Վարդենիսի տարածաշրջանի Կարճաղբյուր, Լճավան, Մաքենիս, Ախպրաձոր, Ծովակ, Լուսակունք, Խաչաղբյուր, Մեծ Մասրիկ, Նորակերտ (Մշո բարբառ), Վարդենիս (Դիադինի բարբառ), Ակունք (խառը տիպի խոսվածք) բնակավայրերի խոսվածքներում: Խոսվածքների մեծ մասում դրսևորվում է միայն */ի* մասնիկը: Ակունքի (խառը տիպի խոսվածք), Լճաշենի, Գեղամավանի (Մակուի խոսվածք), Լուսակունքի, Լիճքի, Ծովասարի, Ձորագյուղի, Ներքին Գետաշենի, Վերին Գետաշենի (Մշո բարբառ), Սարուխանի (Բայազետի բարբառ), Վարդենիսի (Դիադինի բարբառ) խոսվածքներում հանդես է գալիս նաև */իկ* // */իգ* մասնիկը:

Հատկանիշը, այսպիսով, Գեղարքունիքի մարզում դրսևորվում է Բայազետի, Մշո, Դիադինի բարբառների խոսվածքներում, Արծափի և Մակուի խոսվածքների տարբերակներում, Ակունքի խառը տիպի խոսվածքում:

GRAMMATICAL ISOGLOSSES

40. PRESENCE OF THE *i* // *ik* PARTICLE IN THE DATIVE CASE OF PERSONAL PRONOUNS

+ *i* // *ik*

Materials and commentary:

a) *əndzi, q'ezi, mezi, dz'ezi* “me, you, us, you”

b) *əndzik, q'ezik, mezik, dz'ezik* // *ənzig, qəzig, məzig, dzəzig*

The presence of the *i* / *ik* particle in the dative case of first and second-person personal pronouns is characteristic of many Western dialects (Mush, Sasun, Karin, Van, Hamshen, Edessa, Evdokia, Erzinkan, Arabkir, Kharberd, Sebastia, Diadin, etc.). Among Eastern dialects, this feature is found in the Bayazet, Khoy, Shamakhi, Artsap, and Maku dialectal units.

In the Gegharkunik province, this feature is expressed in one way or another in the speeches of all settlements in the Sevan (Maku and Artsap subdialects), Gavar (Bayazet dialect), and Martuni (Mush dialect) regions, as well as in the speeches of the settlements of Karchaghbyur, Lchavan, Maqenis, Akhpradzor, Tsovak, Lusakunk, Khachaghbyur, Mets Masrik, Norakert (Mush dialect), Vardenis (Diadin dialect), and Akunk (mixed-type speech) in the Vardenis region. In most speeches, only the *i* particle is added. In the speeches of Akunk (mixed-type speech), Lchashen, Geghamavan (Maku subdialect), Lusakunk, Lichk, Tsovasar, Dzoragyugh, Nerkin Getashen, Verin Getashen (Mush dialect), Sarukhan (Bayazet dialect), and Vardenis (Diadin dialect), the *ik* // *ig* particle also appears.

Thus, this feature exists in the Gegharkunik province in the speeches of the Bayazet, Mush, and Diadin dialects, in variants of the Artsap and Maku subdialects, and in the mixed-type Akunk speech.



ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՁՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

41. ԱՆՁՆԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ԵՎ ԵՐԿՐՈՐԴ ԴԵՍՔԵՐԻ ՏՐԱԿԱՆ ՀՈԼՈՎՈՒՄ ԿՐՃԱՏ ՁԵՎԵՐԻ ԱՌԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Նյութեր և մեկնաբանություններ

ա) **քե** // **քէ** (> քեզ)

բ) **քե, մե, ձ'ե** (>քեզ, մեզ, ձեզ)

Բարբառային հայերենում անձնական դերանունների տրական հոլովում կրճատ ձևեր արձանագրվել են երկու տարբերակով (հնչյունական համապատասխան ձևերով). ա) *քեզ, մեզ, ձեզ* ձևերի փոխարեն՝ *քե, մե, ձե* (Վան, Սվեդիա, Քեսաբ, Հաջըն կլն), բ) միայն *քեզ* տրականի կրճատ ձևի առկայություն՝ *քե* (Ղարաբաղ, Ագուլիս, Նոր Ջուղա, Մեղրի, Կարճևան, Ալաշկերտ, Արծափ կլն):

Գեղարքունիքի մարզում *քե, մե, ձ'ե* կրճատ ձևեր ունեն Գավառի տարածաշրջանի Սարուխան, Լանջաղբյուր, Ծաղկաշեն (Բայազետի բարբառ), Մարտունու տարածաշրջանի Մարտունի, Վաղաշեն, Ջուլաքար, Վարդենիկ, Ծովինար, նաև Վարդենիսի տարածաշրջանի Մաքենիս (Մշո բարբառ), Ակունք (խառը տիպի խոսվածք), Վարդենիս (Դիաղինի բարբառ) բնակավայրերի խոսվածքները:

Ավելի տարածված է միայն *քե* կրճատ տարբերակը, որն արձանագրվել է Սևանի տարածաշրջանի Լճաշեն (Մակուի խոսվածք), Գավառի տարածաշրջանի Բերդկունք, Հայրավանք, Գավառ, Հացառատ, Արծվաքար, Գանձակ, Կարմիրգյուղ, Գեղարքունիք բնակավայրերի խոսվածքներում (Բայազետի բարբառ), Մարտունու տարածաշրջանի Գեղհովիտ, Աստղածոր, Արծվանիստ, նաև Վարդենիսի տարածաշրջանի Կարճաղբյուր, Ախպրածոր, Լուսակունք, Նորակերտ գյուղերի խոսվածքներում (Մշո բարբառ): Ճամբարակի տարածաշրջանի բնակավայրերի (Ղարաբաղի բարբառ, Գանձակի միջբարբառ) և Վարդենիսի տարածաշրջանի՝ արցախցիներով բնակեցված գյուղերի խոսվածքներում դրսևորվում է *քէ* կրճատ տարբերակը:

Ձուգաբանությունը, այսպիսով, Գեղարքունիքի մարզի բարբառային միավորներում ունի հետևյալ դրսևորումները.

ա) *քե, մե, ձ'ե* կրճատ ձևերի առկայություն. Բայազետի, Մշո բարբառների առանձին խոսվածքներ, Դիաղինի բարբառի, Ակունքի խառը տիպի խոսվածքներ.

բ) միայն *քե* կրճատ ձևի առկայություն. Ղարաբաղի բարբառի, Գանձակի միջբարբառի խոսվածքներ, Բայազետի, Մշո բարբառների մի շարք խոսվածքներ, Մակուի խոսվածքի մեկ տարբերակ:

GRAMMATICAL ISOGLOSSES

41. PRESENCE OF SHORTENED FORMS OF FIRST AND SECOND-PERSON PERSONAL PRONOUNS IN THE DATIVE CASE

$k'e // k'ē < k'ez$ “you”

$k'e, me, dz'e < kez, mez, dzez$ “you, us, you”

Materials and commentary:

In dialectal Armenian, shortened forms of personal pronouns in the dative case have been recorded in two variants (with corresponding phonetic forms): a) *k'e, me, dz'e* instead of the forms *k'ez, mez, dzez* (Van, Svedia, Kessab, Hadjin, etc.), b) the presence of only the shortened form of the dative *k'ez*, which is *k'e* (Karabagh, Agulis, New Julfa, Meghri, Karchvan, Alashkert, Artsap, etc.).

In the Gegharkunik province, the shortened forms *k'e, me, dz'e* are found in the speeches of the settlements of Sarukhan, Lanjaghbyur, and Tsaghkashen in the Gavar region (Bayazet dialect); Martuni, Vaghashen, Zolaqar, Vardenik, and Tsovinar in the Martuni region; and Makenis (Mush dialect), Akunk (mixed-type speech), and Vardenis (Diadin dialect) in the Vardenis region.

The shortened variant *k'e* is more widespread and has been recorded in the speeches of Lchashen in the Sevan region (Maku subdialect); Berdkunk, Hayravank, Gavar, Hatsarat, Artsvakar, Gandzak, Karmirgyugh, and Gegharkunik in the Gavar region (Bayazet dialect); Geghhovit, Astghadzor, and Artsvanist in the Martuni region; and Karchaghbyur, Akhpradzor, Lusakunk, and Norakert in the Vardenis region (Mush dialect). In the speeches of the settlements in the Chambarak region (Karabagh dialect, Gandzak inter-dialect) and the villages in the Vardenis region inhabited by Artsakh Armenians, the shortened variant *k'ē* exists.

Thus, this isogloss is used in the dialectal units of the Gegharkunik province in the following ways:

- a) presence of the shortened forms *k'e, me, dz'e*: in some speeches of the Bayazet and Mush dialects, and in the speeches of the Diadin dialect and the mixed-type Akunk speech;
- b) presence of only the shortened form *k'e*: in the speeches of the Karabagh dialect and the Gandzak inter-dialect, a number of speeches of the Bayazet and Mush dialects, and one variant of the Maku subdialect.

41. ԱՆՁՆԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ
ԱՌԱՋԻՆ ԵՎ ԵՐԿՐՈՐԴ ԴԵՄՔԵՐԻ
ՏՐԱԿԱՆ ՀՈԼՈՎՈՒՄ ԿՐՃԱՍ ԶԵՎԵՐԻ
ԱՌԿԱՅՈՒԹՅՈՒՆ

PRESENCE OF SHORTENED FORMS OF
FIRST AND SECOND- PERSON PERSONAL
PRONOUNS IN THE DATIVE CASE

- Քեզ դերանվան *քե* կրճատ ձևի առկայություն.
- Քեզ, մեզ, ձեզ դերանունների *քե*, *մե*, *ձե* կրճատ ձևերի առկայություն
- The presence of the shortened form *k'ez* of the personal pronoun *k'ez*
- The presence of the shortened forms *k'ez*, *mez*, *dzez* of the personal pronouns *k'ez*, *mez*, *dzez*



ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՁՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

42. ՑՈՒՑԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ ՑՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

u, η, ն > η, ն // u, ն

ը>հ

Նյութեր և մեկնաբանություններ

ա) էս, էն, էսի, էնի

բ) էդ, էն, էդի, էնի, իդա, ինա

գ) սըհանք (սրանք), տըհանք (դրանք), նըհանք (նրանք), տըհանց (դրանց), սըհանցով (սրանցով)

Հայերենի բարբառային որոշ միավորներում եռանդամ ցուցական դերանունների համակարգում բացակայում է շարքի անդամներից մեկը: Որոշ դեպքերում բացակայում են *u*-ով ձևերը (*էս*, *էսի* ևլն), այլ դեպքերում՝ *η*-ով ձևերը (*էդ*, *էդի* ևլն): *U*-ով ցուցական դերանուններ չունեն Մշո, Շատախի, Մոկսի, Խոյ-Մարաղայի և այլ բարբառային միավորների խոսվածքներ: Դ կազմիչով ցուցական դերանուններ չունեն Տիգրանակերտի բարբառի խոսվածքները:

Գեղարքունիքի մարզում ցուցական դերանունների՝ *u* կազմիչով ձևեր չունեն Մարտունու տարածաշրջանի Լիճք, Ձորագյուղ, Վերին Գետաշեն, Մադինա բնակավայրերի խոսվածքները (Մշո բարբառ):

Դ կազմիչով ցուցական դերանուններ չեն արձանագրվել Վարդենիսի տարածաշրջանի Ախպրաձորի խոսվածքում (Մշո բարբառ):

Առանձին դեպքերում ցուցական դերանունները հանդես են բերում հնչյունական յուրահատկություններ, մասնավորապես՝ մի շարք բարբառային միավորներում հոգնակի թվի ձևերում *ը*-ի փոխարեն հանդիպում է *հ*: Այդ հատկանիշը դիտվել է Ղարաբաղի բարբառում, Գանձակի միջբարբառում, Լոռու խոսվածքում:

Գեղարքունիքի մարզում այս հատկանիշն ունեն Ճամբարակի տարածաշրջանի բնակավայրերի խոսվածքները (Ղարաբաղի բարբառ և Գանձակի միջբարբառ), Վարդենիսի տարածաշրջանի՝ արցախցիներով բնակեցված գյուղերի խոսվածքները:

Ձուգաբանությունը, այսպիսով, Գեղարքունիքի մարզի բարբառային միավորներում ունի հետևյալ դրսևորումները.

ա) ցուցական դերանունների՝ *u* կազմիչով ձևերի բացակայություն. Մշո բարբառի առանձին խոսվածքներ.

բ) ցուցական դերանունների՝ n կազմիչով ձևերի բացակայություն. Մշո բարբառի մեկ խոսվածք.

գ) ցուցական դերանունների հոգնակի թվի ձևերում n -ի փոխարեն h . Ղարաբաղի բարբառ, Գանձակի միջբարբառ:

GRAMMATICAL ISOGLOSSES

42. PECULIARITIES OF DEMONSTRATIVE PRONOUN EXPRESSION

s, d, n > d, n // s, n
r > h

Materials and commentary:

- a) **ēs, ēn, ēsi, ēni** (this, that)
- b) **ēd, ēn, ēdi, ēni, ida, ina** (that, that)
- c) **səhänk'** “these”, **təhänk'** “those”, **nəhänk'** “those”, **təhänts'** “of those”, **səhänts'ov** “with these”

In some dialectal units of Armenian, the three-member system of demonstrative pronouns is missing one of its members. In some cases, the forms with *s* (*ēs*, *ēsi*, etc.) are missing, while in other cases, the forms with *d* (*ēd*, *ēdi*, etc.) are missing. The dialects of Mush, Shatakh, Moks, Khoy-Maragha, and other dialectal units do not have demonstrative pronouns with *s*. The speeches of the Tigranakert dialect do not have demonstrative pronouns with the *d* component.

In the Gegharkunik province, the speeches of the settlements of Lichk, Dzoragyugh, Verin Getashen, and Madina in the Martuni region (Mush dialect) do not have demonstrative pronouns with the *s* component.

Demonstrative pronouns with the *d* component have not been recorded in the speech of Akhpradzor in the Vardenis region (Mush dialect).

In some cases, demonstrative pronouns have phonetic peculiarities. Specifically, in a number of dialectal units, *r* is replaced by *h* in the plural forms. This feature has been observed in the Karabagh dialect, the Gandzak inter-dialect, and the Lori subdialect.

In the Gegharkunik province, this feature is present in the speeches of the settlements in the Chambarak region (Karabagh dialect and Gandzak inter-dialect) and the villages in the Vardenis region inhabited by Artsakh Armenians.

Thus, this isogloss is recorded in the dialectal units of the Gegharkunik province in the following ways:

- a) absence of demonstrative pronoun forms with the *s* component: in some speeches of the Mush dialect;
- b) absence of demonstrative pronoun forms with the *d* component: in one speech of the Mush dialect;
- c) *h* instead of *r* in the plural forms of demonstrative pronouns: in the speeches of the Karabagh dialect and the Gandzak inter-dialect.

42. ՅՈՒՑԱԿԱՆ ԴԵՐԱՆՈՒՆՆԵՐԻ
ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅԱՆ
ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

PECULIARITIES OF DEMONSTRATIVE
PRONOUN EXPRESSION



ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԶՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

43. ՈՎ ԴԵՐԱՆՎԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆԸ

ով > վոն // տն // վորը // օվ // վով // վնն // հու

Նյութեր և մեկնաբանություններ

Բարբառներում *ով* // *ո* դերանունը դրսևորվում է հնչյունական մի շարք տարբերակներով.

օվ (Արարատյան, Գանձակ), *վօվ* (Եղեսիա, Խարբերդ), *վով* (Վան, Կարս), *վել* (Կարին), *վել* (Համշեն, Շապին-Գարահիսար), *վըվ* (Սասուն), *վնն* (Խոյ, Շատախ), *հու* (Ղարաբաղ), *ուվ* (Ագուլիս, Սասուն), *իվ* (Բեյլան), *վոն* (Մուշ) և այլն: Այդ դերանվան իմաստով գործածվում է նաև *վորը* բառը (Բայազետ, Դիադին) և այլն:

Գեղարքունիքի մարզում արձանագրվել են հետևյալ տարբերակները.

վոն - Սևանի տարածաշրջանի Լճաշեն (Մակուի խոսվածք), Գավառի տարածաշրջանի Ծովագարդ, Լճափ, Հացառատ, Գանձակ, Ծաղկաշեն, Գեղարքունիք (Բայազետի բարբառ), Մարտունու տարածաշրջանի Գեղհովիտ, Մադինա, Աստղաձոր, Զուլաքար, Արծվանիստ, Վարդենիսի տարածաշրջանի Կարճաղբյուր, Լճավան, Ախպրաձոր, Ծովակ, Լուսակունք (Մշո բարբառ), Վարդենիս (Դիադինի բարբառ), Ակունք (խառը տիպի խոսվածք) բնակավայրերի խոսվածքներ.

տն - Մարտունու տարածաշրջանի Երանոս, Վարդաձոր, Զորագյուղ, Ծաղկունք, Լիճք, Ծովասար, Վերին Գետաշեն, Ներքին Գետաշեն, Մարտունի, Վաղաշեն, Վարդենիկ, Ծովինար (Մշո բարբառ) բնակավայրերի խոսվածքներ.

վորը - Սևանի տարածաշրջանի Ծովագյուղ (Արծափի խոսվածք), Դոմաշեն, Գեղամավան, Վարսեր, Զկալովկա (Մակուի խոսվածք), Գավառի տարածաշրջանի Բերդկունք, Հայրավանք, Նորատուս, Արծվաքար, Կարմիրգյուղ, Սարուխան, Լանջաղբյուր (Բայազետի բարբառ) գյուղերի խոսվածքներ.

օվ - Սևանի տարածաշրջանի Ծաղկունք, Նորաշեն (Մակուի խոսվածք), Ճամբարակի տարածաշրջանի Ճամբարակ, Վահան, Գետիկ, Թթուջուր (Գանձակի միջբարբառ), Վարդենիսի տարածաշրջանի Նորակերտ (Մշո բարբառ) բնակավայրերի խոսվածքներ.

վով - Վարդենիսի տարածաշրջանի Մեծ Մասրիկ գյուղի խոսվածք (Մշո բարբառ). *վնն* - Վարդենիսի տարածաշրջանի Մաքենիս և Խաչաղբյուր գյուղեր (Մշո բարբառ).

հու - Ճամբարակի և Վարդենիսի տարածաշրջանների՝ արցախցիներով բնակեցված բնակավայրեր:

Առանձին դեպքերում նույն բնակավայրում զուգահեռաբար գործածական են երկու տարբերակներ: Այսպես, Սևանի տարածաշրջանի Զովաբեր գյուղում (Մակուի խոսվածք) հանդիպում են *վորը* և *վով* տարբերակները, Գավառ քաղաքում (Բայազետի բարբառ)՝ *վոն* և *վորը* տարբերակները:

Զուգաբանությունը, այսպիսով, Գեղարքունիքի մարզի բարբառային միավորներում ունի հետևյալ դրսևորումները.

ա) *վոն*. Մշո, Բայազետի բարբառների որոշ խոսվածքներ, Դիաղինի բարբառի խոսվածք, Ակունքի խառը տիպի խոսվածք, Մակուի խոսվածքի մեկ տարբերակ.

բ) *ւոն*. Մշո բարբառի մի շարք խոսվածքներ.

գ) *վւն*. Մշո բարբառի երկու խոսվածք.

դ) *հու*. Ղարաբաղի բարբառի խոսվածքներ.

ե) *ով*. Գանձակի բարբառի խոսվածքներ, Մակուի խոսվածքի, Մշո բարբառի առանձին տարբերակներ.

զ) *վով*. Մշո բարբառի մեկ խոսվածք.

է) *վորը*. Բայազետի բարբառի, Մակուի խոսվածքի մի շարք տարբերակներ, Արծափի խոսվածք:

GRAMMATICAL ISOGLOSSES

43. EXPRESSION OF THE PRONOUN OV (WHO)

ov > von // won // vorə // ov // vov // vān // hu

Materials and commentary:

In dialects, the pronoun *ov* // *o* occurs with a number of phonetic variants:

ov (Ararat, Gandzak), *vōv* (Edessa, Kharberd), *vov* (Van, Kars), *vev* (Karin), *vēv* (Hamshen, Shabin-Karahisar), *vəv* (Sasun), *vāv* (Khoy, Shatakh), *hu* (Karabagh), *uv* (Agulis), *iv* (Beylan), *von* (Mush). The word *vorə* (Bayazet, Diadin) is also used with the meaning of this pronoun.

In the Gegharkunik province, the following variants have been recorded:

von - in the speeches of Lchashen in the Sevan region (Maku subdialect), Tsovazard, Lchap, Hatsarat, Gandzak, Tsaghkashen, Gegharkunik in the Gavar region (Bayazet dialect), Geghhovit, Madina, Astghadzor, Zolaqar, Artsvanist in the Martuni region, Karchaghbyur, Lchavan, Akhpradzor, Tsovak, Lusakunk in the Vardenis region (Mush dialect), Vardenis (Diadin dialect), and Akunk (mixed-type speech).

won - in the speeches of Yeranos, Vardadzor, Dzoragyugh, Tsaghkunk, Lichk, Tsovasar, Verin Getashen, Nerkin Getashen, Martuni, Vaghashen, Vardenik, and Tsovinar in the Martuni region (Mush dialect).

vorə - in the speeches of Tsovaghyugh in the Sevan region (Artsap subdialect), Ddmashen, Geghamavan, Varser, Chkalovka (Maku subdialect), Berdkunk, Hayravank, Noratus, Artsvakar, Karmirgyugh, Sarukhan, and Lanjaghbyur in the Gavar region (Bayazet dialect).

ov - in the speeches of Tsaghkunk, Norashen in the Sevan region (Maku subdialect), Chambarak, Vahan, Getik, and Ttujur in the Chambarak region (Gandzak inter-dialect), and Norakert in the Vardenis region (Mush dialect).

vov - in the speech of the village of Mets Masrik in the Vardenis region (Mush dialect).

vān - in the speeches of the villages of Maqenis and Khachaghbyur in the Vardenis region (Mush dialect).

hu - in the speeches of the settlements of the Chambarak and Vardenis regions inhabited by Artsakh Armenians.

In some cases, two variants are used in parallel in the same settlement. For example, in the village of Zovaber in the Sevan region (Maku dialect), the variants *vorə* and *vov* are found, and in the city of Gavar (Bayazet dialect), the variants *von* and *vorə* are found.

Thus, this isogloss exists in the dialectal units of the Gegharkunik province in the following ways:


- a) *von*: some speeches of the Mush and Bayazet dialects, the Diadin dialect, the mixed-type Akunk speech, and one variant of the Maku subdialect;
- b) *won*: a number of speeches of the Mush dialect;
- c) *vən*: two speeches of the Mush dialect;
- d) *hu*: the speeches of the Karabagh dialect;
- e) *ov*: the speeches of the Gandzak dialect, and some variants of the Maku speech and Mush dialect;
- f) *vov*: one speech of the Mush dialect;
- g) *vorə*: a number of variants of the Bayazet dialect and the Maku speech, and the Artsap speech.

43. ՈՎ ԴԵՐԱՆՎԱՆ
ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆԸ

EXPRESSION OF THE PRONOUN *ov*
"WHO"

ՈՎ դերանվան դրսևորման ձևեր
Forms of expression of the pronoun *ov* "who":

- վոն von
- տոն won
- վորը vorə
- օվ ov
- վով vov
- վան vān
- հմ hu



ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԶՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

44. ԷԼ ՇԱՂԿԱՊԻ ՓՈԽԱՐԵՆ՝ ԼԷ

ԷԼ > ԼԷ

Նյութեր և մեկնաբանություններ

Բարբառային հայերենում ԷԼ (<այլ) շաղկապի փոխարեն լՀ տարբերակ ունեն Մշո, Սասնո, Տիգրանակերտի բարբառները: Այս տարբերակը գործածվում է միայն հետադաս:

Գեղարքունիքի մարզում ԷԼ շաղկապի լՀ տարբերակ արձանագրվել է Մարտունու տարածաշրջանի Երանոս, Վարդաձոր, Ձորագյուղ, Ծակքար, Լիճք, Ծովասար, Ներքին Գետաշեն, Վերին Գետաշեն, Մաղինա, Ծովինար գյուղերի խոսվածքներում, Վարդենիսի տարածաշրջանի Լճավան և Նորակերտ գյուղերի խոսվածքներում (Մշո բարբառ):

Հատկանիշը, այսպիսով, Գեղարքունիքի մարզում դրսևորվում է Մշո բարբառի մի շարք խոսվածքներում:

GRAMMATICAL ISOGLOSSES

44. *LĒ* IN PLACE OF THE CONJUNCTION *ĒL* “ALSO”

ēl > *lē*

Materials and commentary:

In dialectal Armenian, the *lē* variant is used instead of the conjunction *ēl* “also” in the Mush, Sasun, and Tigranakert dialects. This variant is only used postposed.

In the Gegharkunik province, the *lē* variant of the conjunction *ēl* has been recorded in the speeches of the villages of Yeranos, Vardadzor, Dzoragyugh, Tsakqar, Lichk, Tsovasar, Nerkin Getashen, Verin Getashen, Madina, and Tsovinar in the Martuni region, as well as the villages of Lchavan and Norakert in the Vardenis region (Mush dialect).

Thus, this feature appears in the Gegharkunik province in a number of speeches of the Mush dialect.

44. ԷԼ ՇԱՂԿԱՊԻ ՓՈԽԱՐԵՆ ԼԷ
LĒ IN PLACE OF THE CONJUNCTION ĒL
“ALSO”



ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԶՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

45. ՀԵՏԱԴՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆԱԽԱԴԱՍ ԳՈՐԾԱԾՈՒԹՅՈՒՆ

սեղանի վրեն – վրր սեղնին

Նյութեր և մեկնաբանություններ

հըդ իրար, հեդ ուրանծ, հըդ հօր, մըճ քախկին, մըճ ջ'ըրին, վըր ընձի, վըր ձ'ե, վըր գ'ըլխուն, վըր ճանպուն

Արդի գրական լեզուների հետադաս կապերի (հետադրությունների) համապատասխան ձևերի նախադաս գործածություն է առկա Մշո, Վանի, Տալվորիկ-Մոտկանի բարբառներում:

Գեղարքունիքի մարզում հիշյալ կապերի նախադաս կիրառություն է արձանագրվել Մարտունու տարածաշրջանի Վարդաձոր, Ձորագյուղ, Լիճք, Վաղաշեն, Վարդենիկ և Վարդենիսի տարածաշրջանի Ծովակ գյուղերի խոսվածքներում (Մշո բարբառ):

Հատկանիշը, այսպիսով, Գեղարքունիքի մարզում դրսևորվում է Մշո բարբառի սակավաթիվ խոսվածքներում:

GRAMMATICAL ISOGLOSSES

45. PREPOSED USE OF POSTPOSITIONS

seghani vøren - vər seghnin “on the table”

Materials and commentary:

həd irar “with each other”, hed urants “with them”, həd hor “with the father”, məch qakhkin “in the city”, məch j'ərin “in the water”, vər əndzi “on me”, vər dz'e “on you”, vər g'əlkhun “on the head”, vər chanpun “on the road”

The preposed use of forms corresponding to the postpositions of modern literary languages is present in the Mush, Van, and T'alvorik-Motkan dialects.

In the Gegharkunik province, the preposed use of the mentioned postpositions has been recorded in the speeches of the villages of Vardadzor, Dzoragyugh, Lichk, Vaghashen, and Vardenik in the Martuni region and the village of Tsovak in the Vardenis region (Mush dialect).

Thus, this feature exists in the Gegharkunik province in a small number of speeches of the Mush dialect.



ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՁՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

46. ԲԱՅԻ ԼԾՈՐԴԱԿԱՆ ՇԱՐՔԵՐԻ ՅՈՒՐԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ա) ալ, էլ/ել բ) ալ, իլ գ) ալ, էլ, իլ դ) ալ, էլ/ել (իմ)

Նյութեր և մեկնաբանություններ

Հայերենի բարբառային միավորները անորոշ դերբայի կազմության մեջ զանազանություններ են հանդես բերում ըստ լծորդական շարքերի: Մասնավորապես, շատ բարբառներ անորոշ դերբայը կազմում են *ալ, էլ, իլ* մասնիկներով (Ղարաբաղ, Հադրութ, Մեղրի, Պոլիս, Կարին ևլն): Այդ դերբայը *էլ, ալ* մասնիկներով են կազմում Ջուղայի, Արդվինի, Ուրմիայի բարբառային միավորները, *իլ, ալ* մասնիկներով՝ Թբիլիսիի, Սասնո բարբառները, *էլ, ալ, իլ, ուլ* մասնիկներով՝ Նոր Նախիջևանի, Կարճևանի բարբառները, իսկ Համշենի բարբառում անորոշ դերբայը ձևավորվում է *ուլ* մասնիկով:

Գեղարքունիքի մարզում անորոշ դերբայը *էլ/ել* և *ալ* վերջավորություններ ունի Սևանի տարածաշրջանի՝ Մակուի խոսվածքով հաղորդակցվող բոլոր և Գավառի տարածաշրջանի բոլոր (Բայազետի բարբառ), Վարդենիսի տարածաշրջանի Ակունք (խառը տիպի խոսվածք) և Վարդենիս (Դիադինի բարբառ) բնակավայրերի խոսվածքներում:

Վարդենիսի և Ճամբարակի՝ արցախցիներով բնակեցված բոլոր բնակավայրերի խոսվածքներում (Ղարաբաղի բարբառ) անորոշ դերբայն ունի *ալ, էլ, իլ* վերջավորություններ:

Բայը *ալ, իլ* լծորդություններ ունի Ճամբարակի տարածաշրջանի Գետիկ, Թթուջուր, Ճամբարակ, Վահան բնակավայրերի խոսվածքներում (Գանձակի միջբարբառ):

Մարտունու տարածաշրջանի բոլոր բնակավայրերի (Մշո բարբառ), Վարդենիսի տարածաշրջանի Ախպրաձոր, Խաչաղբյուր, Մեծ Մասրիկ, Նորակերտ, Կարճաղբյուր, Լճավան, Մաքենիս, Ծովակ, Լուսակունք (Մշո բարբառ), Սևանի տարածաշրջանի Ծովագյուղ (Արծափի խոսվածք) բնակավայրերի խոսվածքներում անորոշ դերբայն ունի *ալ, էլ* վերջավորություններ, բայց խոնարհման ժամանակ դրսևորվում է նաև *ի* խոնարհիչը:

Զուգաբանությունը, այսպիսով, Գեղարքունիքի մարզի բարբառային միավորներում դրսևորվում է հետևյալ տարբերակներով.

ա) անորոշ դերբայի *էլ/ել* և *ալ* վերջավորություններ. Բայազետի և Դիադինի բարբառների խոսվածքներ, Մակուի խոսվածքի տարբերակներ, Ակունքի խառը տիպի խոսվածք.

բ) անորոշ դերբայի *ալ, էլ, իլ* վերջավորություններ. Ղարաբաղի բարբառի խոսվածքներ.

գ) անորոշ դերբայի *ալ, իլ* վերջավորություններ. Գանձակի միջբարբառի խոսվածքներ.

դ) անորոշ դերբայի *ել* և *ալ* վերջավորություններ՝ խոնարհման հարացույցում նաև */* խոնարհիչի դրսևորումով. Մշո բարբառի խոսվածքներ, Արծափի խոսվածք:

GRAMMATICAL ISOGLOSSES

46. PECULIARITIES OF VERB CONJUGATION SERIES

- a) *al*, *ēl* // *el* b) *al*, *il* c) *al*, *ēl*, *il* d) *al*, *ēl*//*el* (im)

Materials and commentary:

The dialectal units of Armenian have variations in the formation of the infinitive, based on their conjugation series. In particular, many dialects form the infinitive with the particles *al*, *el*, *il* (Karabagh, Hadrut, Meghri, Polis, Karin, etc.). The dialectal units of Julfa, Ardvin, and Urmia form this infinitive with the particles *el*, *al*; the dialects of Tbilisi and Sasun with *il*, *al*; the dialects of New Nakhichevan and Karchevan with *el*, *al*, *il*, *ul*; and in the Hamshen dialect, the infinitive is formed with the particle *ush*.

In the Gegharkunik province, the infinitive has the endings *ēl* // *el* and *al* in the speeches of all settlements in the Sevan region communicating in the Maku subdialect and all settlements in the Gavar region (Bayazet dialect), as well as the settlements of Akunk (mixed-type speech) and Vardenis (Diadin dialect) in the Vardenis region.

In all the speeches of the settlements in Vardenis and Chambarak inhabited by Artsakh Armenians (Karabagh dialect), the infinitive has the endings *al*, *ēl*, *il*.


The verb has the conjugations *al*, *il* in the speeches of the settlements of Getik, Ttujur, Chambarak, and Vahan in the Chambarak region (Gandzak inter-dialect).

In the speeches of all settlements in the Martuni region (Mush dialect), the settlements of Akhpradzor, Khachaghbyur, Mets Masrik, Norakert, Karchaghbyur, Lchavan, Maqenis, Tsovak, and Lusakunk in the Vardenis region (Mush dialect), and the settlement of Tsovaghyugh in the Sevan region (Artsap subdialect), the infinitive has the endings *al*, *el*, but during conjugation, the *i* conjugational element is also manifested.

Thus, this isogloss exists in the dialectal units of the Gegharkunik province in the following variants:

- a) infinitive with the endings *ēl*//*el* and *al*: in the speeches of the Bayazet and Diadin dialects, variants of the Maku subdialect, and the mixed-type Akunk speech;
- b) infinitive with the endings *al*, *ēl*, *il*: in the speeches of the Karabagh dialect;
- c) infinitive with the endings *al*, *il*: in the speeches of the Gandzak inter-dialect;
- d) infinitive with the endings *el* and *al*, together with *i* conjugational element in the conjugation paradigm: in the speeches of the Mush dialect and the Artsap subdialect.

PECULIARITIES OF VERB CONJUGATION
SERIES



ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԶՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

47. ՈՒՄ ՄԱՍՆԻԿՈՎ ԱՆԿԱՏԱՐ ԴԵՐԲԱՅ

Գրում /եմ/

Նյութեր և մեկնաբանություններ

- ա) մընում գ'ալում
- բ) մընում
- գ) մընըմ գ'ալըմ
- դ) մընըմ
- ե) մընամ, սիրիմ

Ում մասնիկով անկատար դերբայ ունեն Ում ճյուղի բարբառային միավորները (Արարատյան, Ղարաբաղի, Թբիլիսիի, Զուղայի, Ագուլիսի, Աստրախանի, Շամախիի, Բայազետի, Գանձակի): Բարբառներում անկատար դերբայը արտահայտվում է *ում* մասնիկի հնչյունական մի շարք տարբերակներով՝ *ոււմ* (Զուղա, Թբիլիսի, Բայազետ), *ըւմ* (Արարատյան, Ղարաբաղ, Գանձակ), *աւմ* (Ագուլիս, Շամախի), *իւմ* (Ղարաբաղ) և այլն: Հնչյունական զանազանությունները երբեմն (օրինակ՝ Ղարաբաղի և Շամախիի բարբառներում) պայմանավորված են ձայնավորների ներդաշնակության օրենքով: Եթե *ոււմ* մասնիկը սովորաբար ավելանում է ներկայի հիմքին, այսինքն՝ անորոշի վերջավորության փոխարեն, ապա Հավարիկի բարբառում այդ մասնիկն ավելանում է անորոշ դերբային (կապելըմ, գնալըմ, գողանալըմ): Բարբառային մի շարք միավորներում (Արարատյան, Բայազետի բարբառների խոսվածքներ) *ոււմ* մասնիկը անորոշին է ավելանում *գալ, լալ, տալ* բայերի դեպքում (գալում//գալըմ, լալում//լալըմ, տալում//տալըմ):

Գեղարքունիքի մարզում *ոււմ* մասնիկով (կամ դրա հնչյունական տարբերակներով) անկատար դերբայ ունեն Սևանի (Մակուի և Արծափի խոսվածքներ), Գավառի (Բայազետի բարբառ), Ճամբարակի (Ղարաբաղի բարբառ, Գանձակի միջբարբառ) տարածաշրջանների բոլոր բնակավայրերի, Վարդենիսի տարածաշրջանի Ակունք (խառը տիպի խոսվածք) և արցախցիներով բնակեցված բոլոր բնակավայրերի խոսվածքները:

Ում տարբերակով անկատար և *գալում, լալում, տալում* ձևեր ունեն Սևանի և Գավառի տարածաշրջանների բոլոր խոսվածքները (Մակուի, Արծափի խոսվածքներ, Բայազետի բարբառ), Վարդենիսի տարածաշրջանի Ակունքի խառը տիպի խոսվածքը:

Ճամբարակի տարածաշրջանի Վահան գյուղի խոսվածքում (Գանձակի միջբարբառ) գործածական է *ոււմ*-ով անկատար՝ առանց *գալում, լալում, տալում* ձևերի:

Սևանի տարածաշրջանի Ծովագյուղ (Արծափի խոսվածք) և Զովաբեր, Ծաղկունք, Գեղամավան (Մակուի խոսվածք) գյուղերի խոսվածքներում *ուլ*-ով տարբերակին գուգահեռ արձանագրվել են *ըլ* տարբերակով անկատար և *գալըլ, լալըլ, տալըլ* ձևեր:

Անկատար դերբայի *ըլ*-ով տարբերակ (առանց *գալըլ, լալըլ, տալըլ* ձևերի) գործածվում է Ճամբարակի տարածաշրջանի Գետիկ, Թթուջուր, Ճամբարակ բնակավայրերի խոսվածքներում (Գանձակի միջբարբառ):

Ճամբարակի և Վարդենիսի տարածաշրջանների՝ արցախցիներով բնակեցված բնակավայրերում գործածական են անկատարի *ուլ* վերջավորության՝ նաև ձայնավորների ներդաշնակության օրենքով պայմանավորված տարբերակներ:

Զուգաբանությունը, այսպիսով, Գեղարքունիքի մարզի բարբառային միավորներում դրսևորվում է հետևյալ տարբերակներով.

ա) *ուլ* տարբերակով անկատար և *գալըլ, լալըլ, տալըլ* ձևեր. Բայազետի բարբառի խոսվածքներ, Արծափի և Մակուի խոսվածքների տարբերակներ, Ակունքի խառը տիպի խոսվածք.

բ) *ուլ*-ով անկատար՝ առանց *գալըլ, լալըլ, տալըլ* ձևերի. Գանձակի միջբարբառի խոսվածք.

գ) *ըլ* տարբերակով անկատար և *գալըլ, լալըլ, տալըլ* ձևեր. Արծափի և Մակուի խոսվածքների որոշ տարբերակներ.

դ) *ըլ*-ով տարբերակ՝ առանց *գալըլ, լալըլ, տալըլ* ձևերի. Գանձակի միջբարբառի խոսվածքների մեծ մասը.

ե) անկատարի *ուլ* վերջավորության՝ ձայնավորների ներդաշնակության օրենքով պայմանավորված տարբերակներ. Ղարաբաղի բարբառի խոսվածքներ:

GRAMMATICAL ISOGLOSSES

47. IMPERFECT PARTICIPLE WITH THE PARTICLE *UM*

Grum (em) “I write”

Materials and Commentary

- a) **mənum**, **galum**
- b) **mənum**
- c) **mənəm**, **galəm**
- d) **mənəm**
- e) **mnam**, **sirim**

The imperfect participle with the particle *um* is found in the dialectal units of the *Um* branch (Ararat, Karabagh, Tbilisi, Julfa, Agulis, Astrakhan, Shamakhi, Bayazet, Gandzak). In dialects, the imperfect participle is expressed with a number of phonetic variants of the *um* particle: *um* (Julfa, Tbilisi, Bayazet), *əm* (Ararat, Karabagh, Gandzak), *am* (Agulis, Shamakhi), *im* (Karabagh), etc. The phonetic variations are sometimes conditioned by the law of vowel harmony (for example, in the Karabagh and Shamakhi dialects). While the *um* particle is usually added to the present tense stem, replacing the infinitive ending, in the Havarik dialect, this particle is added to the infinitive (*kapeləm*, *gnaləm*, *goghanaləm*). In a number of dialectal units (speeches of the Ararat and Bayazet dialects), the *um* particle is added to the infinitive in the case of the verbs *gal* (to come), *lal* (to cry), and *tal* (to give) (*galum*//*galəm*, *lalum*//*laləm*, *talum*//*taləm*).

In the Gegharkunik province, the imperfect participle with the *um* particle (or its phonetic variants) is found in the speeches of all settlements of the Sevan (Maku and Artsap subdialects), Gavar (Bayazet dialect), and Chambarak (Karabagh dialect, Gandzak inter-dialect) regions, as well as in the speeches of Akunk (mixed-type speech) and all settlements inhabited by Artsakh Armenians in the Vardenis region.

The imperfect with the *um* variant and the forms *galum*, *lalum*, *talum* are found in all speeches of the Sevan and Gavar regions (Artsap and Maku subdialects, Bayazet dialect), and in the mixed-type speech of Akunk in the Vardenis region.


In the speech of the village of Vahan in the Chambarak region (Gandzak inter-dialect), the imperfect with *um* is used without the forms *galum*, *lalum*, *talum*.

In the speeches of the villages of Tsovaghyugh in the Sevan region (Artsap subdialect) and Zovaber, Tsaghkunk, Geghamavan (Maku subdialect), the imperfect with the *əm* variant and the forms *galəm*, *laləm*, *taləm* have been recorded in parallel with the *um* variant. The imperfect participle with the *əm* variant (without the forms *galəm*, *laləm*, *taləm*) is used in the speeches of the settlements of Getik, Ttujur, and Chambarak in the Chambarak region (Gandzak inter-dialect). In the settlements of the Chambarak and Vardenis regions inhabited by Artsakh Armenians, variants of the imperfect's *um* ending conditioned by the law of vowel harmony are also used.

Thus, this isogloss exists in the dialectal units of the Gegharkunik province in the following variants:

- a) imperfect participle with the *um* variant and the forms *galum*, *lalum*, *talum*: speeches of the Bayazet dialect, variants of the Artsap and Maku subdialects, and the mixed-type Akunk speech;
- b) imperfect with *um*, without the forms *galum*, *lalum*, *talum*: the speech of the Gandzak inter-dialect;
- c) imperfect participle with the *əm* variant and the forms *galəm*, *laləm*, *taləm*: some variants of the Artsap and Maku subdialects;
- d) imperfect with *əm*, without the forms *galəm*, *laləm*, *taləm*: most of the speeches of the Gandzak inter-dialect;
- e) variants of the imperfect's *um* ending conditioned by the law of vowel harmony: speeches of the Karabagh dialect.

IMPERFECT PARTICIPLE WITH THE
PARTICLE *UM*



ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԶՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

48. Բ-ՈՎ ՎԱՂԱԿԱՏԱՐ

ե_լ > ե_ր

Նյութեր և մեկնաբանություններ

գ՛ըրեր եմ, զոյվեր է, գ՛ըրեր էք

Այս հատկանիշը բավականին տարածված է արևմտյան բարբառներում (Պոլիս, Եվդոկիա, Շապին-Գարահիսար, Սեբաստիա, Արաբկիր, Ակն, Մալաթիա, Զեյթուն, Քեսաբ, Կարին, Երզնկա, Տիգրանակերտ, Մուշ, Սասուն, Վան, Դիադին և այլն): Արևելյաններից հատկանիշն ունեն Բայազետի և Խոյ-Մարաղայի բարբառները:

Գեղարքունիքի մարզում *ը* - ով վաղակատար ունեն Սևանի (Արծափի և Մակուի խոսվածքներ), Գավառի (Բայազետի բարբառ), Մարտունու (Մշո բարբառ) տարածաշրջանների բոլոր բնակավայրերի և Վարդենիսի տարածաշրջանի Կարճաղբյուր, Լճավան, Մաքենիս, Ախպրաձոր, Ծովակ, Լուսակունք, Խաչաղբյուր, Մեծ Մասրիկ, Նորակերտ (Մշո բարբառ), Վարդենիս (Դիադինի բարբառ), Ակունք (խառը տիպի խոսվածք) բնակավայրերի խոսվածքները:

Հատկանիշը, այսպիսով, Գեղարքունիքի մարզում դրսևորվում է Մշո, Բայազետի, Դիադինի բարբառների խոսվածքներում, Արծափի և Մակուի խոսվածքների տարբերակներում, Ակունքի խառը տիպի խոսվածքում:

GRAMMATICAL ISOGLOSSES

48. PAST PARTICIPLE WITH THE PARTICLE *R*

el > er

Materials and commentary

grēr em “I have written”, **zoyvēr ē** “he/she died”, **grer ēk** “you have written”

This feature is quite common in Western dialects (Polis, Evdokia, Shabin-Karahisar, Sebastia, Arabkir, Akn, Malatya, Zeytun, Kessab, Karin, Erzinkan, Tigranakert, Mush, Sasun, Van, Diadin, etc.). Among the Eastern dialects, the Bayazet and Khoy-Maragha dialects have this feature.

In the Gegharkunik province, the past participle with the particle *r* is found in the speeches of all settlements of the Sevan (Artsap and Maku subdialects), Gavar (Bayazet dialect), and Martuni (Mush dialect) regions, as well as in the speeches of the settlements of Karchaghbyur, Lchavan, Maqenis, Akhpradzor, Tsovak, Lusakunk, Khachaghbyur, Mets Masrik, Norakert (Mush dialect), Vardenis (Diadin dialect), and Akunk (mixed-type speech) in the Vardenis region.

Thus, in the Gegharkunik province, this feature appears in the speeches of the Mush, Bayazet, and Diadin dialects, in the variants of the Artsap and Maku subdialects, and in the mixed-type Akunk speech.



ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԶՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

49. ՈՒՎ - ՈՎ ՀԱՐԱԿԱՏԱՐ

աժ ~ ուկ

Նյութեր և մեկնաբանություններ

քրնուկ, բ'առցուկ, զինվուգ, թըխուկ, նեղեցուկ

Համեմատաբար սակավ տարածված հատկանիշ է, որ առավելաբար հատուկ է արևմտյան բարբառներին (Եվրոկիա, Ամասիա, Շապին Գարահիսար, Սեֆաստիա, Խարբերդ, Տիգրանակերտ, Մուշ, Սասուն, Վան, Դիադին և այլն): Արևելյաններից այս հատկանիշն ունի Բայազետի բարբառը, կա նաև Խոյի բարբառում:

Գեղարքունիքի մարզում հարակատար դերբայը *ուկ* մասնիկով են կազմում Սևանի տարածաշրջանի Ծովագյուղ (Արծափի խոսվածք), Դդմաշեն, Վարսեր, Լճաշեն, Չկալովկա, Նորաշեն (Մակուի խոսվածք), Գավառի (Բայազետի բարբառ) և Մարտունու (Մշո բարբառ) տարածաշրջանների բոլոր, Վարդենիսի տարածաշրջանի Կարճաղբյուր, Լճավան, Մաքենիս, Ախպրաձոր, Ծովակ, Լուսակունք, Խաչաղբյուր, Նորակերտ, Մեծ Մասրիկ (Մշո բարբառ), Վարդենիս (Դիադինի բարբառ), Ակունք (խառը տիպի խոսվածք) բնակավայրերի խոսվածքները:

Հատկանիշը, այսպիսով, Գեղարքունիքի մարզում դրսևորվում է Մշո, Բայազետի, Դիադինի բարբառների խոսվածքներում, Արծափի խոսվածքում և Մակուի խոսվածքի տարբերակների մեծ մասում, Ակունքի խառը տիպի խոսվածքում:

GRAMMATICAL ISOGLOSSES

49. PAST PARTICIPLE WITH PARTICLE *UK*

k'ənats ~ k'ənuk “slept”

Materials and commentary:

k'ənuk “slept”, **b'arts'uk** “loaded”, **zinvk** “armed”, **t'əkhk** “baked”, **neghets'uk** “saddened”

This is a relatively rare feature, characteristic mostly of Western dialects (Evdokia, Amasya, Shabin-Karahisar, Sebastia, Kharberd, Tigranakert, Mush, Sasun, Van, Diadin, etc.). Among Eastern dialects, the Bayazet and Khoy dialects have this feature.

In the Gegharkunik province, the perfect participle is formed with the particle *uk* in the speeches of the villages of Tsovaghyugh in the Sevan region (Artsap subdialect), Ddmashen, Varser, Lchashen, Chkalovka, Norashen (Maku subdialect), all settlements in the Gavar (Bayazet dialect) and Martuni (Mush dialect) regions, as well as the villages of Karchaghbyur, Lchavan, Maqenis, Akhpradzor, Tsovak, Lusakunk, Khachaghbyur, Norakert, Mets Masrik (Mush dialect), Vardenis (Diadin dialect), and Akunk (mixed-type speech) in the Vardenis region.

Thus, in the Gegharkunik province, this feature exists in the speeches of the Mush, Bayazet, and Diadin dialects, in the Artsap subdialect, in most variants of the Maku subdialect, and in the mixed-type Akunk speech.



ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԶՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

50. ՕԺԱՆԴԱԿ ԲԱՅԻ ՆԵՐԿԱ ԺԱՄԱՆԱԿԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄԸ

եմ, ես, ա, ենք, էք, են (եմ, ես, է, ենք, էք, են)
եմ, ես, է, ենք, էք, են
էմ, էս, ա, էնք, էք, էն
էմ, էս, է, էնք, էք, էն
իմ, իս, ա, ինկ, իկ, ին
ըմ//ում, ըս, ա//ւն, ընք, ըք, ըն

Նյութեր և մեկնաբանություններ

Բարբառային հայերենում *եմ* օժանդակ բայը դրսևորվում է ներկա ժամանակի խոնարհման մի շարք հարացույցներով, որոնք հիմնականում տարբերվում են ձայնավոր բաղադրիչով: Արձանագրված տարբերակային հարացույցներից են հետևյալները.

Էմ, Էս, ա, Էնք, Էք, Էն	(Արարատ, Աստրախան)
Էմ, Էս, է, Էնք, Էք, Էն	(Պոլիս, Կարին)
Էմ, Էս, ի, Էնք՝, Էք՝, Էն	(Ուրմիա)
Եմ, Ես, ի, Էնք՝, Էք՝, Էն	(Վան)
Եմ, Ես, ա, Էնք, Էք, Էն	(Բայազետ)
Իմ, իս, է, ինք, իք, ին	(Թբիլիսի, Արդվին)
Իմ, իս, ի, ինք, իք, ին	(Մուշ)
Իմ, իս, ի, ինք՝, Էք՝, ին	(Մարաղա)
Իմ, իս, ւն, ինք, էք, ին	(Համշեն)
Իմ, իս, ը, ինք, յէք, յէն	(Կիլիկիա)
Յիմ, յիս, ւն, յիք՝, յիք՝, յին	(Կարճևան)
Ըմ, ըս, ա, ընք, ըք, ըն	(Ղարաբաղ, Հաղրութ)
Ըմ, ըս, ա, ըք, ըք, ըն	(Ագուլիս)
Ամ, աւ, ա, անք, աք, ան	(Զուղա)
Ամ, Էս, ա, անք, էք, ան	(Շամախի)

Գեղարքունիքի մարզում *եմ* բայի ներկայի *եմ, Էս, ա, Էնք, Էք, Էն* ձևեր ունեն Սևանի տարածաշրջանի գրեթե բոլոր (բացի Ծովագյուղից) բնակավայրերի (Մակուի խոսվածք), Գավառի տարածաշրջանի բոլոր բնակավայրերի (Բայազետի բարբառ), Մարտունու տարածաշրջանի Ծակքար, Մարտունի, Գեղհովիտ, Վաղաշեն, Աստղաձոր, Զուլքար, Վարդենիկ, Ծովինար, Արծվանիստ, Վարդենիսի տարածաշրջանի

Կարճադրյուր, Լճավան, Մաքենիս, Ախպրաձոր, Ծովակ, Լուսակունք, Խաչադրյուր, Մեծ Մասրիկ (Մշո բարբառ), Վարդենիս (Դիադինի բարբառ), Ակունք (խառը տիպի խոսվածք) բնակավայրերի խոսվածքները:

Եւ, էս, է, ենք, էք, են ձևեր ունի Սևանի տարածաշրջանի Ծովագյուղի խոսվածքը (Արծափի խոսվածք):

Էւ, էս, ա, ենք, էք, են ձևեր ունեն Ճամբարակի տարածաշրջանի Գետիկ, Թթուջուր, Ճամբարակ, Վահան բնակավայրերի խոսվածքները (Գանձակի միջբարբառ):

Էւ, էս, է, ենք, էք, են ձևեր ունի Վարդենիսի տարածաշրջանի Նորակերտ գյուղի խոսվածքը (Մշո բարբառ):

Իւ, իս, ա, ինկ, իկ, ին ձևեր ունեն Մարտունու տարածաշրջանի Երանոս, Վարդաձոր, Չորագյուղ, Լիճք, Ծովասար, Ներքին Գետաշեն, Վերին Գետաշեն, Մադինա բնակավայրերի խոսվածքները (Մշո բարբառ):

Եւ բայի այլ ձևեր (*ըւ//ոււ, ըս, ա//ււ, ընք, ըք, ըն*) գործածվում են Ճամբարակի և Վարդենիսի տարածաշրջանների՝ արցախցիներով բնակեցված բնակավայրերում:

Զուգաբանությունը, այսպիսով, Գեղարքունիքի մարզի բարբառային միավորներում դրսևորվում է հետևյալ տարբերակներով.

եւ բայի ներկայի ձևեր.

ա) *եւ, էս, ա, ենք, էք, են*. Բայագետի, Դիադինի բարբառների խոսվածքներ, Մշո բարբառի խոսվածքների մեծ մաս, Մակուի խոսվածքի տարբերակներ, Ակունքի խառը տիպի խոսվածք.

բ) *եւ, էս, է, ենք, էք, են*. Արծափի խոսվածք.

գ) *էւ, էս, ա, ենք, էք, են*. Գանձակի միջբարբառի խոսվածք.

դ) *էւ, էս, է, ենք, էք, են*. Մշո բարբառի խոսվածք.

ե) *իւ, իս, ա, ինկ, իկ, ին*. Մշո բարբառի մի շարք խոսվածքներ.

զ) *եւ* բայի այլ ձևեր (*ըւ//ոււ, ըս, ա//ււ, ընք, ըք, ըն*). Ղարաբաղի բարբառի խոսվածքներ:

GRAMMATICAL ISOGLOSSES

50. AUXILIARY VERB *em* IN THE PRESENT TENSE

em, es, a, enk', ēk', en	"I am, you are, he is, we are, you are, they are"
em, es, e, enk', ēk', en	
ēm, ēs, a, ēnk', ēk', ēn	
ēm, ēs, ē, ēnk', ēk', ēn	
im, is, a, ink, ik, in	
əm//um, əs, a//ä, ənk', ək', ən	

Materials and Commentary:

In dialectal Armenian, the auxiliary verb *em* "I am" appears in a number of present tense conjugation paradigms, which mainly differ from each other in their vocalic component. The recorded variant paradigms are the following:

- ēm, ēs, a, ēnk, ēk, ēn** (Ararat, Astrakhan)
- ēm, ēs, ē, ēnk, ēk, ēn** (Polis, Karin)
- ēm, ēs, i, ēnk^y, ēk^y, ēn** (Urmia)
- em, es, i, enk^y, ek^y, en** (Van)
- em, es, a, enk, ek, en** (Bayazet)
- im, is, ē, ink, ik, in** (Tbilisi, Ardvin)
- im, is, i, ink, ik, in** (Mush)
- im, is, i, ink^y, ek^y, in** (Maragha)
- im, is, ä, ink, ek, in** (Hamshen)
- im, is, ə, ink, y ek', y ēn** (Cilicia)
- yim, yis, ä, yik^y, yik^y, yin** (Karchevan)
- əm, əs, a, ənk', ək', ən** (Karabagh, Hadrut)
- əm, əs, a, ək', ək', ən** (Agulis)
- am, as, a, ank', ak', an** (Julfa)
- am, ēs, a, ank, ek, an** (Shamakhi)

In the Gegharkunik province, the present tense forms *em, es, a, enk', ek', en* of the verb *em* are found in almost all settlements of the Sevan region (except for Tsovaghyugh) (Maku subdialect), all settlements of the Gavar region (Bayazet dialect), the settlements of Tsakqar, Martuni, Geghhovit, Vaghashen, Astghadzor, Zolaqar, Vardenik, Tsovinar, Artsvanist in the Martuni region, Karchaghbyur, Lchavan, Maqenis, Akhpradzor, Tsovak, Lusakunk, Khachaghbyur, Mets Masrik (Mush dialect), Vardenis (Diadin dialect), and Akunk (mixed-type speech) in the Vardenis region.

The forms *em, es, e, enk', ek', en* are found in the dialect of Tsovaghyugh in the Sevan region (Artsap subdialect).

The forms *ēm, ēs, a, ēnk', ēk', ēn* are found in the speeches of the settlements of Getik, Ttujur, Chambarak, and Vahan in the Chambarak region (Gandzak inter-dialect).

The forms *ēm, ēs, ē, ēnk', ēk', ēn* are found in the speech of the village of Norakert in the Vardenis region (Mush dialect).

The forms *im, is, a, ink, ik, in* are found in the speeches of the settlements of Yeranos, Vardadzor, Dzoragyugh, Lichk, Tsovasar, Nerkin Getashen, Verin Getashen, and Madina in the Martuni region (Mush dialect).

Other forms of the verb *em* (*əm//um, əs, a//ä, ənk', ək', ən*) are used in the settlements of the Chambarak and Vardenis regions inhabited by Artsakh Armenians.

Thus, this isogloss occurs in the dialectal units of the Gegharkunik province in the following variants:

present tense forms of the verb *em*:

a) *em, es, a, enk', ek', en* - in the speeches of the Bayazet and Diadin dialects, most of the speeches of the Mush dialect, variants of the Maku subdialect, and the mixed-type Akunk speech;

b) *em, es, e, enk', ek', en* – in the Artsap subdialect;

c) *ēm, ēs, a, ēnk, ēk, ēn* – in the Gandzak inter-dialect;

d) *ēm, ēs, ē, ēnk, ēk, ēn* – in a speech of the Mush dialect;


e) *im, is, a, ink, ik, in* – in a number of dialects of the Mush dialect;

f) other forms of the verb *em* (*əm//um, əs, a//ä, ənk, ək, ən*) – in the speeches of the Karabagh dialect.

AUXILIARY VERB *EM* IN THE PRESENT
TENSE

Օժանդակ բայի ներկա ժամանակի ձևեր
Present tense forms of the auxiliary verb:

- | | |
|--------------------------|------------------------|
| ● եմ, ես, ա, ենք, էք, են | em, es, a, enk, êk, en |
| ● եմ, ես, ա, ենք, էք, են | ëm, ës, a, ênk, êk, ën |
| ● եմ, ես, է, ենք, էք, են | ëm, ës, ê, ênk, êk, ën |
| ● եմ, ես, է, ենք, էք, են | em, es, e, enk, êk, en |
| ● իմ, իս, ա, ինկ, իկ, ին | im, is, a, ink, ik, in |
| ● Այլ ձևեր | other forms |



ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ՁՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

51. ՕԺԱՆԴԱԿ ԲԱՅԻ ԱՆՑՅԱԼ ԺԱՄԱՆԱԿԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄԸ

Նյութեր և մեկնաբանություններ

- ա) **ի, իր, էր, ինք, իք, ին** (էի, էիր, էր, էինք, էիք, էին)
բ) **ինք, իր, էր, ինք, իք, ին**
գ) **էնկ, էր, էր, էնկ, էկ, էն**
դ) **ի, իր, ար, ինք, իք, ին**

Բարբառային հայերենում *էմ* օժանդակ բայը դրսևորվում է անցյալ ժամանակի խոնարհման մի շարք հարացույցներով, որոնց հիմնական տարբերությունները պայմանավորված են ձայնավորական զանազանություններով: Արձանագրված տարբերակային հարացույցներից են հետևյալները.

- | | |
|----------------------------------|---|
| ի, իր, էր, ինք, իք, ին | (Արարատ, Շամախի, Ջուղա, Բայազետ, Մուշ) |
| ի, իր, էր, ինք', իք', ին | (Վան) |
| ի, իր, ար, ինք, իք, ին | (Ղարաբաղ) |
| իիմ, իիր, էր, իինք, իիք, իին | (Աստրախան) |
| էյի, էյիր, էր, էյինք, էյիք, էյին | (Թբիլիսի, Արդվին, Պոլիս, Կարին, Նոր Նախիջևան) |
| էյը, էյդը, էր, այքը, էյքը, էյնը | (Համշեն) |
| յա, յայ, յէյ, յոնք, յաք, յըն | (Կիլիկիա) |

Որոշ բարբառներ օժանդակ բայի անցյալի իմաստն արտահայտում են ներկայի ձևերի հետ որևէ բառ-մասնիկ օգտագործելով, օրինակ, *էի* ձևի իմաստն արտահայտվում է հետևյալ եղանակներով՝ Ագուլիս՝ *ըմ նէշ*, Կարճևան՝ *յիմ լէ*, Մեղրի՝ *յիմ լա*, Խոյ՝ *էմ էր*:

Գեղարքունիքի մարզում *էմ* բայի անցյալի *ի, իր, էր, ինք, իք, ին* ձևեր ունեն Սևանի (Մակուի և Արծափի խոսվածքներ) և Գավառի (Բայազետի բարբառ) տարածաշրջանների բոլոր բնակավայրերի, Մարտունու տարածաշրջանի Գեղհովիտ, Աստղաձոր, Ջուլաքար, Վարդենիկ, Արծվանիստ բնակավայրերի (Մշո բարբառ), Վարդենիսի տարածաշրջանի Կարճաղբյուր, Լճավան, Մաքենիս, Ախպրաձոր, Ծովակ, Լուսակունք, Խաչաղբյուր, Մեծ Մասրիկ, Նորակերտ (Մշո բարբառ), Վարդենիս (Դիաղինի բարբառ) և Ակունք (խառը տիպի խոսվածք) բնակավայրերի, Ճամբարակի տարածաշրջանի Գետիկ, Թթուջուր, Ճամբարակ և Վահան բնակավայրերի խոսվածքները (Գանձակի միջբարբառ):

Ինք, իր, էր, ինք, իք, ին ձևեր (եզակի առաջին դեմքում հոգնակի ձևի գործածումով) արձանագրվել են Մարտունու տարածաշրջանի Մարտունի և Վաղաշեն բնակավայրերի խոսվածքներում:

էնկ, էր, էր, էնկ, էկ, էն ձևեր (եզակի առաջին դեմքում հոգնակի ձևի գործածումով և եզակի երկրորդ և երրորդ դեմքերի ձևերի նույնությամբ) արձանագրվել են Մարտունու տարածաշրջանի Երանոս, Վարդաձոր, Ձորագյուղ, Ծակքար, Լիճք, Ծովասար, Ներքին Գետաշեն, Վերին Գետաշեն, Մաղինա և Ծովասար բնակավայրերի խոսվածքներում (Մշո բարբառ):

Ճամբարակի և Վարդենիսի տարածաշրջանների՝ արցախցիներով բնակեցված բնակավայրերի խոսվածքներում ավելի գործածական են *էւ* բայի անցյալ ժամանակի *ի, իր, ար, ինք, իք, ին* ձևերը:

Զուգաբանությունը, այսպիսով, Գեղարքունիքի մարզի բարբառային միավորներում դրսևորվում է հետևյալ տարբերակներով.

էւ բայի անցյալի ձևեր.

ա) *ի, իր, էր, ինք, իք, ին*. Բայազետի, Դիադինի բարբառների, Գանձակի միջբարբառի խոսվածքներ, Մշո բարբառի շատ խոսվածքներ, Արծափի և Մակուի խոսվածքների տարբերակներ, Ակունքի խառը տիպի խոսվածք.

բ) *ինք, իր, էր, ինք, իք, ին*. Մշո բարբառի առանձին խոսվածքներ.

գ) *էնկ, էր, էր, էնկ, էկ, էն*. Մշո բարբառի մի շարք խոսվածքներ.

դ) *ի, իր, ար, ինք, իք, ին*. Ղարաբաղի բարբառի խոսվածքներ:

GRAMMATICAL ISOGLOSSES

51. THE AUXILIARY VERB *em* IN THE PAST TENSE

Materials and Commentary:

- a) **i, ir, ēr, ink', ik', in** “I was, you were, he/she was, we were, you were, they were”
b) **ink, ir, ēr, ink', ik', in**
c) **ēnk, ēr, ēr, ēnk, ēk, ēn**
d) **i, ir, ar, ink', ik', in**

In dialectal Armenian, the auxiliary verb *em* appears in a number of past tense conjugation paradigms, whose main differences are conditioned by vocalic variations. The recorded variant paradigms are the following:

i, ir, ēr, ink', ik', in (Ararat, Shamakhi, Julfa, Bayazet, Mush)

i, ir, ēr, ink'^y, ik'^y, in (Van)

i, ir, ar, ink', ik', in (Karabagh)

iim, iir, ēr, iink', iik', iin (Astrakhan)

ēyi, ēyir, ēr, ēyink', ēeyik', ēyin (Tbilisi, Ardvin, Polis, Karin, Nor Nakhijevan)

ēyā, ēyā, ēr, ayk'ā, ēyk, ēynā (Hamshen)

ya, yay, yēy, yonk, yak, yān (Cilicia)

Some dialects express the past tense meaning of the auxiliary verb by using a word-particle with the present tense forms. For example, the meaning of the form *ei* “I was” is expressed in the following ways: Agulis - *əm nel*, Karchevan - *yim le*, Meghri - *im la*, Khoy - *ēm ēr*.

In the Gegharkunik province, the past tense forms *i, ir, er, ink', ik', in* of the verb *em* are found in all settlements of the Sevan (Maku and Artsap subdialects) and Gavar (Bayazet dialect) regions, the settlements of Geghovit, Astghadzor, Zolaqar, Vardenik, Artsvanist in the Martuni region (Mush dialect), the settlements of Karchaghbyur, Lchavan, Maqenis, Akhpradzor, Tsovak, Lusakunk, Khachaghbyur, Mets Masrik, Norakert in the Vardenis region (Mush dialect), Vardenis (Diadin dialect), Akunk (mixed-type speech), and the settlements of Getik, Ttujur, Chambarak, and Vahan in the Chambarak region.

The forms *ink', ir, ēr, ink', ik', in* (with the use of the plural form in the first person singular) have been recorded in the speeches of the settlements of Martuni and Vaghashen in the Martuni region. The forms *ēnk, ēr, ēr, ēnk, ēk, ēn* (with the use of the plural form in the first person singular and the identical forms for the second and third persons singular) have been recorded in the speeches of the settlements of Yeranos, Vardadzor, Dzoragyugh, Tsakqar, Lichk, Tsovasar, Nerkin Getashen, Verin Getashen, Madina, and Tsovasar in the Martuni region.

In the speeches of the settlements in the Chambarak and Vardenis regions inhabited by Artsakh Armenians, the past tense forms *i, ir, ar, ink', ik', in* of the verb *em* are more commonly used.

Thus, this isogloss is used in the dialectal units of the Gegharkunik province in the following variants:

past tense forms of the verb *em*:


- a) *i, ir, ēr, ink', ik', in* - in the speeches of the Bayazet and Diadin dialects, the Gandzak inter-dialect, many speeches of the Mush dialect, variants of the Artsap and Maku subdialects, and the mixed-type Akunk speech;
- b) *ink', ir, ēr, ink', ik', in* - in some speeches of the Mush dialect;
- c) *ēnk, ēr, ēr, ēnk, ēk, ēn* - in a number of speeches of the Mush dialect;
- d) *i, ir, ar, ink', ik', in* - in the speeches of the Karabagh dialect.

51. ՕԺԱՆԴԱԿ ԲԱՅԻ ԱՆՑԱԼ
ԺԱՄԱՆԱԿԻ ԴԻՄԵՎՈՐՈՒՄԸ

THE AUXILIARY VERB *EM* IN THE PAST
TENSE

Օժանդակ բայի անցյալ ժամանակի ձևեր
Past tense forms of the auxiliary verb:

- | | |
|----------------------------|-----------------------------|
| ● ի, իր, էր, ինք, իք, ին | i, ir, ɛr, ink', ik', in |
| ● ինք, իր, էր, ինք, իք, ին | ink', ir, ɛr, ink', ik', in |
| ● էնկ, էր, էնկ, էկ, էն | ɛnk, ɛr, ɛr, ɛnk, ɛk, ɛn |
| ● Այլ ձևեր | other forms |



ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԶՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

52. Ե ԽՈՆԱՐՀՄԱՆ ՊԱՐԶ ԲԱՅԵՐԻ ԿԱՏԱՐՅԱԼԻ ՀԻՄՔԸ

գրեցի // գրի

Նյութեր և մեկնաբանություններ

ա) սիրեցի

բ) սիրեցի // սիրի

գ) սիրի

Բարբառային հայերենում Ե խոնարհման պարզ բայերի կատարյալը որպես կանոն կազմվում է ցոյական հիմքով, ոչ ցոյական կազմությունը մեծ տարածում չունի: Վերջին տիպի կատարյալ ունեն արևմտյան խմբակցության Մշո, արևելյան խմբակցության Աստրախանի, Ագուլիսի, Մեհտիշենի, Խոյ-Մարաղայի բարբառները:

Գեղարքունիքի մարզում Ե խոնարհման պարզ բայերի կատարյալը ցոյական հիմքով է կազմվում Ճամբարակի տարածաշրջանի բոլոր (Ղարաբաղի բարբառ և Գանձակի միջբարբառ) և Վարդենիսի տարածաշրջանի՝ արցախցիներով բնակեցված բնակավայրերի խոսվածքներում:

Զուգահեռ՝ ցոյական և ոչ ցոյական հիմքերով (կամ ոչ ցոյականի գերակշռությամբ) կատարյալ է արձանագրվել Սևանի (Մակուի և Արծափի խոսվածքներ), Գավառի (Բայազետի բարբառ), Մարտունու (Մշո բարբառ) տարածաշրջանների բոլոր բնակավայրերի, նաև Վարդենիսի տարածաշրջանի՝ Մշո և Դիաղինի բարբառներով հաղորդակցվող բնակավայրերի խոսվածքներում, Ակունքի խառը տիպի խոսվածքում: Բացառություն է թերևս Վարդենիսի տարածաշրջանի Մաքենիս գյուղի խոսվածքը, որում կատարյալի ցոյական կազմություն չի արձանագրվել:


Զուգաբանությունը, այսպիսով, Գեղարքունիքի մարզի բարբառային միավորներում դրսևորվում է հետևյալ տարբերակներով.

ա) Ե խոնարհման պարզ բայերի կատարյալ՝ ցոյական հիմքով. Ղարաբաղի բարբառի խոսվածքներ.

բ) Ե խոնարհման պարզ բայերի կատարյալ՝ զուգահեռաբար ցոյական և ոչ ցոյական հիմքերով. Բայազետի, Մշո, Դիաղինի բարբառների խոսվածքներ, Արծափի և Մակուի խոսվածքների տարբերակներ, Ակունքի խառը տիպի խոսվածք.

գ) Ե խոնարհման պարզ բայերի կատարյալ՝ ոչ ցոյական հիմքով. Մշո բարբառի մեկ խոսվածք:

52. Ե ԽՈՆԱՐՀՄԱՆ ՊԱՐԶ ԲԱՅԵՐԻ
ԿԱՏԱՐՅԱԼԻ ՀԻՄՔԸ
THE AORIST'S STEM OF SIMPLE VERBS OF
E CONJUGATION



ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԶՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

53. ԳՆԱԼ, ՄՆԱԼ ԲԱՅԵՐԻ ԱՆՑՅԱԼԻ ՀԻՄՔԻ ԳԱՅ, ՄԱՅ ՏԻՊԻ ՁԵՎԵՐ

գնալ > գնաց ~ գաց

մնալ > մնաց ~ մաց

Նյութեր և մեկնաբանություններ

գացի, գացիր, գացինք, գացիք, գացին

մացի, մացիր, մացինք, մացիք, մացին

Գնալ, մնալ բայերի անցյալի հիմքում արմատական *ն*-ի անկումը բարբառային հայերենում սակավ հանդիպող երևույթ է, որի դրսևորումներ դիտվել են Մշո, Վանի, Սասնո, Տավորիկ-Մոտկանի, Տիգրանակերտի, Պոլսի, Վանի, Դիադինի, Բայազետի բարբառներում: Մշո և Սասնո բարբառներում արձանագրված *մանցի, մանցիր* կարգի ձևերը թերևս ներկայացնում են հնչյունական անցման միջին օղակ:

Գեղարքունիքի մարզում *գաց, մաց* հիմքերով բայաձևեր արձանագրվել են Սևանի տարածաշրջանի Դդմաշեն, Ծաղկունք, Գեղամական, Վարսեր, Չկալովկա, Նորաշեն գյուղերի խոսվածքներում (Մակուի խոսվածք), Գավառի (Բայազետի բարբառ) և Մարտունու (Մշո բարբառ) տարածաշրջանների բոլոր բնակավայրերի, Վարդենիսի տարածաշրջանի Կարճաղբյուր, Լճական, Մաքենիս, Ախպրաձոր, Ծովակ, Լուսակունք, Խաչաղբյուր, Մեծ Մասրիկ, Նորակերտ (Մշո բարբառ), Վարդենիս (Դիադինի բարբառ), Ակունք (խառը տիպի խոսվածք) բնակավայրերի խոսվածքներում:

Հատկանիշը, այսպիսով, Գեղարքունիքի մարզում դրսևորվում է Մշո, Բայազետի, Դիադինի բարբառների խոսվածքներում, Մակուի խոսվածքի տարբերակների մեծ մասում, Ակունքի խառը տիպի խոսվածքում:

GRAMMATICAL ISOGLOSSES

53. THE AORIST STEMS *GATS'* AND *MATS'* OF THE VERBS *GNAL* "TO GO" AND *MNAL* "TO STAY"

gnal > **gnats'** – **gats'**

mnal > **mnats'** – **mats'**

Materials and commentary:

gats'i, gats'ir, gnats', gats'ink, gats'ik, gats'in (I went, you went...)

mats'i, mats'ir, mnats', mats'ink, mats'ik, mats'in (I stayed, you stayed...)

The loss of the root sound *n* in the past stem of the verbs *gnal* and *mnal* is a rare occurrence in dialectal Armenian. Some form of this phenomenon has been observed in the Mush, Van, Sasun, T'alvorik-Motkan, Tigranakert, Polis, Van, Diadin, and Bayazet dialects. The forms recorded in the Mush and Sasun dialects, such as *mants'i*, *mants'ir*, represent an intermediate link in this process.

In the Gegharkunik province, verbal forms with the stems *gats* and *mats* have been recorded in the speeches of the villages of Ddmashen, Tsaghkunk, Geghamavan, Varser, Chkalovka, and Norashen in the Sevan region (Maku subdialect), all settlements of the Gavar (Bayazet dialect) and Martuni (Mush dialect) regions, as well as the villages of Karchaghbyur, Lchavan, Maqenis, Akhpradzor, Tsovak, Lusakunk, Khachaghbyur, Mets Masrik, Norakert (Mush dialect), Vardenis (Diadin dialect), and Akunk (mixed-type speech) in the Vardenis region.

Thus, this feature appears in the Gegharkunik province in the speeches of the Mush, Bayazet, and Diadin dialects, in most variants of the Maku subdialect, and in the mixed-type Akunk speech.

THE AORIST STEMS *GATS'* AND *MATS'* OF
THE VERBS *GNAL* (TO GO) AND *MNAL* (TO
STAY)



ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԶՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

54. ԸՂԶԱԿԱՆ ԱՆՑՅԱԼԻ ԱՊԱՌՆՈՒ ԻՄԱՍՏԻ ԱՐՏԱՀԱՅՏՈՒՄ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ ԶԵՎԵՐՈՎ

ա) *հ' ընծըներ ին* (անցնեին)

բ) *մընացել իր* (մնայիր)

Նյութեր և մեկնաբանություններ

Բարբառային հայերենում ըղձական եղանակի անցյալի ապառնու իմաստը սովորաբար արտահայտվում է համադրական կազմությամբ (*գրեհ, գրեհր, գրեր*), սակայն որոշ տարածքներում այդ իմաստն արտահայտվում է վերլուծական ձևերով՝ բայաձևի և օժանդակ բայի ներկա կամ անցյալ ձևերի զուգորդմամբ (Քեսաբ, Սվեդիա, Կեսարիա. մըներ էմ՝ մնայի, սիրեր ի՝ սիրեի), ինչպես նաև՝ ըղձական ապառնու և բառմասնիկների զուգորդմամբ (Խոյ-Մարադա, Ագուլիս, Մեդրի. սերիմ լա՝ սիրեի, խօսեմ էր՝ խոսեի):

Գեղարքունիքի մարզում ըղձական անցյալի ապառնու իմաստը Սևանի տարածաշրջանի Ծովագյուղում (Արծափի խոսվածք) արտահայտվում է *էր*-ով ավարտվող բայաձևով և օժանդակ բայի անցյալի ձևերով (*հ' ընծըներ ին՝* անցնեին): Այդպես էն կազմվում նաև պայմանական ու հարկադրական եղանակների անցյալի ձևերը (*կըճարեր իր՝* կճարեիր, *պըղի հ' ընծըներ իկ՝* պիտի անցնեիք):

Հիշյալ իմաստը անցյալի վաղակատարի միջոցով է արտահայտվում Ճամբարակի տարածաշրջանի Գետիկ, Թթուջուր, Ճամբարակ և Վահան բնակավայրերի՝ Գանձակի միջբարբառը ներկայացնող խոսվածքներում (*մընացել իր՝* մնայիր):

Զուգաբանությունը, այսպիսով, Գեղարքունիքի մարզի բարբառային միավորներում դրսևորվում է երկու տարբերակով.

ա) ըղձական անցյալի ապառնու իմաստի արտահայտում *էր*-ով ավարտվող բայաձևով և օժանդակ բայի անցյալի ձևերով. Արծափի խոսվածք.

բ) ըղձական անցյալի ապառնու իմաստի արտահայտում անցյալի վաղակատարի միջոցով. Գանձակի միջբարբառ:

GRAMMATICAL ISOGLOSSES

54. EXPRESSION OF THE OPTATIVE FUTURE-IN-THE-PAST MEANING WITH ANALYTICAL FORMS

- a) **h'ənts'əner in** - ants'neyin “they would pass”
- b) **mənats'el ir** - mnayir “you should have stayed”

Materials and commentary:

In dialectal Armenian, the meaning of the optative future in the past is usually expressed with a synthetic formation (*grei, greir*... “I would write, you would write”), but in some areas, this meaning is expressed with analytical forms: a verb form combined with the present or past forms of the auxiliary verb (Kessab, Svedia, Caesarea: *məner em* “I would stay”; *sirer i* – “I would love”), as well as by combining the optative future with word-particles (Khoy-Maragha, Agulis, Meghri: *serim la* “I would love”; *khosem er* “I would speak”).

In the Gegharkunik province, the meaning of the optative future in the past is expressed in the speech of Tsovaghyugh in the Sevan region (Artsap subdialect) with a verb form ending in *er* and the past forms of the auxiliary verb (*h'əntsəner in* “they would pass”). The past tense forms of the conditional and compulsive moods are also formed this way (*kəcharer ir* “you would solve”; *pədi h'əntsəner ik* “you would have to pass”).

The aforementioned meaning is expressed through the perfect tense in the speeches of the settlements of Getik, Ttujur, Chambarak, and Vahan in the Chambarak region, which represent the Gandzak inter-dialect (*mənatsel ir* “you would stay”).

Thus, this isogloss occurs in the dialectal units of the Gegharkunik province in two variants:

- a) expression of the optative future in the past meaning with a verb form ending in *er* and the past forms of the auxiliary verb: in the Artsap subdialect;
- b) expression of the optative future in the past meaning through the perfect tense: in the speeches of the Gandzak inter-dialect.

54. ԸՂԶԱԿԱՆ ԱՆՑՅԱԼԻ ԱՊԱՌՈՒԻ
ԻՄԱՍՏԻ ԱՐՏԱՀԱՅՏՈՒՄ ՎԵՐԼՈՒԾԱԿԱՆ
ԶԵՎԵՐՈՎ

EXPRESSION OF THE OPTATIVE FUTURE-
IN-THE-PAST MEANING WITH
ANALYTICAL FORMS



ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԶՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

55. ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԶԵՎԵՐԻ ԱՌԿԱՅՈՒԹՅՈՒՆ

ա) կօ կէթամ (այժմ գնում եմ)

բ) խաց ա կուտեմ (հաց եմ ուտում)

Նյութեր և մեկնաբանություններ

Հայերենի բարբառային որոշ միավորներ ունեն սահմանական եղանակի ներկա և անկատար ժամանակների շարունակական ձևեր, որոնք փաստում են գործողության՝ ընթացքի մեջ, շարունակական, տևական լինելը: Շարունակական ձևեր ունեն Տիգրանակերտի, Արաբկիրի, Մեքաստիայի, Եվդոկիայի, Նիկոմեդիայի, Պոլսի, Ռոդոսթոյի, Մալաթիայի, Համշենի և այլ բարբառային միավորներ: Շարունակական իմաստները արտահայտվում են ներկայի կամ անկատարի ձևերի վրա մասնիկների հավելումով, որոնք բարբառից բարբառ տարբեր են, ինչպես՝ *էր, ունի* (Տրապիզոն), *նը* (Արաբկիր), *գօր* (Պոլիս, Մեքաստիա, *գա* (Եվդոկիա), *հայէ* (Նիկոմեդիա), *ա* (Մալաթիա) և այլն:

Շարունակականի ձևեր են համարվել Գեղարքունիքի մարզի Մարտունու տարածաշրջանի խոսվածքների *խաց ա կուտեմ, ջ'ուր ա խմեմ, ձ'ուկ ա բ'ըռնեմ* տիպի կազմությունները, որոնցում *ա*-ն բխեցվել է *ահա* բառից: Նման կազմություններ արձանագրվել են մարզի Մարտունու տարածաշրջանի բոլոր բնակավայրերի խոսվածքներում, Վարդենիսի տարածաշրջանի Կարճաղբյուր, Լճավան, Մաքենիս, Ախպրաձոր, Ծովակ, Լուսակունք, Խաչաղբյուր, Մեծ Մասրիկ, Նորակերտ (վերջինում՝ մասամբ) բնակավայրերի խոսվածքներում (Մշո բարբառ), Վարդենիս քաղաքի խոսվածքում (Դիադինի բարբառ): Խոսվածքներում անկատարի իմաստ ունեցող նույն կարգի կառույցներում հանդես է գալիս *էր* մասնիկը (*բուկի էր կըծախին, բիշի յէր թըխին*), որը թույլ է տալիս եզրակացնել, որ Մշո բարբառում շարունակականի ինչպես *էր*, այնպես էլ *ա* մասնիկները ոչ այլ ինչ են, եթե ոչ օժանդակ բայի եզակի երրորդ դեմքի ձևերը:

Շարունակականի ձևեր *կօ* մասնիկով են կազմվում Վարդենիս քաղաքի խոսվածքում՝ *կօ կըկառթամ, կօ կէթամ* (Դիադինի բարբառ):

Կօ մասնիկը Սևանի տարածաշրջանի Զովաբեր (Մակուի խոսվածք), Գավառի տարածաշրջանի Սարուխան, Լանջաղբյուր, Գեղարքունիք (Բայազետի բարբառ), Մարտունու տարածաշրջանի Մարտունի, Գեղհովիտ, Զուլաքար, Վարդենիկ, Ծովինար, Արծվանիստ, Վարդենիսի տարածաշրջանի Կարճաղբյուր, Լճավան, Մաքենիս, Ծովակ, Լուսակունք, Խաչաղբյուր, Մեծ Մասրիկ (Մշո բարբառ), Ակունք (խառը տիպի խոսվածք) բնակավայրերի խոսվածքներում գործածվում է հաստատական իմաստով և շարունակական ժամանակաձևեր չի կազմում:

Զուգաբանությունը, այսպիսով, Գեղարքունիքի մարզի բարբառային միավորներում դրսևորվում է երկու տարբերակով.

ա) շարունակականի իմաստի արտահայտություն օժանդակ բայի ներկայի և անցյալի եզակի երրորդ դեմքի ձևերով. Մշո և Դիադինի բարբառների խոսվածքներ.

բ) շարունակական ձևերի կազմություն *կօ* մասնիկով. Դիադինի բարբառի խոսվածք:

Զուգաբանությանն առնչվող հատկանիշ է *կօ* հաստատական մասնիկի՝ առանց շարունակական իմաստի գործածությունը Բայազետի և Մշո բարբառների որոշ խոսվածքներում, Մակուի խոսվածքի առանձին դրսևորումներում, Ակունքի խառը տիպի խոսվածքում:

GRAMMATICAL ISOGLOSSES

55. PRESENCE OF CONTINUOUS TENSEFORMS

ko ket'am - gnum em “I am going now”

khats' a kutem - hats' em utum “I am eating bread now”

Materials and Commentary

Some dialectal units of Armenian have continuous forms of the present and imperfect tenses of the indicative mood, which indicate that an action is ongoing, continuous, or prolonged. Continuous forms are found in the dialects of Tigranakert, Arabkir, Sebastia, Evdokia, Nicomedia, Polis, Rodosto, Malatya, Hamshen, and others. The continuous meanings are expressed by adding particles to the forms of the present or imperfect, which differ from dialect to dialect, such as *er* (Trabzon), *nə* (Arabkir), *gor* (Polis, Sebastia), *ga* (Evdokia), *hayē* (Nicomedia), *a* (Malatya), and so on.

The constructions of the type *khats a kutem* “I am eating bread”, *j'ur a khmem* “I am drinking water”, *dz'uk a b'ānem* “I am catching fish” in the speeches of the Martuni region of the Gegharkunik province have been considered continuous forms, in which the *a* is derived from the word *aha* “that is it”. Such constructions have been recorded in the speeches of all settlements in the Martuni region of the province, in the speeches of the settlements of Karchaghbyur, Lchavan, Maqenis, Akhpradzor, Tsovak, Lusakunk, Khachaghbyur, Mets Masrik, and Norakert (in the latter, partially) in the Vardenis region (Mush dialect), and in the dialect of the city of Vardenis (Diadin dialect). In the same types of constructions with an imperfect meaning, the particle *er* appears in the speeches (*bulki ēr kətsakhin* “they were selling buns”, *bishi yēr t'khin* “they were baking pastries”), which leads to the conclusion that in the Mush dialect, the continuous particles *er* and *a* are nothing but the third-person singular forms of the auxiliary verb.

Continuous forms with the particle *ko* are formed in the speech of the city of Vardenis: *ko k'əkartam* “I am reading now”, *ko ket'am* “I am going now” (Diadin dialect).

The particle *ko* is used with an affirmative meaning and does not form continuous tenses in the speeches of the settlements of Zovaber in the Sevan region (Maku subdialect), Sarukhan, Lanjaghbyur, Gegharkunik in the Gavar region (Bayazet dialect), Martuni, Geghhovit, Zolaqar, Vardenik, Tsovinar, Artsvanist in the Martuni region, Karchaghbyur, Lchavan, Maqenis, Tsovak, Lusakunk, Khachaghbyur, Mets Masrik (Mush dialect), and Akunk (mixed-type speech) in the Vardenis region.

Thus, this isogloss exists in the dialectal units of the Gegharkunik province in two variants:

a) expression of the continuous meaning with the third-person singular forms of the present and imperfect auxiliary verb: in the speeches of the Mush and Diadin dialects;

b) formation of continuous forms with the particle *kə* in the speech of the Diadin dialect.

A related feature of this isogloss is the use of the affirmative particle *kə* without a continuous meaning in some speeches of the Bayazet and Mush dialects, in some manifestations of the Maku subdialect, and in the mixed-type Akunk speech.

55. ՇԱՐՈՒՆԱԿԱԿԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԶԵՎԵՐԻ
ԱՌԿԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESENCE OF CONTINUOUS TENSEFORMS



ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԶՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

56. ԺԽՏԱԿԱՆ ԽՈՆԱՐՀՄԱՆ ՁԵՎԵՐԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄԸ

Նյութեր և մեկնաբանություններ

ա) ասում չեմ, տեսել չեմ

կ'ըրիլ մի, կ'ըրիլ միք

կ'ըրեցի վեչ, խըմեմ վեչ

բ) չեմ հաշվե, չեմ հեղե

չեմ կանում, չեն խասկընում

չըգ'ըրի, չըխըմեմ

մի' գ'ըրա, մի' գ'ըրեք

գ) չըհաշվեք եմ (չեմ հաշվել), չեղեք եր (չեմ եղել)

չըկըռնամ (չեմ կարողանում), չըխասկընին (չեն հասկանում)

Բարբառային հայերենում ժխտական խոնարհման դեպքում օժանդակ բայի ժխտական ձևերը, ժխտական մասնիկները սովորաբար ունեն նախադաս կիրառություն: Դրանց հետադաս կիրառությունը բնորոշ է հիմնականում արևելյան խմբակցության որոշ բարբառային միավորների (Մեղրու, Կարճնանի, Ագուլիսի, Ղարաբաղի, Շամախիի բարբառներ, Գանձակի միջբարբառ, Աշտարակի, Լոռու խոսվածքներ և այլն):

Բարբառային մի շարք միավորներում բայի ժխտական խոնարհման վերլուծական ձևերում ժխտական մասնիկը կարող է կցվել դերբային, իսկ եղանակիչ ունեցող համադրական ձևերում՝ գործածվել եղանակիչի փոխարեն, օր.՝ Քեսաբ. *չըգըրիք իմ* (չեմ գրել), կըգըրիմ > *չը'գըրիմ* (չեմ գրում), Մուշ. *չըքընեք ի* (չեի քնել), կըքընիմ > *չըքընիմ* (չեմ քնում):

Գեղարքունիքի մարզում ժխտական խոնարհման ժամանակ օժանդակ բայի ժխտական ձևերը և ժխտական մասնիկները հետադաս կիրառություն ունեն Ճամբարակի տարածաշրջանի բոլոր բնակավայրերի (Ղարաբաղի բարբառ, Գանձակի միջբարբառ) և Վարդենիսի տարածաշրջանի՝ արցախցիներով բնակեցված բնակավայրերի խոսվածքներում (Ղարաբաղի բարբառ):

Սևանի (Մակուի և Արծափի խոսվածքներ), Գավառի (Բայազետի բարբառ), Մարտունու (Մշո բարբառ) տարածաշրջանների բոլոր բնակավայրերի և Վարդենիսի տարածաշրջանի Ախպրաձոր, Լճավան, Լուսակունք, Խաչաղբյուր, Ծովակ, Կարճաղբյուր, Մաքենիս, Մեծ Մասրիկ, Նորակերտ (Մշո բարբառ), Վարդենիս (Դիադինի

բարբառ) բնակավայրերի խոսվածքներում, Ակունքի խառը տիպի խոսվածքում հիշյալ իրողություններն ունեն նախադաս կիրառություն:

Մարտունու տարածաշրջանի բոլոր բնակավայրերի (Մշո բարբառ), Վարդենիսի տարածաշրջանի Լճավան, Լուսակունք, Խաչաղբյուր, Ծովակ, Կարճաղբյուր, Մաքենիս, Մեծ Մասրիկ, Նորակերտ (Մշո բարբառ), Վարդենիս (Դիադինի բարբառ) բնակավայրերի խոսվածքներում ժխտական խոնարհման վերլուծական ձևերում ժխտական մասնիկը կցվում է դերբային, իսկ եղանակիչ ունեցող համադրական ձևերում գործածվում է եղանակիչի փոխարեն: Վարդենիսի Ախպրաձոր գյուղի խոսվածքում արձանագրվել է միայն երկրորդ իրողությունը՝ *չըբ էրեն* (չեմ բերում):

Զուգաբանությունը, այսպիսով, Գեղարքունիքի մարզի բարբառային միավորներում ունի դրսևորման երեք տարբերակ.

ա) օժանդակ բայի ժխտական ձևերի, ժխտական մասնիկների հետադաս կիրառություն. Ղարաբաղի բարբառի, Գանձակի միջբարբառի խոսվածքներ.

բ) օժանդակ բայի ժխտական ձևերի, ժխտական մասնիկների նախադաս կիրառություն. Բայազետի, Մշո, Դիադինի բարբառների խոսվածքներ, Մակուի, Արծափի խոսվածքների դրսևորումներ, Ակունքի խառը տիպի խոսվածք.

գ) վերլուծական ձևերում ժխտական մասնիկի հավելում դերբային, իսկ եղանակիչ ունեցող համադրական ձևերում՝ ժխտական մասնիկի գործածությունն եղանակիչի փոխարեն. Մշո և Դիադինի բարբառների խոսվածքներ:

GRAMMATICAL ISOGLOSSES

56. EXPRESSION OF NEGATIVE CONJUGATION FORMS

Materials and Commentary:

a) asum chem; tesel chem	(I don't say; I haven't seen it)
k'əril mi; k'əril mik	(Don't write <i>singular</i> ; don't write <i>plural</i>)
k'əretsi vech; khəmem vech	(I didn't write; I won't drink)
b) chem hashve; cher hele	(I didn't count; had not been)
chem kanum; chen khaskənum	(I can't; they don't understand)
chəg'əri; chəkhəmem	(I didn't write; I won't drink)
mi' g'əra; mi' g'ərek	(Don't write <i>singular</i> ; don't write <i>plural</i>)
c) chəhashver em; chegher er	(I have not counted; it had not been)
chək'ərnəm; chəkhaskənin	(I cannot; they do not understand)

In dialectal Armenian, in the case of negative conjugation, the negative forms of the auxiliary verb and the negative particles usually have a preposed usage. Their postposed usage is characteristic mainly of some dialectal units of the Eastern group (the dialects of Meghri, Karchevan, Agulis, Karabagh, Shamakhi, the Gandzak inter-dialect, the speeches of Ashtarak, Lori, etc.).

In a number of dialectal units, in the analytical forms of the negative conjugation of the verb, the negative particle can be attached to the participle, and in synthetic forms with a modal particle, it can be used in place of the modal particle, e.g., Kessab: *chəg'ərir im* “I have not written”, *k'əgrim* < *ch'əgrim* “I am not writing”; Mush: *chəq'əner i* “I was not sleeping”, *kəqənim* < *ch'əqənim* “I am not sleeping”.

In the Gegharkunik province, in negative conjugation, the negative forms of the auxiliary verb and the negative particles have a postposed usage in the speeches of all settlements of the Chambarak region (Karabagh dialect, Gandzak inter-dialect) and the settlements of the Vardenis region inhabited by Artsakh Armenians (Karabagh dialect).

In the speeches of all settlements of the Sevan (Maku and Artsap subdialects), Gavar (Bayazet dialect), and Martuni (Mush dialect) regions, and the settlements of Akhpradzor, Lchavan, Lusakunk, Khachaghbyur, Tsovak, Karchaghbyur, Maqenis, Mets Masrik, Norakert in the Vardenis region (Mush dialect), Vardenis (Diadin dialect), and in the mixed-type Akunk speech, the negative forms of the auxiliary verb and the negative particles have a preposed usage.

In all settlements of the Martuni region (Mush dialect), and in the speeches of the settlements of Lchavan, Lusakunk, Khachaghbyur, Tsovak, Karchaghbyur, Maqenis, Mets Masrik, Norakert in the Vardenis region (Mush dialect), Vardenis (Diadin dialect), in the analytical

forms of the negative conjugation, the negative particle is attached to the participle, and in synthetic forms with a modal particle, it is used in place of the modal particle. In the speech of the village of Akhpradzor in Vardenis, only the second phenomenon has been recorded: *chəb'erem* (I am not bringing).

Thus, the isogloss is used in the dialectal units of the Gegharkunik province in three variants:

- a) postposed usage of the negative forms of the auxiliary verb and negative particles: in the speeches of the Karabagh dialect and the Gandzak inter-dialect;
- b) preposed usage of the negative forms of the auxiliary verb and negative particles: in the speeches of the Bayazet, Mush, and Diadin dialects, variants of the Maku and Artsap sub-dialects, and the mixed-type Akunk speech;
- c) attachment of the negative particle to the participle in analytical forms, and the use of the negative particle in place of the modal particle in synthetic forms with a modal particle: in the speeches of the Mush and Diadin dialects.

EXPRESSION OF NEGATIVE CONJUGATION FORMS



ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԶՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

57. ՀԱՐԿԱԴՐԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԻ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆԸ

Նյութեր և մեկնաբանություններ

- ա) պըտի//պըդի//բըդի ասեմ
- բ) ասիլ դեմ//բըդեմ
- գ) պիտի կարթամ//կարթալ պիտեմ

Բարբառային հայերենում հարկադրական եղանակն ունի արտահայտման տարբեր ձևեր: Առավել տարածված են այն կազմությունները, որոնցում հանդես են գալիս *պիտի* եղանակիչի հնչյունական զանազան տարբերակներ՝ առավելաբար բաղաձայնների ձայնեղացմամբ, առաջին կամ վերջին հնչյունախմբերի կրճատմամբ, օր.՝ *պիտի* Վան, *պըտի* Բայազետ, *բիդի* Պոլիս, Զեյթուն, *բըդի* Մուշ, *բիդի*//*բիդ* Եվդոկիա, *բիդի*//*բի* Սեբաստիա, *բի* Հաջըն, *պի* Երզնկա, *տի* Խոյ, *տ*//*տը* Շատախ, դի//դ Ակն, Արաբկիր, դը Խարբերդ և այլն: Արդվինի բարբառում դրական խոնարհման դեպքում գործածվում է *տի* կրճատ ձևը (*տի գըրիմ*), ժխտական խոնարհման դեպքում՝ *պի* ձևը (*չպի գըրիմ*): Որոշ բարբառներում գործածական են *պիտի որ* կապակցությունից առաջացած եղանակիչներ, ինչպես՝ *բիդոր* Սուչավա, *բիդ օր*//*բիդուր*//*բիդըր* Նոր Նախիջևան, *բըդըր* Ռոդոսթո և այլն: Այլ բարբառներում իբրև հարկադրականի եղանակիչներ դրսևորվում են *կը* և *պիտի* եղանակիչների ձուլմամբ առաջացած ձևեր, ինչպես՝ *կիպտսի* Մարաղա, *կըպսի* Ոզն, *կըտը*//*տըկը* Ուրմիա: Առանձին դեպքերում առկա են *պիտի* եղանակիչի այլ կարգի հնչյունափոխությամբ /պ>մ/ առաջացած ձևեր, ինչպես՝ *մստսմ մ* Ագուլիս, *մէտիլ* Մեղրի, *մսլլսմ* Կարճևան և այլն: Երբեմն *պիտի* եղանակիչը հանդես է գալիս հետադաս դիրքում՝ ունենալով դիմաթվային վերջավորություններ: Այս իրողությունը կա սակավաթիվ բարբառային միավորներում, օր.՝ *գըրիլ պըտեմ* Արարատ, *կարթիլ պիտիմ*//*բեդիմ* Ղարաբաղ, *գըրիլ տեմ*//*տիմ* Լոռի, *կըրիլ դեմ* Գանձակ, *նըստիլ դեմ* Շամշադին:

Գեղարքունիքի մարզում հարկադրականի ժամանակաձևերը Սևանի (Մակուի, Արծափի խոսվածքներ), Գավառի (Բայազետի բարբառ), Մարտունու (Մշո բարբառ) տարածաշրջանների բոլոր խոսվածքներում, Վարդենիսի տարածաշրջանի Ախպրաձոր, Լճավան, Լուսակունք, Խաչաղբյուր, Ծովակ, Կարճաղբյուր, Մաքենիս, Մեծ Մասրիկ, Նորակերտ (Մշո բարբառ), Վարդենիս (Դիադինի բարբառ), Ակունք (խառը տիպի խոսվածք) բնակավայրերի խոսվածքներում ձևավորվում են նախադաս *պըտի* (Ախպրաձոր, Գեղահովիտ, Լուսակունք, Մաքենիս, Մեծ Մասրիկ, Չկալովկա, Վարդենիկ և այլն), *պըդի* (Լճավան, Ծակքար, Ծովագյուղ, Ծովինար, Մարտունի Նորակերտ,

Վարդաձոր և այլն), *բըղի* (Երանոս. Ծովասար, Վերին Գետաշեն և այլն) տարբերակներով:

Հարկադրականի ժամանակաձևերը խոնարհվող հետադաս եղանակիչով են կազմում Ճամբարակի տարածաշրջանի Գետիկ, Թթուջուր, Ճամբարակ, Վահան բնակավայրերի խոսվածքները՝ *ասիլ դէմ, դէս, դի, դէնք, դէք, դէն // ասիլ բըղէմ, բըղէս, բըղի, բըղէնք, բըղէք, բըղէն*:

Ճամբարակի և Վարդենիսի տարածաշրջանների՝ արցախցիներով բնակեցված բնակավայրերի խոսվածքներում եղանակիչը կարող է լինել կա՛մ նախադաս (*պիտի կարթամ // բիղի կարթիմ*), կա՛մ հետադաս (*կարթալ պիտէմ // կարթիլ բիղիմ*):

Ձուգաբանությունը, այսպիսով, Գեղարքունիքի մարզի բարբառային միավորներում դրսևորվում է երեք տարբերակով.

ա) հարկադրական եղանակի ժամանակաձևերի կազմությունն նախադաս *պըտի* (*պըղի//բըղի*) եղանակիչով. Մշո, Բայազետի, Դիադինի բարբառների խոսվածքներ, Մակուի, Արծափի խոսվածքների տարբերակներ, Ակունքի խառը տիպի խոսվածք.

բ) նշված ժամանակաձևերի կազմությունն հետադաս խոնարհվող եղանակիչով (*դէմ, դէս, դի, դէնք, դէք, դէն* կամ *բըղէմ, բըղէս, բըղի, բըղէնք, բըղէք, բըղէն*). Գանձակի միջբարբառի խոսվածքներ.

գ) նշված ժամանակաձևերի կազմությունն կա՛մ նախադաս (*պիտի կարթամ // բիղի կարթիմ*), կա՛մ հետադաս (*կարթալ պիտէմ // կարթիլ բիղիմ*) եղանակիչներով. Ղարաբաղի բարբառի խոսվածքներ:

GRAMMATICAL ISOGLOSSES

57. EXPRESSION OF THE COMPULSIVE MOOD

Materials and commentary

- | | |
|---------------------------------------|------------------|
| a) pəti//pədi//bədi asem | “I have to say” |
| b) asil dem//bədem | “I have to say” |
| c) piti kart'am//kart'al pitem | “I have to read” |

In dialectal Armenian, the compulsive mood has different forms of expression. The most widespread are those constructions that use various phonetic variants of the particle *piti* “should”, mainly with the voicing of consonants, the shortening of the first or last sound groups, e.g., *piti* (Van), *pəti* (Bayazet), *bidi* (Polis, Zeytun), *bədi* (Mush), *bidi* // *bid* (Evdokia), *bidi* // *bi* (Sebastia), *bi* (Hachən), *pi* (Erzinkan), *ti* (Khoy), *t* // *tə* (Shatakh), *di* // *d* (Akn, Arabkir), *də* (Kharberd), etc. In the Ardvin dialect, the shortened form *ti* is used for affirmative conjugation (*ti gərim* “I will write”), and the form *pi* for negative conjugation (*chpi gərim* “I shouldn't write”). Some dialects use modal particles derived from the phrase *piti vor* “it must be”, such as *bidor* (Suchava), *bid or* // *bidur* // *bidər* (Nor Nakhijevan), *bədar* (Rodosto), etc. In other dialects, forms created by the fusion of the modal particles *kə* and *piti* appear as compulsive modal particles, such as *kiptä* (Maragha), *kəpä* (Vozm), *k'ətə* // *tək'ə* (Urmia). In some cases, there are forms created by another type of sound change (p>m) of the *piti* particle, such as *mätämä* (Agulis), *metil* (Meghri), *mällä* (Karchevan), etc. Sometimes the *piti* particle appears in a postposed position, having personal endings. This phenomenon exists in few dialectal units, e.g., *g'əril pətem* “I will write” (Araratian), *kart'il pitim* // *bedim* “I will read” (Karabagh), *gəril dem* // *dim* “I will write” (Lori), *kəril dem* “I will write” (Gandzak), *nəstil dem* “I will sit down” (Shamshadin).

In the Gegharkunik province, the tense forms of the compulsive mood are formed with the preposed variants *pəti* (e.g., Akhpradzor, Geghhovit, Lusakunk, Maqenis, Mets Masrik, Chkalovka, Vardenik), *pədi* (e.g., Lchavan, Tsakqar, Tsovaghyugh, Tsovin'ar, Martuni, Norakert, Vardadzor), *bədi* (e.g., Yeranos, Tsovasar, Verin Getashen) in all speeches of the settlements of Sevan (Maku, Artsap subdialects), Gavar (Bayazet dialect), Martuni (Mush dialect) regions, and in the speeches of the settlements of Akhpradzor, Lchavan, Lusakunk, Khachaghbyur, Tsovak, Karchaghbyur, Maqenis, Mets Masrik, Norakert (Mush dialect), Vardenis (Diadin dialect), and Akunk (mixed-type speech) in the Vardenis region.


The tense forms of the compulsive mood are formed with a postposed conjugated modal particle (*dem*, *des*, *di*, *denk*, *dek*, *den* or *bədem*, *bədes*, *bədi*, *bədenk*, *bədek*, *bəden*) in the speeches of the settlements of Getik, Ttujur, Chambarak, and Vahan in the Chambarak region (*asil dem* // *bədem* “I must say”).

In the speeches of the settlements in the Chambarak and Vardenis regions inhabited by Artsakh Armenians, the modal particle can be either preposed (*piti kart'am // bidi kart'im* “I will read”) or postposed (*kart'al pitem // kart'il bidim* “I will read”).

Thus, this isogloss is used in the dialectal units of the Gegharkunik province in three variants:

- a) formation of the tense forms of the compulsive mood with the preposed modal particle *pəti // pədi // bədi*: in the speeches of the Mush, Bayazet, and Diadin dialects, variants of the Maku and Artsap subdialects, and the mixed-type Akunk speech;
- b) formation of the tense forms of the compulsive mood with a postposed conjugated modal particle (*dem, des, di, denk, dek, den* or *bədem, bədes, bədi, bədenk, bədek, bəden*): in the speeches of the Gandzak inter-dialect;
- c) formation of the tense forms of the compulsive mood with either preposed (*piti kart'am // bidi kart'im*) or postposed (*kart'al pitem // kart'il bidim*) modal particles: in the speeches of the Karabagh dialect.

EXPRESSION OF THE COMPULSIVE MOOD



ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԶՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

58. ՊԱՏՃԱՌԱԿԱՆ ԲԱՅԵՐԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

ցն – ցըն, ուց//ուծ//ցուց//ծուծ

Նյութեր և մեկնաբանություններ

ա) լօկըցընել//լըղըցընել

բ) մըտուցել, թըռցուցել // հասուծել, թըռծուծել

Բարբառներում պատճառական բայերը ձևավորվում են հինհայերենյան *ուցան* կազմությունից առաջացած մի շարք ածանցական տարբերակներով, ինչպես՝ *ուց//ցուց* Վան, Մուշ, Խոյ, *ցան* Ագուլիս, Մեղրի, Կարճևան, *ցն* Արարատ, Բայազետ, Ջուղա, Ղարաբաղ, *ցուն* Պոլիս, Եվդոկիա, Ռոդոսթոն և այլն:

Գեղարքունիքի մարզում պատճառական բայերը *ցն* ածանցով են կազմվում Սևանի (Մակուի, Արծափի խոսվածքներ), Գավառի (Բայազետի բարբառ), Ճամբարակի (Գանձակի միջբարբառ, Ղարաբաղի բարբառ) տարածաշրջանների բոլոր բնակավայրերի, Վարդենիսի տարածաշրջանի՝ արցախցիներով բնակեցված գյուղերի խոսվածքներում (Ղարաբաղի բարբառ), Ակունքի խառը տիպի խոսվածքում:

Պատճառական բայերը *ուց//ցուց* (*ուծ//ծուծ*) ածանցներով են կազմվում Մարտունու տարածաշրջանի բոլոր բնակավայրերի, Վարդենիսի տարածաշրջանի Ախպրաձոր, Լճավան, Լուսակունք, Խաչաղբյուր, Ծովակ, Կարճաղբյուր, Մաքենիս, Մեծ Մասրիկ, Նորակերտ գյուղերի (Մշո բարբառ), Վարդենիս քաղաքի (Դիադինի բարբառ) խոսվածքներում: Պատճառական բայերի այդպիսի կազմություն հանդիպում է նաև Գավառի տարածաշրջանի Ծովազարդ գյուղի՝ մշեցիների սերունդներով բնակեցված թաղամասում:

Զուգաբանությունը, այսպիսով, Գեղարքունիքի մարզի բարբառային միավորներում դրսևորվում է երկու տարբերակով.

ա) պատճառական բայերի կազմություն *ցն* ածանցով. Բայազետի, Ղարաբաղի բարբառների, Գանձակի միջբարբառի խոսվածքներ, Մակուի և Արծափի խոսվածքների տարբերակներ, Ակունքի խառը տիպի խոսվածք.

բ) պատճառական բայերի կազմություն *ուց//ցուց* (*ուծ//ծուծ*) ածանցական տարբերակներով. Մշո և Դիադինի բարբառների խոսվածքներ:

GRAMMATICAL ISOGLOSSES

58. FORMATION OF CAUSATIVE VERBS

ts'n – ts'an, uts'//uts//ts'uts'//tsuts

Materials and commentary

a) **lokəts'ənel//ləghəts'ənəl** “to bathe someone”

b) **məts'uts'el** “to insert”, **t'ərts'uts'el** // **t'ərtsutsel** “to throw someone”, **hasutsel** “to deliver”

In dialects, causative verbs are formed with a number of derivative variants originating from the Old Armenian formation *uts'an*, such as *uts' // ts'uts'* (Van, Mush, Khoy), *ts'an* (Agulis, Meghri, Karchevan), *ts'n* (Ararat, Bayazet, Julfa, Karabagh), *ts'un* (Polis, Evdokia, Rodosto), and so on.

In the Gegharkunik province, causative verbs are formed with the *ts'n* suffix in the speeches of all settlements of the Sevan (Maku, Artsap subdialects), Gavar (Bayazet dialect), and Chambarak (Gandzak inter-dialect, Karabagh dialect) regions, in the speeches of the villages of the Vardenis region inhabited by Artsakh Armenians (Karabagh dialect), and in the mixed-type Akunk speech.


Causative verbs are formed with suffixes of the *uts'//ts'uts'* (*uts//tsuts*) type in the speeches of all settlements of the Martuni region, the villages of Akhpradzor, Lchavan, Lusakunk, Khachaghbyur, Tsovak, Karchaghbyur, Maqenis, Mets Masrik, Norakert in the Vardenis region (Mush dialect), and in the speech of the city of Vardenis (Diadin dialect). Such a formation of causative verbs is also found in the neighborhood of the village of Tsovazard in the Gavar region, which is inhabited by the descendants of Mush Armenians.

Thus, this isogloss is found in the dialectal units of the Gegharkunik province in two variants:

a) formation of causative verbs with the *ts'n* suffix: in the speeches of the Bayazet and Karabagh dialects, the Gandzak inter-dialect, variants of the Maku and Artsap subdialects, and the mixed-type Akunk speech;

b) formation of causative verbs with the suffix variants *uts'//ts'uts'* (*uts//tsuts*): in the speeches of the Mush and Diadin dialects.

58. ՊԱՏՃԱՌԱԿԱՆ ԲԱՅԵՐԻ
ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ
FORMATION OF CAUSATIVE VERBS



ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԶՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

59. ՊԱՏՃԱՌԱԿԱՆ ԲԱՅՅԵՐԻ ԵԶԱԿԻ ՀՐԱՄԱՅԱԿԱՆԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

- *ցըրա՛, ո՛ւ/ցո՛ւ, ցըրո՛ւ*

Նյութեր և մեկնաբանություններ

ա) *նըստըցըրա՛*

բ) *մըտո՛ւ* (մտցրո՛ւ), *նըստըցո՛ւ*

գ) *ուտըցըրո՛ւ*

Բարբառային հայերենի տարբեր դրսևորումներում պատճառական բայերը եզակի հրամայականում ունենում են տարբեր վերջավորություններ: Այսպես, *ցու, ու* մասնիկներով կազմություններ ունեն Մշո, Վանի, Դիադինի, Խոյ-Մարադայի բարբառները, *ցու* մասնիկով հրամայական ունեն Տիգրանակերտի, Սասունի, Կարնո բարբառները, *ցրու* մասնիկով՝ Արարատյան, Ղարաբաղի, Շամախիի բարբառները, *ցուր* մասնիկով՝ Ագուլիսի, Մեղրու, Կարճևանի, Արաբկիրի, Երզնկայի, Եդեսիայի, Եվդոկիայի, Պոլիսի բարբառները, *ցրա* մասնիկով՝ Բայազետի բարբառը, Աշտարակի խոսվածքը և այլն:

Գեղարքունիքի մարզում պատճառական բայերի եզակի հրամայականը *ցրա* մասնիկ ունի Սևանի (Մակուի, Արծալիի խոսվածքներ) և Գավառի (Բայազետի բարբառ) տարածաշրջանների բնակավայրերում, Վարդենիսի տարածաշրջանի Ակունք գյուղում (խառը տիպի խոսվածք): Լճաշեն (Սևանի տարածաշրջան, Մակուի խոսվածք), Ծաղկաշեն, Սարուխան, Լանջաղբյուր, Գեղարքունիք (Գավառի տարածաշրջան, Բայազետի բարբառ) գյուղերում, Վարդենիսի Ակունքում մասամբ հանդիպում են նաև *ցու* մասնիկով ձևեր:

Պատճառական բայերի՝ *ցու* կամ *ու* մասնիկներով եզակի հրամայական ձևավորում են Մարտունու տարածաշրջանի բոլոր և Վարդենիսի տարածաշրջանի Ախպրաձոր, Լճավան, Լուսակունք, Խաչաղբյուր, Ծովակ, Կարճաղբյուր, Մաքենիս, Մեծ Մասրիկ, Նորակերտ (Մշո բարբառ), Վարդենիս (Դիադինի բարբառ) բնակավայրերի խոսվածքները:

Ճամբարակի տարածաշրջանի բոլոր (Ղարաբաղի բարբառ, Գանձակի միջբարբառ), Վարդենիսի տարածաշրջանի՝ արցախցիներով բնակեցված բնակավայրերում պատճառական բայերի եզակի հրամայականն ունի *ցրու* մասնիկ:

Զուգաբանությունը, այսպիսով, Գեղարքունիքի մարզի բարբառային միավորներում դրսևորվում է երեք տարբերակով.

ա) պատճառական բայերի եզակի հրամայական՝ *ցրա* մասնիկով. Բայազետի բարբառի խոսվածքներ, Մակուի և Արծափի խոսվածքների տարբերակներ, Ակունքի խառը տիպի խոսվածք.

բ) պատճառական բայերի եզակի հրամայական՝ *ցու, ու* մասնիկներով. Մշո և Դիադինի բարբառների խոսվածքներ, մասամբ՝ Մակուի խոսվածքի և Բայազետի բարբառի որոշ տարբերակներ, Ակունքի խառը տիպի խոսվածք.

գ) պատճառական բայերի եզակի հրամայական՝ *ցրու* մասնիկով. Ղարաբաղի բարբառի, Գանձակի միջբարբառի խոսվածքներ:

GRAMMATICAL ISOGLOSSES

59. FORMATION OF THE SINGULAR IMPERATIVE OF CAUSATIVE VERBS

- ts'əral, ts'əru!, u! //ts'u!

Materials and commentary

- a) n'əstəts'əra! “make someone sit down”
- b) mətu! “make enter”, nəstəts'u! «make someone sit down”
- c) utəts'əru! “feed”

In different manifestations of dialectal Armenian, causative verbs have different endings in the singular imperative. Thus, the Mush, Van, Diadin, and Khoy-Maragha dialects have formations with the particles *ts'u* and *u*; the Tigranakert, Sasun, and Karin dialects have an imperative with the particle *ts'u*; the Araratian, Karabagh, and Shamakhi dialects have the particle *ts'ru*; the Agulis, Meghri, Karchevan, Arabkir, Erzinkan, Edessa, Evdokia, and Polis dialects have the particle *ts'ur*; and the Bayazet dialect, the Ashtarak speech, etc., have the particle *ts'ra*.

In the Gegharkunik province, the singular imperative of causative verbs has the particle *ts'ra* in the speeches of the settlements of the Sevan (Maku, Artsap subdialects) and Gavar (Bayazet dialect) regions, the village of Akunk in the Vardenis region (mixed speech). In the speeches of the villages of Lchashen (Sevan region, Maku subdialect), Tsaghkashen, Sarukhan, Lanjaghbyur, and Gegharkunik (Gavar region, Bayazet dialect), Akunk (Vardenis region, mixed speech) forms with the particle *ts'u* are also partially found.

The singular imperative of causative verbs with the particles *ts'u* or *u* is formed in the speeches of all settlements of the Martuni region and the settlements of Akhpradzor, Lchavan, Lusakunk, Khachaghbyur, Tsovak, Karchaghbyur, Maqenis, Mets Masrik, Norakert (Mush dialect), and Vardenis (Diadin dialect) in the Vardenis region.

In the speeches of all settlements of the Chambarak region (Karabagh dialect, Gandzak inter-dialect) and the settlements of the Vardenis region inhabited by Artsakh Armenians, the singular imperative of causative verbs has the particle *ts'ru*.

Thus, the isogloss appears in the dialectal units of the Gegharkunik province in three variants:

- a) the singular imperative of causative verbs with the particle *ts'ra* : in the speeches of the Bayazet dialect, and variants of the Maku and Artsap subdialects, mixed speech of Akunk village;


- b) the singular imperative of causative verbs with the particles *ts'u*, *u* : in the speeches of the Mush and Diadin dialects, partly, in some variants of the Maku speech and the Bayazet dialect, mixed speech of Akunk village;
- c) the singular imperative of causative verbs with the particle *ts'ru* : in the speeches of the Karabagh dialect and the Gandzak inter-dialect.

59. ՊԱՏՃԱՌԱԿԱՆ ԲԱՅԵՐԻ ԵԶԱԿԻ
ՀՐԱՄԱՅԱԿԱՆԻ ԿԱԶՄՈՒԹՅՈՒՆԸ

FORMATION OF THE SINGULAR
IMPERATIVE OF CAUSATIVE VERBS

Պատճառական բայերի եզակի հրամայականի
վերջավորությունը
The ending of the singular imperative of causative verbs:

- գրա ts'ra
- ցու//ու ts'u//u
- ցրու ts'ru



ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԶՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

60. ԲԱՅԱԿԱՆ 2, Ե ԱԾԱՆՑՆԵՐԻ ԱՌԿԱՅՈՒԹՅՈՒՆ

Նյութեր և մեկնաբանություններ

- ա) թըռչիլ, հաքնիլ
- բ) թըռնել, փախնել
- գ) մեռիմ, կեղի

Ինչպես գրական հայերենում, բարբառներում ևս բայական չ, ն ածանցները քիչ բայերում են հանդիպում: Բարբառային հայերենում այս ածանցներն ունեն արտահայտության նաև այլ սահմանափակումներ: Այսպես, շատ բարբառներում չ-ի փոխարեն առկա է ն (երբեմն էլ ածանցը ուղղակի բացակայում է), իսկ ն-ն պահպանվում է՝ *թըռնել, ուռել, մըտնել* (Մուշ, Վան, Խոյ, Եդեսիա, Եվդոկիա, Սասուն, Կարին, Արարատ, Շապին-Գարահիսար, Շատախ, Տիգրանակերտ): Սեբաստիայի, Քեսաբի բարբառներում բացակայում է չ-ն, բայց ն-ն գործածվում է (*թըռիլ, ուռիլ, առնել, մըդնել*): Ագուլիսի և Կարճևանի բարբառներում բացակայում է ն-ն (*դէռիլ, իլիլ, մէռիլ, մըտիլ*), բայց առաջինում չ-ն չկա կամ փոխարինված է ն-ով (*թըռիլ, փըխօնիլ*), իսկ երկրորդում չ-ն կա կամ չկա (*թըռիլ, օռչիլ*): Որոշ բարբառային միավորներում էլ (Ղարաբաղի, Արաբկիրի, Նիկոմեդիայի, Ռոդոսթոյի բարբառներ, Գանձակի միջբարբառ, Աշտարակի խոսվածք) և՛ չ, և՛ ն ածանցները դրսևորվում են:

Գեղարքունիքի մարզում չ, ն բայածանցներ առկա են Ճամբարակի տարածաշրջանի բոլոր բնակավայրերի խոսվածքներում (Ղարաբաղի բարբառ, Գանձակի միջբարբառ), Վարդենիսի տարածաշրջանի՝ արցախցիներով բնակեցված բնակավայրերի խոսվածքներում:

Մարզի մյուս բնակավայրերի խոսվածքներում (Սևանի, Գավառի, Մարտունու տարածաշրջաններ, Վարդենիսի տարածաշրջանի մի հատված) չ-ի փոխարեն առկա է ն:

Ներկայի հիմքից կազմվող ձևերում ն ածանց չկա Մարտունու տարածաշրջանի Գեղհովիտ, Վաղաշեն, Զուլաքար, Ծովինար, Արծվանիստ, Ծովակ (Մշո բարբառ), Գավառի տարածաշրջանի Լանջաղբյուր (Բայազետի բարբառ) գյուղերի խոսվածքներում, մասամբ նաև՝ Մարտունու տարածաշրջանի Աստղաձոր, Մարտունի, Վարդենիսի տարածաշրջանի Կարճաղբյուր, Լճավան, Մաքենիս, Ախպրաձոր, Լուսակունք (Մշո բարբառ), Գավառի տարածաշրջանի Սարուխան (Բայազետի բարբառ) բնակավայրերի խոսվածքներում:

Զուգաբանությունը, այսպիսով, Գեղարքունիքի մարզի բարբառային միավորներում դրսևորվում է երեք տարբերակով.

ա) չ'ն ածանցների առկայություն. Ղարաբաղի բարբառի, Գանձակի միջբարբառի խոսվածքներ.

բ) չ -ի փոխարեն ն ածանցի գործածություն. Մշո, Բայազետի բարբառների խոսվածքներ, Մակուի, Արծափի խոսվածքների տարբերակներ.

գ) համապատասխան բայերի՝ ներկայի հիմքից կազմվող ձևերում ն ածանցի բացակայություն (ամբողջովին կամ մասամբ). Մշո, Բայազետի բարբառների առանձին խոսվածքներ, Մակուի խոսվածքի որոշ տարբերակներ:

GRAMMATICAL ISOGLOSSES

60. PRESENCE OF THE VERBAL SUFFIXES *CH'* AND *N*

Materials and Commentary:

- a) **t'ər^hch'il** (to fly), **hagnil** (to put on clothes)
- b) **t'ər^hnel** (to fly), **p'akh^hnel** (to run away)
- c) **meṛim** (I die), **keghi** (it becomes)

Just as in standard Armenian, the verbal suffixes *ch'* and *n* are found in a small number of verbs in dialects. In dialectal Armenian, these suffixes also have other usage limitations. For instance, in many dialects, instead of *ch'*, there is *n* or nothing, while suffix *n* is preserved: *t'ər^hnel* < *t'ər^hch'el* (to fly), *ur^hel* < *ur^hch'el* (to swell), *mətnel* (to enter) (in the dialects of Mush, Van, Khoy, Edessa, Evdokia, Sasun, Karin, Ararat, Shabin-Karahisar, Shatakh, Tigranakert). In the dialects of Sebastia and Kessab, *ch'* is absent, but *n* is present (*t'ər^hil*, *ur^hil*, *ar^hnel*, *mətnel*). In the dialects of Agulis and Karchevan, *n* is absent (*deṛil* < *dar^hnal* “to become”, *ilil* < *linil* “to be”, *m'ēr^hil* < *meṛ^hnil* “to die”, *mətil* < *mətnil* “to enter”), but in the former, *ch'* is either absent or replaced by *n* (*t'ər^hil* < *t'ər^hch'il* “to fly”, *p'əkhonil* < *p'akh^hch'el* “to run away”), while in the latter, *ch'* may or may not be present (*t'ər^hil* “to fly”, *or^hch'il* “to swell”). In some dialectal units (Karabagh, Arabkir, Nicomedia, Rodosto dialects, Gandzak inter-dialect, Ashtarak speech), both the *ch'* and *n* suffixes occur.

In the Gegharkunik province, the verbal suffixes *ch'* and *n* are present in the speeches of all settlements of the Chambarak region (Karabagh dialect, Gandzak inter-dialect) and in the settlements of the Vardenis region inhabited by Artsakh Armenians.

In the speeches of the other settlements in the province (Sevan, Gavar, Martuni regions, and a part of the Vardenis region), *n* is present instead of *ch'*.


The suffix *n* is absent in forms derived from the present stem of verbs in the speeches of the villages of Geghgovit, Vaghashen, Zolaqar, Tsovinar, Artsvanist, Tsovak (Mush dialect) in the Martuni region, Lanjaghbyur (Bayazet dialect) in the Gavar region, and partially in the speeches of Astghadzor, Martuni in the Martuni region, and Karchaghbyur, Lchavan, Maqenis, Akhpradzor, Lusakunk (Mush dialect) in the Vardenis region, as well as Sarukhan (Bayazet dialect) in the Gavar region.

Thus, the isogloss exists in the dialectal units of the Gegharkunik province in three variants:

- a) presence of the suffixes *ch'* and *n*: in the speeches of the Karabagh dialect and the Gandzak inter-dialect;
- b) use of the suffix *n* instead of *ch'*: in the speeches of the Mush and Bayazet dialects, and variants of the Maku and Artsap subdialects;

c) absence (fully or partially) of the suffix *n* in forms derived from the present stem of the corresponding verbs: in some speeches of the Mush and Bayazet dialects, and some variants of the Maku subdialect.

PRESENCE OF THE VERBAL SUFFIXES *CH'*
AND *N*



ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԶՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

61. ԲԱՅԻ ԴԻՄԱՅԻՆ ՎԵՐՋԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՆՈՒՅՆՈՒԹՅՈՒՆ

Էնկ Էնկ,
Էր Էկ (< էի, էիր, էր, էինք, էիք, էին)
Էր Էն

Նյութեր և մեկնաբանություններ

Հայերենի բարբառային մի շարք միավորներում այս կամ այն ժամանակաձևի հարացույցում առկա է տարբեր դիմային վերջավորությունների նույնություն: Այսպես, Սասնո, Մշո, Շատախի բարբառների որոշ խոսվածքներում նույնական են ըղձական անցյալի եզակի 2-րդ և 3-րդ դեմքերի ձևերը, ինչպես նաև եզակի և հոգնակի առաջին դեմքերի ձևերը (խօսէնք, խօսէր, խօսէր, խօսէնք, խօսէք, խօսէն), Մեղրու, Կարճնանի բարբառներում նույնական են էական բայի ներկայի հոգնակի առաջին և երկրորդ դեմքերը /ըք, ըք, ըն/ և այլն:

Գեղարքունիքի մարզում օժանդակ բայի անցյալի եզակի 2-րդ և 3-րդ դեմքերի ձևերը, ինչպես նաև եզակի և հոգնակի առաջին դեմքերի ձևերը նույնական են Մարտունու տարածաշրջանի Երանոս, Վարդաձոր, Ձորագյուղ, Ծակքար, Լիճք, Ծովասար, Վերին Գետաշեն, Ներքին Գետաշեն, Մաղինա, Ծովինար բնակավայրերի խոսվածքներում (Մշո բարբառ), իսկ Մարտունի և Վաղաշեն բնակավայրերում նույնական են (հոգնակի ձևով) միայն եզակի և հոգնակի առաջին դեմքերի ձևերը (*ինք, իր, էր, ինք, իք, ին*):

Զուգաբանությունը, այսպիսով, Գեղարքունիքի մարզում դրսևորվում է երկու տարբերակով.

ա) օժանդակ բայի անցյալի եզակի 2-րդ և 3-րդ դեմքերի ձևերի, նաև եզակի և հոգնակի առաջին դեմքերի ձևերի նույնություն. Մշո բարբառի մի շարք խոսվածքներ.

բ) օժանդակ բայի անցյալի եզակի և հոգնակի առաջին դեմքերի ձևերի նույնություն. Մշո բարբառի առանձին խոսվածքներ:

GRAMMATICAL ISOGLOSSES

61. IDENTITY OF VERB PERSONAL ENDINGS

enk	enk	
er	ek	(< ei, eir, er, eink, eik, ein)
er	en	“I was, you were, he/she was, we were, you were, they were”

Materials and commentary

In a number of dialectal units of Armenian, there is an identity of different personal endings in the paradigm of one tense or another. For instance, in some speeches of the Sasun, Mush, and Shatakh dialects, the forms of the second and third-person singular of the optative past are identical, as are the forms of the first-person singular and plural (*khosēnk*, *khosēr*, *khosēr*, *khosēnk*, *khosēk*, *khosēn* “we would talk, you would talk ...”); in the Meghri and Karchvan dialects, the first and second-person plural of the present tense of the auxiliary verb are identical (*əḵ*, *əḵ*, *ən* “we are, you are, they are”), and so on.

In the Gegharkunik province, the forms of the second and third-person singular of the auxiliary verb's past tense, as well as the forms of the first-person singular and plural, are identical in the speeches of the settlements of Yeranos, Vardadzor, Dzoragyugh, Tsakqar, Lichk, Tsovasar, Verin Getashen, Nerkin Getashen, Madina, and Tsovin'ar in the Martuni region (Mush dialect). In the speeches of the settlements of Martuni and Vaghashen, only the forms of the first-person singular and plural are identical (with a plural form) (*ink*, *ir*, *er*, *ink*, *ik*, *in* “I was, you were, he/she was, we were, you were, they were”).

Thus, the isogloss appears in the Gegharkunik province with two variants:

- a) identity of the forms of the second and third-person singular of the auxiliary verb's past tense, as well as the forms of the first-person singular and plural: a number of speeches of the Mush dialect;
- b) identity of the forms of the first-person singular and plural of the auxiliary verb's past tense: some speeches of the Mush dialect.

61. ԲԱՅԻ ԴԻՄԱՅԻՆ
ՎԵՐՋԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՆՈՒՅՆՈՒԹՅՈՒՆ

IDENTITY OF VERB PERSONAL ENDINGS



ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԶՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

62. ՍԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԻ ՆԵՐԿԱ ԺԱՄԱՆԱԿԻ ԻՄԱՍՏԻ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆԸ

Նյութեր և մեկնաբանություններ

ա) բ' ացում ա, էթում են // սիրըմ էմ, մընըմ ա
բ) կըբ' անա, կէտան

Բարբառային հայերենում սահմանական եղանակի ներկա (և անցյալ անկատար) ժամանակի իմաստն արտահայտվում է երկու եղանակով՝ ա) դերբայակազմ կառույցներով, բ) մասնիկավոր կառույցներով:

Առաջին դեպքում ժամանակաձևը կազմվում է օժանդակ բայի ներկայի (անցյալ անկատարի դեպքում՝ անցյալի) ձևերով և *ոււմ, լիս* մասնիկների հնչյունական տարբերակներով կազմված դերբայներով: *Ոււմ* մասնիկի հնչյունական տարբերակներով (ոււմ, ըմ, ամ, իմ) ձևավորված անկատար դերբայով են ներկան (և անցյալ անկատարը) կազմում Ում ճյուղի բարբառները (Արարատյան, Ղարաբաղի, Թբիլիսիի, Աստրախանի, Ագուլիսի, Զուղայի, Շամախիի, Բայազետի, Գանձակի), *լիս* մասնիկի հնչյունական տարբերակներով (*լիս, յիս, յս, յ, ս, լ*) ձևավորված անկատար դերբայով են ներկան (և անցյալ անկատարը) կազմում Լիս ճյուղի բարբառային միավորները (Արդվինի, Շաղախի, Կարճանի, Մեղրիի, Հադրութի, Ուրմիայի, Խոյի, Մարաղայի):

Երկրորդ դեպքում ներկա (և անցյալ անկատար) ժամանակաձևը կազմվում է գրաբարակերպ դիմավոր բայաձևով, որին ավելանում են *կը, կա, հա* մասնիկների հնչյունական տարբերակներ: Հատկապես շատ են *կը* մասնիկի տարբերակները (*կը, գը, զի, զօ, կու* և այլն), որոնցով են կազմում ներկան (և անցյալ անկատարը) Կը ճյուղի 24 բարբառներ (Կարնո, Մշո, Տիգրանակերտի, Եվդոկիայի, Շապին-Գարահիսարի, Մալաթիայի, Պոլսի, Վանի, Նոր Նախիջևանի, Համշենի և այլն): *Կա* մասնիկի տարբերակներով (*կա, գւ*) են ներկան կազմում Կա ճյուղի Ամասիայի, Զեյթունի, Բեյլանի, Սվեդիայի և Մարաշի բարբառային միավորները: *Հա* մասնիկով (*հա, հայ, ա*) են ներկա ձևավորում Հա ճյուղի Քեսաբի և Արաբկիրի բարբառային միավորները:

Եթե ներկայի կազմության դերբայակազմ տարբերակը բնորոշ է արևելյան խմբակցության բարբառներին, ապա մասնիկավոր կազմությունը հատուկ է արևմտյան խմբակցության բարբառներին:

Բարբառային որոշ միավորներ էլ զուգորդում են ներկայի (և անցյալ անկատարի) կազմության երկու եղանակները: Օրինակ, Թբիլիսիի և Արդվինի բարբառներում գործածվում են և՛ անկատար դերբայով (առաջինում՝ *ոււմ*, երկրորդում՝ *լիս*), և՛ մասնիկավոր (*կու*) ներկայի ձևեր:

Գեղարքունիքի մարզում սահմանական եղանակի ներկա և անցյալ անկատար ժամանակաձևերը օժանդակ բայով և անկատար դերբայով (*ոււմ, ըմ* ևլն) են կազմվում

Սևանի (Մակուի, Արծափի խոսվածքներ), Գավառի (Բայազետի բարբառ), Ճամբարակի (Ղարաբաղի բարբառ, Գանձակի միջբարբառ) բոլոր բնակավայրերի, Վարդենիսի տարածաշրջանի Ակունք (խառը տիպի խոսվածք) և արցախցիներով բնակեցված բնակավայրերի խոսվածքներում:

Այդ ժամանակաձևերը *չ* մասնիկով և պարզ դիմավոր բայաձևով են կազմվում Մարտունու տարածաշրջանի բոլոր բնակավայրերի խոսվածքներում (Մշո բարբառ), Վարդենիսի տարածաշրջանի Ախպրաձոր, Լճավան, Լուսակունք, Խաչաղբյուր, Ծովակ, Կարճաղբյուր, Մաքենիս, Մեծ Մասրիկ, Նորակերտ գյուղերի (Մշո բարբառ), Վարդենիս քաղաքի (Դիաղինի բարբառ) խոսվածքներում:

Զուգաբանությունը, այսպիսով, Գեղարքունիքի մարզի բարբառային միավորներում դրսևորվում է երկու տարբերակով.

ա) ներկայի և անցյալ անկատարի կազմություն *ու* վերջավորությամբ դերբայով. Բայազետի, Ղարաբաղի բարբառների, Գանձակի միջբարբառի խոսվածքներ, Մակուի և Արծափի խոսվածքների տարբերակներ, Ակունքի խառը տիպի խոսվածք.

բ) ներկայի և անցյալ անկատարի կազմություն *չ* մասնիկով և պարզ դիմավոր բայաձևով. Մշո և Դիաղինի բարբառների խոսվածքներ:

GRAMMATICAL ISOGLOSSES

62. EXPRESSION OF THE PRESENT TENSE OF THE INDICATIVE MOOD

Materials and Commentary:

b'ats'um a, et'um en // sirəm em, m'ənəm a / he opens, they are going // I love, he stays/
kəb'ana, ketan /he opens, they are going/

In dialectal Armenian, the meaning of the present (and imperfect) tense of the indicative mood is expressed in two ways: (a) with participle-based constructions, and (b) with particle-based constructions.

In the first case, the tense form is composed of the present forms of the auxiliary verb (or past forms in the case of the imperfect) and participles formed with the phonetic variants of the suffixes *um* and *lis*. The dialects of the *Um* branch (Ararat, Karabagh, Tbilisi, Astrakhan, Agulis, Julfa, Shamakhi, Bayazet, Gandzak) form the present (and imperfect) with an imperfect participle formed with phonetic variants of the *um* suffix (*um*, *əm*, *am*, *im*). The dialectal units of the *Lis* branch (Ardvin, Shaghakh, Karchvan, Meghri, Hadrut, Urmia, Khoy, Maragha) form the present (and imperfect) with an imperfect participle formed with phonetic variants of the *lis* suffix (*lis*, *yis*, *ys*, *y*, *s*, *l*).

In the second case, the present (and imperfect) tense form is composed of a Classical Armenian-style finite verb form, to which are added the phonetic variants of the particles *kə*, *ka*, and *ha*. The variants of the *kə* particle are especially numerous (*kə*, *gə*, *gi*, *go*, *ku*, etc.), with which the present (and imperfect) is formed in the 24 dialects of the *Kə* branch (Karin, Mush, Tigranakert, Evdokia, Shabin-Karahisar, Malatya, Polis, Van, Nor Nakhijevan, Hamshen, etc.). The present is formed with variants of the *ka* particle (*ka*, *gä*) in the dialectal units of the *Ka* branch: Amasya, Zeytun, Beylan, Svedia, and Marash. The dialectal units of the *Ha* branch: Kessab and Arabkir, form the present with the *ha* particle (*ha*, *hay*, *a*).

If the participle-based method of present tense formation is characteristic of the dialects of the Eastern group, the particle-based formation is specific to the dialects of the Western group. Some dialectal units also combine both methods of present (and imperfect) tense formation. For example, in the Tbilisi and Ardvin dialects, the meaning of the present tense can be expressed both with a participle and an auxiliary verb, and with a verb form with a particle.

In the Gegharkunik province, the present and imperfect tense forms of the indicative mood are formed with the auxiliary verb and an imperfect participle (*um*, *əm*, etc.) in the speeches of all settlements of the Sevan (Maku, Artsap subdialects), Gavar (Bayazet dialect), and Chambarak (Karabagh dialect, Gandzak inter-dialect) regions, as well as in the speeches of Akunk (mixed-type speech) and the settlements inhabited by Artsakh Armenians in the Vardenis region.

These tense forms are formed with the particle *kə* and a simple finite verb form in the speeches of all settlements of the Martuni region (Mush dialect), the villages of Akhpradzor, Lchavan, Lusakunk, Khachaghbyur, Tsovak, Karchaghbyur, Maqenis, Mets Masrik, Norakert in the Vardenis region (Mush dialect), and the city of Vardenis (Diadin dialect).

Thus, this isogloss appears in the dialectal units of the Gegharkunik province in two variants:

- a) formation of the present and imperfect with a participle ending in *um*: in the speeches of the Bayazet and Karabagh dialects, the Gandzak inter-dialect, variants of the Maku and Artsap subdialects, and the mixed-type Akunk speech;
- b) formation of the present and imperfect with the particle *kə* and a simple finite verb form: in the speeches of the Mush and Diadin dialects.

62. ՄԱՀՄԱՆԱԿԱՆ ԵՂԱՆԱԿԻ ՆԵՐԿԱ
ԺԱՄԱՆԱԿԻ ԻՄԱՍՏԻ
ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆԸ

EXPRESSION OF THE PRESENT TENSE OF
THE INDICATIVE MOOD

- Անկատար դերբայով և օժանդակ բայով
- Կր մասնիկով և բայի պարզ դիմավոր ձևով
- With imperfect participle and auxiliary verb
- With the particle *եա* and the simple personal form of the verb



ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԶՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

63. ԲԱՅԻ ՍԵՌԻ ԱՐՏԱՀԱՅՏՈՒՄ ՎԵՐՋԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ

Նյութեր և մեկնաբանություններ

ներգ. բ՛ըռնի , չեզ. նըստա , կրավ. կըրվա	(բռնեցի, նստեցի, կրվեցի)
ներգ. բ՛ըռնա՛ , չեզ. նըստի՛ , կրավ. կըրվի՛	(բռնի՛ր, նստի՛ր, կրվի՛ր)
ներգ. բ՛ըռնա , չեզ. նըստի , կրավ. կըրվի	(բռնի, նստի, կրվի)

Հայերենի բարբառների արևմտյան խմբակցությանը բնորոշ է *ել* և *իլ* լծորդությունների պարզ բայերի խոնարհման ձևերի տարբերակվածությունը, այլ ձևակերպմամբ՝ հինհայերենյան ներգործածն և կրավորածն տիպի խոնարհումների առկայությունը: Արևելյան բարբառներից այդ իրողությունը արձանագրվել է Խոյ-Մարաղայի և Բայազետի բարբառներում (որոնցում, սակայն, *իլ* լծորդություն չկա): Իրողությունը բարբառներում կարող է ունենալ տարբեր ընդգրկում: Օրինակ, Արաբկիրի, Եղեսիայի, Եվդոկիայի, Սեֆաստիայի, Կարնո, Պոլսի բարբառներում խոնարհումները ըստ սեռերի կամ լծորդությունների տարբերվում են և՛ ներկայի հիմքից կազմվող պարզ ժամանակաձևերում, և՛ անցյալ կատարյալում (սիրեմ – սիրվիմ, սիրեցի – սիրվեցա): Վանի և Խոյ-Մարաղայի բարբառներում բայասեռը համապատասխան վերջավորություններով տարբերակվում է միայն անցյալ կատարյալում (կիրիր՝ գրեցիր - քընար՝ քնեցիր): Բայազետի, Մշո և Դիադինի բարբառներում ներգործածն և կրավորածն խոնարհումներ տարբերակվում են անցյալ կատարյալում (բ՛ըռնի, նըստա, կըրվա), եզակի հրամայականում (բ՛ըռնա՛, նըստի՛, կըրվի՛), ըղձական, ենթադրական, հարկադրական ապառնիների եզակի երրորդ դեմքում (բ՛ըռնա, նըստի, կըրվի):

Գեղարքունիքի մարզում ներգործածն և կրավորածն վերջավորություններով բայի սեռի տարբերակվածություն արձանագրվել է Սևանի (Մակուի և Արծափի խոսվածքներ), Գավառի (Բայազետի բարբառ), Մարտունու (Մշո բարբառ) տարածաշրջանների բոլոր բնակավայրերի, Վարդենիսի տարածաշրջանի Ախպրաձոր, Լճավան, Լուսակունք, Խաչաղբյուր, Ծովակ, Կարճաղբյուր, Մաքենիս, Մեծ Մասրիկ, Նորակերտ գյուղերի (Մշո բարբառ), Վարդենիս քաղաքի խոսվածքներում (Դիադինի բարբառ), Ակունքի խառը տիպի խոսվածքում:

Հատկանիշը, այսպիսով, դրսևորվում է Գեղարքունիքի մարզի՝ Մշո, Բայազետի, Դիադինի բարբառների խոսվածքներում, Արծափի, Մակուի խոսվածքների տարբերակներում, Ակունքի խառը տիպի խոսվածքում:

GRAMMATICAL ISOGLOSSES

63. EXPRESSION OF VERB VOICE WITH ENDINGS

Materials and commentary:

AV: b'əɾni “I caught”, **PV:** nəsta “I sat down”, **MV:** kərva “I was defeated”

AV: b'əɾna! “catch”, **PV:** nəsti! “sit down”, **MV:** kərvi! “be defeated”

AV: b'əɾna “may he catch”, **PV:** nəsti “may he sit down”, **MV:** kərvi “may he be defeated”

(AV - **Active Voice**, PV - **Passive Voice**, MV- **Middle Voice**)

The Western group of Armenian dialects is characterized by the differentiation of conjugation forms for simple verbs of the *e/* and *i/* conjugations. In other words, there are active and passive/middle voice conjugations of the Old Armenian style. Among the Eastern dialects, this phenomenon has been recorded in the Khoy-Maragha and Bayazet dialects (in which, however, the *i/* conjugation is absent). This phenomenon may have different scopes in different dialects. For example, in the dialects of Arabkir, Edessa, Evdokia, Sebastia, Karin, and Polis, conjugations differ by voice in both simple tenses formed from the present stem and in the past perfect tense (sirem - sirvim, sirets'i – sirvets'a). In the Van and Khoy-Maragha dialects, verb voice is differentiated by corresponding endings only in the past perfect tense (k'irir “you wrote”, qənar “you slept”). In the Bayazet, Mush, and Diadin dialects, active and passive/middle voice conjugations are differentiated in the past perfect (b'əɾni, nəsta, kərva), the singular imperative (b'əɾna!, nəsti!, kərvi!), and the third-person singular of the optative, conditional, and compulsive futures (b'əɾna, nəsti, kərvi).

In the Gegharkunik province, the differentiation of verb voice with active and passive/middle voice endings has been recorded in the speeches of all settlements of the Sevan (Maku and Artsap subdialects), Gavar (Bayazet dialect), and Martuni (Mush dialect) regions, as well as in the speeches of the villages of Akhpradzor, Lchavan, Lusakunk, Khachaghbyur, Tsovak, Karchaghbyur, Maqenis, Mets Masrik, Norakert in the Vardenis region (Mush dialect), the city of Vardenis (Diadin dialect), and the mixed-type Akunk speech.

Thus, this feature exists in the Gegharkunik province in the speeches of the Mush, Bayazet, and Diadin dialects, in variants of the Artsap and Maku subdialects, and in the mixed-type Akunk speech.



ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԶՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

64. ՈՒ ԽՈՆԱՐՀԻՉԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄ ՊԱՏՃԱՌԱԿԱՆ ԲԱՅԵՐԻ ՈՐՈՇ ՁԵՎԵՐՈՒՄ

Նյութեր և մեկնաբանություններ

կըխըմցում, կըխըմցուս, կըխըմցու, կըխըմցունք, կըխըմցուք, կըխըմցուն

Պատճառական բայերի ներկայի ձևերում Ու խոնարհիչի դրսևորումը սակավ հանդիպող երևույթ է բարբառային հայերենում: Իրողությունը դիտվել է Նոր Նախիջևանի, Մշո, Սասունի բարբառների խոսվածքներում:

Գեղարքունիքի մարզում պատճառական բայերը ներկա ժամանակում Ու խոնարհիչ են ունենում Մարտունու տարածաշրջանի բոլոր բնակավայրերի խոսվածքներում (Մշո բարբառ), Վարդենիսի տարածաշրջանի Ախպրաձոր, Լճավան, Լուսակունք, Խաչաղբյուր, Ծովակ, Կարճաղբյուր, Մաքենիս, Մեծ Մասրիկ, Նորակերտ գյուղերի (Մշո բարբառ), Վարդենիս քաղաքի (Դիադինի բարբառ) խոսվածքներում: Ու խոնարհիչով պատճառական բայերի ըղձական, ենթադրական, հարկադրական ապառնիների ձևեր արձանագրվել են Գավառի տարածաշրջանի Սարուխան, Լանջաղբյուր, Գեղարքունիք գյուղերի խոսվածքներում:

Հատկանիշը, այսպիսով, Գեղարքունիքի մարզում դրսևորվում է Մշո և Դիադինի բարբառների խոսվածքներում, մասամբ նաև՝ Բայազետի բարբառի որոշ խոսվածքներում:

GRAMMATICAL ISOGLOSSES

64. MANIFESTATION OF THE *U* CONJUGATION IN SOME CAUSATIVE VERB FORMS

Materials and commentary

kəkhəmts'um “I'll make smb drink”, **kəkhəmts'us** “you'll make smb drink”, **kəkhəmts'u** “he'll make smb drink”, **kəkhəmts'unk'** “we'll make smb drink”, **kəkhəmts'uk'** “you'll make smb drink”, **kəkhəmts'un** “they'll make smb drink”

The manifestation of the *U* conjugation in the present tense forms of causative verbs is a rare phenomenon in dialectal Armenian. This phenomenon has been observed in the dialects of Nor Nakhijevan, Mush, and Sasun.

In the Gegharkunik province, causative verbs have the *U* conjugation in the present tense in the speeches of all settlements of the Martuni region (Mush dialect), the villages of Akhpradzor, Lchavan, Lusakunk, Khachaghbyur, Tsovak, Karchaghbyur, Maqenis, Mets Masrik, Norakert in the Vardenis region (Mush dialect), and the city of Vardenis (Diadin dialect). The future tense forms of the optative, conditional, and compulsive moods of causative verbs with the *U* conjugation have been recorded in the speeches of the villages of Sarukhan, Lanjaghbyur, and Gegharkunik in the Gavar region.

Thus, this feature exists in the Gegharkunik province in the speeches of the Mush and Diadin dialects, partly also in some speeches of the Bayazet dialect.

64. ՈՒ ԽՈՆԱՐԿՅԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄ
ՊԱՏՃԱՌԱԿԱՆ ԲԱՅԵՐԻ ՈՐՈՇ
ՁԵՎԵՐՈՒՄ

MANIFESTATION OF THE *U* CONJUGATION
IN SOME CAUSATIVE VERB FORMS



ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԶՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

65. ԳԱԼ, ԼԱԼ, ՏԱԼ ԲԱՅԵՐԻ՝ ՆԱԽԱՀԱՎԵԼՎԱԾՈՎ ՁԵՎԵՐ

Նյութեր և մեկնաբանություններ

հ'իկալ, հ'իկօղ

իգ'ամ//իկամ, հ'իկա, հ'իկանկ, հ'իկան, հ'իկեր, պըղի իգ'ա

Հին հայերենի՝ անցյալի միավանկ հիմք ունեցող բայերի կատարյալի եզակի երրորդ դեմքի նախահավելվածավոր կազմությունների արձագանքներն արդի բարբառային հայերենում դրսևորվում են *գալ*, *լալ*, *տալ* և մի շարք այլ բայերի հարացույցներում ինչպես անցյալ կատարյալի (Վան՝ *իպսնց*, *իտիր*, *իլսնց*, Լոռի՝ *էքեր*, *էրետ*), այնպես էլ այլ ձևերում (Սասուն, Տավորիկ-Մոտկան՝ *իդալ*, *իկալ*, *իլալ*, Ջեյթուն՝ *իկօղ*, Տիգրանակերտ՝ *իլսնլ*, *իքսնլ*, *իդսնլ* և այլն):

Գեղարքունիքի մարզում *գալ* բայի տարբեր ձևերում *ի* նախահավելվածով կազմություններ են արձանագրվել Մարտունու տարածաշրջանի Ձորագյուղ, Ծակքար, Լիճք, Վերին Գետաշեն, Մաղինա գյուղերի խոսվածքներում (Մշո բարբառ):

Գեղարքունիքի մարզում հատկանիշը, որ արտահայտվում է միայն *գալ* բայի պարագայում, դրսևորվում է Մշո բարբառի սակավաթիվ խոսվածքներում:

GRAMMATICAL ISOGLOSSES

65. FORMS OF THE VERBS *GAL* “TO COME”, *LAL* “TO CRY”, *TAL* “TO GIVE” WITH A PREFIX

Materials and commentary:

h'ikal “to come”, **h'ikogh** “coming”

ig'am // **ikam** “I will come”, **h'ika** “he will come”, **h'iker** “he came”, **p'əti ig'a** “will come”

The echoes of the prefixed formations in the third-person singular of the perfect tense of Old Armenian monosyllabic verbs are found in modern dialectal Armenian in the paradigms of the verbs *gal* “to come”, *lal* “to cry”, *tal* “to give”, and several other verbs, both in the past perfect (*ipāts* “he opened”, *itir* “he put”, *ilāts* “he cried” (Van), *ēber* “he brought”, *ēret* “he gave” (Lori)), and in other forms [*idal* “to give”, *ikal* “to come” *ilal* “to cry” (Sasun, Talvorik-Motkan), *ikögh* “coming” (Zeytun), *ilāl*, *iqāl*, *idāl* (Tigranakert), and so on].

In the Gegharkunik province, prefixed formations with *i* have been recorded in various forms of the verb *gal* “to come” in the speeches of the villages of Dzoragyugh, Tsakqar, Lichk, Verin Getashen, and Madina in the Martuni region (Mush dialect).

Thus, this feature exists in the Gegharkunik province only in the case of the verb *gal* “to come”, and it is found in a small number of speeches of the Mush dialect.

65. ԳԱԼ, ԼԱԼ, ՏԱԼ ԲԱՅԵՐԻ՝
ՆԱԽԱՀԱՎԵԼՎԱԾՈՎ ՁԵՎԵՐ
FORMS OF THE VERBS GAL "TO COME", LAL "TO CRY",
TAL "TO GIVE" WITH A PREFIX



**ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԸ ԸՍՏ
ԶՈՒԳԱԲԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԻ**

**SETTLEMENTS OF GEGHARKUNIK REGION ACCORDING TO THE
EXPRESSIONS OF ISOGLOSSES**

Աղյուսակ 2 / Table 2

	Անվանումը	Name	Առկա հատկանիշները ըստ գուգաբանությունների հերթական համարների
Գավառի տարածաշրջան Gavar region			
1.	Գավառ քաղաք (նաև Արծվաքար և Հացառատ գյուղեր)	Gavar city (also Artsvakar and Hatsarat villages)	1.2, 2, 4.1, 5.1, 7.1+7.2, 9.1, 10, 14.1, 15.1, 16/, Հ17.1/, 18, 19, 20.1, 26.1, 27, 31.2, ԱՀ33, 34, 35.4, 40, 41.1, Ա43.3, Գ43.1/+43.3/, Հ43.1, 46.2, 47.1, 48, 49, 50.1, 51.1, 52.3, 53, 56.2, 57.1, 58.1, 59.1, 60.2, 62.1, 63
2.	Բերդկունք	Berdkunk	1.2, 2, 4.1, 5.1, 7.1+7.2, 9.1, 10, 14.1, 15.1, 16/, 17, 18, 19, 20.1, 26.1, 31.2, 33, 34, 35.4, 39, 40, 41.1, 43.3, 46.2, 47.1, 48, 49, 50.1, 51.1, 52.3, 53, 56.2, 57.1, 58.1, 59.1, 60.2, 62.1, 63
3.	Գանձակ	Gandzak	1.2, 2, 4.1, 5.1, 7.1+7.2, 9.1, 10, 14.1, 15.1, 16/, 17/, 18, 19, 20.1+20.3/, 26.1, 27, 31.2, 33, 34, 35.4, 40, 41.1, 43.1, 46.2, 47.1, 48, 49, 50.1, 51.1, 52.3, 53, 56.2, 57.1, 58.1, 59.1, 60.2, 62.1, 63
4.	Գեղարքունիք	Gegharkunik	1.2, 2, 4.1, 5.1, 7.1+7.2, 9.1, 10, 14.1, 15.1, 16/, 18, 19, 20.1+20.3/, 26.1, 31.2, 33, 34, 35.4, 40, 41.1, 43.1, 46.2, 47.1, 48, 49, 50.1, 51.1, 52.3, 53, 55.3, 56.2, 57.1, 58.1, 59.1+59.2/, 60.2, 62.1, 63, 64/
5.	Լանջաղբյուր	Lanjaghbyur	1.2, 2, 4.1, 5.1, 7.1+7.2, 9.1, 10, 14.1, 15.1, 16/, 18, 19, 20.1, 26.1, 31.2, 33, 34, 35.4, 40, 41.2, 43.3, 46.2, 47.1, 48, 49, 50.1, 51.1, 52.3, 53, 55.3, 56.2, 57.1, 58.1, 59.1+59.2/, 60.2+60.3, 62.1, 63, 64/
6.	Լճափ	Lchap	1.2, 2, 4.1, 5.1, 7.1+7.2, 9.1, 10, 14.1, 15.1, 16/, 18, 19, 20.1, 26.1, 31.2, 33, 34, 35.4, 40, 43.1, 46.2, 47.1, 48, 49, 50.1, 51.1, 52.3, 53, 56.2, 57.1, 58.1, 59.1, 60.2, 62.1, 63
7.	Ծաղկաշեն	Tsaghkashen	1.2, 2, 4.1, 5.1, 7.1+7.2, 9.1, 10, 14.1, 15.1, 16/, 17.1/, 18, 19, 20.1, 26.1, 27, 31.2, 33, 34, 35.4, 40, 41.2, 43.1, 46.2, 47.1, 48, 49, 50.1, 51.1, 52.3, 53, 56.2, 57.1, 58.1, 59.1+59.2/, 60.2, 62.1, 63
8.	Ծովազարդ	Tsovazard	1.2, 2, 4.1, 5.1, 7.1+7.2, 9.1, 10, 14.1, 15.1, 16/, 18, 19, 20.1/+20.3/, 26.1, 31.2, 33, 34, 35.4, 40, 43.1, 46.2, 47.1, 48, 49, 50.1, 51.1, 52.3, 53, 56.2, 57.1, 58.1+58.2/, 59.1, 60.2, 62.1, 63
9.	Կարմիրգյուղ	Karmirgyugh	1.2, 2, 4.1, 5.1, 7.1+7.2, 9.1, 10, 14.1, 15.1, 16/, 18, 19, 20.1, 26.1, 27, 31.2, 33, 34, 35.4, 40, 41.1, 43.3, 46.2, 47.1, 48, 49, 50.1, 51.1, 52.3, 53, 56.2, 57.1, 58.1, 59.1, 60.2, 62.1, 63

10.	Հայրավանք	Hayravank	1.2, 2, 4.1, 5.1, 7.1+7.2, 9.1, 10, 14.1, 15.1, 16/, 17, 18, 19, 20.1, 26.1, 31.2, 33, 34, 35.4, 39, 40, 41.1, 43.3, 46.2, 47.1, 48, 49, 50.1, 51.1, 52.3, 53, 56.2, 57.1, 58.1, 59.1, 60.2, 62.1, 63
11.	Նորատուս	Noratus	1.2, 2, 4.1, 5.1, 7.1+7.2, 9.1, 10, 14.1, 15.1, 16/, 17, 18, 19, 20.1, 26.1, 31.2, 33, 34, 35.4, 39, 40, 43.3, 46.2, 47.1, 48, 49, 50.1, 51.1, 52.3, 53, 56.2, 57.1, 58.1, 59.1, 60.2, 62.1, 63
12.	Սարուխան	Sarukhan	1.2, 2, 4.1, 5.1, 7.1+7.2, 9.1, 10, 14.1, 15.1, 16/, 18, 19, 20.1+20.3/, 23.3/, 26.1, 31.2, 33, 34, 35.4, 40, 41.2, 43.3, 46.2, 47.1, 48, 49, 50.1, 51.1, 52.3, 53, 55.3, 56.2, 57.1, 58.1, 59.1+59.2/, 60.2+60.3/, 62.1, 63, 64/
Ճամբարակի տարածաշրջան Chambarak region			
1.	Ճամբարակ (քաղաք)	Chambarak (city)	1.1, 3, 4.3, 5.3, 7.1/+7.2/, 8, 9.2, 12/, 13, 14.2, 15.1, 17.1, 18/, 21, 24, 25.1, 26.2, 28.1, 29, 31.2, 32, 35.1, 36.3, 41.1, 42.2, 43.4, 46.1, 47.4, 50.2, 51.1, 52.1, 54.2, 56.1, 57.2, 58.1, 59.3, 60.1, 62.1
2.	Աղբերք	Aghberk	1.1, 3, 4.3, 5.3, 7.1/+7.2/, 9.2, 12, 13, 14.2, 15.1, 17.1, 18, 21/, 22.2, 24, 25.2, 26.2, 28.2, 32, 34, 35.1, 36.2+36.3/, 41.1, 42.2, 43.7, 46.4, 47.5, 50.6, 51.4, 52.1, 56.1, 57.3, 58.1, 59.3, 60.1, 62.1
3.	Այգուտ	Aygut	1.1, 3, 4.3, 5.3, 7.1/+7.2/, 9.2, 12, 13, 14.2, 15.1, 17.1, 18, 21/, 22.2, 24, 25.2, 26.2, 28.2, 32, 34, 35.1, 36.2+36.3/, 41.1, 42.2, 43.7, 46.4, 47.5, 50.6, 51.4, 52.1, 56.1, 57.3, 58.1, 59.3, 60.1, 62.1
4.	Անտառամեջ	Antaramej	1.1, 3, 4.3, 5.3, 7.1/+7.2/, 9.2, 12, 13, 14.2, 15.1, 17.1, 18, 21/, 22.2, 24, 25.2, 26.2, 28.2, 32, 34, 35.1, 36.2+36.3/, 41.1, 42.2, 43.7, 46.4, 47.5, 50.6, 51.4, 52.1, 56.1, 57.3, 58.1, 59.3, 60.1, 62.1
5.	Արտանիշ	Artanish	1.1, 3, 4.3, 5.3, 7.1/+7.2/, 9.2, 12, 13, 14.2, 15.1, 17.1, 18, 21/, 22.2, 24, 25.2, 26.2, 28.2, 32, 34, 35.1, 36.2+36.3/, 41.1, 42.2, 43.7, 46.4, 47.5, 50.6, 51.4, 52.1, 56.1, 57.3, 58.1, 59.3, 60.1, 62.1
6.	Գետիկ	Getik	1.1, 3, 4.3, 5.3, 7.1/+7.2/, 8, 9.2, 12/, 13, 14.2, 15.1, 17.1, 18/, 21, 24, 25.1, 26.2, 28.1, 29, 31.2, 32, 35.1, 36.3, 41.1, 42.2, 43.4, 46.1, 47.4, 50.2, 51.1, 52.1, 54.2, 56.1, 57.2, 58.1, 59.3, 60.1, 62.1
7.	Դպրաբակ	Dprabak	1.1, 3, 4.3, 5.3, 7.1/+7.2/, 9.2, 12, 13, 14.2, 15.1, 17.1, 18, 21/, 22.2, 24, 25.2, 26.2, 28.2, 32, 34, 35.1, 36.2+36.3/, 41.1, 42.2, 43.7, 46.4, 47.5, 50.6, 51.4, 52.1, 56.1, 57.3, 58.1, 59.3, 60.1, 62.1
8.	Դրախտիկ	Drakhtik	1.1, 3, 4.3, 5.3, 7.1/+7.2/, 9.2, 12, 13, 14.2, 15.1, 17.1, 18, 21/, 22.2, 24, 25.2, 26.2, 28.2, 32, 34, 35.1, 36.2+36.3/, 41.1, 42.2, 43.7, 46.4, 47.5, 50.6, 51.4, 52.1, 56.1, 57.3, 58.1, 59.3, 60.1, 62.1
9.	Թթուջուր	Ttujur	1.1, 3, 4.3, 5.3, 7.1/+7.2/, 8, 9.2, 12/, 13, 14.2, 15.1, 17.1, 18/, 21, 24, 25.1, 26.2, 28.1, 29, 31.2, 32, 35.1, 36.3, 41.1, 42.2,

			43.4, 46.1, 47.4, 50.2, 51.1, 52.1, 54.2, 56.1, 57.2, 58.1, 59.3, 60.1, 62.1
10.	Կալավան	Kalavan	1.1, 3, 4.3, 5.3, 7.1/+7.2/, 9.2, 12, 13, 14.2, 15.1, 17.1, 18, 21/, 22.2, 24, 25.2, 26.2, 28.2, 32, 34, 35.1, 36.2+36.3/, 41.1, 42.2, 43.7, 46.4, 47.5, 50.6, 51.4, 52.1, 56.1, 57.3, 58.1, 59.3, 60.1, 62.1
11.	Ջորավանք	Dzoravank	1.1, 3, 4.3, 5.3, 7.1/+7.2/, 9.2, 12, 13, 14.2, 15.1, 17.1, 18, 21/, 22.2, 24, 25.2, 26.2, 28.2, 32, 34, 35.1, 36.2+36.3/, 41.1, 42.2, 43.7, 46.4, 47.5, 50.6, 51.4, 52.1, 56.1, 57.3, 58.1, 59.3, 60.1, 62.1
12.	Շորժա (Շողակաթ)	Shorzha (Shoghakat)	1.1, 3, 4.3, 5.3, 7.1/+7.2/, 9.2, 12, 13, 14.2, 15.1, 17.1, 18, 21/, 22.2, 24, 25.2, 26.2, 28.2, 32, 34, 35.1, 36.2+36.3/, 41.1, 42.2, 43.7, 46.4, 47.5, 50.6, 51.4, 52.1, 56.1, 57.3, 58.1, 59.3, 60.1, 62.1
13.	Ջիլ	Jil	1.1, 3, 4.3, 5.3, 7.1/+7.2/, 9.2, 12, 13, 14.2, 15.1, 17.1, 18, 21/, 22.2, 24, 25.2, 26.2, 28.2, 32, 34, 35.1, 36.2+36.3/, 41.1, 42.2, 43.7, 46.4, 47.5, 50.6, 51.4, 52.1, 56.1, 57.3, 58.1, 59.3, 60.1, 62.1
14.	Վահան	Vahan	1.1, 3, 4.3, 5.3, 7.1/+7.2/, 8, 9.2, 12/, 13, 14.2, 15.1, 17.1, 18, 21, 24, 25.1, 26.2, 28.1, 29, 31.2, 32, 34, 35.1, 36.3, 41.1, 42.2, 43.4, 46.1, 47.2, 50.2, 51.1, 52.1, 54.2, 56.1, 57.2, 58.1, 59.3, 60.1, 62.1
Մարտունու տարածաշրջան Martuni region			
1.	Մարտունի (քաղաք)	Martuni (city)	1.2, 4.2, 5.1, 6, 7.1+7.2, 9.1, 10.1+10.2, 14.1, 15.1, 16/, 19, 20.1, 26.1, 29, 30, 31.1, 33, 34, 35.4+35.2, 36.1, 37/, 40, 41.2, 43.2, 46.3, 48, 49, 50.1, 51.2, 52.3, 53, 55.2+55.3, 56.2+56.3, 57.1, 58.2, 59.2, 60.2+60.3/, 61/, 62.2, 63, 64
2.	Աստղաձոր	Astghadzor	1.2, 4.1, 5.1, 6, 7.1+7.2, 9.1, 10.1+10.2, 14.1, 15.1, 16/, 19, 20.1, 26.1, 29, 30, 31.1, 33, 34, 35.4+35.2, 36.1, 37/, 40, 41.1, 43.1, 46.3, 48, 49, 50.1, 51.1, 52.3, 53, 55.2, 56.2+56.3, 57.1, 58.2, 59.2, 60.2+60.3/, 62.2, 63, 64
3.	Արծվանիստ	Artsvanist	1.2, 4.1, 5.1, 6, 7.1+7.2, 9.1, 10.1+10.2, 14.1, 15.1, 16/, 19, 20.1, 26.1, 29, 30, 31.1, 33, 35.4, 36.1, 37/, 40, 41.1, 43.1, 46.3, 48, 49, 50.1, 51.1, 52.3, 53, 55.2+55.3, 56.2+56.3, 57.1, 58.2, 59.2, 60.2+60.3, 62.2, 63, 64
4.	Գեղիովիտ	Geghhovit	1.2, 2/, 4.2, 5.1, 6, 7.1+7.2, 9.1, 10.1+10.2, 14.1, 15.1, 16/, 19, 20.1, 26.1, 29, 30, 31.1, 33, 35.4, 36.1, 40, 41.1, 43.1, 46.3, 48, 49, 50.1, 51.1, 52.3, 53, 55.2+55.3, 56.2+56.3, 57.1, 58.2, 59.2, 60.2/+60.3, 62.2, 63, 64
5.	Երանոս	Yeranos	1.2, 4.2, 5.1, 6, 7.1+7.2, 9.1, 10.1+10.2, 14.1, 15.2, 16, 18, 20.1/+20.3/, 26.1, 29, 30, 31.1, 33, 34, 35.4, 36.1, 38, 40, 43.2, 44, 46.3, 48, 49, 50.5, 51.3, 52.3, 53, 55.2, 56.2+56.3, 57.1, 58.2, 59.2, 60.2, 61, 62.2, 63, 64
6.	Զոլաքար	Zolakar	1.2, 2/, 4.2, 5.1, 6, 7.1+7.2, 9.1, 10.1+10.2, 14.1, 15.1, 16/, 19, 20.1, 26.1, 30, 31.1, 33, 35.4+35.2, 36.1, 40, 41.2, 43.1, 46.3, 48, 49, 50.1, 51.1, 52.3, 53, 55.2+55.3,

			56.2+56.3, 57.1, 58.2, 59.2, 60.2+60.3, 62.2, 63, 64
7.	Լիճք	Lichk	1.2, 4.2, 5.1, 6, 7.1+7.2, 9.1, 10.1+10.2, 14.1, 15.2, 16, 20.5, 26.1, 29, 30, 31.1, 33, 34, 35.4, 36.1, 37, 38, 39, 40, 42.1, 43.2, 44, 45, 46.3, 48, 49, 50.5, 51.3, 52.3, 53, 55.2, 56.2+56.3, 57.1, 58.2, 59.2, 60.2, 61, 62.2, 63, 64, 65
8.	Ծակքար	Tsakqar	1.2, 4.2, 5.1, 6, 7.1+7.2, 9.1, 10.1+10.2, 14.1, 15.2, 16, 18/, 19, 20.1/, 26.1, 29, 30, 31.1, 33, 34, 35.4, 36.1, 37/, 38, 39, 40, 43.2, 44, 46.3, 48, 49, 50.1, 51.3, 52.3, 53, 55.2, 56.2+56.3, 57.1, 58.2, 59.2, 60.2, 61, 62.2, 63, 64, 65
9.	Ծովասար	Tsovasar	1.2, 4.2, 5.1, 6, 7.1+7.2, 9.1, 10.1+10.2, 14.1, 15.2, 16, 19, 20.1, 26.1, 29, 30, 31.1, 33, 34, 35.4, 36.1, 37, 38, 39, 40, 43.2, 44, 46.3, 48, 49, 50.5, 51.3, 52.3, 53, 55.2, 56.2+56.3, 57.1, 58.2, 59.2, 60.2, 61, 62.2, 63, 64
10.	Ծովինար	Tsovinar	1.2, 4.2, 5.1, 6, 7.1+7.2, 9.1, 10.1+10.2, 14.1, 15.2, 16, 19, 20.1+20.3/, 26.1, 30, 31.1, 33, 34, 35.4, 36.1, 37/, 39, 40, 41.2, 43.2, 44, 46.3, 48, 49, 50.1, 51.3, 52.3, 53, 55.2+55.3, 56.2+56.3, 57.1, 58.2, 59.2, 60.2+60.3, 61, 62.2, 63, 64
11.	Ջորագյուղ	Dzoragyugh	1.2, 4.2, 5.1, 6, 7.1+7.2, 9.1, 10.1+10.2, 14.1, 15.2, 16, 20.5, 26.1, 29, 30, 31.1, 33, 34, 35.4, 36.1, 38, 39, 40, 42.1, 43.2, 44, 45, 46.3, 48, 49, 50.5, 51.3, 52.3, 53, 55.2, 56.2+56.3, 57.1, 58.2, 59.2, 60.2, 61, 62.2, 63, 64, 65
12.	Մադինա	Madina	1.2, 4.1, 5.1, 6, 7.1+7.2, 9.1, 10.1+10.2, 14.1, 15.2, 16, 20.5, 26.1, 29, 30, 31.1, 33, 34, 35.4, 36.1, 37, 38, 40, 42.1, 43.1, 44, 46.3, 48, 49, 50.5, 51.3, 52.3, 53, 55.2, 56.2+56.3, 57.1, 58.2, 59.2, 60.2, 61, 62.2, 63, 64, 65
13.	Ներքին Գետաշեն	Nerkin Getashen	1.2, 4.2, 5.1, 6, 7.1+7.2, 9.1, 10.1+10.2, 14.1, 15.2, 16, 20.5, 23.3, 26.1, 29, 30, 31.1, 33, 34, 35.4, 36.1, 37, 38, 40, 43.2, 44, 46.3, 48, 49, 50.5, 51.3, 52.3, 53, 55.2, 56.2+56.3, 57.1, 58.2, 59.2, 60.2, 61, 62.2, 63, 64
14.	Վաղաշեն	Vaghashen	1.2, 2/, 4.2, 5.2, 6, 7.1+7.2, 9.1, 10.1+10.2, 11, 14.1, 15.1, 16/, 19, 20.1, 26.1, 29, 30, 31.1, 33, 35.4+35.2, 36.1, 37/, 39, 40, 41.2, 43.2, 45, 46.3, 48, 49, 50.1, 51.2, 52.3, 53, 55.2, 56.2+56.3, 57.1, 58.2, 59.2, 60.2+60.3, 61/, 62.2, 63, 64
15.	Վարդաձոր	Vardadzor	1.2, 4.2, 5.1, 6, 7.1+7.2, 9.1, 10.1+10.2, 11, 14.1, 15.2, 16, 18/, 20.5, 23.3/, 26.1, 29, 30, 31.1, 33, 34, 35.4, 36.1, 38, 39, 40, 43.2, 44, 45, 46.3, 48, 49, 50.5, 51.3, 52.3, 53, 55.2, 56.2+56.3, 57.1, 58.2, 59.2, 60.2, 61, 62.2, 63, 64
16.	Վարդենիկ	Vardenik	1.2, 4.2, 5.1, 6, 7.1+7.2, 9.1, 10.1+10.2, 14.1, 15.1, 16/, 19, 20.1, 26.1, 29, 30, 31.1, 33, 34, 35.4+35.2, 36.1, 37, 39, 40, 41.2, 43.2, 45, 46.3, 48, 49, 50.1, 51.1, 52.3, 53, 55.2+55.3, 56.2+56.3, 57.1, 58.2, 59.2, 60.2, 62.2, 63, 64
17.	Վերին Գետաշեն	Verin Getashen	1.2, 4.2, 5.2, 6, 7.1+7.2, 9.1, 10.1+10.2, 11, 14.1, 15.2, 16, 20.5, 26.1, 29, 30, 31.1, 33, 34, 35.4, 36.1, 37, 38, 39, 40, 42.1, 43.2, 44, 46.3, 48, 49, 50.5, 51.3, 52.3, 53, 55.2,

			56.2+56.3, 57.1, 58.2, 59.2, 60.2, 61, 62.2, 63, 64, 65
Մևանի տարածաշրջան Sevan region			
1.	Գեղամավան	Geghamavan	1.2, 4.1, 5.1, 7.1+7.2, 9.1, 10.1+10.2, 14.1, 15.1+15.3, 16, 17.2/, 18, 20.1, 26.1, 27/, 31.2, 34, 35.3, 40, 43.3, 46.2, 47.1/+47.3/, 48, 50.1, 51.1, 52.3, 53, 56.2, 57.1, 58.1, 59.1, 60.2+60.3/, 62.1, 63
2.	Դդմաշեն	Ddmashen	1.2, 2/, 4.1, 5.1, 7.1+7.2, 9.1, 10.1+10.2, 14.1, 15.1, 16, 17.2/, 19, 20.1, 26.1, 31.2, 33, 34, 35.4, 40, 43.3, 46.2, 47.1, 48, 49, 50.1, 51.1, 52.3, 53, 56.2, 57.1, 58.1, 59.1, 60.2+60.3/, 62.1, 63
3.	Զովաբեր	Zovaber	1.2, 2/, 4.1, 5.1, 7.1+7.2, 9.1, 10.1+10.2, 14.1, 15.1, 16/, 17.1/, 18/, 19, 20.1, 26.1, 31.2, 35.4, 40, 43.3/+43.5/, 46.2, 47.1/+47.3/, 48, 50.1, 51.1, 52.3, 55.3, 56.2, 57.1, 58.1, 59.1, 60.2, 62.1, 63
4.	Լճաշեն	Lchashen	1.2, 2/, 4.1, 5.1, 7.1+7.2, 9.1, 10.1+10.2, 14.1, 15.1, 16/, 17.1/, 18, 19, 20.1, 26.1, 35.4, 40, 41.1, 43.1, 46.2, 47.1, 48, 49, 50.1, 51.1, 52.3, 56.2, 57.1, 58.1, 59.1, 60.2, 62.1, 63
5.	Ծաղկունք	Tsaghkunk	1.2, 4.1, 5.1, 7.1+7.2, 9.1, 10.1+10.2, 14.1/, 15.1, 16/, 18/, 22.1, 26.1, 31.2, 33, 35.3, 40, 43.4, 46.2, 47.1/+47.3/, 48, 50.1, 51.1, 52.3, 53, 56.2, 57.1, 58.1, 59.1, 60.2, 62.1, 63
6.	Ծովագյուղ	Tsovagyugh	1.2, 4.1, 5.1, 7.1+7.2, 9.1, 10.1+10.2, 14.1, 15.2, 16, 18/, 19/, 20.1, 22.1, 23.3, 26.1, 31.2, 33, 35.3, 40, 43.3, 46.3, 47.1/+47.3/, 48, 49, 50.4, 51.1, 52.3, 54.1, 56.2, 57.1, 58.1, 59.1, 60.2, 62.1, 63
7.	Նորաշեն	Norashen	1.2, 4.1, 5.1, 7.1+7.2, 9.1, 10.1+10.2, 14.1, 15.1, 16/, 18, 19, 20.1/+20.3/, 26.1, 31.2, 33, 34, 35.4, 40, 43.4, 46.2, 47.1, 48, 49, 50.1, 51.1, 52.3, 53, 56.2, 57.1, 58.1, 59.1, 60.2, 62.1, 63
8.	Չկալովկա	Ch'kalovka	1.2, 2/, 4.1, 5.1, 7.1+7.2, 9.1, 10.1+10.2, 14.1, 15.1, 16/, 18, 19, 20.1, 26.1, 31.2, 33, 34, 35.4, 40, 43.3, 46.2, 47.1, 48, 49, 50.1, 51.1, 52.3, 53, 56.2, 57.1, 58.1, 59.1, 60.2, 62.1, 63
9.	Վարսեր	Varser	1.2, 4.1, 5.1, 7.1+7.2, 9.1, 10.1+10.2, 14.1, 15.1, 16/, 18/, 19, 20.1, 26.1, 31.2, 35.4, 40, 43.3, 46.2, 47.1, 48, 49, 50.1, 51.1, 52.3, 53, 56.2, 57.1, 58.1, 59.1, 60.2, 62.1, 63
Վարդենիսի տարածաշրջան Vardenis region			
1.	Վարդենիս (քաղաք)	Vardenis (city)	1.1/+1.3, 4.1, 5.1, 7.1+7.2, 9.1, 10.1+10.2, 14.1, 15.1, 16/, 17.1, 18/, 19, 20.1/+20.2/+20.3/+20.4/, 23.1+23.2, 26.1, 30, 31.1, 33, 34, 35.4+35.2, 36.1, 40, 41.2, 43.1, 46.2, 48, 49, 50.1, 51.1, 52.3, 53, 55.1, 55.1+55.2, 56.2+56.3, 57.1, 58.2, 59.2, 60.2, 62.2, 63, 64
2.	Ազատ	Azat	1.1, 3, 4.3, 5.3, 7.1/+7.2/, 9.2, 12, 13, 14.2, 15.1, 17.1, 18, 21/, 22.2, 24, 25.2, 26.2, 28.2, 32, 34, 35.1, 36.2+36.3/, 41.1, 42.2, 43.7, 46.4, 47.5, 50.6, 51.4, 56.1, 57.3, 58.1, 59.3, 60.1, 62.1
3.	Ախպրաձոր	Akhpradzor	1.2, 4.4, 5.1, 6, 7.1+7.2, 9.1, 10.1, 14.1, 15.1, 18/, 26.1, 29, 30, 31.1, 33, 35.4, 36.1,

			40, 41.1, 42.1, 43.1, 46.3, 48, 49, 50.1, 51.1, 52.3, 53, 55.2, 56.2+56.3, 57.1, 58.2, 59.2, 60.2+60.3/, 62.2, 63, 64
4.	Ակունք	Akunk	1.4, 4.1, 5.1, 7.1+7.2, 9.1, 10.1+10.2, 14.1, 15.1, 16/, 17.1, 18/, 19, 20.3, 23.1+23.2, 26.1, 31.1, 33, 34, 35.4, 36.1, 40, 41.2, 43.1, 46.2, 47.1, 48, 49, 50.1, 51.1, 52.3, 53, 55.3, 56.2, 57.1, 58.1, 59.1, 60.2, 62.1, 63
5.	Այրք	Ayrk	1.1, 3, 4.3, 5.3, 7.1/+7.2/, 9.2, 12, 13, 14.2, 15.1, 17.1, 18, 21/, 22.2, 24, 25.2, 26.2, 28.2, 32, 34, 35.1, 36.2+36.3/, 41.1, 42.2, 43.7, 46.4, 47.5, 50.6, 51.4, 56.1, 57.3, 58.1, 59.3, 60.1, 62.1
6.	Ավազան	Avazan	1.1, 3, 4.3, 5.3, 7.1/+7.2/, 9.2, 12, 13, 14.2, 15.1, 17.1, 18, 21/, 22.2, 24, 25.2, 26.2, 28.2, 32, 34, 35.1, 36.2+36.3/, 41.1, 42.2, 43.7, 46.4, 47.5, 50.6, 51.4, 56.1, 57.3, 58.1, 59.3, 60.1, 62.1
7.	Արեգունի	Areguni	1.1, 3, 4.3, 5.3, 7.1/+7.2/, 9.2, 12, 13, 14.2, 15.1, 17.1, 18, 21/, 22.2, 24, 25.2, 26.2, 28.2, 32, 34, 35.1, 36.2+36.3/, 41.1, 42.2, 43.7, 46.4, 47.5, 50.6, 51.4, 56.1, 57.3, 58.1, 59.3, 60.1, 62.1
8.	Արփունք	Arpunk	1.1, 3, 4.3, 5.3, 7.1/+7.2/, 9.2, 12, 13, 14.2, 15.1, 17.1, 18, 21/, 22.2, 24, 25.2, 26.2, 28.2, 32, 34, 35.1, 36.2+36.3/, 41.1, 42.2, 43.7, 46.4, 47.5, 50.6, 51.4, 56.1, 57.3, 58.1, 59.3, 60.1, 62.1
9.	Գեղամաբակ	Geghamabak	1.1, 3, 4.3, 5.3, 7.1/+7.2/, 9.2, 12, 13, 14.2, 15.1, 17.1, 18, 21/, 22.2, 24, 25.2, 26.2, 28.2, 32, 34, 35.1, 36.2+36.3/, 41.1, 42.2, 43.7, 46.4, 47.5, 50.6, 51.4, 56.1, 57.3, 58.1, 59.3, 60.1, 62.1
10.	Գեղամասար	Geghamasar	1.1, 3, 4.3, 5.3, 7.1/+7.2/, 9.2, 12, 13, 14.2, 15.1, 17.1, 18, 21/, 22.2, 24, 25.2, 26.2, 28.2, 32, 34, 35.1, 36.2+36.3/, 41.1, 42.2, 43.7, 46.4, 47.5, 50.6, 51.4, 56.1, 57.3, 58.1, 59.3, 60.1, 62.1
11.	Գեղաքար	Geghakar	1.1, 3, 4.3, 5.3, 7.1/+7.2/, 9.2, 12, 13, 14.2, 15.1, 17.1, 18, 21/, 22.2, 24, 25.2, 26.2, 28.2, 32, 34, 35.1, 36.2+36.3/, 41.1, 42.2, 43.7, 46.4, 47.5, 50.6, 51.4, 56.1, 57.3, 58.1, 59.3, 60.1, 62.1
12.	Դարանակ	Daranak	1.1, 3, 4.3, 5.3, 7.1/+7.2/, 9.2, 12, 13, 14.2, 15.1, 17.1, 18, 21/, 22.2, 24, 25.2, 26.2, 28.2, 32, 34, 35.1, 36.2+36.3/, 41.1, 42.2, 43.7, 46.4, 47.5, 50.6, 51.4, 56.1, 57.3, 58.1, 59.3, 60.1, 62.1
13.	Լճավան	Lchavan	1.2, 4.1, 5.1, 6, 7.1+7.2, 9.1, 10.1+10.2, 14.1, 15.1/+15.2/, 16, 20.1/+20.5/, 26.1, 29, 30, 33, 35.4, 36.1, 39, 40, 43.1, 44, 46.3, 48, 49, 50.1, 51.1, 52.3, 53, 55.2++55.3, 56.2+56.3, 57.1, 58.2, 59.2, 60.2+60.3/, 62.2, 63, 64
14.	Լուսակունք	Lusakunk	1.4, 4.1, 5.1, 6, 7.1+7.2, 9.1, 10.1+10.2, 14.1, 15.1, 16/, 17.1/, 19, 20.1, 26.1, 29, 30, 31.1, 33, 35.4+35.2, 36.1, 39, 40, 41.1, 43.1, 46.3, 48, 49, 50.1, 51.1, 52.3, 53, 55.2+55.3, 56.2+56.3, 57.1, 58.2, 60.2+60.3/, 62.2, 63, 64
15.	Խաչաղբյուր	Khach'aghbyur	1.2, 4.1, 5.1, 6, 7.1+7.2, 9.1, 10.1+10.2, 14.1, 15.1, 16/, 18/, 26.1, 29, 31.1, 33, 35.4, 36.1, 40, 43.6, 46.3, 48, 49, 50.1, 51.1, 52.3, 53, 55.2+55.3, 56.2+56.3, 57.1, 58.2, 59.2, 60.2, 62.2, 63, 64

16.	Ծովակ	Tsovak	1.2, 4.2, 5.1, 6, 7.1+7.2, 9.1, 10.1+10.2, 14.1, 15.1, 16/, 18/, 19, 20.1, 26.1, 29, 30, 33, 35.4+35.2, 36.1, 40, 43.1, 45, 46.3, 48, 49, 50.1, 51.1, 52.3, 53, 55.2+55.3, 56.2+56.3, 57.1, 58.2, 59.2, 60.2+60.3, 62.2, 63, 64
17.	Կախակն	Kakhakn	1.1, 3, 4.3, 5.3, 7.1/+7.2/, 9.2, 12, 13, 14.2, 15.1, 17.1, 18, 21/, 22.2, 24, 25.2, 26.2, 28.2, 32, 34, 35.1, 36.2+36.3/, 41.1, 42.2, 43.7, 46.4, 47.5, 50.6, 51.4, 56.1, 57.3, 58.1, 59.3, 60.1, 62.1
18.	Կարճաղբյուր	Karchaghbyur	1.2, 4.1, 5.1, 6, 7.1+7.2, 9.1, 10.1+10.2, 14.1, 15.1, 16/, 19, 20.1, 26.1, 29, 30, 31.1, 33, 35.4+35.2, 36.1, 40, 41.1, 43.1, 46.3, 48, 49, 50.1, 51.1, 52.3, 53, 55.2+55.3, 56.2+56.3, 57.1, 58.2, 59.2, 60.2+60.3/, 62.2, 63, 64
19.	Կութ	Kut	1.1, 3, 4.3, 5.3, 7.1/+7.2/, 9.2, 12, 13, 14.2, 15.1, 17.1, 18, 21/, 22.2, 24, 25.2, 26.2, 28.2, 32, 34, 35.1, 36.2+36.3/, 41.1, 42.2, 43.7, 46.4, 47.5, 50.6, 51.4, 56.1, 57.3, 58.1, 59.3, 60.1, 62.1
20.	Կուտական	Kutakan	1.1, 3, 4.3, 5.3, 7.1/+7.2/, 9.2, 12, 13, 14.2, 15.1, 17.1, 18, 21/, 22.2, 24, 25.2, 26.2, 28.2, 32, 34, 35.1, 36.2+36.3/, 41.1, 42.2, 43.7, 46.4, 47.5, 50.6, 51.4, 56.1, 57.3, 58.1, 59.3, 60.1, 62.1
21.	Մաքենիս	Makenis	1.2, 4.1, 5.1, 6, 7.1+7.2, 9.1, 10.1+10.2, 14.1, 15.1, 16/, 18/, 19, 20.1, 26.1, 29, 30, 31.1, 33, 35.4, 36.1, 39, 40, 41.2, 43.6, 46.3, 48, 49, 50.1, 51.1, 52.2, 53, 55.2+55.3, 56.2+56.3, 57.1, 58.2, 59.2, 60.2+60.3/, 62.2, 63, 64
22.	Մեծ Մասրիկ	Mets Masrik	1.2, 4.1, 5.1, 6, 7.1+7.2, 9.1, 10.1+10.2, 14.1, 15.1, 26.1, 35.4, 36.1, 40, 43.5, 46.3, 48, 49, 50.1, 51.1, 52.3, 53, 55.2+55.3, 56.2+56.3, 57.1, 58.2, 59.2, 60.2, 62.2, 63, 64
23.	Նորաբակ	Norabak	1.1, 3, 4.3, 5.3, 7.1/+7.2/, 9.2, 12, 13, 14.2, 15.1, 17.1, 18, 21/, 22.2, 24, 25.2, 26.2, 28.2, 32, 34, 35.1, 36.2+36.3/, 41.1, 42.2, 43.7, 46.4, 47.5, 50.6, 51.4, 56.1, 57.3, 58.1, 59.3, 60.1, 62.1
24.	Նորակերտ	Norakert	1.2, 4.1, 5.3, 6, 7.1+7.2, 9.1, 14.1, 15.1, 16, 20.1, 26.1, 30, 31.1, 35.4, 36.1, 37, 40, 41.1, 43.4, 44, 46.3, 48, 49, 50.3, 51.1, 52.3, 53, 55.2, 56.2+56.3, 57.1, 58.2, 59.2, 60.2, 62.2, 63, 64
25.	Շատջրեք	Shatjrek	1.1, 3, 4.3, 5.3, 7.1/+7.2/, 9.2, 12, 13, 14.2, 15.1, 17.1, 18, 21/, 22.2, 24, 25.2, 26.2, 28.2, 32, 34, 35.1, 36.2+36.3/, 41.1, 42.2, 43.7, 46.4, 47.5, 50.6, 51.4, 56.1, 57.3, 58.1, 59.3, 60.1, 62.1
26.	Շատվան	Shatvan	1.1, 3, 4.3, 5.3, 7.1/+7.2/, 9.2, 12, 13, 14.2, 15.1, 17.1, 18, 21/, 22.2, 24, 25.2, 26.2, 28.2, 32, 34, 35.1, 36.2+36.3/, 41.1, 42.2, 43.7, 46.4, 47.5, 50.6, 51.4, 56.1, 57.3, 58.1, 59.3, 60.1, 62.1
27.	Ջաղացաձոր	Jaghats'adzor	1.1, 3, 4.3, 5.3, 7.1/+7.2/, 9.2, 12, 13, 14.2, 15.1, 17.1, 18, 21/, 22.2, 24, 25.2, 26.2, 28.2, 32, 34, 35.1, 36.2+36.3/, 41.1, 42.2, 43.7, 46.4, 47.5, 50.6, 51.4, 56.1, 57.3, 58.1, 59.3, 60.1, 62.1
28.	Սոթք	Sotk	1.1, 3, 4.3, 5.3, 7.1/+7.2/, 9.2, 12, 13, 14.2, 15.1, 17.1, 18, 21/, 22.2, 24, 25.2, 26.2, 28.2, 32, 34, 35.1, 36.2+36.3/, 41.1, 42.2,

			43.7, 46.4, 47.5, 50.6, 51.4, 56.1, 57.3, 58.1, 59.3, 60.1, 62.1
29.	Վանեվան	Vanevan	1.1, 3, 4.3, 5.3, 7.1/+7.2/, 9.2, 12, 13, 14.2, 15.1, 17.1, 18, 21/, 22.2, 24, 25.2, 26.2, 28.2, 32, 34, 35.1, 36.2+36.3/, 41.1, 42.2, 43.7, 46.4, 47.5, 50.6, 51.4, 56.1, 57.3, 58.1, 59.3, 60.1, 62.1
30.	Տրետուք	Tretuk	1.1, 3, 4.3, 5.3, 7.1/+7.2/, 9.2, 12, 13, 14.2, 15.1, 17.1, 18, 21/, 22.2, 24, 25.2, 26.2, 28.2, 32, 34, 35.1, 36.2+36.3/, 41.1, 42.2, 43.7, 46.4, 47.5, 50.6, 51.4, 56.1, 57.3, 58.1, 59.3, 60.1, 62.1
31.	Փամբակ	Pambak	1.1, 3, 4.3, 5.3, 7.1/+7.2/, 9.2, 12, 13, 14.2, 15.1, 17.1, 18, 21/, 22.2, 24, 25.2, 26.2, 28.2, 32, 34, 35.1, 36.2+36.3/, 41.1, 42.2, 43.7, 46.4, 47.5, 50.6, 51.4, 56.1, 57.3, 58.1, 59.3, 60.1, 62.1
32.	Փոքր Մասրիկ	Pokr Masrik	1.1, 3, 4.3, 5.3, 7.1/+7.2/, 9.2, 12, 13, 14.2, 17.1, 18, 21/, 22.2, 24, 25.2, 26.2, 28.2, 32, 34, 35.1, 36.2+36.3/, 41.1, 42.2, 43.7, 46.4, 47.5, 50.6, 51.4, 56.1, 57.3, 58.1, 59.3, 60.1, 62.1

ԲԱՐԲԱՌԱՅԻՆ ՄԻԱՎՈՐՆԵՐԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ

ՄՇՈ ԲԱՐԲԱՌԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ

Մշո բարբառը պատկանում է հայ բարբառների Կը ճյուղին, ունի քառաստիճան (*բ՛, բ, պ, փ*) բաղաձայնական համակարգ, ընդգրկված է արևմտյան խմբակցության Մուշ - Տիգրանակերտի կամ հարավկենտրոնական բարբառախմբում: Բարբառը տարածված էր Վանա լճի հյուսիսային, արևմտյան և հարավարևմտյան կողմերում: Մուշի և Ալաշկերտի բնակչության մի մասը ևս ռուս-թուրքական պատերազմների շրջանում գաղթել ու բնակություն է հաստատել Արևելյան Հայաստանում՝ Ապարանում և Նոր Բայազետի հարավային կողմերում՝ Սևանա լճի ափերին, այլ վայրերում: Մշո բարբառը կրող հայեր բնակվում են նաև Վրաստանի մի շարք շրջաններում: Փաստվել է, որ Ալաշկերտի խոսվածքը տարածված է Մարտունու շրջանի գյուղերի մի մասում, Ապարանի շրջանի մի շարք գյուղերում, այլ վայրերում:

Մշո բարբառը Գեղարքունիքի մարզում գործածվում է Մարտունու և Վարդենիսի տարածաշրջաններում: Մարտունու տարածաշրջանի բոլոր բնակավայրերի խոսվածքների համար ընդհանուր են Մշո բարբառի հնչյունական մի շարք էական հատկանիշներ. միավանկ բառերի սկզբի հինհայերենյան *n*-ից առաջ առկա է շրթնային տարրի հավելում, ընդ որում՝ Աստղաձորի, Արծվանիստի և Մաղինայի խոսվածքներում այդ տարրը *վ*-ն է (*վոտ, վոռոց*), այլ դեպքերում՝ *ւ*-ը (*ւոտ, ւոռոփ*): Բոլոր խոսվածքներում նման հավելում տեղի չի ունեցել *որ* շաղկապի դեպքում, որն ունի *օր* արտասանություն: Միավանկ բառերի սկզբի հինհայերենյան *ե*-ից առաջ առկա է *յ*-ի հավելում (*յեփ, յերք*), ընդ որում՝ Ծովասարի, Ներքին Գետաշենի և Վաղաշենի խոսվածքներում այդ *յ*-ն շատ ավելի թույլ արտաբերություն ունի (*յես, յեզ*), քան մյուս խոսվածքներում: Բազմավանկ բառերի սկզբում՝ հինհայերենյան *n, ե*-ին համապատասխան, առկա են *օ, է* ձայնավորներ (*օխձար, էթալ*): Բոլոր խոսվածքներն ունեն *ե, n* երկբարբառային հնչյուններ (*իքեք, խոռ*): Ինչպես Մշո բարբառում ընդհանրապես, Մարտունու տարածաշրջանի խոսվածքներում ևս քմայնացած *ա* ձայնավորը սակավ գործածություն ունի, այն դրսևորվում է մի շարք փոխառյալ և բնիկ բառերում (*քյունի, քյւլւմ, ժյւժիկ, զյւնել, յյւն, թյւլուր*): Բաղաձայնական համակարգը բոլոր դեպքերում քառաստիճան է՝ բառակցում ունենալով նաև հպական ու հպաշփական շնչեղ ձայնեղ բաղաձայններ (*բ՛ան, գ՛ըշեր, ջ՛ուր, ձ՛որ*): Տարբեր խոսվածքներում բառասկզբի ձայնավորից առաջ հազազի հավելումը տարբեր ընդգրկում ունի, բայց երևույթը ընդհանուր է (*հ՛իմանալ, հ՛ընգնել, հ՛անէչ*): Բոլոր խոսվածքներին բնորոշ է վերջնավանկային շեշտը:

Դիտարկվող խոսվածքների համար ընդհանուր քերականական իրողություններից են *եր, ներ* հոգնակերտների հետ նաև այլ մասնիկների առկայությունը (*ք, քանք, վըտանք, տիք՝ գ՛էրընդիք, ըտերանք, տիիրվըտանք, կընգըտիք*), մեկից ավելի հոգնակերտների միաժամանակյա գործածությունը (*բալէքներ, տըղէքներ, կընգըտիկներ*,

գ'իլվանկներ), Ու հոլովման տարածվածությունը եզակի թվում (*պառվու, հառվու, ձ'օրու, ջ'ըրու*) և գերակշռությունը հոգնակի թվում (*ճիժէրու, բ'ըռթէրու, յերթէրու*), ձայնավորով ավարտվող հատուկ անձնանունների սեռականի ձևավորումը *յ*-ով (*Սարոյ, պապայ*), բացառական հոլովի *ց*-ով կազմությունը (*ծառից, ձ'օրուց*), ներգոյական հոլովի իմաստի՝ հայցական հոլովով կամ սեռականով ու *մէջ* կապով արտահայտումը (*ծընվէր եմ գ'էղ, փոսի մէջ*), միայն *ն* հոդի առկայությունը և նրա սահմանափակ կիրառությունը (*ջ'ուրըն կէթա. մառթու քէֆ լալ կէղի*), անձնական դերանվան տրական հոլովի ձևերում *ի* ձայնավորի առկայությունը (*ընձի, քեզի, մեզի, ձ'էզի*), հարցական *ու* դերանվան *ւոն//վոն* ձևի առկայությունը (Աստղածորի, Արծվանիստի և Մաղինայի խոսվածքներում վկայված է *վոն* ձևը, իսկ մյուսներում՝ *ւոն* ձևը) և սեռականի ու տրականի *վի, վին* ձևերի կիրառությունը, վաղակատարի կազմությունը *ր*-ով (*գ'ացէր*) և հարակատարինը՝ *ուկ//ուկ*-ով (*նեղէցուկ*), Ե խոնարհման պարզ բայերի անցյալ կատարյալի կազմությունը և՛ ցոյական, և՛ ոչ ցոյական հիմքերով (*ըսի//ըսէցի*), *գնալ* և *մնալ* բայերի անցյալի հիմքի *գ'աց* և *մաց* ձևերը (*գ'ացի, գ'ացիր*), տրամաբանական շեշտ կրող բառն ընդգծելու համար դիմավոր ձևերից առաջ օժանդակ բայի եզակի երրորդ դեմքի ձևի լրացուցիչ կիրառությունը (*ինչ էր կէնէք՝ ինչ էիք անում*), *չ* ժխտական մասնիկի՝ վերլուծական ձևերում դերբայի վրա դրվելը (*չեղէր էր*), պատճառական *ցուց//ուց* ածանցի կիրառությունը (*խասուցել, չօքրցուցել*), *չ* բայածանցի բացակայությունը և այլն:

Թե՛ հնչյունական և թե՛ քերականական շատ հատկանիշներով խոսվածքներն ունեն գանազանություններ: Մարտունու տարածաշրջանի խոսվածքներում *հ*-ին համապատասխանող *խ* ունեն Արծվանիստի, Աստղածորի, Գեղիովիտի, Զուլաքարի, Ծակքարի, Ծովասարի, Ծովինարի, Մարտունու, Վաղաշենի, Վարդենիկի խոսվածքները (*խառս, խին, խետ, խամար, խառսնիս*), մինչդեռ Երանոսի, Լիճքի, Ձորագյուղի, Մաղինայի, Ներքին Գետաշենի, Վերին Գետաշենի, Վարդածորի խոսվածքներում հինհայերենյան *հ*-ին համապատասխանում է *հ*: Մշո բարբառի շրջանակներում կարևոր տարբերակիչ դեր ունեն նաև ոչ բառասկզբի դիրքերում հպական ու հպաշփական բաղաձայնների դրսևորումները ըստ ձայնեղացման-խլացման, շնչեղացման-ապաշնչեղացման գործընթացների: Այսպես, Երանոսի, Լիճքի, Ծակքարի, Ծովասարի, Ծովինարի, Ձորագյուղի, Մաղինայի, Ներքին Գետաշենի, Վերին Գետաշենի, Վարդածորի խոսվածքներում հինհայերենյան ձայնեղ և շնչեղ խուլ հպականների ու հպաշփականների փոխարեն առկա են խուլեր (*դ'ըտու, փոծըխ, ձ'ըծու, կանտ, կատնօլ*), իսկ խուլերը վերածվել են ձայնեղների (*կուղ, կըջուջ, մաձուն*): Մյուս խոսվածքներում (Արծվանիստի, Աստղածորի, Գեղիովիտի, Զուլաքարի, Մարտունու, Վաղաշենի, Վարդենիկի) հինհայերենյան ձայնեղները վերածվել են շնչեղ խուլերի (*կարքըվել, ջ'առթել*), իսկ խուլերը մի շարք դեպքերում վերածվել են ձայնեղների (*պաղմել, աքրել*): Խոսվածքները միմյանցից հստակորեն տարբերվում են նաև փոխառյալ բառերի սկզբում *ղ*-ի փոխարեն դրսևորվող հնչյունով. Աստղածորի, Արծվանիստի, Գեղիովիտի, Երանոսի, Զուլաքարի, Ծակքարի, Ծովասարի, Ծովինարի, Մարտունու, Վաղաշենի և Վարդենիկի խոսվածքներում բառասկզբի *ղ*-ի փոխարեն առկա է *կ* (*կալուրմա*),

մինչդեռ Լիճքի, Ձորագյուղի, Մաղինայի, Ներքին Գետաշենի, Վերին Գետաշենի, Վարդաձորի խոսվածքներում *ղ*-ի փոխարեն գործածվում է *խ* (*խասաբ, խալմախալ*): Հետաքրքրական է, որ *ղ*-ի փոխարեն *կ* ունեցող որոշ խոսվածքներում գուգահեռաբար կարող է հանդես գալ նաև *կ'* փոխառյալ հնչյունը (այդպես է, օրինակ, Երանոսի և Ծովինարի խոսվածքներում), իսկ *ղ*-ի փոխարեն *խ* ունեցող խոսվածքներում, որպես կանոն, *կանչել* բայի դեպքում ևս գործածվում է *խ*-ով ձև՝ *խանչել*: Գեղհովիտի, Ձուլաքարի, Վաղաշենի խոսվածքներում բացարձակ բառասկզբում, բառի առաջին վանկում՝ խուլ բաղաձայններից հետո, որոշակիորեն գործածվում է շրթնայնացած *ա* ձայնավոր: Վաղաշենի, Վարդաձորի, Վերին Գետաշենի խոսվածքներում *ես*-ի փոխարեն առկա է *յս*, *ե* կամ *է* (*Ավետիսյան, Պեղրոսեն, Կենկ, օկնուտեն, ծընընդեն*): Արծվանիստի խոսվածքում *գալ* բայն ունի ներկայի (և ապառնու) յուրահատուկ ձևեր՝ երկբարբառային *ռ* հնչյունով, ինչպես՝ *գ'ռմ, գ'ռս, գ'ռ, գ'ռնք, գ'ռք, գ'ռն* (< *գամ, գաս, գա, գանք, գաք, գան*): Ծովասարի Երանոսի, Ծակքարի խոսվածքներում հանդիպում է *խ* երկբարբառ (*խրըն, իւրա, իւրդ*):

Քերականական համակարգում ևս դրսևորվում են մի շարք հատկանիշներ, որոնք հստակորեն սահմանազատում են առանձին խոսվածքներ: Այսպես, ստացական հոդերից հետո *ի* ձայնավորի հավելում ունեն Երանոսի, Լիճքի, Ծակքարի, Ծովասարի, Ձորագյուղի, Մաղինայի, Ներքին Գետաշենի, Վերին Գետաշենի, Վարդաձորի խոսվածքները (*հէրսի՝* հայրս, *գ'ըլօխտի՝* գլուխդ): Անձնական դերանվան տրականի հետադաս կիրառությամբ հոգնակի ստացականության արտահայտությունն դիտվել է Լիճքի, Ծակքարի, Ծովասարի, Ծովինարի, Ձորագյուղի, Վաղաշենի, Վարդաձորի, Վարդենիկի, Վերին Գետաշենի խոսվածքներում (*ւոդ մըզի՝* մեր ոտքերը): Անձնական դերանունների *քըզի, մըզի, ձ'ըզի* ձևեր ունեն Երանոսի, Լիճքի, Ծովասարի, Ձորագյուղի, Մաղինայի, Ներքին Գետաշենի, Վերին Գետաշենի, Վարդաձորի խոսվածքները, կրճատ *քէ, մէ, ձ'է* ձևեր՝ Ձուլաքարի, Ծովինարի, Մարտունու, Վաղաշենի, Վարդենիկի խոսվածքները: Միայն *քէ* կրճատ ձև ունեն Աստղաձորի, Արծվանիստի, Գեղհովիտի խոսվածքները: Օժանդակ բայի ներկայի *եմ, էս, ա, ենք, էք, են* ձևեր ունեն Աստղաձորի, Արծվանիստի, Գեղհովիտի, Ձուլաքարի, Ծակքարի, Ծովինարի, Մարտունու, Վաղաշենի, Վարդենիկի խոսվածքները: Այս խոսվածքներում, բացառությամբ Ծակքարի և Ծովինարի, օժանդակ բայի անցյալի ձևերն են՝ *ի, իր, էր, ինք, իք, ին*: Երանոսի, Լիճքի, Ծովասարի, Ձորագյուղի, Մաղինայի, Ներքին Գետաշենի, Վերին Գետաշենի և Վարդաձորի խոսվածքներում օժանդակ բայի ներկայի ձևերն են՝ *իմ, իս, ա, ինկ, իկ, ին*, և անցյալի ձևերն են՝ *էնկ, էր, էր, էնկ, էկ, էն*: Անցյալի այս նույն ձևերն ունեն նաև Ծակքարի և Ծովինարի խոսվածքները: Ներկայի հիմքից կազմվող ձևերում *ն* բայածանցը բացակայում է Արծվանիստի, Գեղհովիտի, Ձուլաքարի, Ծովինարի, Մարտունու, Վաղաշենի խոսվածքներում (*մեռիս՝* մեռնեմ, *կեղի՝* կլինի): *Կօ* հաստատական մասնիկ ունեն Արծվանիստի, Գեղհովիտի, Ձուլաքարի, Ծովինարի, Մարտունու, Վարդենիկի խոսվածքները (*կօ մընա՝* իհարկե մնում է): *Էլ* շաղկապի փոխա-

րեն չունեն Երանոսի, Լիճքի, Ծակքարի, Ծովասարի, Ծովինարի, Ձորագյուղի, Մաղինայի, Ներքին Գետաշենի, Վերին Գետաշենի, Վարդաձորի խոսվածքները: Ներգոյական հոլովի իմաստն արտահայտելու համար *նե* մասնիկ են գործածում Աստղաձորի, Ձուլաքարի, Մարտունու, Վաղաշենի, Վարդենիկի խոսվածքները (*փոսի նե*՝ փոսում): *Զ* նախդրի կիրառությունն արձանագրվել է միայն Վերին Գետաշեն գյուղում, այն էլ՝ ենթակայի խմբում (*Զիմ պաբըն գինա*՝ իմ պապը գիտի):

Ընդհանուր առմամբ, Մարտունու տարածաշրջանում գործածվող խոսվածքները կարող են բաժանվել երկու խմբի: Առաջին խմբում կրնդգրկվեն Երանոսի, Լիճքի, Ձորագյուղի, Մաղինայի, Ներքին Գետաշենի, Վերին Գետաշենի, Վարդաձորի խոսվածքները: Սրանց միավորող և մյուս խմբերից տարբերող հատկանիշներից են՝ 1. հինհայերենյան *հ*-ին համապատասխանող *հ*-ի առկայություն, 2. ոչ բառասկզբում հինհայերենյան ձայնեղ և շնչեղ խուլ հպականների ու հպաշփականների վերածում խուլերի, 3. այդ դիրքերում հինհայերենյան խուլերի փոխարեն ձայնեղների առկայություն, 4. բառասկզբում *ղ*-ի փոխարեն *խ*-ի գործածություն, 5. ստացական հոդերից հետո *ի* ձայնավորի հավելում, 6. անձնական դերանունների *բըզի, մըզի, ճըզի* ձևերի առկայություն, 7. օժանդակ բայի ներկայի *իմ, իս, ա, ինկ, իկ, ին* և անցյալի *էնկ, էր, էր, էնկ, էկ, էն* ձևերի առկայություն, 8. *չ* շաղկապի փոխարեն *լ* ձևի կիրառություն: Բերված հատկանիշների մի մասը հիմնականում հատուկ է Ալաշկերտի խոսվածքին, ուստի կարելի է համարել, որ Մարտունու տարածաշրջանի խոսվածքների այս խումբը ներկայացնում է Ալաշկերտի խոսվածքը:

Երկրորդ խմբում են Աստղաձորի, Արծվանիստի, Գեղհովիտի, Ձուլաքարի, Մարտունու, Վաղաշենի, Վարդենիկի խոսվածքները, որոնց բնորոշ հատկանիշներից են. 1. հինհայերենյան *հ*-ի փոխարեն *խ*-ի գործածություն, 2. ոչ բառասկզբում հինհայերենյան ձայնեղների փոխարեն շնչեղ խուլերի առկայություն, իսկ խուլերի փոխարեն որոշ դեպքերում ձայնեղների առկայություն, 3. բառասկզբի *ղ*-ի փոխարեն *կ/կ*-ի առկայություն, 4. անձնական դերանունների կրճատ *քե, մե, ճե* ձևերի առկայություն, 5. օժանդակ բայի ներկայի *եմ, ես, ա, ենք, էք, են* և անցյալի *ի, իր, էր, ինք, իք, ին* ձևերի գործածություն, 6. ներկայի հիմքից կազմվող ձևերում *ն* բայածանցի բացակայություն, 7. *կօ* հաստատական մասնիկի գործածություն, 8. ներգոյականի իմաստն արտահայտող *նե* մասնիկի կիրառություն: Թվարկված հատկանիշները հատուկ չեն Ալաշկերտի խմբին, բայց և Մշո բարբառի որևէ այլ տարածքի համար բնութագրական փունջ չեն կազմում: Միայն *հ*-ի փոխարեն *խ*-ի առկայությունն է, որ Մշո բարբառում հատուկ է համարվել Բաղեշի, Խլաթի, Արճեշի և Արծկեի խոսվածքներին: Այնպես որ, պետք է արձանագրել՝ այս խմբի խոսվածքները համատեղում են Մշո բարբառի տարբեր խոսվածքներին բնորոշ հատկանիշներ, ուրեմն կարող են ուղղակի բնութագրվել իբրև Մշո բարբառի խոսվածքներ:

Այս խմբին են հարում Ծակքարի, Ծովասարի և Ծովինարի խոսվածքները, որոնք ունեն ինչպես Ալաշկերտին բնորոշ (օր.՝ ձայնեղների և շնչեղ խուլերի փոխարեն՝ խուլեր, իսկ խուլերի փոխարեն՝ ձայնեղներ և այլն), այնպես էլ Ալաշկերտից տարբերվող հատկանիշներ (օր.՝ *հ*-ի փոխարեն *խ*, իսկ *ղ*-ի փոխարեն՝ *կ*): Պետք է կարծել, որ

այս խոսվածքները ունեն Մուշի տարբեր շրջաններից, նաև՝ Ալաշկերտից եկածների լեզվական հատկանիշների գուգորդումներ և փոխազդեցություններ՝ վերջին հաշվով լիարժեք ներկայացնելով Մշո բարբառը:

Վարդենիսի տարածաշրջանի՝ Մշո բարբառին պատկանող Լճավանի, Լուսակունքի, Ծովակի, Կարճաղբյուրի, Մեծ Մասրիկի, Նորակերտի, Ախպրաձորի, Խաչաղբյուրի, Մաքենիսի խոսվածքները հիմնականում ունեն Մարտունու տարածաշրջանի բոլոր խոսվածքների համար հիշատակված ընդհանուր բարբառային հատկանիշները: Լուսակունքի, Ծովակի, Կարճաղբյուրի, Մաքենիսի և Մեծ Մասրիկի խոսվածքներին հատուկ են Մարտունու տարածաշրջանի Մշո խմբին բնորոշ և մյուս խոսվածքներից զատող հետևյալ հատկանիշները. բառամիջի և բառավերջի ձայնեղների փոխարեն՝ շնչեղ խուլեր, նույն դիրքերի խուլերի փոխարեն՝ երբեմն ձայնեղներ, հինհայերենյան *հ*-ի փոխարեն *խ*-ի առկայություն, բառասկզբի *ղ*-ի փոխարեն *կ*-ի գործածություն, ներգոյականի իմաստի արտահայտություն նաև *նե* մասնիկով, օժանդակ բայի ներկայի *եմ, ես, ա, ենք, էք, են* և անցյալի *ի, իր, էր, ինք, իք, ին* ձևերի առկայություն, *ն* բայածանցի բացակայություն, *կօ* հաստատականի առկայություն: Ախպրաձորի և Խաչաղբյուրի խոսվածքներում հինհայերենյան *հ*-ի փոխարեն առկա է *հ*, օտար բառերի սկզբում գործածվում է *ղ*: Աստղաձորի, Արծվանիստի, Գեղիովիտի խոսվածքների պես անձնական դերանունների միայն *քե* կրճատ ձև ունեն Լուսակունքը, Կարճաղբյուրը, Նորակերտը, Ախպրաձորը: Վարդենիսի տարածաշրջանի՝ Մշո բարբառի խոսվածքները երբեմն ունեն նաև առանձնահատուկ հատկանիշներ: Այսպես, Լուսակունքի խոսվածքը աչքի է ընկնում քմայնացած *ա* ձայնավորի առատությամբ. այդ հնչյունը գրեթե կանոնավորապես դրսևորվում է բառասկզբի շնչեղ ձայնեղներից հետո (*ք'ան, դ'անակ, գ'անգեք*): Այս խոսվածքում լայն տարածում ունի նաև հետնալեզվային քմայնացած պայթական բաղաձայնների գործածությունը (*իրեք, քուր, քանի*): Ծովակի խոսվածքում սովորական է *վըր, մըչ* կապերի նախադաս կիրառությունը (*մըչ գ'ործի, վըր սեղնին*): Մեծ Մասրիկի խոսվածքում հանդիպում է *ռվ* դերանվան *վռվ* տարբերակ, Մաքենիսի խոսվածքում՝ *վան* տարբերակ: Ախպրաձորի խոսվածքը չունի *ռ* երկբարբառային հնչյուն: Խաչաղբյուրի խոսվածքում Ու հոլովումը մեծ տարածում չունի եզակի թվում, չի գործածվում հոգնակի թվում, այստեղ *ռվ* դերանվան փոխարեն առկա է *վան* ձև, *գնալ, մնալ* բայերի անցյալի հիմքի ձևերն են *գ'ընաց, մընաց*: Լճավանի և Նորակերտի խոսվածքներում, Ծակքարի, Ծովասարի և Ծովինարի խոսվածքների պես, գուգորդվում են Ալաշկերտի և բուն Մշո խոսվածքների հատկանիշները: Մասնավորապես, Լճավանի խոսվածքում բառամիջի և բառավերջի դիրքերում ձայնեղ հպականների և հպաշփականների փոխարեն, որպես կանոն, առկա են շնչեղ խուլեր, բայց և նույն կարգի ձայնեղ և շնչեղ խուլ բաղաձայնների փոխարեն երբեմն հանդիպում են խուլեր, իսկ նախնական խուլերի փոխարեն գործածվում են ձայնեղներ: Այդպես նաև՝ Նորակերտի խոսվածքում հինհայերենյան *հ*-ի փոխարեն առկա է *հ* (Ալաշկերտ),

մինչդեռ բառասկզբի *դ*-ի փոխարեն առկա է *չ* (Մուշ) և այլն: Այս դեպքում ևս խոսվածքների խառը պատկերները պայմանավորված են բարբառակիրների ծագումնային յուրահատկություններով, նաև ազդեցություններով:

ԲԱՅԱԶԵՏԻ ԲԱՐԲԱՌԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄՆԵՐԸ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ

Բայազետի բարբառը պատկանում է հայ բարբառների Ում ճյուղին, ունի քառաստիճան (բ', բ, պ, փ) բաղաձայնական համակարգ, ընդգրկված է արևելյան խմբակցության Արարատյան կամ հյուսիսարևելյան բարբառախմբում: Մինչև 19-րդ դարի սկզբները բարբառը գործածվում էր Արևմտյան Հայաստանի Բայազետի գավառում, որը զբաղեցնում էր Էրզրումի նահանգի հարավարևելյան մի հատվածը՝ Վանա լճից հյուսիս-արևելք: 1828-1829թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո կազմակերպվում է արևմտահայերի զանգվածային արտագաղթ, և գաղթական բայազետցիների հիմնական հատվածը հաստատվում է Սևանա լճի արևմտյան ափին:

Բայազետի բարբառը Գեղարքունիքի մարզում գործածվում է Գավառի տարածաշրջանի համանուն քաղաքում և Հացառատ, Արծվաքար, Սարուխան, Նորատուս, Գանձակ, Կարմիրգյուղ, Ծաղկաշեն, Լանջաղբյուր, Գեղարքունիք, Ծովազարդ, Լճափ, Հայրավանք, Բերդկունք բնակավայրերում:

ՀՀ Գեղարքունիքի մարզի Գավառի տարածաշրջանի բնակիչների նախնիները գաղթել են ոչ միայն Բայազետ քաղաքից և հարակից բնակավայրերից, այլ նաև Վանից, Խոյից, Մուշից և այլ վայրերից: Վերջիններիս սերունդները այլ բարբառով խոսողների հոծ և կայուն միջավայրում ժամանակի ընթացքում կորցրել են իրենց մայրենի խոսվածքները, սակայն Բայազետի բարբառի տարբեր խոսվածքներում դեռևս պահպանվում են դրանց հետքերը: Մյուս կողմից՝ Բայազետի բարբառային խոսքը, հայտնվելով մեկ այլ, օրինակ՝ Դիաղինի բարբառի միջավայրում, ժամանակի ընթացքում ազդվել է այդ բարբառից: Մասնավորապես՝ Վարդենիսի տարածաշրջանի Ակունք գյուղի խոսվածքը, որի բնակիչների նախնիները գաղթել են Բայազետից, զգալիորեն հեռացել է մայր բարբառից: Այս խոսվածքում, օրինակ, բացակայում է Բայազետի բարբառի ձայնավորական համակարգի ամենաբնորոշ հատկանիշը՝ շրթնայնացած *ա*-ն, և ընդհակառակը՝ լիարժեքորեն արտահայտվում է Դիաղինի բարբառին խիստ բնորոշ՝ ձայնավորների և բաղաձայնների ընդգծված քմայնացումը:

Գեղարքունիքի մարզում Բայազետի բարբառի բոլոր դրսևորումներին հատուկ հնչյունական հատկանիշներից են. շրթնայնացած *ա* ձայնավորի՝ դիրքով պայմանավորված օրինաչափ գործածություն (*ա*տամ, կ*ա*տու), քմայնացած *ա*-ի դրսևորում հիմնականում փոխառյալ բառերում (*թա*ն*ա*, *հա*ն*ա*), երկբարբառային *n* և *ե* հնչյունների առկայություն (*թե*ն*ի*, *գո*ղ), միավանկ բառերի սկզբում *n>լn* և *ե>յե* անցումների առկայություն (որ*ե*վոր, երգ*ե*յերք), շնչեղ ձայնեղ բաղաձայնների և ձայնեղ *հ*-ի դրսևորում բառասկզբում (*բ*'ան, ձոր, *հ*'ընգեր), հինհայերենյան *հ*-ի փոխարեն բոլոր

դիրքերում *խ*-ի գործածություն (խաց, բ'ախ), վերջնականային շեշտ: Քերականական ընդհանուր իրողություններից են. *եր, ներ* հոգնակերտներից բացի մի շարք այլ մասնիկների առկայություն (*ք, քանք, տանք//տիք, անք, վանք*՝ գ'եղացիք, գ'եղրանք, քըվորտանք, ձ'իյանք, գ'իլվանք), ներգոյական հոլովի իմաստի արտահայտություն հայցականով կամ սեռական հոլովով և մեջ կապով (գեղը՝ գյուղում, քախկի մէջը), Ի հոլովման գերակշռություն, հատուկ տեղանունների՝ Ա հոլովմամբ թեքում (Հերեվնա), Ոջ հոլովման արտահայտություն միայն *տեր* բառի պարագայում (տիրոջ), անձնական դերանունների տրական հոլովում և ցուցական դերանունների ուղղական հոլովում *ի//իկ* հավելվածի դրսևորում (մեզի//մեզիկ, էսի//էսիկ), *ու* դերանվան իմաստով *վորք* և *վոն* ձևերի գործածություն, սահմանականի ներկա ժամանակաձևի կազմություն *ու* վերջավորությամբ անկատար դերբայով (գ'ըրում եմ. այդ մասնիկը *գ'ալ, լւնլ, տալ* բայերի դեպքում ավելանում է անորոշի վրա՝ *գ'ալում, լւնում, տլում*), *ր*-ով վաղակատար (գ'ըրեր) և *ուկ*-ով հարակատար (գ'ըրուկ) դերբայներ, *գնալ, մնալ* բայերի անցյալի հիմքի *գ'աց, մաց* ձևեր, հարկադրականի ձևերի կազմություն *պըտի* եղանակիչով (պըտի գ'ամ), պատճառականի *ցըն* ածանց (*խացցընել, կեցցընել*), բաղադրական չ ածանցի բացակայություն և այլն:

Բարբառը խոսվածքային յուրահատկություններ հանդես է բերում և՛ հնչյունական, և՛ ձևաբանական համակարգերում: Հնչյունական համակարգում տարբերություններ կան ինչպես իրողության արտահայտման աստիճանի, ընդգրկման առումներով, այնպես էլ հնչյունական երևույթների դրսևորման, բառերի ձևավորման տեսանկյուններից: Կան նաև միայն այս կամ այն խոսվածքում նկատվող երևույթներ: Այսպես, *ա*-ի շրթնայնացման աստիճանը տարբեր է Գավառ քաղաքում և Սարուխանում (վերջինում շրթնայնացումն ավելի ընդգծված է), քմայնացած *ա*-ն ավելի տարածված է Գանձակում և Նորատուսում, այս երկուսում է միայն նկատվում հետնալեզվային բաղաձայնների քմայնացում (գինի, քիթ): Միայն Նորատուսում, Հայրավանքում և Բերդկունքում (վերջին երկուսի բնակիչները եկել են Նորատուսից) *է, ի* և քմայնացած *ա* ձայնավորներից առաջ *գ,կ,ք* հետնալեզվայինների փոխարեն առկա են *ջ,ճ,ջ* հպաշփականներ (գինի>ջինի, կիրակի>ճիրսճի), միայն Գավառում և Կարմիրգյուղում փոխառյալ բառերը *ու*-ի փոխարեն ունեն *ի՝ քիֆտսւ, մինսւթ, շիշսւ* և այլն: Գավառում, Ծաղկաշենում, Հացառատում, Նորատուսում *զալ* բայի հրամայականն է *հ'արի*, իսկ Սարուխանում, Լանջաղբյուրում, Գեղարքունիքում՝ *սրի*:

Զգալի են տարբերությունները ձևաբանական համակարգում: Այդպիսիք վերաբերում են և՛ անվանական (հոգնակերտ մասնիկներ, սեռականի ձևավորում, դերանվան կարճ ու երկար ձևեր), և՛ բայական (բայի կազմություն, խոնարհիչներ) համակարգերին: Այս դեպքում գերակշռում են երևույթի առանձնակի դրսևորումները: Օրինակ՝ Գավառում *սֆտո* բառի հոգնակին է *սֆտոք*, մյուս համայնքներում՝ *սֆտոներ*. *տիք* հոգնակերտը հատուկ է միայն Նորատուսին. բոլոր խոսվածքներում *քեզի* ձևի հետ կա նաև *քե*, Սարուխանում, Լանջաղբյուրում և Գեղարքունիքում՝ նաև

մեզի, ձեզի ձևերի հետ՝ *մե, ձ*՝ Գավառում և Հացառատում *ու*-ի փոխարեն գործածվում է *վոն*, իսկ մյուսներում՝ *վորը*։ *կօ* հաստատական մասնիկ գիտեն միայն Սարուխանը, Լանջաղբյուրը և Գեղարքունիքը (*կօ նըստուկ եմ*՝ ահա նստած եմ)։ ներկայի հիմքում *ն* ածանցի անկումը հատուկ է հիմնականում Լանջաղբյուրին (*հըլեմ*՝ ելնեմ, *գըթեմ*՝ գտնեմ, *խաքեմ*՝ հագնեմ, *հիչեմ*՝ իջնեմ), մասամբ՝ Սարուխանին (*հընգեմ, մըտեմ*)։ մյուս խոսվածքների *հիշկալ, կըռվել* բայերի փոխարեն Գավառում գործածվում են *հիշկել, կըռվալ* ձևերը։ Ձայնավորով ավարտվող բառերի սեռական հոլովը *յ*-ով է կազմում խոսվածքների մի մասը (Սարուխան, Գեղարքունիք, Լանջաղբյուր, Հացառատ, Նորատուս՝ *Կմրոյ, Աննայ, կօֆէյ*), մինչդեռ Գավառում հանդես է գալիս *ի* հոլովիչը՝ *Կմրոյի, Աննայի, կօֆէյի*։ Յուրահատուկ կազմություն է հանդիպում Նորատուսում և Հայրավանքում հոգնակի ստացականության իմաստով՝ *վոտը մե, ձ էտը մե* (մեր ոտքերը, մեր ձեռքերը)։ Նորատուսում երբեմն որոշիչ հոդը բառիմաստի տարբերակման դեր է ստացել՝ *Ղոր ես էթում* (Ուր ես գնում) – *Ղորն ես էթում* (Բնչպես ես գնում)։

Խոսվածքները բարբառի ներսում որոշակի ընդհանրություններով կազմում են խմբեր. ա) Գավառ, Հացառատ, Կարմիրգյուղ և Արծվաքար, բ) Սարուխան, Լանջաղբյուր և Գեղարքունիք, գ) Նորատուս և Հայրավանք, Բերդկունք, դ) Գանձակ և Ծաղկաշեն։ Այս խմբավորումը պայմանավորված է համայնքների բնակիչների ծագմամբ։ Առաջին խմբի խոսվածքները կրողների նախնիները եկել են Բայազետ քաղաքից և հարակից գյուղերից, երկրորդ խմբինը՝ հիմնականում Բայազետի գավառի Զանգիզոր և Սուրբ Օհան գյուղերից, երրորդ խմբինը՝ Արծափի Քորուն և Մոսուն գյուղերից, չորրորդ խմբինը՝ Խոյից, Սալմաստից և Բայազետից։ Երրորդ և չորրորդ խմբերի խոսվածքներում զգացվում են ենթաշերտային իրողություններ (հատկապես հնչյունական համակարգում և բառապաշարում, երբեմն նաև քերականական համակարգում)։ Երբեմն այս կամ այն խոսվածքում նկատելի է բարբառային այլ միավորի ազդեցություն։ Այսպես, Սարուխանի խոսվածքում հանդիպում են կապերի նախադաս գործածությամբ քարացած ձևեր (Բայազետի բարբառին հատուկ է համապատասխան կապերի հետադաս գործածությունը), ինչպես՝ *վըր վըզի, դուռ վըր դըռան, խըտ գ՛ալը* (վզի վրա, բակերով կից, գալուն պես), որոնք ակնհայտորեն Մշո բարբառի ազդեցության հետևանք են։

Խոսվածքները առավելաբար տարբերվում են բարբառային ընդհանուր հատկանիշների դրսևորման յուրահատկություններով և բառապաշարային իրողություններով։

ԴԻԱԴԻՆԻ ԲԱՐԲԱՌԸ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ

Դիադինի բարբառը պատկանում է հայ բարբառների Կը ճյուղին, ունի քառաստիճան (բ՛, բ, պ, փ) բաղաձայնական համակարգ, Վանի բարբառի հետ ընդգրկված է արևմտյան խմբակցության Վանի կամ հարավային միջբարբառախմբում։ Այս բարբառի բնօրրանը Դիադինի գավառակն էր՝ Բայազետի գավառի կազմում։ 1828-1829 թթ.

ռուս-թուրքական պատերազմից հետո Դիադինի բնակչությունը գաղթում է Արևելյան Հայաստան և հիմնականում բնակություն հաստատում Սևանի ափին՝ Բասարգեչար գյուղում (այժմ՝ Վարդենիս քաղաք):

Իր այժմյան բնօրրանում՝ Վարդենիս քաղաքում, Դիադինի բարբառը ներկայա-
նում է բավականին հստակորեն պահպանված բարբառային հատկանիշներով և
դրանց յուրահատուկ փնջով: Խոսվածքում տարբեր դիրքերում, իսկ բառասկզբի շնչեղ
ձայնեղներից հետո՝ կանոնավորապես, հանդես է գալիս քմայնացած *ւ* (*բ'ւիս, գ'ւիզան, դ'ւննակ, ձ'ւիս, ջ'ւնթել, ւնդւթ, քւսիք, վւտ, վւզել, քւլւմ, դ'ըծվւր*): Հանդիպում են
նաև քմայնացած *օ//ո* և *ու* հնչյուններ (*գ'ոթ, ք'օնձաիս, իւր, ք'իւր*): Միավանկ բառերի
սկզբում հինհայերենյան *ո*-ի և *ե*-ի փոխարեն համապատասխանաբար առկա են *վո* և
յե (*վոր, վորթ, յեգ, յեփ*), բազմավանկ բառերի սկզբում՝ *օ* և *է* (*օխճար, օչիլ, էրեվալ, էրկու*):
Խոսվածքն ունի *ե, ո* երկբարբառային հնչյուններ (*վեց, ասեղ, բ'ոխիկ, խավոր*):
Խոսվածքին բնորոշ է եռավանկ բառերում ձայնավորի սղումը (*ամչըկոտ, ավէորան, ժողվել, խայլի*):
Բաղաձայնական համակարգի համար բնութագրական է շնչեղ ձայնեղ-
ների առկայությունը (*բ'էրել, գ'ւրուն, դ'էղին, ձ'ի, ջ'ւնդաց*): Բառամիջում ու բառավեր-
ջում հպական ու հպաշփական ձայնեղների փոխարեն գործածվում են շնչեղ խուլեր
(*խափել, մէչ, օց, վոռի, օքնել, մառթ*): Նույն դիրքերում երբեմն խուլերի փոխարեն
առկա են ձայնեղներ (*ավէորան, պաղըրել, մըղնել, յերգըրօթ*): Տարածված է հետնա-
լեզվային բաղաձայնների քմայնացումը տարբեր դիրքերում (*ք'ամել, էք', պաք'ել, գ'եղ, գ'ինձ, շմիսկ'ամ, կընիկ'*):
Բաղաձայնից առաջ հետնալեզվային պայթականի փոխարեն
հաճախ առկա է *յ* ձայնորդ (*խայնել, ւյլոր, պայսել, ճայտի*), բաղաձայնասկիզբ բառից
առաջ, նաև բառամիջում բաղաձայնից առաջ տարածված է *նք>յ, նգ>յ* փոփոխությունը
(*չիյ կանե հըլնիյ դ'ուս* - չէինք կարողանում՝ էլնէինք դուրս. *իշվայներ* <իշվանքներ.
յեղոյներ <եղունգներ): Երբեմն բաղաձայնից առաջ հպաշփականի փոխարեն առկա է
շփական (*հււշկ, մէշկ, ծասկել, ճաշնալ*): Հինհայերենյան *հ*-ի փոխարեն խոսվածքը
բոլոր դիրքերում ունի *խ* (*խանել, ախ, բ'ւիս, պախել*): Բառասկզբի ձայնավորներից
առաջ հաճախ առկա է *հ*-ի հավելում (*հ'էսօր, հ'ուրիշ, հ'ւնու, հ'ւնիք, հ'ըմէն, հ'էրէկ, Հ'էրէվան*):
Օտար բառերի սկզբի *դ*-ի փոխարեն խոսվածքն ունի *կ, կ', գ* կամ *գ'* (*կօշ < դոշ, կազան < դազան, կ'օնաիս < դոնաիս, գ'օնդաիս < դոնդաիս, գարիք < դարիք*): Շեշտը
վերջնավանկային է:

Հոգնակին խոսվածքում, *եր, ներ* վերջավորություններից բացի, կազմվում է նաև
ք, վանք, անք, րանք, տիք մասնիկներով (*խընամիք, գ'իլվանք, ձ'իյանք, տեղրանք, քուրվըտիք, կընգըտիք //կընթեր //կընթըներ*): Մի շարք անուններ եզակի թվում, ինչ-
պես նաև գոյականների մեծ մասը հոգնակի թվում ենթարկվում են Ու հոլովման
(*խայու, ճըծու, աղվըսու, իծու, գ'իլու, օխչըրներու, դաշտերու, դ'ասերու*): Խոսվածքն
ունի Ոջ հոլովում (*տիրոջ, քըրոջ, աներոջ, տալոջ, տէրոջ, կիսըրոջ, հընգերոջ*): Հատուկ

տեղանունները կարող են ենթարկվել Ա հոլովման (*Մատտունա, Հերէվնա*): Չայնավորով ավարտվող հատուկ անձնանունների, որոշ հասարակ անունների սեռականը ձևավորվում է *-ով* (*Գորէյ, Կարոյ, Տիկոյ, Աննայ, քիբոյ*): Բացառականը ձևավորվում է *-ով* (*աղվըսուց, ախպօրից, խօրէրուց*): Ներգոյականը արտահայտվում է հայցական հոլովով, ինչպես նաև սեռականով և *մէջ* կապով (*գէղըն – գյուղում. ջըրու մէջ*), երբեմն էլ՝ *նէ* մասնիկով՝ *օթխի նէ*: Որոշյալության իմաստն արտահայտվում է *ն* հոդով (*Ծառըն ծախկալ*), որը միշտ չէ, որ գործածվում է (*Մեր ծընօղներ էկան*): Անձնական դերանունները տրական հոլովում ունենում են *ի* կամ *իկ* հավելված՝ *ընձի(կ), քեզի(կ), մեզի(կ), ձ'եզի(կ)*, կան նաև կրճատ ձևեր՝ *քէ, մէ, ձ'է*: Բացառական հոլովը հանդիպում է նաև *է* մասնիկով՝ *ընձնից/ընձնէ, քեզնից/քեզնէ*: Երրորդ դեմքի ուղղականի ձևերն են՝ *հինք, ընդոնք, (հ)ուրանք*: Ցուցական դերանունները եռանդամ են՝ *էս, էտ, էն, էսի, էտի, էնի*, սրանց թեք հոլովների ձևերից են՝ *ըստոր, ըտոր, ընդոր, ըստոնց, ըտոնց, ընդոնց* և այլն: Ով դերանվան իմաստով առկա է *վոն* ձևը, որի սեռականն է՝ *վի*, տրականը՝ *վին*:

Գալ, լալ, տալ բայերի ներկան կազմվում է *գ'ու/կու* մասնիկով՝ *գ'ուք'սմ* (երբեմն նաև՝ *գ'ըկ'սմ*), *գ'ուլ'սմ*, *կուտամ*, մյուս բայերինը՝ *կը/կ* մասնիկով կամ առանց դրա (*կըզըրեն, կուտեն. խաքի էթա՝* հագնում գնում է): Խոսվածքն ունի նաև շարունակական ներկայի ձև, որը կազմվում է *կօ* մասնիկով՝ *կօ կըկատթամ* (այժմ կարդում եմ), *կօ կէթամ* (գնում եմ): Վաղակատար դերբայն ունի *-ով* վերջավորություն՝ *գըրէր* (եմ), *մացեր* (ա), հարակատարը՝ *ուկ* վերջավորություն՝ *քընուկ, դ'ուս հընգուկ*: Էական բայի ներկա ժամանակի ձևերն են՝ *եմ, ես, ա, ենք, էք, են*, անցյալի ձևերը՝ *ի, իր, էր, ինք, իք, ին*: Ե խոնարհման պարզ բայերի անցյալ կատարյալը որպես կանոն կազմվում է ներկայի հիմքից (*շըլկին, բ'էրին, կարին, ասի*), չեն բացառվում անցյալի հիմքով կազմությունները (*ասէցի, խըմէցի*): *Գնալ, մնալ* բայերի անցյալի հիմքի ձևերն են՝ *գ'աց, մաց*: Դիմավոր բայաձևերից առաջ, ըստ ժամանակային իմաստի, խոսքում կարող է հանդես գալ օժանդակ բայի եզակի երրորդ դեմքի *ա* կամ *էր* ձևը, երբ տրամաբանական շեշտը կրում է նախորդ բառը, ինչպես՝ *խաց ա կուտեն* (հաց եմ ուտում), *դորից ա գ'ուք'սմ* (որտեղից ես գալիս), *բիշի յէր թըխին* (թխվածք էին թխում): Վերլուծական ժամանակաձևերում չ ժխտական մասնիկը դրվում է ոչ թե օժանդակ բայի, այլ դերբայի վրա՝ *չունէցեր ա* (չի ունեցել), համադրական ձևերում ժխտական մասնիկը դրվում է բայաձևի վրա՝ *չըխանա* (չի հանում): Եզակի հրամայականն ունի ներգործաձև և կրավորաձև վերջավորություններ՝ *խըմա՛, նըստի՛, խասի՛*: Պատճառական ածանցն է *ցուց/ուց թըրցուցել, մըտուցել*: Պատճառական բայերի ներկա ժամանակաձևում հանդես է գալիս *ու* խոնարհիչը՝ *խըմցում, գիճում, գ'ընցու*: Խոսվածքում չկան չ ածանցով բայեր (*դիպնել, թըռնել, փախնել, ուռել*):

Գեղարքունիքի մարզի Ճամբարակի տարածաշրջանում՝ Ճամբարակ, Գետիկ, Թթուջուր, Վահան բնակավայրերում, գործածվում է Ում ճյուղի Գանձակի միջբարբառը, որն ընդգրկված է բարբառների արևելյան խմբակցության Ղարաբաղ-Շամախիի բարբառախմբում: Ներկայիս բարբառախոսների նախնիների մի մասը եկել է 16-18-րդ դարերում Ղարաբաղից և հարակից տարածքներից, որոշ մասը Ճամբարակի տարածաշրջան է տեղափոխվել Շամշադինի շրջանից (ներկայիս Տավուշի տարածաշրջան): Հարկ է նշել, որ հիշյալ բնակավայրերից բացի, ղարաբաղյան իրադարձությունների հետևանքով, միջբարբառով խոսողներ սկսել են բնակվել նաև Ճամբարակի և Վարդենիսի տարածաշրջանների տարբեր բնակավայրերում՝ Ղարաբաղի և Մշո բարբառները կրողների հետ միասին:

Միջբարբառի խոսվածքներն ունեն քմայնացած *ü, ñ, ï* ձայնավորներ (հատկապես խլացած հպականներից ու հպաշփականներից հետո) և հետնալեզվային քմայնացած բաղաձայններ (*պյւնջւր, կւրունք, տւնտւնկ, ծւք, ճւնթիլ, պօխկը, կյօւ, ծօր, տօղ, կօվիլ, պոնթ, տոն, տոնը, ծոկը, ճոն, կինի, քիրիլ*՝ քերել): Միջբարբառին բնորոշ է երկբարբառների բացակայությունը, նախաշեշտ վանկում ձայնավորների անկումը (*ըղաչանք, ըղողէլ, ըղարկէլ, ըրուզուն*), միավանկ բառերի սկզբում *ռ*-ի փոխարեն *վէ*-ի և *է*-ի փոխարեն՝ *յէ*-ի առկայությունը (*վէտ<ռտն, վէրց<ռրձ, յէփ, յէզ*), *իւ*-ի և *ոյ*-ի փոխարեն *ի*-ի առկայությունը (*ալիր, քիր*): Ձայնեղ հպականների ու հպաշփականների փոխարեն բառասկզբում առկա են խուլեր (*պւն, պոնթ, կէտ, տւշտ, ծէռ, ճաղաց*), բառամիջում ու բառավերջում՝ շնչեղ խուլեր: Անվանական քերականական բնորոշ հատկանիշներից են *էր, նէր* մասնիկներից բացի հոգնակերտ մի շարք այլ վերջավորությունների (*նի, էնի, ան, ք, տինք, իք, անիք, էրք*) առկայությունը (*փէսէք, յէզնիք, կընանիք, ըմըննի, տւննանի, կատվէնի, ախպէրտինք, քըվէրտինք*), Ի հոլովման գերակշռությունը, Ոջ հոլովմամբ միայն *տէր* բառի հոլովումը (*տոնրոնէ*), Ո ներքին հոլովման ենթարկվող բառերի ավելի մեծ քանակը (*քըվօր, հանօր, ըսկէսօր, տէքօր, հըրաքօր, մըրաքօր*), բացառական, ներգոյական և գործիական հոլովների՝ որոշիչ հոդ ստանալը (*հընօրիցը, քըվօրիցը, Ըրշակիցը, հօրօվը, ախպօրօվը, ըշխարքումը, հօղումը*), դերանունների ուղիղ և թեք ձևերի մի շարք յուրահատկություններ (*ընձանից կամ ընձանի, մըզանօվ, քըզանի/ց/, տոն, քու, ծըզանից, իրան// ուրան, սւն, տւն, նւն, սրւն, նրւնի/ց/, սըհւնք, տըհւնք, նըհւնք, օվ, ում, վէր, վէրի, ընչի//իսի, լօխ և այլն*): Միջբարբառում բայն ունի Ա և Ի խոնարհումներ (*աղալ, ապրիլ, ըրմանալ, պըռալիլ*), բայական բնորոշ հատկանիշներից են նաև *ոււ*-ով անկատար (*ասոււմ, ուտոււմ*, միաժամանակ՝ *կւնի/ս/, տալիս*), *ական*-ով ապառնի (*ըսլական, ըռնլական*), *էլ*-ով վաղակատար (*պիրէլ, թլացէլ*), *ած*-ով հարակատար (*խըսացած, մացած, փախած*), *իլ*-ով և *ալ*-ով ժխտական (*ասիլ, կւն*) դերբայների առկայությունը, օժանդակ բայի *էմ, էս, ա, էնք*,

էք, էն, չէմ, չէս, չի, չենք, չէք, չէն և ի, իր, էր, ինք, իք, ին, չի, չիր, չէր, չինք, չիք, չին ձևերը: Խոսվածքներում անցյալ անկատարի իմաստը կարող է արտահայտվել նաև գրաբարատիպ ձևերով (*ըսի, ըսիր, ասէր, ըսինք, ըսիք, ըսին* – ասում էի, ասում էիր): Ի խոնարհման պարզ բայերի անցյալ կատարյալը կազմվում է անցյալի ցոյական հիմքով (*ըսէցի, սիրէցի*): Ըղծական անցյալի ապառնու իմաստը սովորաբար արտահայտվում է վաղակատար անցյալի ձևերով (*վէր յէս հաց ի կէրէլ*՝ որ ես հաց ուտեի): Հարկադրական եղանակի ժամանակաձևերը կազմվում են հետադաս գործածվող և խոնարհված (*բըղէմ, (բը)ղէս, (բը)ղի, (բը)ղի, (բը)ղիր, (բը)ղէր* ձևերով՝ *ասիլ դէմ, ասիլ դէս*: Ժխտական խոնարհման դեպքում վերլուծական ժամանակաձևերի օժանդակ բայերը և արգելական հրամայականի *մի* և *միք* մասնիկները ունեն հետադաս կիրառություն (*ասում չէմ, ասում չէր, թլանալ մի, պի ըիլ միք*): Համադրական ժամանակաձևերի ժխտականները կազմվում են հետադաս *վէչ* բառով (*կըրէցի վէչ, խըմէմ վէչ*): Բայն ունի պատճառական *ցն* (*կօրցնէլ*) և բաղադրական *չ* (*փախճէլ*) ածանցներ, պատճառական բայերի եզակի հրամայականն ունենում է *ու* վերջավորություն (*խըմըցըրու, հըրըցըրու*):

ՄԱԿՈՒԻ ԽՈՍՎԱԾՔԸ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ

Մակուի խոսվածքը Ում ճյուղի բարբառային միավոր է, ունի քառաստիճան (*բ՛, բ, պ, փ*) բաղաձայնական համակարգ: Այս խոսվածքի վերաբերյալ արտահայտվել են տարբեր և իրարամերժ կարծիքներ, հատկապես՝ Արարատյան և Բայազետի բարբառների հետ փոխհարաբերությունների հարցում: Այն ներկայացված չէ Գ.Զահուկյանի բազմահատկանիշ դասակարգման աղյուսակներում, կարելի է ասել՝ խոսվածքի դիրքը հայ բարբառների շարքում վերջնականապես ճշգրտված չէ: Այս խոսվածքի բնօրրանը Մակուի գավառն էր Պարսկաստանում: 1829-1830թթ. Մակուի հայ բնակչության մեծ մասը ևս գաղթում է Արևելյան Հայաստան և բնակություն հաստատում Սևանի արևմտյան ափին, Հրազդանի տարածաշրջանում, այլ վայրերում:

Գեղարքունիքի մարզում Մակուի խոսվածքը գործածական է Սևանի տարածաշրջանի Գեղամավան, Դոմաշեն, Զովաբեր, Լճաշեն, Ծաղկունք, Նորաշեն, Չկալովկա, Վարսեր բնակավայրերում, Սևան քաղաքի որոշ թաղամասերում:

Բոլոր բնակավայրերին բնորոշ հնչյունական հատկանիշներից են քմայնացած *ա* ձայնավորի գործածությունը փոխառյալ և բնիկ որոշ բառերում (*ւնվւն, ւնժէլ, օրինւնգ, հւնյւնթ, լւնլ*), միավանկ բառերի սկզբում հինհայերենյան *ո*-ից և *է*-ից առաջ բաղաձայնական տարրի առկայությունը (համապատասխանաբար՝ *վ* և *յ*՝ *վոր, վոնց, յէս, յէրք*), իսկ բազմավանկ բառերի սկզբում՝ *ո*-ի, *է*-ի փոխարեն *օ* և *է* ձայնավորների գործածությունը (*օղօրմի, էրկու*), *է, ո* երկբարբառային հնչյունների առկայությունը (*խէխտէլ, փոս*), բազմավանկ բառերի միջնավանկի ձայնավորի սղումը (*բ՛աժնըվէլ, հարսնիկ*), բառամիջում և բառավերջում ձայնեղների փոխարեն շնչեղ խուլերի

գործածությունը (*մատթ, անքամ, վեռչ, բ'անց*), բառասկզբում ձայնավորից առաջ ձայնեղ հագագի հավելումը (*հ'իմանալ, հ'օղորդել, հ'անաջ, հ'էրես*), փոխառյալ բառերի սկզբում *ղ*-ի փոխարեն *կ*-ի կամ *կ'*-ի առկայությունը (*կնստու, կազան, կօնախ*): Բոլոր խոսվածքներն ունեն վերջնականկային շեշտ:

Դիտարկվող խոսվածքների համար ընդհանուր քերականական իրողություններից են՝ *էր, ներ* հոգնակերտների հետ նաև այլ հոգնակերտների գործածությունը (*ք, վանք, րանք, տանք/դանք, անիք՝ չրոչրոցիք, գ'իլվանք, ախարրդանք, գ'էդրանկ, կընանիք*), բացառական հոլովի ձևավորումը *ց*-ով (*տընից, կընանիքից*), ներգոյական հոլովի բացակայությունը և դրա իմաստի արտահայտումը հայցականով (*թունդիրը՝ թոնրում*), ինչպես նաև սեռականով և *մէջ* կապով (*կըջըջի մէջը*), անձնական դերանվան տրական հոլովի ձևերում հավելական *ի* հնչյունի առկայությունը (*ընձի, քեզի, մեզի, ձ'եզի*), վաղակատար դերբայի ձևավորումը *ր* – ով (*պըսագվէր*), օժանդակ բայի *ես, ես, ա, ենք, էք, են* և *ի, իր, էր, ինք, իք, ին* հաստատական, *չեն, չես, չի, չենք, չէք, չեն* և *չի, չիր, չէր, չինք, չիք, չին* ժխտական ձևերի առկայությունը, պատճառականի *ցըն* ածանցի գործածությունը (*լօղցընել*), բայական *չ* ածանցի բացակայությունը (*թըռնել, փախնել*) և այլն:

